Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Lgn
1137

1999

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ
ՆՈՐԸՆՏԻՐ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԵՍԱՅԵԱՅ ՍՐԲԱԶԱՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԵՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ
Տ. Տ. ՊՕՂՈՍԻ ՍՐԲԱԶԱՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ՏՊԱՐԱՆԻ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ
ԵՐՈՒՍԱՂԷՄ
—1867—

41137-60

2ф. 1138

# Ա Զ Դ

Երկրորդս այս տպագրութիւն պատմութեան Յովհաննու կաթողիկոսի եղեւ ի ձեռայ վեց գրչագիր օրինակաց, յորոց երկուքն համաձայնէին իբր ի միոյ բնագրէ առեալ, իսկ միւս չորեքին օրինակք, որոց այլ եւ այլ էին նախագաղափարք, թէպէտ եւ նօտրագիրք ամենայն եւ ոչ հնագոյնք ժամանակաւ, այլ յընտիր օրինակաց գաղափարեալք էին, որոց եւ մեք հետեւեցաք յերկրորդումս յայս տպագրութեան ի ստորին լուսանցսն նշանակելով զտարբերութիւնս։ Երկուք եւեթ յայսոցիկ ունէին բաժանմունս գլխոց, այլ տարբերս ի միմեանց. իսկ ցանկագիրս գլխոցն ունէր միակ օրինակ, զորմէ առեալ եւ մեք եդաք։

# ՅԱՌԱՋԱԲԱՆ ՊԱՏՄԱԳՐԻՆ

Օ ԴԱԴԱՐՈՒՄՆ դարուց ժամուց և ժամանակաց թէպէտ և խնկապէս զ՚օրէ առաց Աամն դնել յիւրում իշխանութեան , ՚ի բաց միանգամայն տարեալ ՚ի մարդկայնոցս գիտութեանց զյոյժ հաւաստին և ըղյաւէտ կարելին , սակայն մարդիկ օժանդակեալք յԱստուծոյ , և գեղեցիկ և չափաւոր մղութեամբք ՚ի մոքունս փոքումբք ինչ յանդգնեալ , բանական առաքինութեամբ ետուն մեզ զկարգս պատմութեանց յեղափոխ յեղանակացս սահմանելոց կամ անցելոց . ոչ բանապաձոյձ մնացածին ինչ մէպս մեզ յարմարել , քան թէ զծանօթութիւն քաջողջութեան հոգւոյ անտի ։ Այլ ապա յիրս յիրս անցեալ զաւանցեալ ժամանակաց մատակարարեալ զմեզ , զի դիւրաւ մեզ հեռացեալս եղիցի հարցանել զհարսն որք ուսուցեն մեզ , և զծերսն որք պատմեսցեն մեզ ։ Այլ այսպէս զընտանի իւրեանց առատութեան մտաց ջանացան օգուտ աշխարհի գործել , զխափանելի մարդկան պէտս լցուցին պատրաստեցին , և ստուգադէտ իմաց-

ուածի խորհրդոց պատկանաւորեցին՝ յար-
ձանագրութիւնս բանից մատենագրելով
զնախնական պատմութիւնն, զոր յաւէտ
պատուասիրելիք և փափաքելիք և կենցաղ-
օգուտք ինձ իմանին։ Այսպէս և ես ան-
տանօր զանձն 'ի ներքս արկի 'ի կարգ բա-
նիս՝ որ առաջի կայ ինձ աստ. ոչ մնահաճ
հպարտութեամբ ըստ իմում ինչ կամի, այլ
վասն զի ծանեայ զաւ 'ի յինէն խնդրողացն
զանդուլ նոցայն հոգւոյն շարժմանս իմա-
ցուածոց, այնուհետեւ հարկեալ իբր 'ի
նուաղեալ իմեմնէ՝ սրավարեցայ թիակօք
'ի մակուկի ձաւխ, և զայս պատմութիւն
առնել տաղտկացեալ տագնապեցայ։

Սակայն ոչ ըստ գեղջկաց անարուեստից
երկրորդել զայն ինչ՝ զոր նախ քան զմեզ
քաջք և բանաստեղծք արդյականք և զար-
մանալիք զարժանի բան պատմութեան ան-
տուստ 'ի վերուստ արձանագրեցին դյայտա-
պատում իրս թագաւորաց, և զպայազատու-
թիւն իշխանաց, և զհանգամանս պատերազ-
մաց, և զշինանիստ շինուածս քաղաքաց և
գաւառաց, գեօղից և դերդաստանաց, և
զգործս արեաց և անարեաց, կամ զխռո-
վութեանց և խաղաղութեանց. զի մի ալ-
ղայաբար ինչ յանդգնեալ զմիանգամ գը-

րեալն երկրորդեցից, և ղքերթողացն արութիւնս տապալեցից, և զայնս վերծանողաց ծիծաղելիս յարկայուցից :

Եւ արդ՝ մի եւս ինձ այլ յիրս յառաջադրութեանս եղիցի ծախեալ զժամանակըս, վասն զի ծերութիւն ցաւագին մահու դուրս պատրաստ ունի, և տագնապ տարակուսիցս հալածեալ տայ պատմել զանցս անցից աղետիցս, և անհնարին խռովութեանց հասելոց կայելոց զմեզ : Արդ՝ այսուհետև յարաժամ և յաղքատիկնոյ՝ քան թէ խնդս մտաց յառաջ ձգեցից բան երագագիր դարի գրչութեանք : Եւ նախ՝ զգերովք հարցն եկեալ ըստ նախապատուամ նոցայն հանդերձ ծանօթս կացուցից սակաւուք[1] ինչ զնախնական արուեստն բոլոր ազգաց և ազանց՝ որ յորդւոցն Նոյի, և ապա զմերն Յաբեթ յերկուցն ՚ի բաց հատեալ որոշեալ : Եւ թէ ոչ մերս միայն ազգ ՚ի Նըմանէն, այլ և բազում եւս ցեղից արմատանս ճանաչիւր : Եւ ապա ընդ բոլոր Յաբեթեան ցեղապատմութիւնս վայր իջեալ մինչ ՚ի մերն Թորգոմ, և այն արտաքս խնոց բանիցս թողեալ, զծննդոցն՝ որ ազգաբանութիւն սուղ ինչ շարայարեցից . և թէ ո՛ք

(1) [illegible]

՚ի նոցանէ շինութեան պարապեալ, և կամ ո՛յք քաղաքական և բարեզգեաց բարուց, և կամ ո՛յք ոմանք ՚ի նոցանէ նախ սկիզբն գրման թագաւորելոյ ՚ի վերայ մեր, և կամ թէ զկնի նոցա Վաղարշակ պարթեւ թագաւորէ տանս Թորգոմայ. և զկնի նորուն սերունդք մեզ միապետեալ։ Նա թէ ՚ի ժամանակս նոցա սփռեալ տարածեցաւ ընդ ոլորտս երկրի քրիստոնէական կարգ հաւատոյ սրբոյ, և առաւել եւս ՚ի հայկական գրոհի, ՚ի Բարդողիմէ առաքելոյ որ մի է յերկոտասանիցն, և ՚ի Թադէոսէ առաքելոյ որ յեօթանասնիցն, ո՛րք և վիճակեցանն իսկ ՚ի Քրիստոսէ փրկչէն մերմէ աշխարհիս մերոյ քարոզք և վարդապետք ։ Ընդ որոց և զսուրբ Լուսաւորիչն մեր Գրիգոր զկնի շարադրեցից սակաւուք ինչ բանիւ (1), որ ելից և բովանդակեաց իսկ զառաքելական քարոզս նոցա, ՚ի լոյս ածեալ անցուցեալ զթորգոմեան ազն ՚ի խորին կռապաշտութենէ չարութե ։ Զկնի յարադրելով զորդիս և զթոռունս նորա՝ ո՛րք արժանի գտանէին յաթոռ սրբութե նորա. այլև զայլ եւս զյաջորդս նոցունց մինչեւ ցայսօր ժամանակի, և որ ինչ ՚ի նոցանէն և կամ յայլոց ոմանց յաւուրս նոցա

(1) Եւս օրի. սակաւ ինչ ։

գործեցեալ իրակութիւնք , և կամ թէ յու-
րոց ոմանց յաւուրս սպառսպուռ դադա-
րեալ թագակալ պերճութիւնս Հայկա-
նըս գրոհի . կամ թէ զիարդ այսրէն 'ի մեզ
նորոգեալ տեսաւ թագաւորութիւնն՝ որ
'ի վաղնջուցն Հետէ սպառեալ դադարեալ
էր , պսակելով զմեծ իշխանն Աշոտ թագա-
ւոր 'ի վերայ մեր : Զի թէպէտ նախ քան
զմեզ Մովսէս Խորենացի և մերումս
ժամանակի պատմագրի գրով դրոշմեալ է
զնոյայն գործոց և զգնացից և իմաստից և
մրցարանաց և շինութեանց և խաղաղութե
համառօտիւ , այլ այս այնչափ միայն առ 'ի յէ-
նէն քեզ տեսցի , զի առ 'ի յայժմու ճառս
նպաստ լեալ՝ ոչ տայցէ կարգի բանին Հա-
տակտուր սեթեւեթել . այլ յայտ ածեալ
զՀիւսումն Հաւաստութեան առաջակայ է-
րին . զինի ապա ընդարձակիլ բանիւ , և 'ի
նմին դեգերել պատմութեան վասն Սմբա-
տայ որդւոյ Աշոտի , որ թագաւորեաց Հա-
յաստանեայցս փոխանակ Հօր իւրոյ . այլ և
զարիական մրցմունս նորա , և զքաջայաղթ
Հանդէսս , և զբարեզգեաց բարս : Եւ թէ
զիա՞րդ զշինութիւն աշխարհիս տնօրինէր ի-
մաստայեզը մօք . ընդ նմին և ապա զայլոց
նախարարաց զեկուցուք բանիւ , դէք Հայա-

կարգք և հաշտական որք՝ հաւատոյ և անուա-
նեալք և բանք յայտնեցան ՚ի նորին աւուրս ։
Պարծեալ և զաղմուկ շփոթի որ ՚ի հարաւա-
կողմն Հայաստան հանին հատուածոց հալա-
ծանք, որոց փառաւորումն և առաւելումն և այլ
և գեղեցկութիւն և բնակչինք լինել սրբավայրի ա-
խարհիս Հայոց ։ Այլ և զաւակունս որ մինչ
արքային Սմբատայ բառ մարտիրոսական հան-
դիսից ՚ի բազմախոսութեան երկաթեայն խաւարե-
լեան ։ Իսկ կամ թէ նախ քան զդրուագն (1)
կենաց թագաւորին, զիարդ առաքեալն հնար-
ինաց չարիս արկանէր առ ի թշնամութեան
ընդ արքային Սմբատայ, և ընդ մեծ իշխանին
Գագկի քեռորդի նորուն, թագ նմա կա-
պեալ և հակառակ թագաւորեցուցեալ ։ Իսկ
թէ՝ զիարդ յետ մահուան արքային Սմբա-
տայ երբեմն միաբանութեամբ թագաւորեն՝
Գագկի Արծրունի, և Աշոտ որդի Սմբա-
տայ, և հանդերձ նորա որդի ստորագրեալն
Շապհոյ՝ հակառակ ընդ դէմ միմեանց ։ Իսկ
որպէս արքայորդին Աշոտ չուէր գնալ առ
կայսրն Կոստանդին, և գեղեցկապէս ՚ի նմա-
նէն զաւհրնկալեալ փութեղկապէս զերախտա-
թեամբ՝ բազում ընծայիւք բարեկամութեամբ
լինի և յաղթիւր յեբրայն աշխարհն ։

(1) Երկու օրի. գրչուածն ։

կամ թէ որպէս 'ի հակառակութենէ երե-
ցունց անուանակիր թագաւորացն յուզե-
ցան չար խռովութիւնք և ստամբութիւնք
և դղրդմունք և փոփոխմունք աւերմանց .
այլև գործք անարժանք . և կործանումն ա-
նազգակ և աշխարհաց մանկանց :

Նոյն՝ այսոքիկ քեզ բաւականացեալ յա-
ռաջաբանութի , որով մարթասցես գալ բա-
նիւ զսուղայն ճշմարտութ.[1] առ 'ի մտա-
ցանել զանձին , և առնուլ զպատմութիւն
հետևեալ խմ՛ընդ. համառօտ հաւաստու-
թիւն առաջնոյն գրքոյն մատենից աստուա-
ծայնոց . այլև ընդ արտաքնոց ևս ժամա-
նակագրութիս որք մինչև հաւաստեաւ՝ ընդ
մերում նշանակեալ յազգաբանութիւն
համարու : Նմանեբեան այսպ զբոլոր աշխար-
հաց գիտաս ծննդոց յերից որդւոյն Նոյի
ամէն սերեալք և գոյացեալք և աճեցեալք ,
և ցան և ցիր սփռեալք ընդ երեսս երկրի :
Զի թէ և զանուանս հարցն արտաքինքն
ստորոգեն 'ի մէնջ առն , որպէս Փախաւոթ-
րաւ՝ զՆոյ անուանեալ . և Բաւեղէս՝ զՍէմ.
սակայն պայազատութեանն զոյգս 'ի մի սա-
րեալ բովանդակեն : Իսկ այսպէս երկարան
չէր սոքա առանցն մեզ կարգ բանի , թէ

(1) Երէս- օրէ. Ճշմարտութեան :

'ի գալ ժամանել հանդիպել հասանել դա-րուն երկրորդի, հեղեղեալ ողողեալ ներ-սուզեալ ջնջեալ Տէր 'ի բաց սպառասպուռ մաքրեալ վերուստ երկրի 'ի մեղուցն և յամ-բարշտեցն և յանօրէնեցն, և 'ի փայրատ-շամբշեալ շաղղակերաց, և 'ի կուամոլ մար-դոց չարագունից. մինչ ոչ ևս մնալ 'ի բը-լոր բանականաց կամ յանբանից, բայց մի-այն 'ի տոհմէն արդարոյ հնազանդեալք ե-ղեն 'ի գործս արկղակերտի Նոյեան տապա-նին: Որս և միանգամայն խիկ մածեալ 'ի Նոյ-նա, և ընդ Նոյին ևս և յամենայն անբա-նից՝ որոց և անուրոց առեալ 'ի ներքս ընդ ինքեանս: Այլ այսպէս ջնջին փայտիւ (1) առ ճարտարակ վնասու հաւատացեալ պահեաց, առ 'ի Նախախնամել Նորօք վերկին Նորոգու-թիւն երկրի, լաւ խոստանչութցն հաւա-տարակարգ նմանութեան, և լաւ առաջնոյ նուիրման 'ի Տեառնէ Աստուծոյ ընդ և 'ի նոսա ևս զօրհնութիւն՝ յաճել և 'ի բազմա-նալ և լնուլ զերկիր, և տիրել մարդկան անս և որ ինչ 'ի նմա: Այլ վասն զի այսոքիկ այս-պէս քեզ ունեալ եղեւ, այսուհետեւ թէ հաճոյ քեզ թուի, յերկուցն զնա 'ի բաց տա-րեալ՝ 'ի Սեմայ առեմ նահապետութեանց

(1) Երկու օրի. փայտի.

և Ն. Բաւմայ, զմերն Յաբեթի ըստ կարգի բանիս սակաւուք ինչ յայտարարութեամբք տառացս ։ Վասն զի և ոչ իսկ դիւրայ է այժմու ձեռին, այլ այլում տեղւոյ և ժամանակի թողլի է ։





# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

## ԳԼՈՒԽ Ա.

### Յաղագս ծննդոց Նոյէ:

Յետ երկնատահանացն հեղեղաց, և անդնդապատոյս (1) ջրահեղձն լինելոյ բոլոր շնչաւորաց, և յետ ապրելոյ կամաւ նաւակութեանն Նոյի և ՚ի ցամաք ելանելոյ ՚ի Ձայս բառ հրամանի Տեառն՝ որդւովք և կանամբք հանդերձ և այլովք եւս ընդ նմին անբան կենդանեօք, սկիզբն ապա դարձեալ աւնու աստուածային այցելութեամբն աճելութիւն ծննդոց երկրի. Եւ ՚ի մերոյն Յաբեթէ նախ ծնանի որդի և անուանի Գամիր, ուստի ՚ի նորուն անուն աշխարհ կողուածոց նորա կոչեցաւ Գամիրք: Զկնի ծնանի Մագոգ, և սերունդք Մագոգայ՝ Կեղտք և Գաղատացիք: Եւ ապա զՄադայ, որ զաշխարհ տոհմի իւրոյ յիւր անուն Մարս

(1) Ձեռ. օրէ. անդնդապատոյան:

անուանեալ։ Եւ տալս զԹոբէլ, յորմէ Թեսալք ազգն անուանին, և զՄոսոք՝ որ պայազատէր զԼիւրիկիա։ Իսկ վեցերորդ զԹիրաս՝ յորմէ մերն իսկ Ասքանազ, և Թորգոմ՝ որ զմիապետութիւն իւր աշխարհ յիւր անուն յորջորջէր Թրակացիս, և զԲիթիւն՝ որ զԱսկեդոնացիս նուաճէր ընդ ինքեամբ։ Իսկ որդիք Թիրասայ Ասքանազ՝ յորմէ Սարմատք, և Րիփատ՝(1) յորմէ Սօրամատք, և Թորգոմ՝ որ ըստ Եբրեմիոյ զԱսքանազեանս գունդ յիւր անուն նուաճէր, տուն Թորգոմեայ(2)․ զի նախ Ասքանազ իսկ էր յիւր անուն սահմանեալ զմերազնեայս ըստ երկցութեանն սակի, զոր յիւրում տեղւոջ ասացից։ Իսկ Յաւանայ նախնւոյն Յունաց Եղիսա՝ յորմէ Սիկելացիք և Աթենացիք, և Թարսիս՝ յորմէ Վիրք և Տիւրենացիք, և Կիտիիմ՝ յորմէ Հռոմայեցիք։ Այլ սատ թէպէտ և ՚ի հարկէ չարադրական բան յառաջ բերաւ բոլոր ծննդոցն Յաբեթի պայազատութեան, սակայն չափ և եթ․ զի սուղ ինչ յայտարարութեամբ ծանօթացին քեզ հարազատութիւնք զրոհի մերոյ ՚ի միոյ միայնոյ ծննդոց գոլ այսչափ նահապետութեց և ազգաց։ Զի թէ ոչ բան ինչ յայտնիկ և

(1) Այլ օրի․ Եւրիփատ։ (2) Այլ օրի․ Թորգոմայ։

ոչ յայտնութիւն ինչ իրիք եղելոյ բացերե-ւակի .քեզ լինէր լեալ. 'ի տարակուսանս զքեզ հատեալ տարեալ անցուցեալ մղէր, և ինքնահաճոյ արդարեւ 'ի միտս և 'ի բանս և 'ի գործս զիս դատմեալ:

Իսկ արդ՝ եթէ զանքնութիւնս իմ 'ի շնոր-հակալուս քեզ ընկալցիս, ով ընթերցասէ-րդ (1), և պարտ վարկցիս յայլոցն հարազատ ազգացն 'ի բաց զիս տարեալ տուհեալ, որ ոչ իսկ փոյթ այժմու բանիս, և միայն զժա-մանակս և եթ ծախէ, 'ի մերն Թորգոմ ըղ-բանիս իմոյ դարձուցից ոճ, ըստ միանգամ առ յինէն ճառելոյն (2): Թիրաս որ երրորդ էր Յաբեթէ՝ ծնաւ երիս որդիս, զԱսքանազ. զՌիփաթ, և զԹորգոմ. և վասն զի զԹորա-կայցիս ինքեան անձին առանձին Թիրաս պայազատէր, պարտ վարկաւ՝ զի զայլ եւս զվիճակեալն իւր սահմանս յերիս հատուածս բաժանեալ տայէ 'ի կալուածս որդւոց իւ-րոց. ուստի այս իմաստն զգործն կատա-րէր: Իսկ Ասքանազեայ՝ որ նախ զմերազ-նեայս յիւր անուն Ասքանազեան անուա-նեաց, զՍարմատս նմա պայազատէր. իսկ Ռիփաթայ զՍորամատս: Իսկ Թորգոմայ ըղ-

(1) Յերէկ. օրի. պակասէ՝ ով ընթերցասէրդ և պարտ վարկցիս:
(2) Մի օրի. ճառուելոյն:

մերայնեայս ներգործականեալ, յորում ան-
բեալ՝ զԱբրահամեանն նախ անուանեալ յիւր
անուն նուաճէր տուն Թորգոմայ:

Արդ՝ այսպէս խնամ Աբրահամեան զմեզ և
տուն Թորգոմայ, և այսպէս բերք հաւատա-
մայլին որ վասն նահապետութեան ազգիս
մերոյ է բան, թէ պէտ և ոմանք այլազգաբար,
և ոմանք այլաբանաբար զրուցաց մէկս տան:
Իսկ եթէ տոմարածոյին Մովսէս զմերոյ
տան զմիոյ միոյ ոչ մերադրէ զժամանակս,
անարժանս խնն համարեալ բանի պատմու-
թեան, սակայն ընդ ազգաբանութեանն
Սեմայ զմերին Յաբեթ կցաշաղեալ՝ գտա-
նեմ մինչեւ ցԹորգոմ, և ցակիզբն(1) պայա-
զատութեան որդւոյ նորա Հայկայ՝ ամք ն
(400): Իսկ Յաբեթէ մինչեւ ՚ի նախնի մարդն
Ադամ՝ ամք ամբ (2242): Արդ՝ որպէս մե-
րադրյին ձառեցաւ, տոմարածոյին գիրք մին-
չեւ ցմերին Թորգոմ մեզ բացատեալ բը-
պատմութիւնս, անարժան փորկաւ զչա-
տակ ծննդոց նորա բանիւ տարածել, թէ
որոյ կամ ստաք, կամ զկարդ, կամ ոք ո-
մանք ախրեցին աշխարհիս Հայոց, կամ ուս-
ակ նախարարութիւնք տրա միապետեցան:

Այս անն յայտէ Սորի՝ Մարիբաս Կա-

(1) Զոր օրէ. ցակզբանս:

տինա անուն, հրամանաւ մերոյն Վաղարշակայ երթեալ 'ի դիւանն Թագաւորացն Պարսից. որ ուշիմ և վարժ էր մտօք՝ քաղդէարէն և յունարէն դպրութեամբ, 'ի խոյզ և 'ի խնդիր եղեալ գտանէ անդ մատեան մի վաւերական, զոր հրամանաւ Աղէքսանդրի ոմանց 'Աղեքսանդրեայ 'ի քաղդէացի գրոց՝ (1) 'ի յոյն փոխադրեալ էր. որ թէպէտ զբազում ազգաց զրոյցս հարստապէս 'ի նմա ծուխացուցեալ էր, սակայն նա զայլոյն իբրեւ զհօգս պարապոյ չբեալ թողեալ, զմիայնոյ մերոյս գրոհի հանեալ բերեալ մատուցանէր Վաղարշակայ։ Եւ այնու հետև յայնմանէ ծանուցաւ մեզ մերոյն անվրէպ զրուցաց հաւաստիք, և խմացեալ գիտացաք զարի սկզբապօր ախոյեանն գեղեցիկ զՀայկն զօր որդի Թորգոմայ, և զնախնի նահապետս և սերունդ ազգի մերոյ։ Եւ զայն զոր գիտէ բանս ընդ վիթխարի սկզբին միակամեալ գործել ըղ բարձրաբերձ ամբարտակին շինուածս ամբարտաւանութեանն, որ կարծէին կարել կատարել զամբարտաւանութեն խորհուրդ։ Իսկ ըստ աստուածայնոյն պատմութեանց՝ հողմ ահագին գոգցես իմն աստուածային հրամանաւն շնչեալ, զբուրգն բարձրաբերձ

(1) Եւս օր. գրոց։

'ի վայր հասեալ կործանէր, զնոցայն ցուցեալ սնավաստակ տքնութիւնս ։

## ԳԼՈՒԽ Բ.

### Յաղագս ապստամբութեանն Հայկայ ընդդէմ Բելայ, և սերնդոց նորա ։

Այնուհետեւ ասա՝ Ներբովթն որ է Բէլ՝ խրոխտաբար ձեռներէց լեալ, և 'ի վեր զինքն ամբարձեալ միապետել հնարէր առ հասարակ 'ի վերայ ազգացն և սկայիցն ։ Իսկ մերոյն Հայկայ ուժեղակաբար[1] ընդդիմեալ, և արտաքս զինքն 'ի հնազանդութենէ Բելայ բերեալ, գայ հասանէ փախստական յայս աշխարհ մեր՝ Արամանեկաւ որդւով իւրով, զոր ծնաւն 'ի Բաբելոն. և այլ եւս դստերբք և թոռամբք և բնածնեօք և եկօք յարեցելք 'ի նա ։ Իսկ Ներբովթն որ է Բէլ, զկնի հետամուտ Հայկայ հանդերձ իւրովքն, եւս հրասակօք արամբք կորովօք յաղեղն և 'ի սուսեր և 'ի տէգ նիզակաց, և բախեալ 'ի դիմի հարեալ միմեանց 'ի ձորաբաղաշտակի միոջ ահագին խիտ դղրդմամբ,

(1) Երկ. օր. ուժեղաբար ։

իբրեւ ընդ զառ 'ի վայր հեղեալ զսաստիկ ուղխից վրդովումն. այսպէս ահա ի՛մն պակուցանօղս և սարսափելիս զմիմեամբք շահատակելո՛յն արկանէին ։ Իսկ մերոյն Հայկայ լայնալիճ աղեղամբ զերեքթեւեանն նետ դիպեցուցեալ երկաթագամ տախտակի կըրծիցն 'Նեբրովթայ, թափանցանց ընդ թիկունս յայնկոյս յերկիր հարանէր, և այնպէս զնա սատակեալ՝ ինքն տիրէ հայրենատուր վիճակեալ աշխարհի իւրոյ, յիւր անուն ըզսա անուանելով Հայք ։

Նա յետ այսորիկ բազում գործս քաղաքականս յարդարեալ, և շինութեանց աշխարհի պարապեալ, և կեցեալ ամս ոչ սակաւ՝ մեռանի. հաւատալով զաշխարհս մեր Արամանեկայ որդւոյ իւրոյ ։ Իսկ Արամանեկայ միապետեալ զմերայնեայս, երթեալ դարեալ դադարեալ բնակէ 'ի գեղեցկատեսիլ դաշտի միոյ, որ իբրեւ պարապեալ 'ի նմանէ բարձրագագաթն սպիտակափառ լերամբք. յինքն ունելով զընացս գետոց երագադունից, (1) հատելոց անցելոց ընդ երկայնութիւն դաշտին խոխոջելով խառնչացեալ. և ապա զծործորս լերինն հիւսիսոյ շինեալ՝ յիւր անուն զլեառն յորջորջէ Արագած, և զկալուածս 'ի

(1) Երկու օրէ. երագագնացից ։

ստորոտս նորա՝ Արագածոտն։ Ծնանի ապա Արամանեակ որդի զԱրամայիս, և յոլով քան թէ սակաւ ամս կեցեալ՝ մեռանի։ Իսկ Արամայիս ՚ի նմին իսկ դաշտի բլուր մի առ եզերբ գետոյն Երասխայ՝ շինէ քաղաք և տո՛ւն բնակութեան իւրոյ, երասասոյ վիմօք զնա հրաշակերտեալ, և անուանէ զնա Արմաւիր։ Սորա արիական քաջամանութեան հանդէպ բաւական քեզ յառաջնոցն քան զիս մատենագրացն պատմի։ Սորա հարուստ ինչ ամաց ՚ի վերոյ անցելոց կենաց՝ ծնանի որդի զԱմասիա, և յետ ծընանելոյ նորա[1] զնա՝ փոքր ինչ յետոյ կեցեալ մեռանի։ Իսկ Ամասիա ՚ի նմին իսկ յԱրմաւիր բնակեալ, և շինեալ զհարաւակողմ լերինն ստորոտս, զլեառն յիւր անուն Մասիս յորջորջէ, և զգաւառն ՚ի ծործորս լերինն՝ Մասեաց ոտն. և ապա յետ ամաց ինչ ծնանի զԳեղամ, ինքն վախճանեալ ըզկեանս իւր։ Իսկ Գեղամ չուեալ երթեալ անցեալ գնացեալ զլերամբն արևելից հիւսիսոյ յեզր ծովակի միոյ, և շինեալ անդ գեօղս և դերդաստանս՝ լոռ իւր իսկ անուան զլեառն կոչէ Գեղամ, և զծովեզերեայ շինանիստն՝ Գեղարքունի. և ծնեալ սորա

(1) Երեք օրի. սորա։

երկուս որդիս զՀարմա և զՍիսակ. և Հար-
մայի հրաման տայ յԱրմաւիր բնակել, և
միապետել զտուն հայրենի։ Իսկ Սիսակայ
՚ի բնակութիւն տայ՝ սկիզբն կալեալ ՚ի ծո-
վեզերէն զհարաւակողմն արեւելեան մինչ
՚ի դաշտ մինչ ցինդ որ հատանեալ անցանէ գե-
տըն Երասխ, յորձանաւս խոխոջիւք վար-
տեալ և թափ անկեալ ընդ(1) նեղ և ընդ
նուրբ խոխոմս քարանձաւի միոյ, զոր այ-
ժըմ ՚ի բազմաց Բարաւալ անուանի։ Իսկ
Գեղամայ դարձեալ անտի՝ շինէ զդաստա-
կերտն մեծ և գեղեցիկ զԳեղամի՝ որ յետոյ
Գառնի ՚ի Գառնկայ անուանիւր, և ինքն
մեռանի։ Բայց Հարմա ծնանի զԱրամ, և
յետ ամաց ինչ մեռանի։

Արամայ բազում արութիւն քաջու-
թեանց մրցմանաց պատմի. և ընդարձակեալ
աստի հարստահարութեամբ(2) բազմաւ ըզ-
սահմանս Հայոց հասարակ ընդ չորեսին ու-
ղղաս երկրի. զի լուր քաջախոյզ հանդիսի-
ան զօրութեան որք շուրջ զմեօք էին ազգք
՚ի նորին անուն յորջորջաբար Արմենակս
զմեզ անուանեն։ Եւ ոչ միայն զայլս սահմանս
դիւրադասս, այլ և զԿապադովկեցիս եւս
բազում արիական քաջամարտութեամբ ընդ-

(1) Երկ. օրի. Թափանցեալ։ (2) Մի օրի. հարստութեամբ։

իւրեաւ նուաճեալ սեփականէր․ և զկղզիսն
զայն և զՊուփտոնն ըստ իւրում իսկ անուանն՝
Երմենի անուանէր, որ մինչեւ ցայսօր այս
անուն Յունականաց անուանի աշխարհին այն-
միկ անուանի։ Իսկ յԵրմենէն յայնմանէ կո-
չեցելոյ մինչեւ ցկողմանս Պոնտացւոց՝ առա-
ջին Հայք զաշխարհն անուանեաց, և ՚ի Պոն-
տոսէ մինչեւ ցոլորտս քաղաքին Մելիտինոյ՝
երկրորդ Հայք, և ՚ի Մելիտինոյ մինչեւ ցը-
սահմանս Ծոփաց՝ երրորդ Հայք․ և ՚ի Ծո-
փաց մինչեւ ցքաղաքն Սամոսատոյ և յաշ-
խարհն Աղձնեաց արեւմտեայ՝ (1) չորրորդ
Հայք․ այս մինչեւ ցսահմանս բնիկ տէրու-
թեան իւրոյ, իսկ զսեփական և զբնիկ
աշխարհ իւր համատարած՝ զսա մեծ Հայք
անուանէ․ Այս յետ ամաց ինչ կենաց ծնանի
զԱրայն Գեղեցիկ, և զնա այլ եւս ամս բա-
զումս կեցեալ մեռանի։ Իսկ Արայի զշինու-
թիւն աշխարհի տնօրինեալ՝ յիւր անուն ըզ-
բնակութեն իւրոյ վայրս կոչէր Այրարատ։ Իսկ
յետ ամաց ինչ վաւաշն այն և տռփոտ կա-
թոտն Շամիրամ խնայեալ ՚ի համբաւոյ ըղ-
գեղաղէշ գեղեցկութեն նորա, բազում ան-
գամ հրեշտակագնացութիւ ձիրս առատա-
ձեռն և բազմապարգեւ բարութիւնս նմա

(1) Երէ․ օրէ․ արեւմտեայ։

խոստանայր, միայն թէ հաւանեսցի գաղտնաւ զնա 'ի կնութիւն, կամ կատարել գոնէ զկամս ցանկութեան։ Արամ ոչ հաւանեալ՝ հայրձեալ տայր վաղվաղակի հասանել յերկիրն Հայոց ընդդէմ Արայի, ոչ այնչափ 'ի հալածել կամ 'ի սպանանել զնա դէմ եդեալ, քան որչափ 'ի նուաճել և ըղբռամբ ածել՝ առ 'ի լնուլ զկամս կամեցողին հեշտ ցանկութեանն. յոր թէպէտ ըղգուշացուցանէր զնօսա իւր կենդանի պահել զցանկալին իւր, սակայն նա 'ի մէջ պատերազմի մարտիկացն անգիտաբար մեռեալ, թողու իւր որդի զԿարդոս։ Իսկ շուայտաոյն Շամիրամ սակս առաջին իւրոյ խանդաղատանայն առ Արայն, կոչէ զանուն Կարդոսի յանուն հօր իւրոյ Արայ, կարգելով զնա 'ի վերակացութիւն աշխարհիս Հայոց, որ և մեռաւ իսկ 'ի պատերազմի ընդ Շամիրամայ, թողլով իւր որդի բազմահարուստ և լիահանճար յիր և 'ի բան զԱնուշաւանն Սոսանուէր, որ երբեմն զմասն ինչ աշխարհիս, և ապա զբոլորս իսկ նուաճեալ սպաղաւէր։ Սա յետ ամաց յոլովից կենաց մեռանի։ Ի զարմից սորա և զաւակաց՝ (1) ոչ տիրեալ զամենեքին հայրենի նահապետու-

(1) Երկո. օրի. և 'ի զաւակաց։

թեմոյն . այլ այլք անանք բռնակալեալք ոչ լեալ ազգի՝ այլ լեալ յաւագախնութե անիրաւ թագաւորեալն գրոհի , որոց անուանքն են այսոքիկ . Պարետ . Սպրոկ . Զաւան , Փառնակ , Սաւր . առ սոքա Յետոյ ժառանգեցուցանէր Խորայէլի զերկիրն առեւեց : Զ. լինի սորա Հմնակ , Սիմակ , Սանակ . Նորայր . Վառամ , Կոր . Գորակ , (1) Հրատն , Բնձակ , Գեղակ , Հաւան , Զարմայր , որ ձեռնակալեալ պատերազմին ընդ Եթովպացի զօրուն մեռանի : Պերճ , առ որով Նուրհ ազգայն Խորայէլի . Սուրուն , Բազուկ . Հոյ , Յուսակ . Կայպակ , Սկայորդի . յետ անկանելոյն սորա Պարոյր անուանեալ յազգէ Հայկայ :

---

## ԳԼՈՒԽ Գ.

### Յաղագս Թագաւորելոյ Պարուրայ՝ և յաջորդաց նորա մինչև ի Վահէ .

Սուսանօր զանազգին ՚ի բաց լերեալ Հերքեալ , և զնահապետութիւն ազգի իւրոյ մերձաւորին նորոգեալ պայծառացուցանէր : Սա ձա-

(1) Հին օրի . Գոռակ .

քաջորդ պսակի թագընկալութեանն ընդ ա-ռաջին ՚ի Հայս . զի Վարբակէս գաւառապետ Մեդացի . ՚ի քաջաց այնոց բարեկամն իւր կարծեցաւ առաւելութեանն բարկու , ընդ որս և զքաջն և զաջողակն մեր Պարոյր յան-քրն յանկուցեալ՝ ձև և չուք թագաւո-րութեանն նմա զնէր , և նորա հանդերձ յինքն զրուեալ ՚ի Սարդանապալոյ զթա-գաւորութիւնն՝ առեալ Ասորեստանի և Նի-նուէի : Յայնմ հետէ ՚ի պարծանս փառաց ազգիս մերոյ մինչ իմ՝ ասացեալ (1) զնա բերել զեղեցիկ ՚ի ներքոյ սորա . զի ոչ նուաճեալս այսուհետև , այլ թագաւորս մերայնոյս շարադարել ինձ պատշաճի պանծալի պար-ծանօք : Սա ասէ Արծրունիք յորդւոցն Սենեքերիմայ բնակեալ ՚ի Հայս բարեպաշտիւք ՚ի Պարուրոյ եղեն : Իսկ Պարոյր յետ մա-հուան իւրոյ թողու իւր որդի զՀրաչէ , բառ արժանի անուանն և տեսակ դիմացն , վասն զի՝ յաւէտ իւր զուարթանայր և բոցակնադոյն նա տեսողացն երևէր : Սա ասեն գերեալ զխառն զիւն զՀրէաստան ՚ի Նաբուգոդոնոսորայ :

Իսկ Հրաչեայ ՚ի գլխաւոր գերելոյն զմի ումն ՚ի Նաբուգոդոնոսորայ հայցեալ զՇամ

(1) Խորէն. Գրք. ասացեալ.

բաժ անուն, բնակեցուցանէ յերկրիս մե-րում մեծապատիւ շքեղութեամբ. եւ ի ծննդոց սորա սերեալ ազգք Բագրատունեաց։ Իսկ յետ Հրաչէի Փառնաւազ պետական-ութիւն ազգիս պայազատէ։ Եւ յետ նո-րա Պաճոյճ, և յետ նորա Կոռնակ. յետ ո-րոյ Փաւոս։ Եւ զկնի Փաւոսայ՝ միւս Հայ-կակ. իսկ յետ սորա՝ Երուանդ, որ փոքր ինչ ի նահապետութեանց կեցեալ՝ ծնանի զմեծն Տիգրան։ Եւ սորայն անուանք և զօրք թէ հարցեալ լինի՝ յորմէ գոլ, գիտել գիտասցէ՝ զի Բագրատունեաց մանանկերն մեզ ընծեռեցան, որք կան ի Սիսուէ և Յերե-սիս, առ Տիգրանի գրեալ։ Բայց Տիգրա-նայ առաւել եւս քան զնոսա թագաւորս մեր խիստագոյն հարստութեամբ խոհե-մաձին երեւեալ, ունելով զանուանս զամե-նեքուման լինէր։ Սա յետ բազում ամաց-նի քաջութեան, և զօրաւոր գործս քաջա-քանխում յարդարեալ. զԱսորայն ի բաց բար-ձեալ զիշխանութիւն՝ պայազատէր զնա։ Եւ զՅոյնս ոչ սակաւ ժամանակս ինչ ընդ իւ-րեաւ հնազանդեալ նուաճէր. և զԱժդա-հակ արքայեալ՝ զարքունիս նորա ի գերու-թիւն վարէր, և ածանդակեալ եւս յանուշ մորէն վիշապացն, և կալեալ զԱժդահակ յինքն զի-

խառնութիւնն Ասորւոց և Պարսից գրաւեալ յանկուցանէր. և զսահմանս հայրենի գրա-հէին 'ի հինն մեր հասուցանէր յեզերս ծայրի ընտրութեանց. և զազգս մեր եւս քան զեւս բարձրացուցեալ ձոխացուցանէր. և որք ընդ ընդ հարկի այլոց ամաց էին կացեալք. ա-մենեցուն նոյն ընդդիր և հարկապահանջ լինէր: Եւ 'ի սմանէ առեն լինել զԱստանիկ ազատութիւն բարձին, որ այժմ դեռեւս կայ և որչի անուամբ, իբր Թագաւորա-կան իմն զարմ զեստա խնացեալ: Նայէս էր սա մեծիմաստ և պարկեշտ և մեծաջան, և նազելի 'ի գնոյս և 'ի գործս զկեանս իւր էր քաղաքավարեալ. այլ և 'ի հաւատարմա-րութիւն(1) առ ամենեսեան զինքն կշռադա-տեալ: Նայէս և անդր եւս քան զայս լը-ցեալ էր սորա բարի մրցանաց հանդէպ. և բան գովեստից սորա բազում ձառից սի-րոյ է, այլ շատ տաղնապի տարակու-նաց ոչ ներէ ինձ ծախել զժամանակս 'ի ներբողուածս սորա, քան թէ փութալ յայլ ինչ որ առաջի կայ:

Տիգրան ծնեալ որդի զԱռա, Տիրան, Վահագն, զոր 'ի կանոնացահար աղերսախ ընդ վիշապաց համբաւէին կռուել նմա և

(1) Զօրս օրէ. 'ի հաւատարմութիւն.

յաղթել։ Այս ընդ բազմին Հերակլեայ նա-
հատակութեանցն զնա համեմատեալ, ասէ
բանն զՎահագնէ (1) թէ՝ ի նահանգին Վը-
րաց ըստ չափ հասակի նորա անդրի կանգ-
նեալ պատուէին զոհիւք, և ի զարմէ սորա
սերին Վահունիք։ Սա ծնանի որդի, և ի
կրտսերոց որդւոց նորա Առաւենէ՝ Առաւե-
նեանք ցեղ պատկերին։ Իսկ յԱռաւենեայ ծը-
նանի Ներսեհ, և ի Ներսեհէ՝ Զարեհ,
յորմէ ազգ Զարեհաւանեան։ Իսկ ի Զա-
րեհէ Արմոգ. յԱրմոգայ՝ Բայգամ. ի Բայ-
գամայ՝ Վան, ի Վանէ՝ Վահէ։ Սա խրոխ-
տաբար ամբարձեալ ընդդէմ Աղեքսանդրի
Մակեդոնացւոյ՝ մեռանի ի նմանէ։ Յայսմ
հետէ ոչ գտանի ստուգաբան պատմու-
թիւն մինչ ցեղապետութեանցն կայսերաց՝
մինչև ցթագաւորել պարթևին Վաղար-
շակայ. զի ամենայն շփոթութեամբ զմի-
մեանս եղեալ, և այլ ընդ այն ի կռիւս կա-
ռաւեալ՝ մինչև զխռովութիւն զօրավարծինն
ի բնակութիւն իւրեանց առնէին, և
ամենայն զիւրեանցն պահէին։ Արդ՝ այլ մի
եւս առաւել ինձ աշխատութիւն հար-
ցանել, որ զհամառօտութիւն բանի և զհա-

(1) Չորս որդի. զՎահագնի գնէր Տիգրանայ։ Երկու որդի.
առնէն Վաշն՝ զնար Տիգրանայ.

ւատութիւն և զարդարանութիւն միշտ պատուել գիտեմ ։ Բայց ամենեցունց սո-
յա թուականք ժամանակաց ՚ի մերոյն Հայկայ մինչեւ ցԹագաւորել Վաղարշակայ, գտանին ամք, ամէ, (2297)։

## ԳԼՈՒԽ Դ.

### Յաղագս Թագաւորելոյ Վաղարշակայ Պարթեւի և Թագաւորութեանց նորին և յաջորդացն մինչև ցա-ջաղն Տիգրան Բ.։

Իսկ եւ յայսմ Հետէ սակաւուք ինչ զԹագաւորելն Վաղարշակայ ՚ի վերայ մեր շարադրեցից, և որք յետ նորա ՚ի նորին սերմանէ փոխանորդեցին զԹագաւորութիւնն, որք և Արշակունիք անուանեցան. և զաներգն որ յայլոց անտից եղեւ պատմեալ. ՚ի նոսա Հրաւիրեցից զխօսել թէ պիտոյ է ինչ։

Աղեքսանդր Փիլիպպեայ ախոյեանակեալ բազմաց՝ այր աներութիւն կատարեալ, զի ՚ի վերայ ամենեցունց մատուցանեալ իւրն անուանեալ իշխանութիւն։ Եւ սորա մեռեալ՝ Սելեւկոս զինի Թագաւորէ Բաբելոնի, զՊարթեւս եւս ընդ իւրեաւ Հնա-

զանդեալ պատերազմն ստորիւ (1)։ Այլ ապա եւս մեռեալ, առնու զԹագաւորութիւն Նոտիրամ՝ որ եւ Սափոերն։ Այլ այսպէս աքա Թագաւորեալ ընդ փոքր եւ ընդ շատ իբրեւ ամս վաթսուն, ապա ապստամբին Պարթեւք ի Սանկեղենացւոց։ Իսկ Արշակ քաջ ի զաւակէ Աբրահամու ի Քետուրական ծննդոց, զոր յետ մահուանն Սաւուղի էառ իւր կին, Թագաւորէ ի վերայ Պարսից եւ Մարաց եւ Բաբելացւոց, եւ անուանի Պարթեւ, այսինքն Քաջութիւն։ Սա բազում պատերազմօք ընդդէմ քաջաց անյաղթ գտեալ, ընդ իւրեաւ զամենայն Թագաւորութիւնս նուաճէր. եւ վասն զի անշխարակութեամբ իմն ձեռներէց լինէր ինքնիշխանաբար, ապա Թագաւորեցուցանէ Հայաստանեայցս զՎաղարշակ եղբայր իւր. զայր բարեխորհուրդ եւ խոհեմ՝ եւ քաջ։

Սա յետ բազում միջական յաղթանակաց ընդդէմ Թշնամեաց, բազում գործս բարեքաղաքս եւ կենցաղօգուտս յարդարեալ կազմէր փոյթաջանական կարգօք՝ Նախի՝ անձնինեղեալ շուք Թագաւորութեան բոլոր խոհ պերճապանծոյծ փառաց հանդիսիւ։ յետ որոյ նախարարութիւնս ընդ ձեռամբ հաստատեալ

(1) Երկու օրի. ստորիւ. Մի օրի. ստորեաւ։

կացուցանէ ՚ի դրան արքունի և ընդ որոր-
տալ եւս խոյս տէրութեան . և զօրս պա-
տուական և զինուորս հաստատէր ՚ի նահա-
պետութիւնս բազմօրինակ մասամբք ՚ի զօր-
մից Հայկայ և յայլոց եւս ազգականաց ա-
րանց : Նախ՝ զԲագարատ որ ՚ի Շամբաթայ
Հրէէ էր , զորմէ համբաւեն լինել յազգէ՝
՚Բուլթի , թագադիր թագաւորութեան
իւրոյ գոլ հաստատէր . փոխան զի՝ նա նախ
զանձն ընծայ մատուցանէր քան զայլս բա-
զումս . այլ եւս ասպարապետս և իշխան բիւ-
րուց և հազարաց զնա կացուցանէր : Յե-
տոյ թագադրել փոխեալ զՅունականն , և
նուաճեալ կարգէ ընդ խորով ձեռամբ բդ-
Փիտոս և զԽեռայրս որ կոչի Մեծոփ՝ հան-
դերձ շինադրեալ գաւառօքն . Նա և նման
զարձեալ ընդ ծովեզերեայն ու սարսափ
յերկիրն Կոլխաու , հրամանս ապստամբ-
եալ չխոնարհութեան փոխենի ազգացն այնու-
ցիկ ՚ի բաց քեցել յանձանց զաւազակու-
թիւն և զմարդադատութիւն և զչար
չարախօսն . և հրամանաց և հարկաց ար-
քունի հպատակ կալ , և բարձի և ըեղանե-
ութեանց յարքունական արժանի գտանել :

Նայելս արդ զարդարելս արքունեացն
յարմարապէս հաստատել , արդ յօրինէ կար-

դըս փայելուչս խորում եւս պալատանն, որ ինչ օրէն է թագաւորութեան, և որ սիտակ է թագաւորութեան, և որ բաղձալէ զթագաւորութիւնն ։ Աւ նախ թագադիր իւր ըստ սկզբանց(1) ասացելոյն կացուցանէ. ապա զգեցուցանօղս արքայի և թիկնապահըս, և ապա որմնս խոկ երէց և հաւուց ՚ի սպէտս խորտկաց, և դարձեալ սպասիկս(2) և գահաւորս և հաղորդապետս զհարանց, և ապա մատուռակս և արծուէկկս(3) և բազէկկս. և պատրաստիչս ձեան ամարանոցաց և համբարածուս ձմեռնանոցաց, և լեգէոն պահպանակ թիկնոցաց, և գանձապանս դրանց արքունի, այլև ներքինիս խաղեալ. ապա երկրորդ եւս թագաւորութեանն իւրոյ կացուցանէր ՚ի զաւակէ Մարացւոյն Աժդահակայ, որ այժմ Մուրացանդ անուանի ։ Նոյնպէս յարդարեալ ապա զարքունական սիտոյիցն զհանդամանս, կարգեալ կացուցանէ այնուհետեւ կաղմնակարս, կուռակարս. նահապետս, ատենակալս, զօրագլուխս. կարգէ և բդեաշխս մի յերկրին Գուգարաց հիւսիսոյ, և միւս եւս յարեւմտից հարաւոյ յաշխարհին Աղձնեաց ։ Որոշէ և ժամս յարքունի-

(1) Մէ օր. ըստ այնմ սկզբանց ասելոյն ։
(2) Մէ օր. սպասիկս ։ (3) Երկու օր. արծուակկս ։

որն մնանէրս , և ժամանակս խորհրդոյ ։ երանաւոյ և խրախճանութեան պատրաստէ . և յիշեցուցանողս երկնից , մինչ մի զբաղի յիշողութիւնն ընդ ունայն կապեալ . և յանխիրու հրամանս թագաւորին դիւրուցանել զլուծն և զմարդասիրելին , քան միւսոյն զկեր ժողին դրութիւնն չարայն և զհատ խրատուսին ցուցանել ։ Իսկ զքաղաքացիս նախապատիւս քան զգեղջուկս համարել համայն . այլ և քաղաքայնոց ոչ խայտառ ՚ի մեծաց գեղջկացն ընդմիջեալ և պերճանօք . և այսպէս կենսահաղորդ լինել ընդ մեծամեծս ամենախոհեմն եղբայրութեամբ , որ է առաւել չքնաղութեան և խաղաղութեան ։ Արդ՝ սա յետ այսպիսոյ գեղեցկայարմար կարգաց յանձնեածոց և բարի և բարեպաշտն անուանն՝ մեռանի ՚ի Միծբին թագաւորեաց ամս ԽԲ (ԻԲ) ։

Յետ սորա Արշակ որդի նորուն ընդ նորա թագաւորեաց հետեւեալ հայրենի միաբանութեանց միջնորդն գտանիւր ։ Սա քաջ և քաջ մարտուցեալ (1) ընդ Պոնտացիս և ջախջախեալ զնոսա . պատանի եթէ զանգ նիզակս բեկոյ զօր ազդեալ օձից ասէ ՚ի մեծաց , նոյնացուցանէր հարուստ խորհուրդէ յարձանի մտաւ՝ թողեալ նշան ասպարացն զխոր

(1) Զորս օձի . մարտ առնել .

խորում քաջութեանն ։ Յաւուրս սորա հաստատեալք ոմանք ՚ի Հրէից բնակելոց ՚ի Նուկիարն՝ որ ՚ի ծործորս Կովկասու, և կեալ բնակէին այն ՚ի սարբեւ (1) Կողայ ։ Երկուք ոմանք ՚ի նոցանէ չարչարեալք սակս ոչ պաշտելոյ զդիսն՝ սուրբ կատարեցան ՚ի վերայ հայրենի օրինացն ըստ Եղիազարու սրբոյ և որդւոցն Շամոնեայ ։ Նոյն Արշակայ թագաւորեալ ամս ժգ (13)․ փոխանորդէ զթագաւորութիւն նորա Արտաշէս որդի նորա ։

Սա ոչ տուեալ տեղի Արշակունեաց Պարսից արքայի ըստ օրինի առաջնոց ունել զնախագահութիւնն, և հաւասարահաւարութբ զնա ընդ իւրեաւ հնազանդեցուցեալ, զի Արտաշէսի Արշակունին զնախագահութիւնն հաստատայր՝ զերկրորդն ինքն ունելով զգահ ։ Սա բազում զօրս խաղացեալ գնացեալ յարեւմուտս ՚ի վերայ Եգիպտացւոց, և ձերբակալ արարեալ զթագաւորն Սիւրաց, հրամայէ հանել զնա ՚ի տանջանարան երկաթեղէն սալապակի ։ Իսկ Սիւրացի զբանն Սողոնի ՚ի յիշատակ իւր ածելով՝ ասէ ․ Ոչ պարտի մարդ երանել զբարեբաղդութիւն իւր մինչեւ ՚ի փախճան ։ Դարձեալ Արտաշէսի

(2) Մի օր․ առ սարբեւ ։

ծանակչնացութեամբ ընդ երկիր բերեալ՝ առնու զՊոնտոս և զԹրակէ ։ Կործանէ և զԿապադովկացիս . փախստեայ առնէ և զՓռիւգացիս . անձնատուր լինին նմա և Պոնտացիք . զոհս ընդ դիւցազանցն մատուցանէ Ասիակա ։ Նա և 'ի վերայ այսր ամենայնի ոչ եւս ընտացեալ նորա յինքեան միոյ հպարտութե , այլ արտասուելով ասէր . Աւա՜ղ փառացս անցաւորի ։ Յետ այսորիկ ջան 'ի մտի եդեալ ծառայեցուցանել իւր զեւրոպ իսկ արեւմտեայն . ընդ զԱլկիբիանոս բազում նաւաց բազմութեամբ՝ սակս նաւարկելոյ 'ի վերայ ալեաց բազմաց ։ Իսկ անդ ահագին խռն ալմուկ շփոթի 'ի մէջ իւրոց զօրացն լեալ՝ ընմիմեանս սատակէին . ընդ որս և Արտաշէս որ այնչափ յաղթանակեալ զբազում ազգ , խողխողի յիւրոյն զօրաց՝ թագաւորեալ ամս իե (25) ։

## ԳԼՈՒԽ Ե.

### Յաղագս Թագաւորելոյ Տիգրանայ երկրորդի և գործոց նորա, և Արտաւազդայ, և Արշամայ ։

Իսկ զկնի Արտաշիսի թագաւորէ երկրորդն Տիգրան որդի նորուն ։ Սա գումար-

տան բազում ընդդէմ Յունականացն 'ի մերայ եկեղեցին 'նորա կազմեալ` 'ի մերձ կայս ընդ-նոսա նահանջէր, և 'ի քեռայր իւր Միհրդատ զՄիժան և զայլ միջերկրեայսն հաւատացեալ` դաւանոյ յաշխարհ իւր. Նա Միհրդատ երկթոյ ունի եւս և զՄամխա, որ բազում ամօք յառաջ չքնեալ էր յՄամեայ եղբօր որդւոյ Նեքտանեբայ` հրամանաւ Աղէքսանդրի որդւոյ Նեքտանեբայ (1), և յընդարձակագոյն զնա սպանեալ, և զբաւելով զնա 'ի Հայս` անվերապահման քաղաք զնա յարգարեալ կոչէ: Շինէ 'ի նմա և արքունիս բուն հիւսիսոյ կողմանէ Աֆա դեղոյ: Իսկ յարեւելից գիմակ քարանձաւին շինէ քարակոփս և ստուն բնածայս յօրինէ համանման ձեւակերպին Շամիրամայ, որ 'ի Վան և 'ի Խաղտոտթզեղին: Նայց Տիգրան յետ բազում կարգաց և յօրինուածոց իւրոց զինք 'ի մերայ Պաղեստինոյ` աեալ գերի բազում 'ի Հրէից: Յայնժամ ապա և Պամպէոս Հռովմայեցի զայս հասանէ 'ի մերայ Միհրդատայ, որ թէպէտ և ահագին մարտ ընդդէմ նորա դամբարանակ դնէր, սակայն յաղթեալ 'ի բազմութենէն փախստ-

(1) Ցնորեալ ոք. դուրսն հրամանաւ Աղէքսանդրի որդւոյ Նեքտանեբայ:

տանկան ՚ի կողմանս Պոնտոսի անկանէր։ Իսկ Պամպէի առեալ զՄիժակ, և կալեալ զորդին Միհրդատայ զմանուկն Միհրդատ՝ լաւ անուանս հօր իւրոյ, զփախստականն Միհրդատ ՚ի ձեռն խաղաղութեան հօրն Պիղատոսի արքայանալ թուէաւ որ դեղովք, և տայ զպատանին չհասցունելն ՚ի ձեռն Պաբիանոս Հռովմայեցւոյ. Իսկ Պարթևաց ար Տիգրան քեռի իւր առաքէ զպատանին։ Իսկ յետ սակաւուց ինչ արհամարհութիւն գտեալ Միհրդատայ ՚ի Տիգրանայ քեռւոյ իւրմէ, և հատուածեալ ՚ի նմանէ անկանի առ Կեսար. և Կեսար առեալ զՄիժակ Միհրդատայ, չենէ զնա ևս ընդարձակադրի և արդեան ձեռնածով, և ՚ի պատուի Կեսարու կալ զնա Կեսարիկա. և յայնժամ հետէ ոչ եղեւ այն քաղաքն ընդ իշխանութեամբ Հայոց։

Բայց Տիգրանայ խոհութիւն յոյքեան եղեալ, կացուցանէ ՚ի նախարարութիւն Հայոց զԲագարատայ Աշուտեայ և նահապետ նմա կացուցեալ զԱնէլ անն յազգէն Պնունի, առաքէ ՚ի Պաղեստին և Աչուստապէմ զօրու մեծաւ։ Իսկ նորա բազում ինչ և մեծամեծ քաջութիւնս և արութիւնս անդ ցուցեալ, զՀերովդէս փախստական առնէ, և զԱնտիգոնոս փոխանակ նորա

թագաւորեցուցանէին, և զՀիւրկանոս քա-
հանայապետն Հրէից կապեալ ածէին Տիգ-
րանայ հանդերձ այլեւս գերութեամբ մե-
ծաւ։ Յետ այսորիկ Տիգրանայ փոքր ինչ ժա-
մանակ կենաց ՚ի վերայ անցեալ վախճանի՝
թագաւորեալ ամս լդ̄ (34)։ Նորա յետ մա-
հուանն Տիգրանայ, Անտոնիոս թագաւոր
Հռովմայեցւոց առաքէ զօր բազում յԵրու-
սաղէմ, որք և պաշարեալ իսկ և առեալ զնա
սպանանեն զԱնտիգոնոս, և զՀերովդէս
դարձեալ թագաւորեցուցանեն առ հասա-
րակ Հրէաստանի։

Յետ այսորիկ ապա Արտաւազդ որդի
Տիգրանայ թագաւորէ Հայոց։ Սա ոչ ինչ
ըստ սակի հօրն քաջախայլ վառաց պերճա-
պայծառ գործ արութեան ցուցեալ, քան
թէ միայն պարարաբոյծ և որովայնապարար-
եալ, և թափառեալ զհետ որսոյ և իշալայ-
րեաց զաղբիս մեծացուցանէր։ Վասն որոյ
յանդիմանեալ յիւրայնոցն, և իբր ի խթանա-
կին ընդոստուցեալ բանիւ և ՚ի քուն զար-
թուցեալ, և բազում զօր գումարեալ խա-
ղայ ՚ի Միջագետս, և զորս յափշտակեալն
էր առ ՚ի նմանէն Անտոնիոս արքայ Հռով-
մայ, վանեալ հալածէ անտի զզօրս Հռով-
մայեցւոց։ Իսկ Անտոնիոս զայն լուեալ, և

խուռնն առեալ զբազմութիւն զօրայն՝ գազանաբար յարձակի 'ի վերայ, ո՛չ միայն 'ի մերն(1) Արտաւազդայ, այլ և յայլոց եւս ազգաց և թագաւորութեանց առ հասարակ անտանելունչ զամենեսեան թողեալ. ընդ որս և զմերն Արտաւազդ ձերբակալ առնէ 'ի Միջագետս, առ հասարակ զզօրս Հայոց և Պարսից սատակելով: Իսկ զԱրտաւազդ համբերձ ընչիւք բազմօք յանկածէ(2) պատերազմին պատրաստեալ առ Կղէոպատրեայ՝ որ յԱնտուասղէմ:

Այնուհետեւ ժողովեալ զօրք Հայոց հրամանաւ Արտաշիսի թագաւորին Պարսից կացուցանեն թագաւոր իւրեանց զԱրշամ՝ որդի Արտաշիսի եղբօր Տիգրանայ: Իսկ Անտոնէ կալեալ սկիզբն մանկաւորս ինչ հարկել Հայոց 'ի Հռովմայեցիսն. զի խոյսն Արտաշէս առաջի Պարսից փախձանեալ, և Արշաւիր որդի նորուն առեալ փոքր թագաւորեալ՝ ոչ զօրէր գալ 'ի Թիկուն, և ոչ որ այլ գայր նմա համաշունչ: Ասամնոր Անանոս Բագրատունի, որ արձակեալն զՀիւրկանոս 'ի Հրէաստան՝ զոր 'ի Տիգրանայ էր գերեալ և ածեալ, փոխան այսորիկ ընկեցաւ 'ի պատուոյն իւրմէ և եղաւ 'ի բանտի. և փոխան զինահաղեան Գրի-

(1) Մի օրի. 'ի վերայ մերն:    (2) Հին օրի. անկածէ.

դաւանեաց Ուրս քաւթիւն յանկանգս Աբ-գարայ հաստատանէր և բանն զօրանայր առ ի հաւատալ, հրամայէ ովսաղէս ամենայնանոր խոշտանգել զնա, զի կամ թողեալ զօրէնս հրէութեանն երկիր պագցէ կռոց, կամ կախեալ զմայրէ ընթացինք լինել աղդա։ Ազ-գմ ի նորին աղդակնաց ազատեալ, և զոր-դիս նորա մատուցեալ ի ներքս ազանմանն. և ի չմուժել մահուան որդւոյն կատարէ զկամս ազգային հանդերձ բարեը հանդ-դերձն, և յաւաջին դատին հաստատի։

## ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս Թագաւորելոյ Աբգարու և հաւատալոյ նմա ի Քրիստոս՝ և գործոյ նորին, և լուսաւորութեան ազգին Հայոց.

Յայս Աբգարեան թագաւորեալ ամս քսան, որդի նորուն Աբգար փոխանորդէ ըզ-թագաւորութիւնն։ Սա փառն որ նայելի էր խնամութեամբ, Նուագ այր յաւաշնոյն ան-ուանիւր, զոր Նարուղ և Յունաց բաժ մեր-բամն ընդելի ոչ բաւեալ ուղղափոխել. Աբգար զնա մնուանէն։ Ըստանօր ամե-

նայն Հայք հալածեցան Հռովմայեցւոց հրամանաւ Օգոստոս կայսեր՝ յաւուրս աշխարհագրին, յորում ժամանակի ծնեալ լենի Փրկիչն մեր Յիսուս Քրիստոս ՚ի Բեթղեհէմ Հրէաստանի:

Բայց ՚ի մէջ Աբգարու և Հերովդէսի ոչ փոքր ինչ խռովութիւն և աղմուկ շփոթի պատերազմաց յուզէր, և վասն առ ՚ի Քրիստոս համարձակութեան Հերովդէսի և կոտորելոյն զտղայն ՚ի Բեթղեհէմ՝ յանհնարին ցաւս բմբռնեալ էր և ոչ կարէր անձամբ վճարել ինչ: Այս առաքէ զմի եղբօր որդի իւր զօրօք բազմօք, որոյ հասեալ ՚ի Սիքլագեոն, և առեալ պատերազմ ընդ Աբգարու, մեռանի ՚ի նմին: Իսկ և իսկ փոխանակի Հերովդէս, և Արքեղայոս որդի նորուն փոխարինէ զտեղին: Այս և Արշաւրի արքայի Պարսից եւս փոխանակեալ՝ աղմուկ շփոթի ՚ի մէջ որդւոց նորա լինէր, թէ ով ոք ընդ հօրն իւրեանց թագաւորեսցէ: Իսկ Աբգարու երթեալ իբրև զայր իմաստուն՝ հաւանէ ՚ի մէջ նոցա, անկեալ ՚ի նոսա զհաշտ խաղաղութիւն՝ թագաւորեցուցանէ զԱրտաշէս: Իսկ զայլ եղբարս նորա հանդերձ քերբն՝ երիս ցեղս որոշէ կոչմամբք այսպիսեօք. Կարէնի Պահլաւ, Սուրէնայ Պահլաւ, և

քոյին տապահաղեալի Պահլաւ . որ առաջ յետ ժամանակաց ինչ՝ սուրբ լուսաւորիչն Գրիգորիոս Սուրենեանն Պահլաւ շարժեալ շառաւիղ սոս որթոյն Տրդատայ . և Կամսար՝ յորմէ Կամսարականք ՚ի Կարենեանն Պահլաւէ . և այսպէս սոքա տեսեալ լինին թագաւորազուն բողբոջք ։

Նայց Աբգարու ապականեալ լինէր մարմինն չարաչար ախտիւ ։ Եւ վասն զի Մարիհաբ բդեշխն Աղձնեաց , և Շամշագրամ նահապետ Ապահունեաց , և Անան հաւատարիմ արքային Աբգարու ելեալք յԵրուսաղէմ , և տեսեալ զքանչելի բժշկութիւնսն (1) Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ եկեալ պատմեցին Աբգարու . սակս այսորիկ գրէ թուղթ աղաչանաց գալ առ նա , և բժշկել յախտէն յայնմանէ , զոր ոչ ոք երբէք ՚ի մարդկանէ եգիտ բժշկութիւն ։ Զոր և ընկալեալ Փրկիչն մեր , և արժանի պատասխանւոյ զնա համարեալ , գրէ առ նա առաքել երանելով զայնոսիկ , որ ոչն տեսեալ իցեն զնա և հաւատասցեն . և ՚ի կատարել ամէ , զկամս առաքչին իմոյ , առաքեցից քեզ զմի յաշակերտաց իմոց , զի զցաւս քո բժշկեսցէ , և կեանս շնորհեսցէ քեզ՝ և որք

(1) Երկ․ օրի․ բժշկութիւնսն ։

ընդ քեզ են։ Իսկ զթուղթ Փրկչին բերեալ առ Աբգար Անանեայ սուրհանդակի. ընդ նմին և զկենդանագրութիւն փրկչական պատկերին, որ կայ մինչև ցայսօր (1) Եդեսիա քաղաքի։ Այլ յետ համբառնալոյ Փրկչին մերոյ յերեսներորդի ամի Թագաւորութեանն Աբգարու. Թովմաս առաքեալ մի յերկոտասանիցն՝ առաքէ զԹադէոս յեօթանասնիցն ընտրելոց (2), բժշկել զԹագաւորն Աբգար ըստ խոստման Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, զոր և արժանի վարկաւ իսկ գրով առ զաւետարանական զաւետիսն։ Որոյ ապա եկեալ ՚ի տուն իշխանին Տուբիայ Բագրատունեայ, որ ցայն վայր կայեալ մնացեալ էր հայրենի օրինօքն։ Իսկ իշխանին Տուբիայ առեալ ածէ զառաքեալն առ արքայն, և նշան հրաշալի ՚ի դէմս առաքելոյն արքայն տեսանէր. և ապա ընդգծեալ ՚ի ծունկս երկիր պագանէր նմա ՚ի վերայ երեսաց երկրի։ Իսկ առաքեալն զձեռն ՚ի վերայ եդեալ Աբգարու՝ բժշկէր զնա. այլ և զբոլոր իսկ զհիւանդս և զախտաժէտս որք ՚ի տան արքայի

(1) Երկր. օր. ցայսօր ժամանակի.

(2) Չորր. օր. ամին՝ Աբգարու. առաքէ Թադէոս մի յերկոտասանիցն ընտրելոց.

և յամենայն քաղաքին՝ բժշկէր . և մխիթարե_ ցաւ ինքն Աբգար և ամենայն քաղաքն . և օր ըստ օրէ բազմանային հաւատացեալքն 'ի նմա ։ Իսկ սուրբն Թադէոս զԱդդէ անուն խոյրագործ ձեռնադրեալ . և փոխանորդ իւր թողեալ յԵդեսիա, և ինքն գայր առ Սանատրուկ քեռորդին Աբգարու՝ աւետարանել վիճակելոյն նմա զՔրիստոսի աստուածութիւնն ։

---

## ԳԼՈՒԽ Է.

Յաղագս Սանատրկոյ թագաւորութեանն ի Հայս, և նահատակութեանն Թադէի և Սանդխտոյ, և սըրբոց Ոսկեանց և Սուքիասանց ։

Բայց Աբգար մեծի յուսոյ զանձն տուեալ, և կենահաստատ գտեալ փառացն Աստուծոյ, և հետևեալ 'ի խոստովանութիւն անշարժ յուսոյն՝ փախձանին, վերաթեւեալ 'ի միւսին աշխարհին Եդեն ։ Իսկ ապա 'ի հայս նորին իւր քեռորդին Սանատրուկ կացեալ լինի թագաւոր, որ թէպէտ և ի սկզբան քաղցրութեամբն Թադէոսի ա_

առաքելոյ հաւատոյ ՚ի Քրիստոս, սակայն ՚ի հրապոյրս նախարարացն հարեալ՝ դարձեալ ուրացաւ. և յետ փոքր ինչ ապա բազում չարչարանօք և սրով կատարեալ զսուրբ առաքեալն. ընդ նմին և զդուստրն իւր ըզՍանդուխտ սպանանէ ՚ի կենաց. որք ՚ի լոյս կենաց անփոխանակից վերափոխեցան (1) ընդ աջմէ փառացն Աստուծոյ։ Իսկ զկնի այսորիկ ապա և Բարդուղիմէոս մի յերկոտասանից անտի՝ որ Հայաստան աշխարհի ՚ի Տեառնէ վիճակեցաւ, եկեալ յայսմ ժամանակի ՚ի Սանատրկոյ կատարի չարչարանօք, և արեամբ չափ նահատակեալ ՚ի Հայս Արաբենոս քաղաքի, ուր և եղան իսկ նշխարք ոսկերաց նոցա ՚ի պարծանս Հայաստանեայց և ՚ի բժշկութիւն ամենայն ախտաժետաց։

Իսկ յետ քառասուն և երից ամաց կատարման նր առաքելոյն Թադէոսի. յաւուրս Արտաշիսի Հայոց արքայի, աշակերտք սրբոյ առաքելոյն. յորում գլխաւորն Սակկի ձանաչիւր, և ընկերք էին յափունս Եփրատ գետոյ, աշակերտեալ մկրտէին զարս անուն Արեաց՝ ՚ի հաստատութեան Սաթենկոյ տիկնոջ, որ էր կին Արտաշիսի։ Եւ վասն զի որ բան օրէ զմկրտեալսն հաստատէին ՚ի

(1) Երկու ձեռ. վերացուցան։

հաւատոյ Ռամբին կենաց, վասն այսորիկ ապա խանդացեալ ընդ նորա որդւոյն Սաթենկայ, որով վճարեցան 'ի կենաց աստի սուրբքն Ոսկի՝ հանդերձ այլ եւս ընկերօքն սրբովք : Իսկ ազգականքն Սաթենկայ որք 'ի Քրիստոս մկրտեցան, ընդդատուցեալք իմն վասն մահուան սրբոյն, հատուածեալք գընացին 'ի բաց. երթեալ գողեալ թագուցեալ 'ի Ջրաբաշխն լերին՝ խատարուս ձարակօք չաստացեալ. և բառ մերկութեան անձանց նոցա 'ի ցօղոյ երկնից գետս արձակեալ մարմնոցն. որ և 'ի պատահմանէ անտի Քօշք անուանեցան : Այլ վասն զի յետ ամաց բազմաց սպանու թագաւորն Հայոց Խոսրով յԱ՛նակայ, և անիշխանութեան երկիրս Հայոց, ապա Բարլահա (1) անն եկեալ յԱ՛լանաց դրանէ, և 'ի խնդիր ելեալ գրով մըկայից. և գտեալ զնոսա 'ի Ջրաբաշխն կոչեցեալ լերին, և հարց և փորձ արարեալ ընդնոսա վասն առ 'ի Քրիստոս հաւատոյն, սուր 'ի վերայ եդեալ կատարէ : Այլ լեառնն ապա յայնմ հետէ յանուն Սուքիանոսի գըլխաւորի սրբոյն Սուքաւ անուանի :

(1) Երէց օրէ. Բառլահայ :

# ԳԼՈՒԽ Ը.

## Յաղագս սպանման Խոսրովայ արքային յԱնակայ, և ծագման որդւոյն Գրիգորի, և վերստին ըստացութեան աշխարհիս Հայոց։

Բայց իբրև սպանաւ Արտաւան արքայ Պարթից յԱրտաշրէ Սասանայեցւոյ, բարձեալ անտի զթագաւորութիւնն յԱրշակունեաց, և ինքն փոխանակ թագաւորէր։ Իսկ Անակ որ 'ի Սուրէնեանն Պահլաւայ էր և 'ի Պարթևականն Արշակունի տոհմէ, 'ի բազում և 'ի պէսպէս խոստմունս Արտաշրի հրապուրեալ, և իբրև հաստատեալ իմն առ 'ի նմանէ զինքն ցուցեալ, գայ առ Արքայ Հայոց Խոսրով. զի 'ի ձեռն ազգականութեան(1) փախստի զնա վստահացուցեալ, և կեղծաւորեալ սիրով զդաւեն դիւրաւ արասցէ՝ և հասցէ խոստմանց Արտաշրի, որպէս լիապէս իսկ քեզ ուսուցանէ աջողակ պատմագիրն Ագաթանգեղոս։ Եւ յայտնի իմն պատճառանաց հաստատեալ եկեալ երեկօթս առնէ յԱրտազ գաւառի։ Եւ ըստ երկնային այցելութեանն պատահի սմա(1) տեղի օթևանի 'ի քնարանի սրբոյ առաքելոյն՝ 'ի ներքսագոյն տապանի խորանին, և անդ

(1) Մի օրի. ազգակցութեան։ (2) Երկ օրի. սորա։

ապա լինել ամ յղութիւն մօրն որդւոյն Գը-
րիգորի ։ Եւ յետ սահմանեալ աւուրցն ա-
պա և ծնունդ նորուն 'ի նմին տեղւոջ կա-
տարեալ լինի , զի յորում զլինելութիւն
կրէր , զնորին իսկ լցցէ զհոգեւոր մշակու-
թիւնն ։ Բայց Անակայ յետ երկեամ մի ա-
մաց յիշելով զոխն որ ընդ Արտաշիրի , ըն-
տանեաւն գնացեալ , և ինքն և խորքն առ հա-
սարակ տառապեալք . զմինն միայն սրահեալ
շնորհայն Աստուծոյ , որ զառաքելութեան
խորոյ զշնորհս 'ի ձեռս տայր նմա սուրբ ա-
ռաքեալն յարգանդի մօրն , որպէս Յովհան-
նու Ակրոչի զկատարելութիւն Քրիստոսի ։
Որ ապա ըստ չափ հասակին հասելոյ՝ դայեկաց ո-
մանց զերկուս պատար(1) մանկունս սնուցեալ
ըստ անշուշտ պատմագրին՝ յաշխարհն Յու-
նաց փախուցեալ տանէին , զմինն 'ի Թագա-
ւորական հրահանգս փարելեալ , իսկ զմիւսն
յառաքելական հանդէս և 'ի պատճառս
լուսաւորութեան մերոյ ։ Իսկ ապա երկո-
քեան որք սնեալ , և 'ի զարգացումն աճե-
լութեան հասեալ , մինն ըստ տոհմականի
իւր և աջողակ զինուորութեանն և պատե-
րազմական մրցմանց 'ի Թագաւորութիւնն
հայրենի հասանէր յերրորդ ամի Դիոկղե-

(1) Երկու օրէ . զերկուս զատաս ։

ոխանոսի կայսեր ։ Իսկ միւսն յետ բազում
և անտանելի չարչարանացն, և անհնարին
և դառն կոտտանաց, և զհնգետասան ամ
լինելոյ 'ի խոր վիրապին՝ 'ի դղեկ բերդին
որ Արտաշատ, ելեալ 'ի խորոց Թուլաւո-
րացն արտափայլեցաւ 'ի փրկութիւն մեզ.
և զանձառելի և զանպարագիր Աստուածու-
թեանն հոգեղուարձ բղխումն յինքն ճառա-
գայթափայլեալ՝ զբոլոր Արամեանս ազն բու-
ժեալ յախտից և 'ի կռապաշտութենէ ։ Եւ
յեօթն և 'ի տասներորդ ամի արքայութեան
Տրդատայ նստաւ յաթոռ որոց առաքե-
լոյն Բարդուղիմէոսի և Թադէոսի, որբու-
թեանցն գտեալ բաժանայագործող և ծնող
մեր լուս աւետարանին, և նախահայր աս-
տանօր արտագրելով ։ Յետ այսորիկ ապա
գնացեալ եւս ընդ արքային Տրդատայ յաս-
տուածակարգ կայսրն Կոստանդիանոս, բազ-
մօք իմն և նազելի և վայելուչ մեծարանօք
պատուէ զսուրբ Հայրապետն իբրև զկեն-
դանի մարտիրոս, առաջի անկանելով և ա-
ղօթս նուիրականս և օրհնութիւնս 'ի նմա-
նէ հայցելով ։ Եւ այսպէս ընա պատուաս-
րեալ, և Տրդատաւ հանեալ յանկիապատ
կառս՝ մեծաւ շքեղութեամբ յուղարկէ ըն-
ճանապարհայն ։

# ԳԼՈՒԽ Թ.

## Յաղագս ժողովոյն Նիկիոյ վասն Արիոսի, և ա-
## տանջանաւորոյ սրբոյն Գրիգորի։

Յայսու ժամանակաւ յայտնեալ լինէր Արիոս աղէքսանդրացի, որ դաւաճանեալ[1] ի դիւէ անտի՝ ոչ գոլ ասէր զՈրդի ի բնութենէ Հօր, և ոչ հաւասար նմա, և ոչ յառաջ քան զյաւիտեանս ի Հօրէ ծնեալ, այլ արարած և յետ ժամանակի գոյացեալ։ Վասն այսորիկ իսկ ապա ժողով եպիսկոպոսաց լինի ի հրամանէ Կոստանդիանոսի ի Նիկիա Բիւթանացւոց. ընդ որոց և մերն Արիստակէս կոչեցաւ։ Եւ անդ հարք նոցա, յժը, ըստ Հոգւոյն սրբոյ տեսչութեան ի քակտել զաղանդն Արիոսի, նզովեալ մերժեն զնա ի հաղորդութենէ եկեղեցւոյ. իսկ նորա զարժանի ամբարշտութեան կրեալ հատուցումն, և խառն ընդ գարշելեան ի վայր զփորոտին վայթեալ սատակէր։ Իսկ ապա մերն Արիստակէս դարձեալ անտի գայր բերելով[2] ընդ իւր զարժանընկալն քանոնական կանոնեալ զգլուխս ի

(1) Ձեռ. օրի. յաւելուն՝ դաւաճանեալ լինէր։

(2) Ձեռ. օրի. բերեալ։

ժողովոյն. ընդ որ յաւէտ խրախ լեալ սրբոյն Գրիգորի՝ յաւելոյր այլ եւս գլուխս ՚ի նոյն ՚ի զգուշութիւն վիճակելոց իւրոց։ Բայց յորժամ հեռաց եկն սուրբն Արիստակէս ՚ի ժողովոյն Նիկիոյ, այլ ոչ եւս յաւել երեւել սուրբն Գրիգորիոս մինչեւ ցվախճան իւր, այլ երթայր բնակէր լռեալ ՚ի Մանէ այրս, ըստ գրեցելումն թէ՝ ՚ի նաւահանգիստ փութայ նաւ խռովեալ, և անձն ժուժկալ խնդրէ զանապատ։ Իսկ զայս լուսաւորութեանս մերոյ նահապետի սրբոյն Գրիգորի և առաքելական աթոռոյ նախաշաւիղ ճանապարհի՝ ՚ի սկզբանց անտի կալոյ յաթոռ հայրապետութեան մինչեւ ցայն վայր՝ յորում ոչ եւս յաւել ումեք երեւել, ունին ամք երեսուն։

## ԳԼՈՒԽ Ժ.

### Յաղագս մահուան սրբոյն Արիստակէսի և Տրդատայ Թագաւորին.

Իսկ սուրբն Արիստակէս ժառանգ հայրենի աթոռոյն, ամենայն իրօք զհետ երթայր սուրբ և արդար վաստակոց, ջա-

նացեալ քրիստոսադիր կնքիւն նուաճել զհօտ իւր 'ի կամս Քրիստոսի . զոմանս հաւանողականս , իսկ զոմանս բռնաւորականաւ կարգաւ ջանայր պահել յակատատնի . և իբրև զաւր ինչ յազդեր միշտ ունելով զհոգւոյն շարժմունս , յանդիմանէր զորս գտանէր 'ի չար գործս հակառակ հոգւոյն ։ Ընդ որոց ապա և Արքեղայոս ոմն կուսակալ Օմիաց աշխարհին կշտամբեալ 'ի նմանէ սակս չար գործոց իւրոց , ըստ դիպմանց իմն ճանապարհի ուրեմն աշխարհին Օմիաց . ժպրհեալ սխալոս իմն մեօք սպանանէ բղ-սուրբն որով , և փախստեայ ինքն գնացեալ յարեւմուտս Տաւրոսի ։ Ուր ապա բարձեալ ընչխարեալ մարմինն նորուն աշակերտացն , տարեալ հանգուցին Ալիկեղեաց 'ի Թիւին աւանի ։ Կացեալ ինքն յաթոռ հայրապետութեան ամս եւթն . ոչ թաղումն թերևս զնորայն վարկեալ իմն , այլ փոփոխումն յաշխարհէ յայսմանէ յաշխարհն կենդանեաց , ուր ոչ լսի համբաւ մահու՝ այլ մշտնջենաւորական ուրախութիւն ։ Իսկ զկնի սորա անդրանիկ եղբայր սորուն Վրթանէս՝ յաջորդէ յաթոռ նորուն , որպէս և հաճոյ թուեցաւ Հոգւոյն սրբոյ .

Բայց հոգևոր ճառագայթն մեր սուրբն

Գրիգոր ամս քաղուամս կեցեալ յայրին Մանեայ, վախճանի անգիտաբար իմն թաղեալ 'ի հովուաց, իբր գտեալ զնա 'ի կարգ իմն աղքատաց: Ապա զկնի բազում ամաց գտանէ զսուրբ մարմին նորա Գառնիկ ոմն ճգնաւոր՝ աստուածային իմն գուշակս տեսչութեամբ. և տարեալ դնէ 'ի գեօղն Թորդան յիւր իսկ 'ի զբօսանոց պարտիզն: Զկնի ամաց ինչ ապա և սուրբն Տրդատ արքայ յանհամբուրից բարուց և յանհնազանդից ճարտարութեն խարդաւանեալ խորամանկութեամբ, և տուեալ նմա յարբուցումն մահու. զոր տարեալ հանգուցանեն զմարմին նորա 'ի նմին աւանի 'ի նոյն պարտիզին, մերձ եդեալ 'ի քնարանս սրբոյն Գրիգորի. որ համեմատ ընդ նմա իսկ զամենեսեան արտորոշէր 'ի ճանապարհաց չարաց, մերձակացս երկրորդ լեալ լուսաւորութեանս մերում: Իսկ մեծն Վրթանէս մինչդեռ էր 'ի Տարօն գաւառին 'ի մատռանն Յովհաննու Մկրտչի և Աթանագինեայ վկայի, մահ սպառնացեալ լինէր նմա 'ի ծածուկ իմն 'ի բնակչաց Սիմ լերինն, որք վասն ապիրատ և անաղդակ չար գործոց միշտ յանդիմանեալ առ 'ի նմանէ էին (1): Իսկ նա-

(1) Եղիշ. օր. լինէին:

րա դիպեցեալ այս և տեղի տուեալ չարին , գնաց փախստեայ 'ի գաւառն Նիկեղեաց , անդ կալեալ իւր կայեան բնակութեան ։

Իսկ յետ մահուան սրբոյն Տրդատայ անօրէնն Սանատրուկ երկրորդ՝ ազգաւ Արշակունի տանէ , զոր կացուցեալ էր նահապետ Տրդատայ 'ի Փայտակարան քաղաքի , և յետ մահուան նորա ապստամբութեամբ բազմաւ թագ իւր կապեալ . ըստ ամբարիշտ հրամանի նորա բարբարոս հիւսիսական ազգքն այնոքիկ զքաղցրելի մանուկն Գրիգորիս , զոր եպիսկոպոս Աղուանից կացուցեալ էին 'ի տոհմէ սրբոյն Գրիգորի , սպանանեն ձիախողխող ընթացքութեամբ 'ի Վատնեան դաշտին , և տարեալ հանգուցանեն զսուրբ մարմին նորա 'ի գեօղն Ամարաս՝ որ 'ի փոքր Սիւնիս ։

## ԳԼՈՒԽ ԺԱ.

### Յաղագս Թագաւորելոյ Խոսրովայ և Տիրանայ , և Հայրապետութեան սրբոյն Յուսկան ։

Յետ այսորիկ ապա մեծն Վրթանէս չոգաւ գնաց առ կայսրն Կոստանդիոս որդի

Կոստանդիանոսի, ընձակերութեամբ առ 'ի նմանէ հայցեալ թագաւորեցուցանել Հայաստանեայցս զԽոսրով փոխանակ հօր իւրոյ Տրդատայ, զի տիրեսցէ մեզ, ասէ, Քրիստոսակարգ տէրութիւնդ ձեր, և մի լիցի մեզ տիրել Պարսից անաստուածից։ Զոր և ողջախոհաբար ընկալեալ զաւրբ այրքն, և կատարեալ եւս զխնդիրն, կացուցանէ թագաւոր Հայաստանեայցս զԽոսրով։ Իսկ մեծն Վրթանէս յետ մահուանն Խոսրովայ առեալ ընդ իւր զՏիրան որդի Խոսրովայ՝ չուէ գնայ առ կայսրն Կոստանդինոս, թագաւորեցուցանել զնա փոխանակ հօր իւրոյ։ Իսկ կայսրն ապա բուռն առաջինն ուդին բազմապատիւ պատուով մեծարեաց(1) զնա, և առ ձեռն պատրաստ պճոյյուածոյն կատարեալ՝ առաքէ 'ի Հայս պայծառապէս զՏիրան թագով պսակեալ, որ եկեալ տիրէր հայրենի տէրութեանն։ Իսկ ապա անօթն ընտրութեան և խորհրդածուն խորոցն Աստուծոյ, և առաքելական աւանդիցըն քարոզ մեծն Վրթանէս՝ լցեալ պէս կենացս փոխի յաշխարհէ աստի յաշխարհն կենդանեաց, կալեալ զաթոռ հայրապետութեան ամս հնգետասան։ Իսկ տարեալ

(1) Երկրո օրէ. մեծարեալ։

հանդուցանէն զնա ընդ հարս իւր 'ի գիւղն Թորդան ։

Սուրբ յաջորդէ զաթոռ նորա Յուսիկ որդի նորա, որ հետեւեալ հայրն առաքինութեան գոլով՝ հանդիսանայր միշտ 'ի բոլոր բարեկարգութիւնս ։ Բայց յետ հրամանին Կոստանդեայ Յուլիանոս անօրէն թագաւորեալ 'ի Հռոմ, եւ հպարտացեալ 'ի վերայ գիտութեանն Աստուծոյ՝ կռամոլ գոլով ուրանայր զՔրիստոս, յարուցանէր[1] հալածանս 'ի վերայ եկեղեցեաց ։ Այս պատանդըս 'ի մերն Տիրանայ առեալ՝ կամակատար իւր զնա կացուցանէր․ եւ այսպէս պատուիրէր իւր նկարակերպն՝ որ ըստ դիւաց պատկերից էր պաճուճեալ, հրամայէ Տիրանայ կանգնել յեկեղեցւոջ իւրում․ եւ վասն զի սա փառանք եկեղեցին՝ իւրումն Տիրան տարեալ զպատկերն կանգնէր յեկեղեցւոջ իւրում[2] 'ի Ծոփ գաւառի․ վասն այնորիկ զխեղդեալ 'ի տեղին սուրբն Յուսիկ հովուեալ վարդապետութեամբ տարահել զնա 'ի չար մտածութենէն հնարիւք ։ Իսկ քերթեալ խնդր

(1) Եղեւ օր․ յարուցեալ ։

(2) Ցերէլեան օր․ ․․․մանչ՝ 'ի վասն զի սա փառանք եկեղեցին իւրումն Տիրան տարեալ զպատկերն կանգնէր յեկեղեցւոջ իւրում ։

զմեղեան առ 'ի չմեղ , յափշտակեալ ապա զպատկերն 'ի ձեռաց նորա և ընկեցեալ յերկիր և ոտնհեալ ոտիւքն 'ի վերայ խորտակէր ։ Ընդ որ և 'ի չարութիւն խոկ Տիրանայ բորբոքեալ՝ հրամայէ հարկանել զնա վարոցօք , մինչև անդէն զհոգին աւանդել ։ Իսկ ծերունին Դանիէլ վասն այնպիսի չար անզգամութեանն անխծակուր զարքայն արարեալ , հրամայէ ապա և զնա խեղդամահ առնել . զոր տարեալ հանգուցանեն զնա 'ի Հացեաց վանս ։ Իսկ զմարմին սրբոց Ոսուկանն տարեալ դնեն ընդ հարս իւր 'ի գեղջն Թորդան , որ եկաց 'ի հայրապետութեան ամս վեց ։ Բայց զի որդիք սրբոց Ոսուկանն Պալ և Սաթանագինէս՝ քան որում խաւարեցուցին զկիրս իւրեանց անմտութեամբ , ընդ նմին և տարափելի մահ անձանց իւրեանց նիւթեցին . զի հրապարա ցուցանէք 'ի վայր հոսեալ սատակէր զերկուսեանն 'ի միում տեղւոջ . մանկիկ մի փոքրիկ Ներսէս անուն՝ միայն Թողեալ իւր որդի Սաթանագինէ , որ յայնժամ էր 'ի վարժու ուսման 'ի Կեսարիա ։ Եւ ապա վասն ոչ գտանելոյ այր յազգէ սրբոյն Գրիգորի , ընտրեցին զոմն Փառնէրսեհ անուն յԱշ-

(1) Այսպէս ունին ամենայն գրչագիրք . Եւսեբիոս տորոբեալ ։

տիշատէ, և կացուցին զնա յաթոռ Հայրապետութեան ։ Նա ոչ աւելի քան զերիս ամս տեւեալ՝ վախճանի ։

## ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս Հայրապետութեան Տեառն Ներսիսի և տառապանաց նորին, և ժողովոյն Կոստանդինուպօլսի ։

Ապա Արշակ արքայ որդի Տիրանայ կուրացելոյ ըստ արժանւոյն ՚ի Պարսից արքայէ, առաքէ զՆերսէս զորդին Աթանագինեայ որդւոյ Յուսկանն ըստ առաջնոյ կարգին ՚ի Կեսարիա՝ ձեռնադրիլ ՚ի Հայրապետութիւն. որ և սքանչելի իմն նշանք պատմի լեալ. զի մինչդեռ կայր ընդ բեմականան ՚ի ձեռնադրութեան անդ, շնորհք Հոգւոյն որպէս աղաւնակերպ ՚ի վերայ գլխոյ նորա հանգուցեալ, ՚ի զարմացումն զբոլոր կղերիկոսս եկեղեցւոյն ածեալ լինէր ։ Իսկ այսպէս ապա լուսաւորեալ նորա՝ գայ հաստատէ գեղեցկապէս յարմարութեամբ զբոլոր կարգս ուղղութեան, բարենախանձ լինելով ՚ի նախանձ հոգեւոր. Իսկ նախ ապա

զամենայն անգթութեան (1) արմատս խլեալ՝ փոխանակ 'ի ներքս ածէ զողորմութիւն. չէ-նէ և աղքատանոցս առ 'ի մխիթարութիւն վշտացեալ մարմնոց մարդկան, ուրկաց և բորոտից և հաշմից և բոլոր վտանգելոց. ուսմունս նոցա կարգեալ 'ի գիւղից և 'ի գեր-դաստանաց, զի ոչ լիցի նոցա արտաքս քան զբնակութիւնս իւրեանց ելանել: Կարգէ և վանորայս օտարանոցս և հիւրանոցս և տնանկանոցս՝ 'ի քաղաքագիւղս և յաւանս. այլ և յանապատս մենաստանս և խրճիթս կուսակրօնից և միանձանց յարդարէ: Բանայ և զմերձաւոր խնամութիւնս և զկծադիր ոճիրս 'ի վերայ մեռելոց. և ապա այնուհետեւ ոչ իբրեւ զբարբարոս այլանդակս, այլ իբրեւ զհամեստագոյն քաղաքացիս լինէր տեսանել զաշխարհս մեր:

Զայսպիսի բարեկարգութե՛ն ձև և զշուք տեսեալ ապա թագաւորին և նախարարացըն Հայոց, այլ և զխստամբեր վարս նորա ճգնողականս, ընդ մտի եդին (2) քան այլոց եւս ոմանց և զնա եւս նախակարգել 'ի պատիւ Պատրիարգութեան: Քանզի փոքր ինչ յառաջ քան զայս՝ Կոստանդիոս որդի

(1) Մի օր. անգիտութեան:

(2) Չորս օր. եդեալ: Երկու օր. ընդ այլոց.

մեծին Կոստանդիանոսի Եփեսոսէ 'ի Կոստանդինուպօլիս զնշխարս ոսկերաց Յովհաննու աւետարանչին փոխեալ, եւ յայնմանէ համարձակութիւն առեալ՝ պատրիարգ 'ի Կոստանդինուպօլիս կացուցանէ։ Ապա ըստ նմին (1) այսմ պատճառի համարձակութի եւ Երուսաղէմացւոց առեալ զիւրեանցն եւս աթոռ հաստատէին 'ի պատիւ Պատրիարգութեան՝ իրաւունս համարեալ. ըստ որում եւ նմա գոլ տեսեալ եղեւ Բանին Հօր ծնունդ եւ ընդ մարդկան շրջել, եւ 'ի Յովհաննէ մկրտիլ եւ խաչիլ եւ թաղիլ. եւ յերրորդ աւուր յառնել։ Իսկ վասն զի ցայն վայր չորք միայն էին ընդ երկրա Պատրիարգք՝ ըստ չորից Աւետարանչացն, Մատթէային՝ Անտիոք, Մարկոսին՝ Աղէքսանդրիա, Ղուկայն՝ 'ի Հռոմ, եւ Յովհաննու՝ Եփեսոս. արդ յայսմանէ իրակութեանց վէճ բովանդակեալ կայքն։ Առ սմին սակս այս եւ մերն Թագաւոր Արշակ եւ նախարարութիւնք Հայոց համարձակութիւն առեալ կացուցին 'ի Պատրիարգութիւն տանն Թորգոմայ զմեծն Ներսէս. փաստս իրաւախոհս ըստ արժանին 'ի մէջ առեալ զոր առաքելոյն զՎարդուզիմէա

(1) Նշխ. ձեռ. յայսմ կամ յայս պատճառի։

և զԹադէոս, որք Ասքանազեանս ազին մե-
ծարեցան ՚ի Տեառնէ քարոզք և աւետա-
րանիչք, և նշխարեալ ոսկերք նոցա կան ՚ի
միջի մերում, զորոց և զալթուն խոկ ընկա-
լաւ կենդանի նահատակոսն Գրիգորիոս։ Նոյ-
նպէս խորհուրդն զգօրծն կատարեալ, եօթն
միանգամայն բովանդակեալ գտանէր Թե-
Պատրիարքութեան, որ կայ և մնայ պա-
հեալ մինչև յաւիտեանս ժամանակաց։

Նոյ այսպէս ասա նահապետութի խոր-
հրդոյ եկեղեցւոյ ՚ի մերում աշխարհի լը-
ցաւ բովանդակապէս, ընդ միանգամայն
դասակարգութեամբ պատուեալ գլխաւո-
րօք որք եպիսկոպոսացն Վրաց և Աղուա-
նից՝ որք եպիսկոպոս ընդ ձեռամբ նորա
կարգեալ։ Իսկ ՚ի Սեբաստիա և ՚ի Մելի-
տինէ և ՚ի Սամոսատայ քաղաքին Մետ-
րապօլիս կայուցանէին։ Իսկ եպիսկոպո-
սունս առա ըստ որոշեալ վիճակացն իւ-
րաքանչիւրոյն հաստատէին, և քահանայս
և սարկաւագունս և կէս սարկաւագաց և
ընթերցողս և սաղմոսերգուս. այսոքիկ ցան
և ցիր ընդ բոլոր եկեղեցիս Հայաստանեայ-
ցըս վայելչապէս յարդարեալ լինէին ՚ի փա-
առս Աստուծոյ։

Իսկ ՚ի նշկահելն Արշակայ զՎաղենտիա-

նոս կայսր, մեծաւ ցասմամբ Վաղէնտինեայ ապա լցեալ լինէր, և սպանանէ զեղբայրն Արշակայ զՏրդատ՝ որ ՚ի պատանդի առ նմա էր. զոր ապա զգացեալ մեծին Ներսեսի, փութացեալ և առ կայսր հասեալ, և ՚ի հանդարտութիւն շիջեալ զնորայն կամս, և մեծապատիւ առ ՚ի նմանէ լեալ ըստ օրինի Պատրիարքաց. և յինքն զորդի սպանեցելոյն Տրդատայ և զայլս ևս պատանդս հայցեալ առեալ ՚ի կայսերէ՝ գայ ՚ի Հայս խաղաղութեամբ բազմաւ ։

Այլ ՚ի վախճանելն Վաղէնտիանոսի՝ Թագաւորէ անօրէնն Վաղէս եղբայր նորին. և վաղվաղակի մեծ զօրավարն Թէոդոս զօրու մեծաւ առաքէ հրոսակ Արշակայ արքայի. որ և ակամայ իսկ աղաչեալ զմեծն Ներսէս՝ չուել խնդրել զխաղաղութիւն, ոչ ապա նա անփոյթ առնէ զկորստենէ վիճակելոց իւրոց, այլ վաղվաղակի առեալ զՊապ որդի Արշակայ տանի պատանդ առ մեծն Թէոդոս զօրավար. ուստի և լուռ լեալ դառնայ առ կայսր՝ ընդ իւր տարեալ զՊատրիարքն Ներսէս հանդերձ պատանդաւն ։ Իսկ անօրէնն Վաղէս ոչ իսկ արժանի արար տեսանել զսուրբ այրն Աստուծոյ, այլ ՚ի կղզի մի հարկաւորէ զնա, հրամայեաց արտասահմա-

նել խուրջն համդերձ կղերիւք, յորում ոչ ինչ ամենեւին գտանիւր ոգեպահ պարենի աւուր միոյ, այլ 'ի հրամանէ Աստուծոյ ցնդմամբ ալեացն ծովին զձուկն արտաքս ընկենլով 'ի կերակուր նոցա մատակարարէր զամիս ութ:

Բայց յաղագս անօրէն Վաղէսի ասի բան, թէ ըստ հրամանի (1) ձեռին Աստուծոյ սուրբ վկայն Գէորգէոս անըմբռնելի ձեռամբ զնա սատակէր, որժամնի չար խորհրդոցն նմա համուցեալ: Եւ զկնի նորա առնու զթագաւորութիւն Թէոդոս մեծըն և բարեպաշտն և աստուածասէր, որ զամենայն նիւթս խաւարային խորհրդոց փարատեալ 'ի բաց, և զանբիծ հաւատս հիմնացեալ (2) հաստատեաց. և այս որք 'ի մետաղս 'ի Վաղեսէ արտաքսմանեալք էին՝ դարձոյց յիւրաքանչիւր տեղիս, ընդ որս և զմեծն Ներսէս ածեալ առ իւր պահէր, մինչեւ 'ի ձեռն նորա զամբարիշտ հայհոյութիւնն Մակեդոնի 'ի ստուգութի հաւատոյ ճշմարտութե դարձուցէ : Եւ այս ժողով եպիսկոպոսացն միաբանեալն ՃԾ (150) 'ի Բիւզանդիոն արարեալ, նզովեալ մերժեցին 'ի բաց զՄակեդոն և զամենայն հոգեմարտն :

(1) Երկրորդ օրի․ յաւելուն հզօր ձեռաւն:
(2) Երկրորդ օրի․ հիմնեցեալ:

## ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս Թագաւորելոյ Պապայ և պատերազմին նորա ընդ Մեհրուժանայ ուրացելոյն, և մահուան մեծին Ներսէսի և նորին Հայրապետացն։

Իսկ Շապհոյ Պարսից արքայի կալեալ և կապեալ զԱրշակ արքայ Հայոց՝ դնէ յԱնուշն կոչեցեալ բերդի. իսկ Արշակայ յայնմ բերդի սրով 'ի սիրտ խոցեալ՝ իւրովի զինքն զրկէ 'ի կենաց աստի։ Զայսպիսի չար աղէտս լուեալ մեծին Ներսէսի, ըղձակերտութեամբ իմն հայցէ յինքնակալէն Թէոդոսէ թագաւորեցուցանել Հայոց զՊապ որդի Արշակայ, զոր և արարեալ իսկ, և համդերձ սրբովին Ներսէսիւ վաղվաղակի առաքէ 'ի Հայս, որք եկեալ գտին զՄեհրուժանն ուրացող՝ բազում զօրօք միաբանեալ զՀայս(1), և ապա խմբէին 'ի պատերազմ ընդ միմեանս 'ի Ձիրաւ։ Եւ իբրեւ յաղէտս իմն պատերազմին սաստկանայր, ելանէ ապա մեծն Ներսէս 'ի լեառն Նպատ, և ըստ օրինակին Մովսէսի տարածեալ զձեռսն 'ի յերկինս աղերսանօք պաղատանօք առ 'ի Քրիստոս հայցէ լինել

(1) Երկու օրէ. 'ի Հայս:

պաշտպան քրիստոսադրոշմ բանակին, ո-
րով և պարանցանն իսկ աստուածամար-
մարտուցեալքն: Եւ բանակքն Հայոց զօ-
րացեալք՝ գլխակամք թշնամեացն ելին զառ
'ի առաւօտն զամենայն. ուր և ձերբակալ
իսկ արարեալ Սմբատայ զպիղծն Մեհրու-
ժան արծրունի, և երկաթ բոլորեալ 'ի ձեւ
պսակի՝ և շանթիւք հրոյ շողացուցեալ դնէ
'ի գլուխ նորա, և այնպէս զնա սատակեալ:

Բայց Գագիկ արքայ մինչ հրապոյրս յին-
քն կրեալ 'ի ճախաճան աղտեղի գործոց,
վասն այնորիկ ասա հանապազ կշտամբ-
եալ և յանդիմանեալ լինէր 'ի սրբոյն Ներ-
սիսէ. Ընդ որում յաւէտ դչարեալ Գագիկ,
և յայտնի ինչ ոչ իշխեցեալ առնել, այլ
նմա արբուցումն մահու 'ի գինւոյն խառն,
և բուծեալ զնա 'ի կենացս, իբրեւ 'ի չոր-
մեքս իմն՝ տարեալ թաղէին զնա 'ի Թիլին
աւանի. որ կալաւ զաթոռ հայրապետութե-
ան երեսուն և չորս: Զկնի սորա ասա կա-
ցուցանեն յաթոռ նորա զՅոհան 'ի զա-
ւակէ Աբխանոսի, այր գովելի և լի առա-
քինութեամբ, և բարեկարգութեամբ կը-
րօնից. ոչ եւս ըստ սովորութեանն առաջ-
նոյ առաքեալ զնա 'ի Կեսարիա, այլ լքեալ
'ի բաց զօրէնն առաջին, ըստ օրինի պատ-

ընտրեաց կալան կարգ, ժողովել եպիսկոպոսաց ձեռնադրել, որպէս Անտիոք, Աղեքսանդր, Հռոմ, Եփեսոս, Կոստանդինուպօլիս, և Երուսաղէմ(1). զի մի այլոց ամենց ընդ ձեռամբ անկցի՝ որ ինքնակալութիւն է պատուեալ Պատրիարգութիւն: Իսկ յետ այսորիկ իբրեւ ընդունեալ այսմանաւ Պապ արքայ յինքնակալէն Թէոդոսէ, և փոխանակ նորա զՎարազդատ 'ի տանէ Արշակունեաց Թագաւորեցոյց, յերկրորդ ամի սորա վախճանի պատրիարգն Շահակ, կացեալ յաթոռ հայրապետութեան ամս վեց: Եւ եղբայր նորուն Զաւէն հաստատի յաթոռ նորա՝ նորին առաքինահրաշ վարուք պայծառացեալ: Այս և զՎարազդատ եւս մեծն Թէոդոս տարասահմանեալ 'ի Թուլիս կղզի Ովկիանոսի, և Թագաւորեցուցանէ միանգամայն զերկուս որդիսն Պապայ, զԱրշակ և զՎաղարշակ: Իսկ յերկրորդ ամի Արշակայ իբրեւ եկաց Զաւէն 'ի հայրապետութեան ամս երիս՝ փոխեալ 'ի կենաց աստի. և կալաւ զկնի նորա զաթոռն Ասպուրակէս եղբայր նորուն, 'ի նոցին առաքինութեան յառաջադէմ գտեալ:

(1) Ոմանք 'ի գրչագրաց նախդրեն այսպէս՝ Անտիոք. . : Երուսաղէմ. . : յայլոց ամենց:

Բայց Շապուհ արքայ Պարսից զԽոսրով ոմն Արշակունի թագաւորեցուցանէ ի վերայ կողման բաժնի, վասն զի Արշակ ոչ էր հաճեցաւ արեւմտեայ կողմանն Յունական բաժնին։ Այլ երկոցունց սոցա զվարս և զկարգս և զարութիւնս և զանարութիւնս և զպատերազմունս, թէ պիտոյ է քեզ բովանդակաբար ցուցցէ քեզ պատմութիւնն Մովսէսի Խորենացւոյն։ Բայց յետ մահուան Արշակայ Մեսրովբ որ 'ի Հացեկաց Տարօնոյ և աշակերտեալ մեծին Ներսեսի, և էր քարտուղար 'ի դրան արքունի, ընկեցեալ 'ի բաց զպատիւ մարդկային՝ զհետ գնայր երկնաւորին, զվարս միայնակեցութեան ստացեալ. բայց զառաջադիմութիւն վարուց նորա և զքանչելիսն զոր նովաւ Աստուած ցուցանէր՝ բաւական ցուցցէ քեզ յայնցանէ որ նախ քան զմեզ պատմեցին։

## ԳԼՈՒԽ ԺԴ.

Յաղագս հայրապետութեան մեծին Սահակայ, և պարածման գրոց դպրութեան յաղագս մեր, և բարձման թագաւորութեան մերոյ։

Յետ այսորիկ ապա փոխճանեալ հայրապետն մեծ Ասպուրակէս, որ կալաւ զաթոռ Հայրապետութեանն զամս հինգ, ՚ի տեղի նորա յաջորդէ արքայ Խոսրով զՍահակ որդի մեծին Ներսիսի։ Իսկ վասն զի սա առաւելապէս գոլով ծնունդ առաքինութեան, յիրաւի ապա զհետ նորա ընթանայր սուրբ և արդար վարուց հանդէսք, որ յաշխարհի գոլով և իբրեւ զանապատաւորս ամենայն հեզանաց հանդիսիւ ընդկարգս աշխարհիս անցանէր, մշտնջենամնաւունչ աղօթիւք հանդերձ խուրձք աշակերտօքն կատարեալ զպաշտօն քահանայութեանն։ Իսկ Արտաշիր որդի Շապհոյ Պարսից արքային կալեալ զԽոսրով արքայ Հայոց, և եդեալ յԱնուշն բերդի, և փոխանակ նորա թագաւորեցուցանէ զՎռռամշապուհ եղբայր նորա։ Բայց մեծին Սահակայ երթեալ առ Արտաշիր Պարսից արքայ, մեծարի առ ՚ի նմանէ յաւէտ զպա-

տուող։ Վասն զի արգոյ և պատուական ցուցանէ Աստուած զծառայս իւր առաջի անհաւատից, և ապա աչապուրջ երեւօք զեոլք նորա կատարէ զհայցուածս։ Իսկ իբրեւ եկն սուրբն Սահակ, և զպարգեւեալն Արտաշրէ հաստատեաց ՚ի ձեռն ՚մերոյ Վռամշապհոյ, մեռանի ապա Արտաշիր արքայ Պարսից, և փոխանակ նորա թագաւորէ Վռամ։

Ընդ այն ժամանակս ապա եկեալ Մեսրոպայ և բերեալ նշանագիր մերոյ լեզուիս, զոր գտեալ նմա պարգեւեալ ՚ի տեսչութենէ շնորհացն Աստուծոյ. իսկ և իսկ ՚ի հրամանէ մեծին Սահակայ ժողովէ մանկունս խոհեմամիտս, սրամիտս, քաջուշեղս, փափկաձայնս. և գտեալս կարգէ ըստ գաւառաց գաւառաց՝ ուսուցանել մեծաւ մտադրութեամբ։ Յետ որոյ չուեալ ՚ի Վիրս, և անդ ըստ լեզուի նոցա արարեալ նշանագիր, փորձառէսս և գտեալս ՚ի նմա եւս կարգէ։ Եւ ապա իջեալ ՚ի կողմն Աղուանից, և նոյն եւս ստեղծանէ նշանագիր՝ ըստ կխահաղագ և խեցբեկոր լեզուի նոցա, վերակարգելով ՚ի նմա եւս աշակերտանոցս։ Եւ ապա ինքն դարձեալ դառնայ ՚ի Հայս, և գտանէ զսուրբն Սահակ ան-

դադար 'ի Թարգմանութիւն պարապելոյ ։

Բայց 'ի վախճանելն Վռամշապհոյ արքային Հայոց՝ գնայ առա մեծն Սահակ առ արքայն Պարսից Յազկերտ , և աղաչէ արձակել զկապեալն Խոսրով 'ի Հայս փոխանակ Վռամշապհոյ ։ Որոյ և կատարեալ խնդ ըղհայցուածն որոյ առնն , և տայ Խոսրովայ զտէրութիւնն Հայոց ։ Բայց նա 'ի կրկնակի Թագաւորելն , ոչ ինչ աւելի քան զմի ամ կեցեալ վախճանի ։

Իսկ 'ի վախճանելն Յազկերտի , և փոխանակ նորա Թագաւորեալ երկրորդն Վըռամ 'ի Պարս ։ Սա բազում դառն օձիս զարթուցանէր 'ի Հայաստանեայս , և վըրդովէր զամենայն բարեկարգութիւն՝ յեղծումն և յապականումն հասուցանել , զոր և տեսեալ որբոյն Սահակայ զչարին արկս , գնայ 'ի մասն Յունաց . վասն զի յերկուս ճեղքեալ բաժանեալ էր Հայք՝ 'ի մէջ Կայսեր և Պարսից ։ Իսկ մեծն Թ·էոդոս Թէպէտ և յիսկզբան անդ ընդ ակամբ հայէր առ 'ի չընդունել , սակայն 'ի բազմաց խնդրեալ լի զնա աստուածային շնորհօք , և ամենայն առաքինապարդ վարուք , մեծաւ պատուով և բարի օձմաւ ընդունի իբրև զնոյն ինքըն առաքեալ Քրիստոսի . այլ և զնշանա-

գիրն որ առ 'ի Նոցանէ Յ՚ստուծոյ ընծայեցաւ, հրամայէ փութով ուսանել, և զծախս դպրոցացն յարքունուստ լինել։

Եւ ապա սուրբն Սահակ իսկ և իսկ առաքէ զՎարդան Թոռն իւր առ արքայն Պարսից Վռամ, խնդրել զխաղաղութիւն. և նորա մեծարեալ՝ զհայցուածս որբոյն կատարէ. Թագաւորեցուցանէ Հայաստանեայցս զԱրտաշիր որդի Վռամշապհոյ։ Սա գեղխ էր միշտ 'ի գինեկան չարիս անարգել, զոր և պատճառս քսութեան նախարարացն զայն գտեալ՝ Թուեցուցանէին տաղտկացեալըս զինքեանս առ 'ի նմանէն գոլ. և բողոք առ մեծն Սահակ բարձեալ՝ հայցէին կցորդակից ինքեանց առնել, և չարախօս առ արքայն Պարսից, զի կամ կալցի 'ի կապանս, և կամ 'ի բաց ընկեսցի Թագաւորն Հայոց։ Այլ նա Թէպէտ և զիւր բամբասանացն 'ի սուտ ոչ հնարէր (1), սակայն մատնել զարքայն իւր հեթանոս արքայի, ոչ առնոյր յանձն՝ յուսալով տեսանել զկանգնումն գլորելոյն և ոչ զընկճումն։ Քա՛ւ, ասէ, լիցի ինձ գայլոց զիմ մատնել մոլորեալ ոչխար. զի թէ անառակ է, սակայն ս̃բ մկրտութեամբն դրոշմեալ է. պոռնիկ է, այլ քրիստոնեայ է. գինեցեալ է

(1) Մի օրի. հանէր

մարմնով, այլ ոչ անհաւատ հոգւով. զի զեն է վարուք, այլ ոչ կրականաչու։ Իսկ այսպէս զախտացեալ իւր ուխտին ոչ փոխանակէր ընդ առողջ գազանի։ Այլ թէպէտ և սուրբն այսպէս արդարախորհ լինէր, սակայն Վռամայ զանելման չարախոհացն մատուցեալ. և առաւել Սուրմակայ որ զեղջուն սուսեր սատակիչ պատրաստեալ՝ անն կալեալ փոխանակ որդւոյն Սահակայ գահակալել յաթոռն։ Իսկ սորա ՚ի բանս զԱրտաշիր արգելեալ, և մարզպան Պարսից Հայոց կացուցեալ, և ընդ Սուրմակին չարալեզու փոխանակ որդւոյն Սահակայ կացուցանէ, որ ոչ աւելի քան զմի ամ տեւեալ՝ հալածի ՚ի նոյն նախարարաց։

Յետ որոյ զկնի նորուն կացուցանէ Վռամ զմին ասորի Բրքիշոյ, այր ապարասան յափշտակող, որ ամենեքին կանամբք զուռն իւր մատակարարէր։ Իսկ վասն զի և զսա և ո նախարարքն ատեցին, ապա տայ զայլ մին ասորի Շմուէլ անուն, որ հետեւող գտանէր վարուցն Բրքիշոյի առաւել եւս ագահութեան մասամբք. և մեծին Սահակայ միայն զվարդապետութիւն հրամայէ, և ձեռնադրել զոր Շմուէլն հրամայէ։ Բայց մեծին Սահակ յետոյ աղաչեալ ՚ի նախարարացն՝ ոչ առնոյր յանձն կրկին առաջնորդ-

զինել նոցա. սակայն ոչ ինչ կարէր միշտ զհօգեւոր կայծն դիեցուցանել մանկանց եկեղեցւոյ: Բայց ի վախճանելն Վռամայ` և փոխանակ նորա Յազկերտի որդւոյ նորա թագաւորել, ապա և սուրբն Սահակ հիւանդացեալ ի հիւանդութեան մեծ` առ Քրիստոս վերափոխի ի Բագրաւան գաւառի ի Բլուրն կոչեցեալ գիւղ, որ զանմահութեան յինքեան բերեալ զվարս ի մահկանացու մարմնի զանմահն թողոյր կեր յեշատակ բարւոյ, ընդ հրեշտակսն դասակցելով պարս, դաշնակարգեալ եւս ընդ աջմէ աթոռոյն քրիստոսականաց յանդերանութիւնն (1): Իսկ զպատուական մարմին նորա տարեալ հանգուցանեն ի Տարօն ի գիւղն Աշտիշատ: Բայց զկնի վեցից ամսոց միայն, ապա և սուրբն Մեսրոպ փոխի ի կենաց աստի ի Վաղարշապատ քաղաքի, որ գրեթէ բառ Երկնայնոցն զուարթնոց զարդու. ամենեցուն զինքն բոլորապէս ցուցանէր. ուր ապա և նշան սքանչելի ի վերայ նորա փայլատակէր` խաչանման լոյս շողք առկայծեցեալ յերկար ժամ (2), մինչեւ բարձեալ տարան զսուրբ մարմինն ի գեօղն Օ-

(1) Այլ օր. անդ յերանութիւնն:
(2) Այլ օր. յերկար ժամու:

չակամն, զհետ ընկճանալով դադարեցին նոյն լուսեղէն խաչանման տեսիլն. և անդ ՚ի հանգիստ զնա փոխեալ, ապա տեսիլն աներեւոյթ լինէր: Բայց զօթու Հայրապետութեանն տեղապահութեամբ յաջորդէր Յովսէփ քահանայ ՚ի Վայոց ձորոյ(1) ՚ի Հողոցիմանց գեղջէ: Սակայն ՚ի հրամանէ Յազկերտի Սուրմակն կատարէ զձեռնադրութեան զլրումն զամս վեց, մինչեւ մեռաւ իսկ. և ապա զսուրբն Յովսէփ ՚ի ձեռնադրութիւն Հայոց:

## ԳԼՈՒԽ ԺԵ.

### Յաղագս նահատակութեան սրբոց Վարդանանց և Ղեւոնդեանց քահանայից:

Իսկ ապա ստուգապէս ՚ի վերջ հասեալ դադարէր թագաւորութիւնն զրոհի Արշակունեաց ՚ի Հայաստանեայցս, ընդնմին և Հայրապետութիւնն յազգէ երիցս երանեալ Լուսաւորչին մերոյ Գրիգորի. և որ իւրաքանչիւր զկամս իւր կատարեալ՝ վրդովէր խաղաղութիւնն, և խրթնանայր բարեզարդութիւնն. և ապա ոմանք ՚ի մերոց նախարարաց դաւաճանեալք ՚ի չարէն, ուրացան զհաւատս քրիստոնէութեան, հե-

(1) Երկրա օրէ. ՚ի Վայոց ձորոյ:

թանտական օրինաց հնազանդեալ։ Իսկ աւագագոյնք երկուք ՚ի նոցանէ Շաւասպ արծրունի, և Վնդոյ ՚ի Դվին քաղաքէ, հրամայեն չինել զմեհեանն որմզդական և զտուն հրապաշտութեան. և քրմապետ կարգէր Վնդոյն զորդի իւր զՇերոյ, և դընէր օրէնս ՚ի Պարսիկ մատենի, բազում և անհնարին բարս չարեաց գործոց, և լի մըթացուցիչ և նսեմական պիղծ ուսմամբ։

Լուեալ ապա զայս քաջին Վարդանայ Թոռին մեծին Սահակայ, թէ չիջաւ բարեկարգութիւնն եկեղեցւոյ, և տօնք տարեկանաց տխրեցան. յանկարծակի ապա զօր գումարեալ և յանդուգն յարձակմամբ ՚ի վերայ հասեալ, զանօրէնն Շաւասպ փայլակնահար իմն սրով սատակէր, և զմարզպանն Մըրկան փախստական առնէր. և զպիղծն Վընդոյ ձերբակալ արարեալ, յատուցանի կըրակին զոր չինեաց ինքն իսկ ՚ի Դվին՝ այրէր, և զորդի նորա Շերոյ ՚ի վերայ բագնին զփայտէ կախէր. և ՚ի տեղի բագնին չինէ եկեղեցի մեծ անուանակոչութեամբ սրբոյն Գրիգորի, անդ փոխելով զաթոռ Հայրապետութեանն. և հաստատեալ կացուցանէ ՚ի նմա զմեծ հայրապետն Գիւտ, վասն զի սուրբ հայրապետն Յովսէփ ՚ի

մետաղս բանտից ըմբռնեալ էր ընդ որոց Ղեւոնդեանցն, որ թէպէտ դեռ եւս կայր կենդանի, սակայն ոչ պարտ վարկան նախարարքն Հայոց առանց հովուի զհօտն Քրիստոսի թողուլ, զի մի վարատեսցին 'ի հեթանոսական գայլոցն, կամ թէ 'ի հրամանէ սրբոյն իսկ Յովսեփայ այն խրագործիւր։ Եւ այսպէս ապա վերստին նորոգիւր գեղեցիկ կարգ եկեղեցւոյ սրբոյ։ Եւ յայնմհետէ ապա հնազանդէին Հայք առաջնորդութեան քաջին Վարդանայ մինչեւ ցօր մահուան նորա, որ բազում պատերազմունս քաջութեան վասն առ 'ի Քրիստոս հաւատոյն կատարեալ, արժանի գըտանի առնուլ բազում և այլ եւս ընկերօքն զպսակն անթառամ 'ի յանմահ արքայէն Քրիստոսէ։ Զկնի այսորիկ ապա լինի կատարումն սրբոյ կաթուղիկոսին Յովսեփայ, կալեալ զաթոռ Հայրապետութեանն զամս ութ. ընդ նմին և այլ եւս սրբոց եպիսկոպոսացն և քահանայիցն Ղեւոնդեանց և սարկաւագաց նոցա(1) 'ի Պարս յանօրէն Պերոզէ, որք եդին 'ի գլուխս իւրեանց զպսակն մարտիրոսական կազմեալ յամենասուրբ ձեռացն Աստուծոյ։

(1) Եւէ օրէ · Նորա ։

## ԳԼՈՒԽ ԺԶ.

### Յաղագս գործոց Վահանայ Մամիկոնէի, և կաթողիկոսացն ։

Օ այսու ժամանակաւ մեծ հայրապետն Գիւտ որ յՈթմսոյ գեղջէ, կացեալ ամիս տասն յաթոռ Հայրապետութեան՝ վախճանի ։ Եւ զկնի նորա յաջորդէ զաթոռ Հայրապետութեան Յովհան Մանդակունի, որ առլցեալ իսկ էր ամենայն հոգեւոր հանճարով, և կարգս յօրինեալ ճոխացուցանէ պայծառապէս զամենայն աղօթական ժամակարգութիւնս եկեղեցւոյ սրբոյ. և յորդորէ եւս ձայնս զգուշացուցիչս դիտաւորական կենցաղոյս՝ որ բերէ զոգւոյն փրկութիւն ։

Եւ յաւուրս սորա պայազատէր զՀայաստանեայս Վահան Մամիկոնեան որդի Հմայեկի, եղբօրորդի սրբոյն Վարդանայ, որ արիաբար յաղթեալ ամենայն զօրաց եկելոց ՚ի վերայ նորա, և ժողովեալ զհարկ աշխարհիս շինէ այնուիկ զեկեղեցիս զաւերեալս ՚ի թշնամեաց, թելադրութեամբ և խրատու և աղօթից նպաստիւ սուրբ հայրապետին Յովհաննու Մանդակունւոյ ։ Եւ

մինչդեռ Պերոզ զկորուստ աշխարհիս Հայոց հնարէր կատարել, յանկարծօրէն յաղօթից սրբոյ առնն Աստուծոյ Յովհաննու սատակի 'ի Քուշանաց՝ ինքն և առհասարակ զօրք իւր։ Յետ սորա Վաղարշ Թագաւորէ Պարսից, որ բարեխրատուց թող ետ՝ 'ի Վահան զաշխարհս մեր հաւատոյ։ Իսկ մեծ հայրապետն Յովհան Մանդակունի կացեալ յաթոռ Հայրապետութեանն ամս վեց, փոխի առ Քրիստոս։ Եւ զկնի նորա առա Բաբգէն 'ի նորուն յաջակերտութենէ՝ կալաւ զաթոռ Հայրապետութեանն. յորում ժամանակի Պերոզ Թագաւորեալ Պարսից, և 'ի դուռն զՎահան կոչեալ, ետ նմա բդմարզպանութիւն Հայոց և ուղարկէ 'ի Հայս։

Զայսու ժամանակաւ աստուածահաճոյ վարուք և բարեպաշտ հաւատով երջանիկ արքայն Հոռոմոց Զենոն վախճանիւր, որ 'ի ժամանակի տէրութեան իւրոյ զմիգատարր և զօդախխտ բջայորդոր չար հերձուածն Քաղկեդոնականացն 'ի բաց մերժեալ, զուտափիւռ պայծառատարած ճառագայթաւէտ զհաւատս առաքելական ծաղկեցուցանէր յեկեղեցւոջ(1) Աստուծոյ։ Իսկ յետ սորա քաջանունն Անաստաս կա-

(1) Մի օր. յեկեղեցին։

ցեալ յանձն թագաւորութեանն Հոռոմոց, նմանապէս՝ կամ թէ եւս առաւել ճշմարտասիրաբար եւ հաճոյակատար Աստուծոյ վարուք հաստատէր զաւանդութիւն բարեպաշտութեան Հարցն որոց. եւ չորքաբերական թղթովք նզովեալ զամենայն հերձուածողս, ընդ ամենեսին (1) եւ զժողովն Քաղկեդոնի նզովէր:

Իսկ ապա զկնի յայսմ ժամանակի բարեպաշտութեան յաշխարհին Հոռոմոց՝ մեծ հայրապետն Հայոց Ներսէս առնէ ժողով եպիսկոպոսաց Վրաց եւ Աղուանից, 'ի Նոր քաղաքի՝ 'ի սուրբ Կաթողիկէի, 'ի մայրն եկեղեցեաց Հայոց, որք նմանապէս նզովեալ խոտեցին զժողովն Քաղկեդոնի. քանզի եւ չեւ եւս էր ընկալեալ զաշխարհակործան աւանդութիւնն, այլ 'ի նմին հիման սրբոյն Գրիգորի հաստատեալ կային: Եւ այսպէս յայսմ ժամանակի մի հաւատ բարեպաշտութեան առհասարակ հաստատեալ լինէր յաշխարհին, Հայոց եւ Հոռոմոց, Վրաց եւ Աղուանից՝ հաւասար ամենեցունց, եւ նզովեալ եւ 'ի բաց ընկեցեալ զժողովն Քաղկեդոնի: Իսկ իբրեւ ամք երեսուն 'ի վերայ ճշմարիտ հաւատոցն ան-

(1) Երկու օրի. ամենին: Մի օրի. ամենեւին:

ցանէին, և զկնի Անաստասայ Յուստինոս անօրէն թագաւորէր, սա առլցեալ չարութեամբ, զխլեալ և զջնջեալ և զանյայտեալ Քաղկեդոնական զչարափառութիւնն կրկին նորոգէր, և զանօսանէր ըզվտանգամն վշտալից տանջանաց տրամաց որոց և ուղղափառաց 'ի վերայ հասուցանէր (1), և դարձեալ արեամբ շաղախէր և զյատակս եկեղեցւոյ սրբոյ։

Բայց մեծ հայրապետն Բաբգէն իբրեւ եկաց յաթոռ Հայրապետութեան անդ ամս հինգ՝ վախճանեցաւ։ Իսկ զկնի սորա զՍամուէլ 'ի գեղջէն Արծկէոյ նստուցանեն յաթոռ Հայրապետութեանն, և յորում ժամանակի Վարդ եղբայր Վահանայ պայազատէ զՀայս. և սորա եւս կացեալ յաթոռ Հայրապետութե ամս տասն՝ վախճանի։ Իսկ ապա յետ սորա զՄուշէ 'ի Նահանգէ Այրարատայ?... 

(1) Մի օր. հասուցանէր։
(2) Յերկուս օրի՝ գրեալ՝ 'ի գեղջէ Այլաբերից։

ցուցանեն 'ի հայրապետական յաթոռն. և
'ի սոյն եւս աւուրս մարզպանք Պարսիկք
Հայաստանեայցս տիրէին հրամանաւ Կաւա-
տայ արքայի. սորա լեալ զաւուրս Հայրա-
պետութեան իւրոյ ամս հինգ՝ վախճա-
նեցաւ և սա: Ապա զՔրիստափոր 'ի գաւա-
ռէ Բագրեւանդ, 'ի Տիրառինձ գեղջէ՝ նըս-
տուցանեն յաթոռ Հայրապետութեան,
որ կալաւ զառաջնորդութիւն ամս վեց:
Եւ զկնի սորա զՂեւոնդ՝ որ էր 'ի փոքր
Առաստայ, կացուցանեն յաթոռ սրբու-
թեանն: Յաւուրս սորա Խոսրով Թագաւո-
րէ Պարսից փոխանակ հօր իւրոյ Կաւատայ,
և ապա ապստամբեալ 'ի նմանէ Վարդանն
Մամիկոնեան՝ սպանանէ զմարզպանն Սու-
րէն 'ի Դվին քաղաքի, և ինքն հանդերձ
այլովք նախարարօքն գնայ 'ի ծառայութիւն
Յունաց: Իսկ Ղեւոնդի կալեալ զաթոռ
Հայրապետութեան զամս երեք՝ վախճանի:
Եւ զկնի սորա զՆերսէս 'ի գաւառէն Բագ-
րեւանդ, 'ի գեղջէ Աշտարակայ՝ ածեալ
հաստատեն յաթոռ սրբութեան: Ի ժամա-
նակի սորա Խոսրով արքայ Պարսից զօր բա-
զում գումարեալ՝ առաքէ հրամանս Վար-
դանայ, և լինի պատերազմ սաստիկ 'ի դաշ-
տին Խաղամխայ, և 'ի մշտաջան աղօթից

սրբոյն Ներսեսի անհնարին հարուածովք մաշեն զօրքն Վարդանայ զՊարսիկսն ։

Յաւուրս սորա Սահակ՝ որ էր 'ի Մեհշապուհ գաւառէ՝ 'ի Բուանսրատան գեղջէ , և յազգէ մոգ , և բառ սուրբ աւետարանին 'ի մկրտութիւն Յիզդբուզիտ անուանեալ , որ թարգմանի՝ Աստուած ապրեցոյց , բազում չարչարանս կրեալ 'ի մարզպանէ Վշնասն Վահրամայ , 'ի Դվին քաղաքի պսակի մարտիրոսական պսակաւն 'ի Տրխատա · զոր բարձեալ զսուրբ մարմին սորա մարտիրոսին՝ մեծի հայրապետին Ներսեսի բախնդակ եպիսկոպոսք և կղերիկսք եկեղեցւոյ , եդին մերձ 'ի սուրբ եկեղեցին կաթողիկոսարանի՝ յարեւելից կողմանէ , շինեալ 'ի վերայ վեկայարան սուրբ՝ կոխածոյ քարամբք ։ Սորա կալեալ զհայրապետական աթոռն իբրեւ զամս իննն՝ վախճանի ։ Իսկ զկնի սորա զամն Յովհաննէս 'ի Գաբեղենից՝ 'ի գեղջէ Սոծեզուան , կացուցանէն հայրապետ Հայաստանեայցս , որ կացեալ յաթոռ Հայրապետութեան ամս տասն և եօթն՝ վախճանի ։

Յետ սորա ապա զՄովսէս զայրն Աստուծոյ , որ Եղիվարդ գեղջէ , որ սնեալ և ուսեալ 'ի հայրապետանոցին սրբոյ՝ կացուցանէն յաթոռ սրբոյն Գրիգորի ։ Յամի տասներոր-

զի Հայրապետութեան նորա, և յերեսուն և մի ամի Խոսրովայ որդւոյ Կաւատայ արքայի Պարսից. լինել բովանդակեալ շրջանակ բոլորակի, շլբ (532) ամաց. Նորա ՚ի հրամանէ մեծին Մովսէսի՝ քերթողք և գիտունք արուեստին եգին զկարգ Թուականութեան Թորգոմեանս Համարոյ, որ է շարժումն յառաջխաղաց և հինն զանազան մասանց արուեստին. և այսպէս բառ հայկականս լեզուի տուեալ տոմար տօնից տարեկանաց, յայսմ հետէ ոչ կարօտանային մաքացիկ ինն առնելով յազգաց զփխանի խորհրդոյն արարողութիւնս.

Նոյն Մովսէս զԿիւրիոն որոց Կաթողիկէի վանաց երէց՝ ձեռնադրէ յարքեպիսկոպոսութիւն Վրաց նահանգին և Գուգարաց և Եգերացւոց, բառ օրինակի կարգայն առաջնոց. Իսկ ապա մերձ ՚ի վախճանին Մովսէսի Կիւրիոն զճշմարիտ կարգաց և զկրօնից ուղղութիւնն ՚ի բաց խզեալ, զոր ՚ի Հարցն մերոց ուղղափառաց աշակերտեալ էին կողմանքն այնոքիկ, միանէր զհետ ամբարիշտ ժողովոյն Քաղկեդոնի, ըղկնի փառամոլ ամբարհաւաճութեան իւրոյ ձգեալ դաւաճանեալ զնախահարս աշխարհին. Նորա վաղվաղակի ՚ի դերեւ ելա-

նէր խոկացեալ նորայն դաւաճանութիւն։ Իսկ Սմբատ բաղում մաքառումն ընդդէմ նորա եղեալ, աստուածամերձ խրատու բանից բարեզգեաց զնա նշանաբեր՝ դառնալ 'ի չարափառ հրէական մոլորութենէ (1) հայհայութեանցն 'ի ճշմարիտ գիտութիւնն ըստ Հարցն իւրոց դաւանութեան։ Նաև նա ոչ ախորժեալ առնուլ 'ի դեղատուէ խնամոնոյ, խոկոյն ապա հասանէ կատարումն կենաց մեծի հայրապետին Սմբատի, կացեալ յաթոռ Հայրապետութեան ամս երեսուն։ Բայց մինչդեռ կենդանի էր սուրբ հայրապետն Սմբատ, Խոսրով որդի Կաւատայ արքայի Պարսից յետ բազում մարտից արութեանց և քաջութեանց և տիրելոյ ազգաց բազմաց, ըստ ծագման նշուլից աստուածային լուսոյն 'ի սիրտ նորա՝ 'ի ժամ վախճանի իւրոյ հաւատացեալ յԱստուած ճշմարիտ, և յՈրդի նորա միածին և 'ի Հոգին սուրբ Աստուծոյ, և մկրտեալ 'ի բաց ընկէց զկռամոլ ամբարշտութիւնն, խոստովան եղեւ՝ թէ ոչ գոյ այլ Աստուած բայց 'ի միայն միայն զոր քրիստոնեայքն պաշտեն։ Եւ ապա աւազանին սրբոյ վերստին ծնընդեան լուսաւորութեամբ հաղորդի 'ի կեն-

(1) Մէ օր․ հրէականն մոլորութենէ․

գանարար մարմնոյ և արեան Տեառն, ե-
ղջունեալ զաւրս Նեստորանն Քրիստոսի
համբուրման, յետ երից աւուրց վախճա-
նի ՚ի բարւոք ծերութեան։ Իւր բարձեալ
զմարմին նորա քրիստոնէից, նուիրական սաղ-
մոսերգութեամբ և քահանայական դասուք
տարեալ դնեն ՚ի շիրիմս թագաւորացն։ Իւր
թագաւորէ որդի նորուն ընդ նորա Արմիզդ,
զոր իւրոց իսկ մերձաւորացն և այլոց եւս
նախարարաց նենգ գործեալ, յիւրում իսկ
դահլճի գնա սպանանեն. և փոխանակ նորա
որդի նորուն Խոսրով թագաւորէ։ Նոյն և
սմա եւս ՚ի Վահրամայ ումեմնէ իշխանէ,
որ թագաւոր զինքն կարգայր. նենգ գոր-
ծեալ՝ փախուցեալ անկանի առ Մօրիկ կայսր
Հոռոմոց։ Իսկ կայսերն օժանդակեալ Խոս-
րովայ, բազում զօրու հանդերձ սպանանի
Վահրամն Չոբնայ առ հասարակ ՚ի նոցանէ։
Իւր Խոսրով թոռն հաւատացեալ Խոս-
րովուն հաստատի դարձեալ ՚ի թագաւո-
րութիւնն Պարսից, և ըստ երախտահա-
տոյցն լինելոյ՝ խնդրէ Մօրիկ ՚ի Խոսրովայ
զՄիջագետս Ասորւոյն և Մծբնաւ հանդերձ,
և ՚ի Հայոց զայն աշխարհ՝ որ Տանուտիրա-
կան (1) գունդն անուանէր, բաց Մասանէն

(1) Մէ օրէ. տանուտիրական։

'ի Դվին քաղաքէ, և յերկուցն ևս գաւա-
ռաց՝ որ է Սասնաց ոտն և կողմն Երագա-
ծու: Զայսոսիկ 'ի բաց զատուցեալ, զայ-
լքն ամենայն թողու Խոսրով 'ի Մորիկ, 'ի
լեռնէն որ կոչի Ընծաքսար մինչև ցԵ-
ռեւան աւան, և ցՃայփուն (1):

Ըստ կայսերն Մօրկայ ձեռներիցութք իմն
փոփոխումն արարեալ անուանց աշխարհացն
այնոցիկ, որ 'ի մերոյն Ըռամայ կարգաւ ե-
դեալ էր: Եւ նախ զԸրմենին զայն որ առա-
ջին Հայքն անուանիւր, երկրորդ Հայք զնա
Մօրիկ կոչեաց, յորում մայրաքաղաք է Սե-
ւաստիա: Իսկ զԿապադովկիա՝ յորում մայ-
րաքաղաք Կեսարիա և երկրորդ Հայք նախ
անուանէր. կոչէ զնա երրորդ Հայք, և-
առնէ զնա Եփրատէսի: Իսկ զՄելիտինէ՝ որ
ունի զհամանուն իւր գաւառս, է և երրորդ
Հայք, կոչէ զնա առաջին Հայք: Իսկ ըղ-
Պոնտոս՝ յորում մայրաքաղաք է Տրապիզոն,
կոչէ զնա մասն մեծ Հայոց: Եւ զչորրորդն
կոչեցեալ Հայք՝ յորում մայրաքաղաք Մար-
տիրոսաց պօլիս՝ այսինքն Նփրկերտ, Յուս-
տինիանոս զնա դրէ 'ի դիւան արքունի:
Դարձեալ զաշխարհն Կարնոյ՝ յորում մայ-
րաքաղաք է Թէոդուպօլիս, անուանէ ըղ-

(1) Մի օրի. յաւելու և ցՃայփուն գիւղ:

նա մեծ մասն մեծ Հայոց։ Եւ որ 'ի մեծն Հայոց մասն ինչ միացեալ էր 'ի ձեռս Հռոմոց՝ կողմանց անտի Բասենոյ մինչեւ 'ի սահմանս Ատրպատանի , մեծ Հայք զնա կոչէ։ Իսկ զկողմանս Տայոց սահմանօքն իւրովք հանդերձ՝ խորագոյն Հայք անուանէ . եւ զկողմն Դվնին քաղաքի՝ ներքսագոյն Հայք (1)։ Այսպէս ամենեցուն սոցա փոփոխումն արարեալ Մօրկայ՝ գրէ 'ի գիւտս արքունի։ Արդ՝ այսոքիկ սակս այսորիկ առյինէն քեզ երկրորդեալ՝ գրեցաւ , զի մի ոգխոռութիւն ինչ ինձ վարկցես զայն , զոր յառաջագոյն առ յինէն քեզ պատմեալ եղեւ առաջինն եւ երկրորդն եւ երրորդն եւ չորրորդ Հայք։ Զի այն առաջինն 'ի մերոյն յԱրամայ քաջէ անուանեալ եղեւ . իսկ այս երկրորդ՝ 'ի Մօրկայ կայսերէ Հոռոմոց։ Եւ արդ՝ այսոքիկ քեզ վասն այսոցիկ բաւականացեալ , ես դարձեալ 'ի կարգ պատմութեանս դարձայց։

(1) Երբեմն օրէ . յաւելուն՝ անուանէ ։

## ԳԼՈՒԽ ԺԷ.

### Յաղագս գործոց և քաջութեանց Սմբատայ, և ծողովեան Դիճոյ։

Խոսրովայ հաստատեալ ի թագաւորութիւնն Պարսից, ատանոր Սմբատ քաջ Բագրատունի բազում և անհնարին մարտս յարդարէր ընդդէմ բոլոր թշնամեաց նորա, և արիաբար մրցմամբ վանեալ փախուցեալ զինա հակառակորդս նորա, յամին նմա կացուցանէր։ Ընդ որ զարմացեալ Խոսրովայ՝ յաւէտ ևս հաճոյանայր Սմբատ յաչս նորա, և բազմօք ամմեք ընծայական օժտութեամբք զնա պատուականեալ՝ տայ նմա և զմարզպանութիւն Վրկանայ։ Իսկ Սմբատայ երթեալ հասեալ յաշխարհն այն, գտանէ անդ ազգս գերեալս ի Հայաստանեայցս, և բնակեցուցեալս ի Թուրքաստան կողմանէ մեծի անապատին՝ որ Սագաստան անուանի։ Զլեզու իւրեանց մոռացեալ, և դպրութիւնն նուազեալ յոյժ. որոց և տեսեալ զՍմբատ՝ յաւէտ ևս խրախք լինէին. և ի հրամանէ նորուն դարձեալ աշակերտեալ ըստ հայերէն հագագայս սիղոբայից զլեզուն նորոգէին, և ուսեալ դպրութիւն

հայերէն՝ հաստատէին ՚ի հաւատս։ Եւ ապա զերէց ոմն ՚ի նոցունց իսկ Աբէլ անուն՝ եպիսկոպոս նոցա հրամայէ կայացանել մեծի հայրապետին մերոյ Մովսէսի։ Եւ այսպէս վճռակ մեծի աթոռոյ սրբոյն Գրիգորի ՚ի հեռաստան երկրի գնաց կալաւ մինչեւցայսօր ժամանակի։

Բայց Սմբատայ մարտիր քաջութեամբ զամենայն թշնամիս Խոսրովու նուաճէր հընազանդել. յետ բազմօրեայ բարութիւնս նմա պարգեւելոյ Խոսրովու, և մեծահարկի մեծարանս դնելոյ, հրամայէ երթալ տեսանել Սմբատայ զերկիր ծննդեան իւրոյ։ Իսկ նա յերթալն իւրում առ հրամանի Խոսրովայ՝ խնդրէ շինել զեկեղեցին ՚ի Դվին քաղաքի, որ էր իսկ անուանակոչութեամբ սըրբոյն Գրիգորի։ Իսկ այնքան ուշալուրջ երեսօք զհայցուածս նորա լսեալ, և այնպէս հըրաման առ ՚ի նմանէ ընկալեալ. չուէ գնայ, և եկեալ հասեալ յիւրական յաշխարհս յայս, և տեսեալ առանց առաջնորդի զաշխարհս Հայոց, վասն զի փախճանեալ էր մեծ հայրապետն Մովսէս, ապա կարգէ ՚ի վերակացութիւն Հայոց զԱբրահամ Ռշտունեաց եպիսկոպոս՝ ՚ի գեղջէ Աղբաթանից. և ինքն արկանէ հիմն եկեղեցւոյն սրբոյ կոխանդ

քաղաքք, գեղեցկագիր շինուածիւ, կրով ձուլեալ 'ի մի. զի յառաջ յաղիւսոյ և 'ի փայտէ կազմեալ էր նա 'ի սրբոյն Վարդանայ: Իսկ սպահնակ ամրոցին ամբաստան առ արքայ լինի իբր վնասակար զնա գող բերդին. և փաղփաղուկն հրամանն ընդունի եթէ, բերդդ քակեսցի՝ և եկեղեցիդ 'ի դմին տեղ շինեսցի:

Բայց մեծ հայրապետն Աբրահամ քրիստոսաւանդ կարգօք և առաքինահրաշ երգօք գուն 'ի վերայ գործէր, զի թերևս հնար լիցի դարձուցանել զԿիւրիոն և զհնազանդեալսն նմա 'ի միութեան ճանապարհէն. այլ նոքա ոչ թերևս զճըշմարտութիւնն պատուէին. քան թէ միայն զօշաքաղութեան և զփառասէր բարուց իւրոց 'ի վեր ընձիւղեալ անձնուցանէին: Եւ այսպէս տալս զմարդադաւան տոմարն Լեւոնի փոխանակէին ընդ առաքելական աւանդից երից երանեալ սուրբ Լուսաւորչին Գրիգորի, որ եբաց նոցա զդուռն լուսոյ ճշմարիտ աստուածգիտութեան: Եւ այնուհետեւ բազում եպիսկոպոսաց ժողով արարեալ մեծի հայրապետին Աբրահամու 'ի Դուին քաղաքի՝ հրամանաւ քաջին Սմբատայ և այլոց ևս նախարարացն, ա-

տուածամերձ և ամբիծ այնուլթեամբ ուղ-
եղեալ աստուածային գրոց, և ստուգա-
գէտ իմացուածիւ ծանուցեալ զուղիղ դա-
ւանութիւն սուրբ Հարցն, նզովեցին ըզ-
Կիւրիոն զպառակտիչն եկեղեցւոյ Քրիստո-
սի, և զամենայն հնազանդեալս և զհամա-
խոհս չար հերեսիութեանն. և անէծս ցա-
ւագինս ուղղափառ դաւանողաց մերոց նա-
հանգիս 'ի վերայ եդին, ոչ բնաւին իսկ ընդ
նոսա միաբանել՝ որք զկնի Կիւրիոնի չարա-
փառի չեղեցան, և ոչ հաղորդակից նոցա
լինել, և ոչ 'ի տուրեւառիկ վաճառս ընդ
նոսա բերել. և ոչ խնամութեամբք ի-
ւիք ազգակցել, զի մի 'ի ձեռն այսպիսեաց
մերձաւորութեանց ընդ միմեանս հարեալք.
և վասն այդորիկ վրդովեալ չփոթեցի ամ-
բիծ և ուղիղ հաւատ խոստովանութեանս
մերոյ դաւանութեան, և խրամառեցի
ցանկ առաքելական։

Յետ այսորիկ ըստ հրամանի կայսերն
Մօրկայ զՅովհան ոմն 'ի գաւառէ Կոգայ
'ի Բագարան գեղջէ, կացուցանեն Կաթո-
ղիկոս յունական կողմանն, բնակեցուցա-
նելով զնա 'ի քաղաքագիւղն Աւան. ուր և
շինեաց իսկ ինքնին Յովհան զպայծառա-
կերտ քաւարանն սուրբ, և շուրջանակի նո-

րս զարդարեալ կալուածս կայանի իւրոյ ։ Իսկ մեծ հայրապետն Աբրահամ ըստ նախասաց բանին ի Դուին քաղաքի բնակէր՝ ի Պարսից բաժնի անդ, զի գետն Ազատ ըղսահման բաժնիցն երկոցունց ընդ մէջ հատանէր ։ Եւ թէպէտ եւ Յովհան այր ճշմարիտ եւ արդար էր եւ առաքինի ի վարս, եւ բնաւ ոչ ինչ շեղեալ զկնի Քաղկեդոնական աղանդիցն, սակայն հակառակաթոռ գոլով յերկուս հատուածս ձեղքեալ լինէր միատարր միութիւն հայրապետական Աթոռոյն, եւ այսպէս ոչ սակաւ հակառակութիւն կրեալ լինէին կողմանքն երկոքին ։

Բայց Սմբատ զկնի բազում արիական քաջութեանցն եւ բազմահանդէս երկոց, եւ կըրկին անգամ մենամարտիկն լինելոյ ընդ Եփթաղեայ արքային Քուշանաց եւ սպանանելոյ զնա, վախճանի ի բարւոք ծերութեան ի Տիզբոն քաղաքի ։ Եւ բարձեալ տարան զմարմին նորա ի Հայս, եւ դնեն ի Դարոյնս՝ որ ի Կոդ գաւառի ։ Իսկ զօրքն Սօրկայ ապստամբեալ առ ի նմանէ, եւ բռնանեալ զնա ի պալատանն, կացուցանեն փոխանակ նորա զՓոկաս ։ Իսկ Փոկաս եկեալ զօրօք բազմօք ի Բասեան, առ ընդ իւրեաւ ըզՀայաստանեայս նուաճել ։ Իսկ Աշոտ ոմն

հրամանաւ Խոսրովայ հանեալ 'ի Հայս, և դիմեալ 'ի վերայ՝ խորտակէր զզօրսն Յունաց, զի ոչ լինէր Թիւ սպանմանելոցն 'ի դաշտին. և ինքն կալեալ գործ պատերազմի ընդ Կայսեր քաղաքի՝ առնոյր զնա: Եւ յետ երկեամ մի ամսոյ զբնակիչս քաղաքին յԱհմատան փոխէ: Եւ վասն զի ծերունի կաթողիկոսն Յովհան կայր 'ի փախստականութեան 'ի նմա, ընդ նմին և նա եւս ըմբռնեալ վարեալ 'ի գերութիւն, և անդէն վախճանեալ բերաւ 'ի գիւղն Աւան, որ եդաւ մերձ յեկեղեցին՝ զոր իւր իսկ էր շինեալ. կալեալ զաթոռ հայրապետութեան ամս իը: Ի նմին իսկ ամի՝ ապա երանելին Հայրապետն Աբրահամ լցեալ զԹուականն կենաց իւրոց իբրեւ ամս իդ, փոխի և նա յաշխարհէ, և յաջորդէ զաթոռ նորա Կոմիտաս 'ի գեղջէ Աղցից, փակակալ սրբոյն Հռիփսիմեանց վկայարանին. և եպիսկոպոս զինի 'ի Մամիկոնեան Տարօնոյ:

Բայց Հերակլի սպանեալ զՓոկաս՝ զոր դի իւր ընդ նորա Թագաւորեցուցանէ, և ինքն զօրու բազմաւ չուէ գնայ յԱտրպատական: Իսկ Խոռեամ հրամանաւ Խոսրովայ առեալ զԵրուսաղէմ անհնարին կոտորածիւ, առաքէ 'ի նմա զամենայն այր, և զգաղումն գերէ:

Ընդ որս և զհայրապետն նոյն զԶաքարիա, և զքրիստոսընկալ զսուրբ Խաչն տէրունեան 'ի գերութիւն վարէին ։

Զայսու ժամանակաւ մեծ Հայրապետն Կոմիտաս զվկայարան սուրբ Հռիփսիմեան-ցըն՝ որ նախ խըլթին և փոքրատեսակ ինն էր շինեալ, եւս հրաշալէս և վայելուչ և նազելի և պայծառ շինուածով յարդարէր. ուր և պատահեալ սուրբ տիկնոջն Հռիփ-սիմեայ՝ ոչ սակաւ լինէր մխիթարութիւն բնաւ իսկ Հայաստանեայցս ։ Նա էր նա կըն-քեալ մատանեաւ սրբոյն Գրիգորի և սրբոյն Սահակայ, այլ և մեծի հայրապետին եւս Կոմիտասայ ոչ համարձակեալ բանալ զնա, եդ և զիւր եւս կնիք 'ի վերայ նորա. իսկ չափ հասակի տիկնոջն՝ ինն թիզ, և առ չորս մատունս ։ Նոյա շինեալ զեկեղեցին սուրբ, և անդ ամփոփեալ ժողովէ զնշխարս սուրբ Տիկնոջն 'ի պատրաստեալ իւր կայանն։ Յետ որոյ ապա քակեալ սորա զփայտայարկ գըմ-բէթ սրբոյ կաթուղիկէին՝ որ 'ի Վաղարշա-պատ քաղաքի, շինէ զնա գեղեցկայարմար և չքնաղատես կոփածոյ քարամբք ։

Բայց Կաւատ որդի առաջնոյ Խոսրովայ սպանեալ զերկրորդն Խոսրով Պարսից արքայ՝ ինքն փոխանակ նորա թագաւորէ ։ Նա ապա

տուեալ Կաւատայ զմարզպանութիւն Հայոց Վարդանիւ որդւոյ քաջին Վահանայ, աւարէ զնոյն իւրական աշխարհն։ Իսկ եկեալ նորա եգիտ հրաժարեալ 'ի կենաց տառնի մեծ հայրապետն Կոմիտաս, որ եկաց իսկ յաթոռ հայրապետական ամս ութ։ Նորա զՔրիստափոր ոմն յԱբրահամեան տանէ խորհրդակցութեամբ Թէոդորոսի Ռշտունեաց տեառն՝ կացուցանէ յաթոռ Հայրապետութեանն։ Զսմանէ բան ձառի՝ թէ քսութիւն ինն յիւրում լեզուի կրէր, և վասն այնորիկ առէ՝ ասպետն Վարազտիրոց զչարեալ գտանիւր ընդ եղբարս իւր։ Իսկ 'ի վերայ այսպիսի համբաւոյ ապա և յնտանեաց տանն քինք չարաբանք 'ի վերայ յարուցեալ նորա՝ բամբասանս ապիրատս յօդէին. և ապա այնուհետեւ ոչ բառ իրաւանց ուղղոց ինչ, այլ կամակար մտօք բառկամս անձանց հաստատէին վճիռ՝ անկանել նմա 'ի պատուոյն։ Իսկ նորա իւրովի կամալոյս 'ի չարէն տուեալ, երթեալ շինէ միայնարան մեծ մերձ 'ի գիւղն Ցեղեաց որ 'ի Մասեաց ոտան, և բազում միանձունս առինքն գումարեալ առաքինաջան երկօք և բազմաշխատ քրտամբք, փայլէր պահօք պընդակալութեամբ և աղօթից պաշտա-

նուիրմամբ և ամենագիշեր պաշտութեամբ․ կացեալ յանձին Հայրապետութեան ամս երիս ։ Ապա փոխանակ նորա կացուցանեն զՅովհ՟ ՚ի Նիգ գաւառէ՝ ՚ի Փառաժնակերտ գեղջէ, որ էր փակակալ սրբոյն Գրիգորի ։

## ԳԼՈՒԽ ԺԸ․

### Յաղագս Եղիշէ կաթողիկոսի, և Յովհաննու Մայրագոմեցւոյ ։

Յաւուրս սորա փոխճանի Կաւատ Պարսից արքայ՝ թողլով զթագաւորութիւնն Արտաշրի տղայագունակ որդւոյ իւրոյ ։ Իսկ սորա Հերակլ սակս ըղձակերութեան ընբռնաւորեալ նշանի խաչին թագաւորեցուցանէ Պարսից զԽոռեմ, և զխաչն սուրբ փոխարէն իւր առ ՚ի նմանէ հայցեալ․ որոյ երթեալ և առեալ ՚ի Տիզբոն քաղաքէ թագաւորին Արտաշրի․ փառաւորակի առաքէ ընծայրանեան խաչն առ կայսրն Հերակլ ։ Իսկ և իսկ սորա զօրքն Խոռեմայ սպանանեն զԽոռեմ ՚ի ձեռնարանի իւրոյ ապստամբին, կացուցեալ թագաւոր զԲորոն դուստր Խոսրովու՝ որ էր կին Խոռեմայ, և յետ մահուան

նորա՝ զխոստումն սմա յաղթէ Մասամնայ : Իսկ յետ նորա զԶարմիկ(1) դուստր Խոսրովայ, և յետ նորա Որմիզդ Թոռն Խոսրովայ, զոր խեղդամահ արարին : Սա զինի Թագաւորէ Յազկերտ Թոռն Խոսրովայ :

Իսկ Հերակլէս զերուսաղեմական Խաչն տարեալ դնէ յԵրուսաղէմ ՚ի տեղւոջ իւրում: Նոյն Մաժէժ(2) Գնունի զօրավարն ՚ի Հերակլեայ և առաքի ՚ի Հայս. այս պատուէր տալ հայրապետին Եզրի երթալ լինել կցորդակից, և հաղորդ կայսեր ՚ի գործ մասին խոստովանութե̄ հաւատոյ: Եւ եթէ ոչ, ասէ, կամիցիս երթալ միաւորել, արասցուք մեզ այլ Կաթողիկոս: Եւ Եզրի վասն զի ոչ կարացեալ զատանիլ յերկուց հաւատացեալ հօտիցն, յանձն առնու երթալ առ կայսր: Եւ իբրեւ չոգաւ, ոչ տանէր ընդ իւր զՅովհան փակակալ որբոյն Գրիգորի, որ էր յայնմ ժամանակի փիլիսոփայ կատարեալ, և աստուածային գրոց գիտութեամբ բանիբուն ճանաչիւր. այլ զայլ ոմն իւր քեռորդի՝ կիսակատար ուսմամբ՝ առեալ գնայր նովաւ վճարել զգործ իւրն: Եւ ՚ի հանդիպել կայսերն՝ խնդրեն առ ՚ի նմանէ ձեռնարկ հաւատոնամակի : Եւ և փաղփաղակի բոլ գրեալ եւ նո-

(1) Մի օր : Զարմիկ :　(2) Երկու օր . Մժէժ :

ցա՝ նզովել զամենայն հերձուածողս բաց ՚ի ժողովոյն Քաղկեդոնի։ Իսկ Եզրի և իւրայոցն տգիտաբար իմն էր անծանօթ գըրոց աստուածայնոց, ոչ կարացեալ ՚ի միտ առնուլ զխորամանկ հնարիմացութիւն հերձուածոյն՝ որ ընդ կայսերական ձեռագրիւն իբրեւ ընդ գրուանաւ էր թագուցեալ, դաւաճանեալ խաբեցան ընդ նորա՝ ըստ օրինի առաջին Եւայի։ Եւ ապա մեծարեալ յարքայէն, և ընկալեալ պարգեւս զերիր մասն գիւղաքաղաքին Կողբայ, և զաղս նորուն բովանդակաբար, դառնայ մեծաւ չքով ՚ի տեղի իւր։

Իսկ ՚ի չուել գալ նորա ըստ օրինի ա-վարական կարգացն, կղերք եկեղեցւոյն իւրոյ փութացեալ լինէին։ Բայց միայնակեան Յովհան՝ զոր վերագոյն ասացաք, ոչ եւս ընդ այլսն երթալով յուղ զնակ հարկին որ ՚ի վերայ կայր։ Եւ մնեալ ՚ի տաճարին ՚ի խնդիր Յովհաննու լինէր ՚ի հայրապետէն Եզրէ։ Եւ պատմեցաւ ապա ումանց Յովհաննու՝ հանդերձ մեղադրութեամբ, եթէ ընդէ՞ր ոչ չոգար ընդ առաջ նորա յերկրպագութիւն։ Եւ որս է պատասխանի տուեալ ասէ. Օ՛խմրդ պարտ վարկանիմ յողջոյն կամ յերկրպագութիւն նմա երթալ, որ քակեա-

ցմն խոկ զտաճման կանոնի հարցն մերոց ուղղափառաց. և հանդուճակից զմեզ խոր-հեցաւ առնել Բաղկեդոնեան չար հեր-ձուածոյն։ Ըստ հրամանին Լևոնի սաստկանայր ի վերայ, և այլ ախտանց կամօք մուծանե-լին զՅոհան ի սենեակն։ Երբեւ յանդիման եղեւ, ասէ Կաթուղիկոսն. Խորխաքար խմի ամբարհաւաճութեամբ ընդվզեալ թը-ւիս. վասն այնորիկ ախտակրեալ սրտիւ ոչ ներես զմեզ։ Եւ Նա ասէ. Խորխատումն և ամ-բարհաւաճութիւն չիս ոչ գտանի, այլ ջա-տագով ճշմարտութեանն լինել հաւանիմ։ Բայց քո յիրաւի կոչեցաւ անուն Լևոն. վա-սն զի յեղը տարեալ հաներ որոճեցեր ըն-Հայաստանեայս, քակեալ զտաճման հաւա-տոյ հարցն մերոց ուղղափառաց, և խրա-մատեալ զյանկն առաքելական. և ի մարգա-գաւան տօմարն Լևոնի կործանեալ։ Ըստ հրամայէ Լևոն մուրցայի տանջել զպարանոց նորա և գլխաւն։ Իսկ Յոհան ձեռս ի վեր ամբարձեալ ասէ, թէ Ըհուասիկ գնացի խնդալով յերեսաց ատենին, զի վասն ա-նուանն Տեառն արժանի եղէ անարգելոյ։ Եւ-զայս ասացեալ ելեալ գնաց։ Եւ երթեալ առ-կայանայր ի Սայրոց վանս՝ որ ի ծոր-ծորս լերինն ամրոցին Ըջնոյ, և սակս ի նմա

ընակերյն Յովհաննու՝ փոխեալ Եղիի զու-
նուն անդուստն Սրբոց վանաց՝ Սրբեգամ
զնա անուանէր, և զՅովհան՝ Սրբեգամեցի։
Բայց վասն զի յայնմ անդուստ եւս հրամայէր
զնա հալածել, տայր չուել զնոսա ՚ի գաւառն
Գարդմանաց, և անդ այս խստամբէր վասն
իւր ասացեալ, նեղ և անձուկ պողոտայիւ
հետեւել զկնի ամենայն առաքինի վարուց։
Զամանէ այս համբաւ ամբաստանութե̄
պատմի, իբր զառն հերձուածս իմն նմա
մածանել ՚ի մէջ եկեղեցւոյ որոյ. սակայն
ես ոչ կարեմ հաւանութիւն իմոյ կամաց
տալ վասն այնպիսւոյ առնն, թէ զնա՞րդ նա
կարէր խորհել առ փլուզանել զուղիղ
հաւատոյ շինուածս։ Այլ կարծիս իմն ըն-
դունի սիրտ իմ ՚ի հակառակադիր և խու-
րիմաց այլոց կամաց այս գործ համբաւոյ
լեալ։ Բայց եթէ սակս Մարգսի աշակերտի
նորա համբաւէ որք զայնպիսի չար հերձուա-
ծըս ընձիւղեալ, և ես եւս ոչ վասն նորա
հակառակիմ. զի իմ իսկ ընթերցեալ է գիր
մատեան նորա. այլ վասն զի Յովհան ՚ի բաց
յիւրմէ հալածեաց զՄարգսին, սակս այնու-
րիկ արտաքոյ կամաց նորա ասեմ զնորայն
հերձուած։ Իսկ այս հայրապետն Եղիա ըզ-
վկայարան որոյն Գայիանեայ, զոր երբեմն

խորթջին և մթին էր զնա շինեալ, քակեալ[1] զայն՝ ես ընդարձակագոյն և պայծառագոյն զնա շինեցի, կոփածոյ քարամբք և կրով ձուլելով, և պատուաքուստ յարդարեր կայանս բնակութեան քահանայական դասուց 'ի պաշտօն աստուածային խորանին։ Այս եղեւ սկիզբն ժամատուն շինելոյ. մինչեւ ցայս վայր ոչ երբեւիւր 'ի Հայս։

## ԳԼՈՒԽ ԺԹ.

Յաղագս տառապանաց աշխարհիս Հայոց յերեսաց Հագարացւոց. և գործոց Ներսեսի Շինողին։

Ի ժամանակի աստ յաւուրս Վարազտիրոց որդւոյ քաջին Սմբատայ՝ փախստեայ լեալ յՕսմանայ իշխանէ Ատրպատականի, չուէ գնայ ընտանեօք և աղխիւ առ կայսրն Հերակլ. վասն զի նենգ թագուցեալ յինքեան Օսմանայ սպանանել զՎարազտիրոց, սակս այնորիկ գնացեալ տարաբնակէր 'ի Յոյնս։ Ի սմին յաւուրս կայսրն Հերակլ զԴաւիթ Սահառունի կուրապաղատ արարեալ՝ իշխան Հայոց կացուցանէր, որ

(1) Ոմանք յաւելուն՝ քանդել քակեալ։

մեծաւ ձախողութեամբ և յաղթութեամբ բազման քաղաքավարէր զիշխանութիւնն ամիս երիս. և 'ի հրամանէ նորու՛ն շինէր իսկ եկեղեցին գեղեցկայարմար՝ որ 'ի քաղաքագեղն Արէն։ Իսկ յետ երկեամ՝ մի անարգեալ զնախարարացն և զօրաց իւրոց, հալածեցաւ։ Նա յայնմհետէ տայր 'ի չար հակառակութենէ նախարարացն և 'ի նանիր նախանձուէ դրդեալ կործանեցին զպատուոր Հայաստանեայս. բայց միայն բարեպաշտ իշխանն Թէոդորոս ընդ սակաւաձեռն կարի դիմակայ հինից թշնամեաց դամիւր։ Զայսու ժամանակաւ զայս երեւեալ ժառանգն Հագարայ աղախնոյն . . . որ ընդ Պօղոսի 'ի լեռնէն Սինայ կամ յանապատէ 'ի ծառայութիւն ծնեալ է։ . . .

. . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . .

Քանզի և ոչ իսկ թերեւս 'ի Տեառնէ տըւաւ աղախնորդւոյ՝ ընդ որդւոյ ազատին լինել ժառանգորդ, որպէս և ոչ իսկ բաժին հաւատացելոցն ընդ անհաւատին։ Արդ՝ իբրեւ գումարտակ մեծ լինէր Հագարացին, և յաղթեալ կոտորէին առ հասարակ զզօրս կայսերն Հերակլի որ Ա՛բարիս, անուհեաւ ազգք և ազինք պակուցեալք 'ի

յահէ նոցա՝ հնազանդեցան ՚ի ծառայութիւն նոցա։ Իսկ Երուսաղէմացիք զբբխտարինիւ սուրբ Խաչն փայփաղակի յուղարկեցին նաւուք[1] ՚ի Կոստանդնուպօլիս. զի մի կրկին եւս ՚ի թշնամեացն գերեսցի. եւ ինքեանք հնազանդեցան ՚ի ծառայութիւն Հագարացւոյն։

Աստ ապա վախճանեալ կայսրն Հերակլ, Կոստանդին որդի նորա ընդ նորա թագաւորէ։ Եւ վասն զի նախարարք աշխարհիս մերոյ անմիաբանք էին, եւ ոչ ոք էր որ նմա զօրավարէր, յայնժամ տակաւին զօրքն Հագարու համարձակութիւն առեալ Ասորեստան կողմանէ՝ ասպատակ ՚ի Հայս սփռէին. եւ ըստ օրինակի հրացայտ խանձ հրդեհի՝ ձգեալ բոցոյ նոցա փայփաղակի հասանէր Այրարատ գաւառ, հարեալ զդաշտավայրն ամենայն, եւ պաշարեալ պատերազմաւ զԴուին քաղաք, եւ առեալ զնա՝ զսուսերս իւրեանց արբուցին յարենէ քաղաքին, ուր ոչ եւս կայր թիւ բազմութե սպանելոցն. Եւ հազար ութ գերեցին փաձառակուր լինել, եւ անցեալ գնացին ընդ որ չուեալ եկեալ էին Ասորեստան։ Եւ իսկ եւ իսկ վախճանէր հայրապետն Եզր, կալեալ

(1) Ցամաքն չէ՝ նաւուք։

ղութեա Հայրապետութեանն առն տանն։

Իսկ Թէոդորոս Ռշտունեաց տէր, եւ այլ նախարարք Հայոց հանդերձեցին կացուցանել յաթոռ Հայրապետութեան փոխանակ Եզրի՝ զՆերսէս եպիսկոպոս Տայոց. բայց նա յաղչութեան լեալ յանհնարին կատարելոցն՝ որ 'ի գերելոց քաղաքին, զաղտագնաց փախստեայ լինել կարհէր, իբր ոչ կարող կալ 'ի քաղաքավարութեան այնմ՝ աստիճանի մեծի։ Նորա յորդորականն բանից եւ 'ի սաղրելոց նախարարացն հնազանդեալ հանդարտեաց։ Եւ կացեալ յաթոռ Հայրապետութեանն՝ ամփոփեալ հաւաքէր բզբազմութիւն զխաւարացն անկելոց, և 'ի նըմին աւեր մերանքին շինէր զհրդեհեալ վկայարան մեծի նահատակին Սերգեայ։ Զկնի այսր շինէ տաճար սրբութեան և 'ի վերայ վիրապին սրբոյն Գրիգորի. ուր 'ի մէջ թանուորացն թաղեալ առաքելունն էր այրն Աստուծոյ. զկանոնկոր մշտակին ջախջախելոց զգլուխ, 'ի մեռելութենէ խաղաց կաստատութեան վերածելով զՀայաստանեայս 'ի լոյս փառաց Արդարոյն Աստուծոյ։ Վարժեալ յուսացեալ 'ի Տէր, և ոչ ահեալ զհատազկրթական աշխատանս հինիցն թշնամեաց, զեղծեցին իւր մտութեամբ զնէ այս հինն

մեծ և հրաշալի բազմապայծառ յարկի տան Աստուծոյ՝ ըստ անուանակոչութեան սըրբոյն Գրիգորի . յանձն առնելով զկատարումն խնամատարութեան չքնաղին Քրիստոսի . Իսկ ՚ի հիմնարկել զաստուածակերպ փառաւորն բանաւոր հօտին Քրիստոսի , ՚ի ներքոյ շարից սեանցն հաստահեղուսիցն բաժանեալ դնէ զնշխարս ոսկերաց սրբոյն Գրիգորի , առ ՚ի յանշուշտ մնացականութեանն պահել զանձուն երկնաւորի ՚ի դերչաց ապականչաց , և ՚ի պարծանս հաւատոյ քրիստոնէական կարգաց : Իսկ զքրիստոսադրոշմ և զպատուական գլուխն ոչ ՚ի խորշ . այլ արտաքոյ ՚ի գագաթի եդեալ՝ դնէ ՚ի զանձարանս Աստուածութեանն ՚ի յոյս բարեաց փափաքողաց նմա և ՚ի բժշկութիւն ախտալիւրոց : Այց հայրապետն մեծն Ներսէս հրամանն հայցեալ ՚ի կայսերէն Կոստանդնէ , կացուցանէ զօրավար Հայոց զԹէոդորոս Ռշտունեաց տէրն :

Որդ՝ մինչ յայս վայր ոչ ևս էր խռովել ելեալ ՚ի պատերազմ՝ ընդ ումեք՝ ամիրապետի Հագարացւոյն , այլ միայն զզօրսն և եթ ասպատակս հանեալ սփռէր ՚ի ծագս երկրի : Այլ յայսմ՝ նուագի ինքն իսկ ամիրապետն ելեալ ՚ի Սին անապատէ , անթիւ-

բազմութեամբ անցանէր ընդ ծով ՚ի Հարաւակողմն և յարեւելս, ՚ի Պարս և ՚ի Սագաստան, ՚ի Սինդ և ՚ի Սորան, ՚ի Խորան և ՚ի Մանկուրան, և յաշխարհն Հնդկաց․ առեալ և աւերեալ զքաղաքեսին, բառնայր զամենայն թագաւորութիւնս ազգաց, բայց ՚ի յԼատինացւոց՝ որք են Հռոմայեցիք։

Իսկ կայսրն Կոստանդին ՚ի Սարտինեայ մնայր իբրև դաւեալ աքսորանի, կացուցեալ փոխանակ նորա զորդի իւր զՀերակլոսն։ Իսկ Վաղենտին զօրավար հուպ ՚ի վերայ հասեալ, և սպանեալ զՄարտինէ և զՀերակլոն զորդի նորա, կացուցանէ թագաւոր զԿոստանդ որդի Կոստանդնի։ Իսկ ապա փասին զի հասուած եղեալ՝ և եկեալ էր ՚ի Յունաց աշխարհէն Վարազտիրոց, այր մեծ հայկազեան ՚Ներսէս խնդրէ հաւատութիւն նմա ՚ի կայսերէ, և տայ առնել զնա կուրապաղատ և հրամանատար Հայաստանեայց։ Իսկ նա յառնուլ զիշխանութեան պատիւն՝ փադլաշակի փոխանն, զոր և տարեալ եդին (1) առ հօր իւրում՝ թագին Սմբատայ։ Ապա ՚Ներսէս զորդի նորա զՍմբատ ՚ի պատիւ հօրն խնդրէ կացուցանել, և հայցէ ևս զԹէոդորոս Ռշտունեաց տէր, ՚ի զօրավա-

(1) Եղ— օր․ եդին ՚ի Տարօն առ հօր։

րութիւն [1] հաստատել. և այսպէս ապաստա-
նեալ յապահովմանս առ ժամանակ մի 'ի
չոր հինից Հագարու աշխարհս մեր ։

Իսկ իբրև բառնայր առ հասարակ տէ-
րութիւն ազգաց և ազանց, այնուհետև պա-
տուեալ առ ազատն հին հարաւոյ՝ ընչեաց
'ի մեզ նոր հարստահարողս մահաբեր խորշակ.
և տապախարշ արարեալ զմատաղատունկս
իմանալի բուրաստանաց մերոց՝ խայթոցօքն
խոցոտեաց. և այսպէս ապա յամս սակաւս
արտաքընթաց ազգք հարաւոյ փոթորկեալ
պտուտեալ ոխերցին ամենայն երկրի, զոր
տեսեալ Թէոդորոսի և այլոց ևս նախա-
րարացն, և տակուցեալք յահէ հինիցն ե-
կելոյ՝ հնազանդեցան 'ի ծառայութիւն Հա-
գարացւոյն, գնելով ոսկով ընդ մահու, և
կուելով դաշինս ընդ դժոխոց ։ Եւ այսպէս
'ի բաց կացին 'ի կայսերէ ։

Իսկ կայսեր զօրս բազումս գումարտակ
արարեալ, չուէ գնաց 'ի Հայս՝ ընդ իւրև
նուաճել[2], որում ոչ որ թերևս դատս հը-
նազանդեալ, բայց միայն 'ի Վրաց աշխար-
հէն ։ Նորա կայսրն Կոստանդին յաւէտ իմն
բարկացեալ՝ խորհէր կործանման սաստի-

(1) Մի օրէ. 'ի զօրականութեան ։
(2) Երեք օրէ. նուաճեալ ։

բառնալ զերկիւղն ՚ի միջոյ։ Իսկ Հայրապետն Ներսէս մեծապատուս աղաչանս արքային մատուցեալ՝ դառնայ յայնց կանաց իւրոց։ Եւ ապա հեզաբար գնացեալ ՚ի քաղաքն Կիլին՝ իջաւանս ՚ի տան Կաթողիկոսարանին տրտմեալ, և անդ ապա հրամայէ Հռոմ՛ քահանայիցն պատարագ ՚ի սուրբ Եկեղեցւոջն մատուցանել. և քարոզել(1) ՚ի նմա ժողովն Բաղկերդանի. և հաղորդեցան օրինացն ՚ի միասին Թագաւորն և Հայրապետն մեր Ներսէս. այլ և ժողովեալ են և եպիսկոպոսունքն։ Եւ այսպէս ապա թէ կամաւ և թէ ակամայ պատճառք գայթակղութեան բարձեալ այս լեալ. չարժեցաւ հաւատն զոր ընկալեալ էր ՚ի սրբոյն Գրիգորէ, և ցայն վայր անշուշտ կացեալ և մնացեալ։ Իսկ մի ոմն յեպիսկոպոսացն ՚ի վայր ՚ի բարձրանէ բեմին իջեալ՝ լռիկ լռին ծածկեցաւ յամբոխին։ Իսկ իբրեւ յայտ եղբ(2) եպիսկոպոսին գայր, ածաւ եպիսկոպոսն առաջի արքային, և ապա հարցեալ առ ՚ի նմանէ թէ՝ Ընդէ՞ր ոչ ընդ իս՝ կամ՛ ընդ քում Հայրապետին ոչ հաղորդեցար։ Նա պատճառս փաստաբանական ՚ի մէջ առնոյր. Ո՛ւ ահի սրտիւ, ասէ, զայն գործեցի. քանզի մեք, ասէ, մինչ

(1) Մի օր. քարոզէր։ (2) Մի օր. եղն։

՚ի տախտակի տպաւորեալ նկարապաճոյճ
գեղով միայն պճեղ զկայսերաց տեսանեմք,
գողումն զմեզ պատեալ պաշարէ. Թողում՝
ասել զկենդանի դիտակ երեսացդ նկատել,
և հաղորդակից եւս լինել: Կայսրն ասէ.
Ո՞րդ հաղորդեա ընդ քում Պատրիարգիդ:
Ո՛չ եպիսկոպոսն. Որպէս ընդ սրբոյն Գրի-
գորի. սակայն ինքն իսկ դա եղեւ պատ-
ճառ չհաղորդելոյս իմոյ ընդ իւր: Զի եր-
կուք ամօք յառաջ քան զայս հրամայէր դա
ժողով եպիսկոպոսացն առ ինքն լինել. որք
միաբան ընդ դմա ձեռնարկ արարեալ, նը-
զովեցին զամենայն հերձուածողս, և առա-
ւել եւս զժողովն Քաղկեդոնի, և ես եւս
ապա խառն ընդ նոսա: Վասն որոյ կայսր
զայրացեալ յանդիմանէր զխենդութիւնն
Մովսիսի ՚ի լեզու իւր. և ապա յայն եւս
եպիսկոպոսն հաղորդէր ընդ նոսա՝ օրհնելով
զԹագաւորն, և Թագաւորն զնա:

Եւ ապա ըստ հապճեպ ասելոյ խնդրա-
կաց ՚ի Կոստանդնուպօլսէ՝ գնաց կայսրն փու-
թանակի: Իսկ Հայրապետն երկուցեալ իմն
՚ի սաստիկ ցասմանէն Մշտունեաց տեառնն,
երթեալ դադարէ ՚ի Տայս: Բայց յետ մի-
անգամ և երկիցս աստուածակի խնայելեան
զօրու ՚ի Հայս, և սպառսպուռ աւերելոյ, ա-

ւին պատանդ յամենայն գլխաւորաց աշխարհին վրանայս և զաւառս և զգեղջերս ։ Բայց Թէոդորոս Ռշտունեաց տէր գնաց ընդ Խորայէլի զօրուն յԱրբեաստան խուրայնօրն համագգօք, և անդ մեռաւ, և մարմին նորա բերեալ եղաւ ՚ի գերեզմանի հարցն իւրոց ։

Իսկ հայրապետն Հայոց Ներսէս յետ վեց ամի հալածանաց իւրոց, իբրև լուաւ զկախձանն Թէոդորոսի, և զդադարումն խամայէլեան ապստամբին, դարձաւ անդրէն ՚ի տեղի իւր ։ Նա միախորհ ապա լեալ ընդ նախարարացն, իշխան ՚ի վերայ Հայաստանեայցս կացուցանէն զՀամազասպ Մամիկոնեան, որ էր այր ընթերցասէր և ուսումնասէր, և փոյթ ՚ի բոլոր հրահանգէս, եւ զնախնականն քաջութեանցն սպաման միշտ ջանայր լուծեամբ կատարել մրցարանաց կրթութեամբ ։ Բայց հայրապետն Ներսէս սպարապ անձին գտեալ, զարտաքս հրաշակերտ եկեղեցւոյն զոր իւր խակ էր շինեալ, շուրջանակի պատուար պարսպով փակեալ ամրացուցանէր, յորինեալ ՚ի նմա (1) յարկս բնակութեան իւրեան հաստահեղոյս կոփածու քարամբք ։ Նոյն և

(1) Զուգ օրէ. ՚ի նորա ։

կարգեալ կացուցանէր ՚ի նմա ամբոխութիւնս երդումնորդաց ըստ պայմանի քաղաքականաց, և ածեալ ջուր ՚ի Բասող գետոյ՝ զամենայն աւազախիր առապար դաշտավայրն ՚ի գործ արկանէր, անկէր այգիս եւ բուրաստանս ծաղկոցաց:

Սա ապա դարձեալ սակս անհնարին և ծանրաբեռն ծառայութեանն ՚ի բաց կացեալ Հայք յիսմայէլեան բռնակալացն, հը-նազանդէին ՚ի ծառայութիւն կայսեր: Եւ մեծին Ներսեսի խնդրեալ յարքայէ առնել կուսակալ զՀամազասպ և հրամանատար Հայաստանեայս. զոր ապա լուեալ ամիրապետին՝ զամենայն պատանդսն Հայոց առ հասարակ կոտորէ, հոգիք իբրեւ ռչհե, (1775): Եւ յայնմ օրէ հետէ ապա հոգի խռովութեան առաքեալ յԱստուծոյ ՚ի մէջ բոլոր բանակացն իսմայէլեան, և այր ՚ի վերայ ընկերի յարուցեալ, և սուր յոգդեր կալեալ անհնարին սաստկմամբ զմիմեանս կոտորէին. և սպանանէին եւս զամիրապետըն իւրեանց, և այլ ՚ի տեղի նորա կացուցանէին: Ապա զօրքն իսմայէլեան որ էր Եգիպտոս. միաբանեալ ընդ կայսեր Կոստանդնի, հաւատացին ՚ի Քրիստոս, և մկըրտեցան արք իբրեւ վեշտասան հազար: Եւ

ապա զօրացեալ Մաւի, և տիրեալ զայն ևս ամիրապետ, մինչ իսկ թագաւորէ 'ի վերայ բոլորից Հագարացւոցն, տարեալ խաղաղութիւն ընդ բոլոր ծագս երկրի։

## ԳԼՈՒԽ Ի.

### Յաղագս իշխանապետութեան Գրիգորի և հարուածոց աշխարհին Հայոց։

Բայց Համազասպայ յետ երից ամաց առնլոյ զպատիւ կուրապաղատութեանն 'ի կայսերէ, հասանէ 'նմա կէտ վճարման 'ի կենացս, և վախճանեալ դնի ընդ հարս իւր։ Ապա մեծ հայրապետն 'Ներսէս հանդերձ 'նախարարօքն Հայոց հայցէ կացուցանել յիշխանական պետութիւն Հայոց 'ի Մաւեայ ամիրապետէն զԳրիգոր Մամիկոնեան, որ 'ի պատանդի իսկ առ 'նմա կացեալ էր։ Իսկ 'նորա զուարթ երեսօք զխնդիրսն կատարեալ՝ տայ Գրիգորի զիշխանական պատիւն, և առնէ զնա հրամանատար Հայոց։ Սա էր այր բարեպաշտ և երկիւղած յԱստուծոյ, և առաջնորդ գտեալ յօժարապատիւ (1) կար-

(1) Երկու օրին. յօժարապատիկ։

դայ և ուղղութեց, շինութե և խաղաղու-
թեան, 'ի յապահովութեան և 'ի բոլոր մա-
սին լրութեան, որ գրեթէ յաշխարհի ի-
բրր յանապատի գոլով՝ հետևեէր զհնի ա-
մենայն արդար վաստակոց։ Իսկ իբրև ե-
կաց մեծ հայրապետն Ներսէս յառաջնոր-
դութեան անդ իւրում ամս .քան, հրա-
ժարեալ 'ի կենաց աստի, եդաւ մարմինն 'ի
հանգստարանի անդ՝ զոր իւրովի իսկ յօրի-
նեալ էր 'ի հիւսիսոյ կողմանէ բազմապայ-
ծառ .քուարանին, որ ըստ արժանի աթո-
ռոյ իւրում նախահօրն էր կանգնեալ յարկ։
Նա այսպէս երջանիկ և հռչակաւոր և հոյա-
կապ երևեալ 'ի հարս, ժամանեաց 'ի հան-
գիստ անմահական կենացն 'ի պարս առա-
քելական դասուց։

Զկնի սորա մեծին Ներսէսի յաջորդէ
զաթոռ Հայրապետութեան Շահակ 'ի
գեղջէն Շկուռոյ՝ որ 'ի Սասնեաց տան(1)։ Սա
սենեկապան լեալ մեծին Ներսէսի, և վե-
րակացու շինուածոյ հրաշակերտ եկեղեցւոյն
զատնիւր հրամանաւ Ներսէսի, մինչ էր
նա 'ի հալածանս յերկիրն Յունաց։ Զայսու
ժամանակաւ բարեպաշտ իշխանն Գրիգոր
Մամիկոնեան աստուածային այցելութեամբ

(1) Մի օրէ. տոհմն.

հիմնադրեալ զչ.բնադադեղ եկեղեցին՝ որ ՚ի մեծ դաստակերտին Արուճ. չինէ զնա առիպով երկնային իմն ճեմարան յարդարեալ ՚ի վերայ երկրի. և ՚ի հարաւոյ կողմանէ դնէ զարքունիսն իւր յեզր քարաժայռ ձորակին, յորում բղխէ անմահակիտ աղբիւր պղպջակեալ ընդ քարաձերպս վիմարդ քարանցն, որ զեղեղս ունի իբրեւ զպակ պատուարի. և այս հաստահեղդս քարամբք և կրով պարսպեալ՝ կարգէ տուն բնակութեան իւրոյ: Շինէ նաեւ նուիրանոց ուխտի կրօնաւորական դասուց, յորում և եկեղեցի պայծառապաճոյճ ՚ի նմա յարդարեալ ըստ արուեստից կուսէ դաստակերտի մեծին Եղիվարդայ, տուն բնակութեան կուսակրօնից զնա հաստատէ ՚ի փրկութիւն հոգւոյ իւրոյ:

Բայց (1) կաթուղիկոսն Անաստաս չինէ զպայծառապաճոյճ եկեղեցին ՚ի հայրենի բնակութեան իւրում՝ ՚ի վանս դաստակերտին Ակոռւոյ, կացուց զնա յարդարեալ քահանայական ուխտի միակրօնից և այլոց եւս կղերց եկեղեցւոյ, ՚ի պաշտօն աստուածային խորանին, և ՚ի տածողութիւն հանգստեան հիւրոց և օտարաց և աղքատաց: Բայց Դաւիթ որ էր ՚ի Պարսից տան-

(1) Երկրոր օրի. ոմնին մեծ կաթուղիկոսն:

մէ՝ յազգէ Թագաւորաց, աստանօր եկեալ առ իշխանն մեծ Գրիգոր, խնդրէ 'ի նմանէ տալ իւր զ.քրիստոնական դրօշմն ։ Զոր և խնդութեամբ իսկ զնա ընկալեալ, հրամայէ կաթուղիկոսին Անաստասայ՝ տալ նմա զկնիք մկրտութեանն սրբոյ. և վասն զի յառաջագոյն Սուրհանն անուանիւր, ապա իշխանն մեծ ընկալեալ զնա 'ի ջրոյ սուրբ աւազանէն, Գուրիմ զնա յորջորջէ յանուն հօր իւրոյ. և տայ բնակութիւն նմա ըզգիւղն Զագ՝ 'ի նահանգին Կոտայից. որ զկնի ամաց ընկալաւ իսկ 'ի Դուին քաղաքի զմարտիրոսական պսակն ։

Յայնմ ժամանակի տեսեն լինել զկուսն որ 'ի քաղաքագիւղն Երեւանի, զոր և բաւական քեզ ուսուցանեն զայնր պատերազմի պչանգամանս, որ նախ քան զմեզ[1] պատմագրեցին ։ Իսկ Անաստասայ հայրապետին հոգացեալ վասն հայկական տոմարի, զի Թերեւս անշարժ զնա ըստ այլոց ազգաց մարթասցէ յօրինել, զի միշտ անշարժք լինիցին տօնք տարեկանաց, կամ յեղափոխ յեղանակք ժամանակաց. վասն որոյ և առ ինքն զԱնանիա անեցի[1] կոչեալ, որ

(1) Երեքս օրէ. յաւելուած զնա պատմագրեցին ։
(2) Ըմանօ անուեցի ։

բանիբուն այնմ արուեստի էր հմուտ, հը-
րամայէ նմա ստեղծագործել զնմանդրելն իւր։
Իսկ նորա ջան 'ի վերայ եդեալ. և ըստ բո-
լոր ազգաց պայմանի՝ անշուշտ յօրինեալ
զկարգ հայկականս տօմարի, զի բարեձեւա-
գունից ումանց և զմերս կշռադատեալ՝ մի
կարօտասցուք գալ 'ի զուգաւորութիւն
Հռովմայեցւոց։ Եւ մինչդեռ խորհէր Ա-
նաստաս ժողովք եպիսկոպոսաց զեղեալն
հաստատել, վախճան կենաց նմա ժամա-
նէր, կացեալ յաթոռ Հայրապետութեանն
ամս վեց. անխայթ զկնի եկելոցն այսմիկ
արարեալ, և զառաջին մշտախաղաց շրջա-
գայեալ կարգն կալեալ. Յետ այսորիկ Ի-
սրայէլ յՈթմսոյ գեղջէ յաջորդէ զաթոռ Հայ-
րապետութեանն։ Յաւուրս սորա զՄուա-
ւիայ ումն զօրագլուխ զօրուն Տաճկաց որ 'ի
Հայս՝ մտեալ վանէ կոտորմամբ սաստի-
Ներսեհ իշխան Վրաց, փախստեայ զնա ա-
րարեալ։

Իսկ Իսրայէլ կացեալ յաթոռ Հայրապե-
տութեան ամս տասն վախճանի։ Եւ զկնի
նորա Սահակ կայ յաթոռ Հայրապետութե՛ն,
որ հայրենեօք էր 'ի Ձորափորոյ յԱրքունա-
շէն գեղջէ, և մայրենեօք 'ի Մազազ գաւա-
ռէ՝ 'ի գեղջէ Ներդկայ։ Սա նախ կարգեալ

էր յեպիսկոպոսութեն Սատաղայ (1), և զենի սորա կոչեցաւ յաթոռ սրբոյն Գրիգորի : Իսկ սորա յեօթներորդում ամի աթոռակալութեան սորա պատերազմ յայնմ մարդէ Խաղբաց ՚ի վերայ առաքեցեալ լինէր մեծ իշխանին Գրիգորի, որ և սպանաւ իսկ, և եղաւ ընդ հարս իւր. և յայնմ հետէ սորա խաղաղութիւնն վրդովեցաւ, և սաստանումն սաստիկ զՀայաստանեայս պատեալ պաշարեաց : Զկնի սորա սպայաղանէ զիշխանութիւնս Հայոց Սմբատ Բագրատունի որդի Սմբատայ : Իսկ յայսմ վայրի Սիւնեան ոմն յանմնչէլեան տոհմէ՝ ոստիկան ՚ի Հայս առաքեալ, մարտ ընդ բոլորից իսկ ամրոցաց Հայոց դնէր. և զորս միանգամ յինքն գրաւէր՝ (2) առ հասարակ քանդեալ աւերեալ ՚ի վայր կործանէր : Իսկ Սեւան կղզի որ ՚ի ծովակին Գեղամայ, թէպէտ և ՚ի սկզբան նուաճի անդ ոչ միաբանեցաւ ՚ի ձեռս նորա, սակայն զկնի երկեամ մի ամաց մատնեցաւ ՚ի ձեռս նորա : Իսկ որք միանգամ բնակեալք կային յամրոցի անդ, զերի առեալ տանէր, և զկապուտս կողոպուտս յաւարի առեալ սպառասպուռ քանդէր աւերէր զամրոցն :

(1) Այլ օր․ Սատաղայ :
(2) Զաւր օր․ գրաւէին :

Եւ զկնի Մահմէտի այլ ոստիկան 'ի Հայս առաքեցաւ Եզդիլա անուն, այր ժանտ ժպիրհ և ամբարտաւան, և յաւէտ չարաբարոյ. որ զկեղծաւորութիւնն իբրեւ զթոյնս իժի յինքն բունեալ ունէր, և կալանաւոր կապանօք չարչարէր զիշխանս և զազատս աշխարհիս Հայոց, և յաւարի առնոյր զկարասի և զստացուածս բազմաց։ Նոյն և զմեծն Սահակ կալեալ 'ի շղթայս՝ տայր[1] տանել 'ի Դամասկոս, ընդ նմին և զիշխանն Հայոց զՍմբատ որդի Աշոտոյ. և առհասարակ ամենայն եկեղեցիս Քրիստոսի 'ի բոլոր զարդուց կապուտ կողոպուտ թողոյր, և յարտօսր կականման և 'ի սուգ և 'ի տրտմութիւն զծերս և զաղայս բերէր։ Նոյ Եզդիլա զնորահաւատն Դաւիթ, զոր յառաջագոյն յիշատակեցաւ առ 'ի մէնջ, ըմբռնեալ չարաչար հարուածովք և կապանօք և բանտիւ զնա խոշտանգէր դառն առ 'ի Քրիստոս հաւատոցն, յետ կորստական խորխորատն զնա հրապուրէր արկանել։ Որում ոչ հաւանեալ, և քաջապէս ընդդէմ վարեալ սուրբ ծերունին. 'ի փայտի զնա բեւեռակապ պնդէր, և նետաձիգ 'ի սիրտ սրբոյն արարեալ՝ 'ի Քրիստոս զհոգին ա-

[1] Այլ օրին. Ետ տանել։

ւանդէր · զոր տարեալ եպիսկոպոսաց և քահանայից՝ հանդուցին զմարմին նորա մերձ 'ի վկայարան սրբոյն Յիզտբուզտի ։

## ԳԼՈՒԽ ԻԱ·

### Յաղագս պատապանաց և հարուածոց Հայոց յերեսաց Հագարացւոց ։

Օ այսու ժամանակաւ լինի ապա կռիւըն 'ի Վարդանակերտի , և բնաջինջ կոտորումն իսմայէլեան բանակին ։ Վասն որոյ ցարդ եւս բան առ Հագարայեան ըստ իւրեանց ավխատորդոյ բանին պատմի թէ՝ Վարդանակերտս աւխ մի յիշեցի մեզ ։ Եւ վասն զի յոյժ տագնապեալ տարակուսեալ տառապեալ նեղեցան մեծամեծք Հայոց , ապա յուսացեալ յերկնային այցելութիւն՝ ընդդէմ դարձան ասպատակից հինից իսմայէլեան զօրուն ։ Եւ վասն զի Ոգբայ ոմն զօրապետ մեծ՝ հանդերձ զօրօք բազմօք չոքեր ընդ կողմանբք Վանանդայ , անդ ապա հասեալ 'ի վերայ Կամսարականն հանդերձ աղատօքն Վանանդայ՝ կոտորեցին սպառապուռ զզօրս նորա , և ինքն փախստեայ ան-

ցեալ գնայր առ ամպարտեան իւր։ Նա անդ-
ապս բազում զօրս ընդ իւր գումարեալ
'ի զէնս և 'ի զարդս և 'ի տէգ նիզակի, և
անհնարին դառնութեամբ խրոխտանայր՝ (1) գալ
առնուլ զվրէժս 'ի Հայոց՝ զխորոյ զօրուն
հարելոյ. հրդեհել, քանդել, կործանել զե-
կեղեցիս Հայոց, և առհասարակ գերել՝ և
կերակուր տալ անողորմ սրոյ։

Իսկ սուրբ կաթուղիկոսն Հայոց Սա-
հակ դեռ ևս կայր կենդանի 'ի Դամասկոս.
իբրև լուաւ զանհնարին սպառնալիսն Սե-
բայի, խնդրէր հրաժեշտ 'ի նմանէ՝ երթալ
առ նա. թերևս հնար լիցի դարձուցանել
զնա յանհնարին դառնութենէ մտացն։ Իսկ
'ի հրամայելն նորա երթալ առ նիրն, իբրև
չոգաւ 'ի Խառան, խակ և խակ հիւանդացաւ
սուրբ կաթողիկոսն 'ի հիւանդութիւն մեծ,
և այս գրէ նամակ աղաչանաց առ Սեբայ
իւրով ձեռամբ, բազում թախանձա-
նօք և աղերսալի պաղատանօք. յուշ ևս
առնելով Սեբայի զհաստատակաց մահ մար-
մնոյ, և թէ զկնի գալոց է և նա ամենայն
մահկանացուաց, և 'ի տապանի փակփակելի
գնելոց, այլ և զանհնարին դառնութիւնն
դժոխոց տարտարոսի նմա ընդ յուշ կա-

(1) Երկ. օրի. խրոխտայր։

պեալ. դարձեալ և շօտարամահն իւր լինել ՚ի դաշնաւորութիւն նմա բերեալ։ Նաև այսպիսի զզջացուցիչ բանիւք համոզեալ աղաչէր դառնալ ՚ի խորհրդոց չարաց, և չառնել զայն ինչ՝ զոր հանդերձեալն էր առնել, զապիրատ մոլորութիւնն ՚ի վերայ Հայաստանեայցս։ Նաև ապա զայն հրովարտակն հրամայէ յետ վախճանի իւրոյ դնել յաջոյ ձեռին իւրում, զի ինքն Սեբեայ եկեալ առցէ ՚ի ձեռաց նորա, թերևս զզջասցի չգործել զանօրէն մտածութիւնն իւր։ Իսկ սուլթանն Սեբեայ իբրև լուաւ զմահ սրբոյն Սահակայ, փութապէս առաքեաց դեսպակըս, հրամայէ ոչ թաղել զնա, մինչ զի ինքն իսկ երթիցէ։ Նաև իբրև չոգաւ, փութապէս առ դիապատիկ մարմինն առն Աստուծոյ մըտեալ. ձեռն նմա չարժէր ըստ օրինին իւրեանց իբրև կենդանւոյ, և ողջունէր ըզնա ՚ի լեզու իւր՝ սէլամ ալէյք ասելով։ Իսկ ապա հոգւոյն ազդմամբն զձեռն սրբոյն որ անշնչութեամբն էր խափանեալ՝ շարժեաց(1) ընդդէմ սուլթանին ՚ի պատճառս աղերսանաց. ընդ որ յաւէտ ՚ի զարմացման եղեալ, և առեալ զնամակն ՚ի ձեռաց նորա և ընթերցեալ՝ ասէ. Նա(2) խնդիր քո կատարեալ

(1) Երկրոր օրի. շարժէր։ (2) Երկրոր օրի. ՛Սա խնդիր քո։

է. պատուական այրդ Աստուծոյ : Եւ նման 'ի նախարարս Հայոց գրեալ, և հանդերձ սուրբ մարմնով Հայրապետին 'ի Հայս առաքեալ բազում պատուով, և թողեալ 'ի բաց զխնդրանս զոր առ նա գործեցին, և ինքն ընդ կրունկն դարձեալ՝ դառնայ 'ի տեղի իւր : Եւ այսպէս զմեծութիւն նորա պատուական արար Աստուած քան զմեր կենդանութիւնս, և 'ի սադրելոյ աղօթից նորա փրկութիւն մեծ ծագեաց աշխարհիս մերում : Իսկ իբրև եկաց մեծն Սահակ յաթոռ Հայրապետութեան ամս .քան և եօթն, զկնի նորա յաջորդէ զաթոռ Հայրապետութեան Եղիա 'ի գեղջէ Արծիշոյ՝ որ յԱղէտամի :

Յաւուրս յայսմիկ էր ամիրապետ իսմայէլեան Աբդլմէլիք, յետ ութսուն և հինգ թուականին իւրեանց : Իսկ ապա զօրք նորա որ 'ի Հայք՝ հուր 'ի մէջ վառեցին, սատանայ 'ի նոսա փչելով զչարութիւնն. և ապա ստահամբաւ դաւողութեամբ մնոսի յուսով և խնդացուցանող բարի խոստմամբք զամենեսեան 'ի մի վայր գումարէին՝ զազատս և զհեծելազօր գունդս, և զանուանսն նոցա 'ի դիւանն մատուցանէին, իբր թէ բաշխել նոցա զդահեկանաց տարեւո-

րըն. և ապա զպատերազմական զէնսն 'ի նոցանէ 'ի բաց առեալ, 'ի տաճարն Աստուծոյ զնոսա արկանէին 'ի Նախջուան քաղաքի, և զդրունսն յետ կոյս փակեալ աղխաւ` 'ի բաց սնդեալ ունէին զելիցն վայրս: Իսկ նոցա իմացեալ զդաւաճանութիւնն, զմանկանցն զձայնն որ 'ի հնոցին` երգս առեալ գոչէին: Իսկ չար դահճացն զվերնայարկս եկեղեցւոյն քակեալ և լցեալ հրով, առաւել ևս քան զԲաբիլոնին 'ի վեր ըզբոցն բարձրացուցանէին այրեցողական նիւթովն. և այնպէս ապա հրդեհակէզ եղեալ առաստաղ փայտակերտ եկեղեցւոյն. և հըրացեալ կղմինդրն 'ի վերուստ 'ի վայր հոսեալ մասխառն հրովն` վախճան մահու առհասարակ 'ի վերայ ամենեցուն նոցա ածէր. և նոցա անդադար գոհաբանութիւնն 'ի ըսպառել ոգւոցն կայեալ դադարէր: Իսկ վրիժագործ այլազգիքն յապահովս կացեալք յերկիւղէ քաջացն զօրաց, և զմնացեալ ըստանիս հրակիզելոցն գերի առեալ ածէին 'ի Դվին քաղաք, և անտի յուղարկեալ տանէին 'ի Դամասկոս: Եւ այսպէս աշխարհս մեր ծովացաւ արտասուօք, և լցաւ բազում ողբովք:

Իսկ յետ Աբդլմէլէքայ Վլիթ (1) որդի նորա

(1) Մէ օրէ. Վլիթ:

լինէր ամրապետ, և Վ Թաղխման եղբայր նորուն ամրաւակեցութեամբ. և յետ նորա ապա Սմար(1), յորում ժամանակի Վահան Գողթան տէր չարչարեալ խոյ ՚ի նմին Սմարայ, և բազում նահատակութիւնս վասն անուանն Քրիստոսի ցուցեալ յԱսուծափ(2) քաղաքի Հայոց, պսակի ՚ի Քրիստոսէ անթառամ պսակաւն:

## ԳԼՈՒԽ ԻԲ.

### Յաղագս հայրապետութեան Յովհաննու իմաստասիրի, և գործոց նորա:

Բայց յաւուրս մեծ հայրապետին Եղիայի, Ներսէս ոմն՝ որ յայնժամ եպիսկոպոսապետ էր Աղուանից, ՚ի հրապոյրս ամբարշտութեան զինքն բերեալ, չարադաւան դաւանէր չար աղանդոյն Քաղկեդոնի. ընդ նմին և տիկին ոմն համաձայնեալ նմա, որ յայնժամ հրամանատար Աղուանից էր: Եւ այսպէս երկպաքանչիւր նոքա միաբանեալ՝ ջանահնար լինէին զբոլոր աշխարհն ՚ի

(1) Երկու որդի. Օմար, (1) Մի որդի. ՚ի Սուծափ:

մարդապաշտ հայհոյութիւն ածմարին Ե-ւանի ։ Իսկ նախարարք աշխարհին խմբեալք՝ զեկուցին մեծ հայրապետին Եղիայի ․ որոյ գուն ՚ի վերայ գործեալ ոգւոյ չափ, և բազում ՚նամակս հաւատոյ աստուածականս (1) պատգամօք առ ՚նոսա առաքեալ երկիցս և երիցս անգամ, ոչ եւս զղջացան դառնալ ՚ի մարդադաւան մոլորութենէ իւրեանց ։ Ապա մեծն Եղիա զխստութիւն և զանդարձակութի նոցա ՚ի գործ արկեալ՝ գրէ թուղթ առ ամիրապետն իսմայէլեան Ոմար ․ զեկուցանելով նմա թէ՝ գոյ աստ յաշխարհիս (2) մերում եպիսկոպոս մի, և նոյնգունակ տիկին մի զուգակից ընդ եպիսկոպոսին, որք ՚ի բաց բերեալ են ՚ի հնազանդութենէ մեծի տէրութեանդ ձերոյ, և ոչ միաբանին ընդ մեզ, որ միշտ զանուն քո յիշատակեալ քարոզեմք յաղօթս մեր, այլ զթագաւորն Հոռոմոց քարոզեն, և ՚ի նա զաշխարհս մեր հնարին դարձուցանել․ եթէ ոչ աճապարեսցես բառնալ զնոսա ՚ի միջոյ աստի մերմէ, ընդ հուպ իսկ հաստատեալ ՚ի Հոռոմս ձեռնատուր լինին ՚ի տալս հարկաց, և յամենայն մասունս գործոյ ։

(1) Երկու օրէ․ աստուածային ։

(2) Ընդմին․ աշխարհիս մերում ։

Զայս ապա ընթերցեալ ամիրապետին՝ շնորհակալութեամբ մեծաւ պատուէ զաւագեալ դեսպանն(1) մեծի հայրապետին. և ինքն յղէ զոմն 'ներքինապետս իւր, փաղփաղակի առ ինքն հրամայէ հասուցանել զՆերսէս հանդերձ տփխնաւն: Որոյ եկեալ և ըմբռնեալ զերկոքանչիւր զնոսա, և կապեալ երկաթի շղթայիւք և հեծուցեալ յուղտս՝ առնու գնայ առ ամիրապետն: Եւ այսպէս խոհականաբար 'ի ձեռն մարմնական կրից նոցա զհոգւոյ մահն 'ի բաց փարատեալ՝ բառնայ զչարն 'ի միջոյ մեծ հայրապետին Եղիա: Եւ ապա այլ եպիսկոպոսապետս 'ի տեղի չարախաւսին Ներսիսի ձեռնադրեալ հաստատէր: Իսկ ապա սորա լցեալ զկէտ Հայրապետութեան ամս չորեքտասան՝ փոխձանի:

Եւ զկնի սորա յաջորդէ զաթոռն սուրբ մեծ Լուսաւորչին Յովհաննէս. որ հմուտ և տեղեակ գոլով բոլոր քերթողական ճարագծաց, մասանց բանի և մասնականաց, այլև վարժից սեռից, և որք ընդ գոյացութեամբն են սեռական տեսակարարողութիւնք(2) մինչ ցանհատ վայր, և տարբերու-

(1) Մէ օրէ. դեսպանս:

(2) Մէ օրէ. տեսակաւորութիւնք:

թեանցն եւս հանդամանաց և պատահմանց, անջատից և անանջատից ոչ անտեղեակ. Դարձեալ և կրթական վարժից թէորականաց, որ զարուեստին ծառոյ պտուղս առպանայէս ներադրէ յարուեստասէրն, յաւէտ իմն հմտագունագրով(1) դրոշմեալ այս եկեղեցւոյ Քրիստոսի զբովանդակ կարգաւորութիւնս պաշտաման ժամուց. գեղեցիկ իմն յօրինուածով ձախացուցեալ և բացայայտեալ եւս զմիոյ միոյ կարգացն զմեկնութիւնս 'ի մխիթարութիւն կղերց եկեղեցւոյ։ Այլ և ճառս եւս ինքնախօսս բանաստեղծս յարդարեալ զղջացուցիչս չար գործոց և յորդորականս 'ի մէտս ապաշխարողական սակի։ Այս ամենայն առաքինի քաջութեամբ զանձն տուեալ՝ աշխատասիրաբար կրթական ջանիւ զինքն զինէր յերկս հոգեւորս պահօք և աղօթիւք և ամենագիշեր արթնութեամբ. և 'ի ներքոյ ոչ յօդեաց առ, այլ յաղթեաց ցխախս դժոխայինս զգեստաւորէր։ Իսկ զարդարեցան 'ի պատուական երանգէ նիւթից զգեստաւորեալ պճնազարդէր, և ոսկի մանր խարտիւ ազուցեալ՝ և իւղովք անուշիւք յայն ընդխառնեալ, փչէր ընդ ծաղկեալ ալեօք մորուսն՝ որ իջա-

(1) Երէւ. օրէ. հմտագոյն գրով։

նէր մինչեւ ցպրապանս զգեստու նորա։ Եւ այնպէս տապա սաեան կազմեալ, զի տեսողայն բարեխորհայ՝ բարի պատճառք խրախուսեան լինի, եւ չարայն խակայ՝ ընդոստուցանօղ պակուցումն ՚ի չարէն ՚ի բարի։ Եւ վասն զի ոչ այնպէս յաներեւութից ոմանց աչից զօրութիւն ընդոստուցանօղ մարդկան բերցի ՚ի փութարքն առ լաւն, որպէս յերեւելեացս գերաքուն զարդուց խոտորանք, եւ վասն որոյ իսկ այսորիկ կալաւ իսկ սովորութիւն գեղեցիկ զարդուք պճնազարդեալ(1) զանշունչ քարինս եկեղեցւոյ. ապա որչափ առաւել մարդ քան զքարինս բերէ ՚ի զարմացումն զտեսողսն։ Սակայն այսորիկ ոչ ամենեցուն, այլ նոցա միայն՝ որոց դատողական հաստատեալ է գործ։

Եւ վասն զի տեսեալ էր զայրն Աստուծոյ ոստիկան ոմն Հայոց Վլիթ անուն, եւ եղեւ գնալ նմա առ ամիրապետն, եւ պատմէր նմա զվայելչութիւնն Յովհաննու։ Իսկ նորա զնա տեսանել ըղձացեալ, փաղփաղուկի զմի ՚ի ծառայից իւրոց առաքէր՝ առ ինքն զայրն Աստուծոյ ածել։ Եւ իբրեւ ածաւ բազում պատուով յարքունական քաղաքն, պատգամ առ նա ամիրապետն յղէր,

(1) Հին օր. զգեստաւորեալ.

զի լոկ սովորականին զարդու զինքն զգեստաւորեալ՝ այնպէս զնա տեսցէ։ Իսկ նորա զաւարտահասակ զխտակն իւր ևս առաւել փայլուն և պաղպաջուն զգեստիւք պըճնաւորեալ, և զալէհեր ծաղկեալ մօրուսն ոսկեփունջ կազմեալ, և զոսկեհանկար գաւազանն որ ՚ի փայտից ոսկեխազից՝ ՚ի ձեռն առեալ, այնպէս առաջ գունեան այրն և Թէկնածէս առ ամբարտաւանն մատանէր։ Զոր տեսեալ հիացեալ զարմացեալ ընդ գեղեցկութիւն նորա բարեհամբոյր հասակին և շքեղաշուք զխտակին. առաջ եզաւ ամեռ նըստել նմա(1)։ Եւ սկսաւ հարցանել զնա ամբարտաւանն. Ո՞վ ես, ասէ, այդպէս պճնազարդ լինիս. մի՞ զի Քրիստոսն ձեր զպարկեշտ և զչնչին զգեստ պատուեաց, և զնոյն արարին աշակերտք նորա։ Իսկ նա պատասխանեալ ասէ. Թէպէտ և Քրիստոսի Աստուծոյ մերոյ առ ՚ի մէնջ առեալ մարմնոյն զաստուածական փառսն ծածկեալ լինէր իբրև փարագուրաւ, սակայն աստուածային զօրութեան սքանչելիք նշանացն ոչ ծածկեցաւ, այլ յամենայն հեղաւ, զնոյն շնորհ նշանաց և արուեստից տալով ՚ի ձեռս իւրոց աշակերտացն, որ բաւական բերէր զմիտս

(1) Մի. օր. ՚ի նմա։

մարդկան զարթուցանել յերկիւղն Աստուա-
ծոյ, և ոչ ինչ ախտոյացան զգեստուց ահար-
կուաց ։ Իսկ արդ՝ վասն զի փակեալ է ՚ի մէնջ
բազում ՚նշանաց ՚նոցա շնորհ, վասն այնորիկ
ահարկու ինն զգեստուք հնարիմք զպարզա-
միտ խակութիւն մարդկան ընդոստուցանել
յերկիւղն Աստուծոյ ։ Զայս ասա և ՚ի մար-
մնաւոր թագաւորաց ՚ի ձեռն է տեսանել, ծի-
րանեփառ և ոսկեձամուկ զգեստուք և գե-
ղեցիկ զարդուք և զինուք առ ՚ի յահարկուի
բազմաց բերել. զի թէ խարազնազգեաց[1]
զձեռ ՚ի մարդկանէ որ տեսանիցէ և գծուծս և
խոշորս, ոչ որք պակուցեալ զարհուրեսցի ՚ի
փառաց ձերոց՝ որ ոչն երեւի ։ Նոյն եթէ
զռամկականն զիմ գտանել խուզես, հրամա-
յեսցէ ուշութիւնդ քո արտաքս ակնաւ իսկ
մի գնալ արանցդ ։ Իսկ ասա ՚ի միայնանայն՝
մերկացեալ առ ՚ի զգեստէն արտաքնոյ, ցու-
ցանելով ՚նմա զխոխոն այծեայս՝ ասելով.
Մերկութեն անդամոցս այս է զգեստ. իսկ ար-
տաքցքդ՝ միայն են ՚ի տեսիլ արտաքնոց ։ Իբ-
րեւ զձեռն ՚ի զխոխոն արկեալ լինէր աղի-
րաբեան, դժգմեալ, խոժոռեալ, քամահելով
ասէ. Ո՞վ յարդ արդեօք կարէ մարմին մարդոյ
տեսեալ ժուժկալել այսպիսի դժնդակերկել

(1) Մէ օրի. խարազնազգեաց,

քրձի, եթէ ոչ յԱստուծոյ տուեալ լինի նմա համբերութիւն։ Եւ այս բազմահարկի պատուով զնա մեծարեալ, և եօթն անգամ զնա պճնաւորեալ գեղեցիկ իմն արքունական զգեստուք, և գանձս ևս ոսկւոյ և արծաթոյ նմա պարգևեալ, յուղարկէ յիւրական աշխարհն։ Որոյ եկեալ և կեցեալ ամս տասն՝ վախճանի, կացեալ յաթոռ Հայրապետութեան ամս մետասան։

## ԳԼՈՒԽ ԻԳ.

### Յաղագս հայրապետութեան Դաւթի և այլոց, և գործոց նոցին.

Իսկ զկնի նորա կացուցանեն յաթոռ Հայրապետութեան զԴաւիթ, 'ի գեղջէն Արամոնից՝ որ 'ի Կոտայն գաւառի։ Այս գիւղ սեպհական էր տան Կաթողիկոսարանի, նախ քան զչարչարանս սրբոյն Գրիգորի յարքայէն Տրդատայ նմա իսկ հոգեցատուր (1) պայմանաւ ընծեռեալ, որոյ և յետկար վճռան (2) պահի մինչև ցայսօր ժամանակի։ Եւ

(1) Մի օրի. հոգէպատում։

(2) Մի օրի. վճռան. Երկ օրի. վճռանն։

վասն զի բնակչաց հեթանոսաց 'ի Դվին քա-
ղաքի յոյժ տաղտկացեալ լինէր այն Աստու-
ծոյ Դաւիթ, այլ և բազում չար ոճիրք զնա
նեղեցին. ապա տագնապեալ և արտաքս 'ի
միջոյ նոցա բառ գրեցելումն ելեալ, չինէ
եկեղեցի 'ի գեօղն Արամնա՝ (1) գեղեցկայար-
մար յարդարմամբ, և դնէ չուրջանակի նո-
րա տուն բնակութեան վայելուչ իմն յար-
մարեալ. և անդ զկէտ կենացն քաղաքավա-
րեալ իբրև ամս երեքտասան՝ վախճանի,
հանգուցանելով զնա մերձ առ նոյն իսկ ե-
կեղեցի։

Իսկ զկնի յաջորդէ զաթոռ նորուն Տրդատ՝ Ոթմսոյ գեղջէ, այր սուրբ և պար-
կեշտ, և վայելեալ առաքինութեամբ։ Յա-
ւուրս նորա տարապատկք չար հինից յամե-
նայն ուստեք դադարեալ լինէին 'ի տագ-
րելոյ սրբութեան աթոռից նորա։ Եւ այսպէս
ապա խաղաղութեամբ հասեալ 'ի կէտ կոչ-
մանն Քրիստոսի՝ վախճանի, կացեալ յա-
թոռ Հայրապետութեան ամս քսան և երկու։
Իսկ զկնի սորա (2) համանուն սորին Տրդատ
'ի Դասնաւորից՝ կացորդի յաթոռ Հայրա-
պետութեան, և ոչ աւելի քան զերկու ամս
ապրեալ՝ վախճանի։ Իսկ զկնի սորուն Սիոն

(1) Մի օր. Արամնայ։ (2) Երկ. օր. նորա։

՚ի գեղջէ Նաւանեայց՝ յաջորդէ զաթոռն ։ Սա ՚ի տղայական հասակէ սնեալ և ուսեալ[1] ՚ի սրբումն Հայրապետարանի, վարժ և կիրթ ՚ի բնաւոր առաքինութիւնս յառաջաբերիւր ։ Իսկ սորա նախ քան զայս կոչեալ լինէր առ յեպիսկոպոսութիւն նահանգին Աղձնեաց. և մինչդեռ անդէն իսկ հովուէր զհաւատացեալսն իւր հօտ, աղբիւր մի բազմաբուխ առ ստորոտով Սիմն կոչեցեալ լերինն՝ ցամաքեցաւ, յորմէ բազում այգեստանք և բուրաստանք տնկոց և արտավարք ոռոգանեալ բուծանէին ։ Այլ այնուհետև սորա սկսաւ աղաւաղիլ և լքանիլ պտղաբերութիւնք գեղջն, և յեղծումն աւերանաց բերել ։ Իսկ որ յայնժամ իսմայէլեան ոստիկանն էր յայնմ նահանգի՝ Սուլիման անուն, առ ինքն զեպիսկոպոսն կոչեալ՝ աղաչէր զնա թերևս հնար ինչ գտանել դարձեալ բղխելոյ աղբերն ։ Իսկ սորա Սեծնի քարոզ ընդ բոլոր վիճակեալսն իւր առաքեալ, զի միաբան ՚ի հսկումն ցայգապաշտամանց բերցեն զմի գիշեր՝ որ ՚ի կիւրակէն լուսանայր ։ Իսկ ՚ի վաղիւ առաւօտու կիւրակէին չուեալ գնացին հանդերձ խաչիւն սրբով, և համագունդ հաւատացելով-

(1) Մէ օր․ սրբանեալ ։

քըն յաղբիւրն խցեալ և ցամաքեալ. և անդ աղօթս արարեալ և տեառնագրեալ զտեղըն՝ հարկանէ գաւազանաւն որ 'ի ձեռին իւրում, և յանկարծակի յական թօթափելն բղխէ աղբիւրն փակեալ յորդաբուխ առատակիս պարզուածիւ. ընդ որ յաւէտ իմն ոստիկանն զարմացեալ, ոչ թերևս լինէր մնացեալ 'ի մտաց նորա եղեալ նշանքն: Յետ այսորիկ ապա եհան ոստիկանն այն պայազատել և գործակալութիւն Հայաստանեայցս. և 'ի գալ նորա 'ի Դվին քաղաք, իսկ և իսկ վախճանէր երկրորդն Տրդատ: Նա իմացեալ ոստիկանն՝ փաղփաղակի առաքէ 'ի խնդիր եպիսկոպոսն Միօնի, և ածեալ կացուցանել զնա հրամայէ յաթոռ Հայրապետութեան. յայսպիսի իմն պատճառանաց բերեալ զնա յայս տեղի: Յաւուրս սորա եղեւ կոտորումն Բագենոյ և Արենոյ և գիւղաքաղաքին Թալնոյ, յորում սպանան ոգիք իբրև եօթն հարիւր, և գերեցան հազար երկու հարիւր: Բայց նորա բազում և հրաշալի ճգնողական վարուք վճարեալ զկէտ կենաց իւրոց իբրև ամս ութ՝ վախճանի, եղեալ 'ի քընարանի ընդ հայրս իւր:

Նա ապա զշայի որ 'ի Նիգ գաւառէ՝

Ազապատուշ գեղջէ, կոչեն յաթոռ Հայ-
րապետութե։ Զսա նախ կարգեալ էին ե-
պիսկոպոս 'ի գաւառին Գողթան, և զկնի ա-
պա կացուցեալ 'ի Հայրապետական աթոռ։
Ասի բան զնմանէ, թէ էր որդի միամօր կնոջ
այրւոյ, և վասն զի յաղքատութեան կնոջն
հանդիպեալ սանդեայ որդւոյն իւրով մու-
րացիկ շրջէր, եկն յարեցաւ ապա նա 'ի տուն
կաթուղիկոսարանին, և անդ կայր 'ի յոլովից
ժմն անտես լեալ. և ոչ եւս բնաւ մեկնեալ
'ի դրանէ տաճարին Տեառն, ցորահար սա-
ռուցեալ 'ի ձմերայնի ցնէր. և տապա-
խարշ արեւակէզ յամարայնի։ Իսկ 'ի հար-
ցանել քահանայիցն՝ թէ ընդէ՞ր այդպէս
բացօթեայք լեալ՝ բոլոր դառնաշունչ օդո-
ցդ հանդերձ սանդեայ մանկամբդ տա-
րեալ, և ոչ մտանես ընդ յարկաւ ուրեք։
Իսկ նա զայս բան և եթ ընդդէմ առնէր
պատասխանի. Ոչ գիտէք՝ զի սակս կաթու-
ղիկոսութեան զորդեակս իմ՝ աստ սնուցա-
նեմ։ Որ գրեթէ մարգարէուհի իմն վասն
մանկան կինն դատնիւր, զի սնեալ և ու-
սեալ 'ի նմին Հայրապետանոցի, նախ յե-
պիսկոպոսութիւն և ապա 'ի բարձր աստի-
ճան Հայրապետութեան կոչեցաւ։ Նա սորա
քաղաքավարեալ զկեանս իւր իբրեւ սան

ծերքաստան, փախճանեալ՝ գնի ընդ Հայա-
խոր ։ Իսկ յետ սորա զՍտեփաննոս ամս 'ի Դվին քաղաքէ կացուցանէին յառաջնորդութեան անդ, ոչ ինչ աւելի քան զերկուս ամս կեցեալ ։ Իսկ յետ սորա Յովսէփ յաջորդեալ Սամուէլն՝ 'ի կուրապաղատանն ապարանից, իբրեւ ամիս մեկ միայն տեւեալ ։

## ԳԼՈՒԽ ԻԴ.

Յաղագս յափշտակութեան սպասուց եկեղեցւոյն Սա-գոտան գեղջ, և կալուածոց Հայրապետանոցն ։

Յայսու ժամանակաւ Իշխան ոմն ոստիկան 'ի Հայս յամիրապետէն առաքեալ լինէր. որ իբրեւ եհաս 'ի Նախիջեւան քաղաք, ապա կուսակալս և գործակալս ընդ գաւառաց գաւառաց առաքէր ։ Իսկ վասն զի ընդ նորօք նուաճեալ էր գաւառն Նախճեւանայ, ընդ այն ապա զմի 'ի պաշտօնէութեան իւրոց ոստիկան առաքէ. որոյ երթեալ հասեալ 'ի վանս միայնակեացն որդոյն Դվնդորի որ 'ի գիւղն Նախճաւանու, երեկօթս անդ առնէր ։ Իսկ տեսեալ ապա զգե-

զեղխ և զյաւէտ չքնաղատես տեսոյ սու-
տաւածակերտ խորանին, զոսկեղէնս և զար-
ծաթեղէնս, և զգունակ գունակ երանգս
տապաստին սքեւթեան, և զհանդերձանս
և զարկանելիս, ապա հրապուրեալ 'ի չար
ագահութենէ՝ խորամանկ մտօք ջանայր հե-
ռացս մերժել գտանել սակս յինքն յափշտա-
տակելոյ զաստուածային աւանդսն: Իսկ ըստ
ապիրատ խորհրդոցն զմի 'ի ծառայից իւ-
րոց անարգագունից 'ի ծածուկ խորդաւա-
նեալ՝ խեղդամահութեամբ ընկենոյր 'ի գի-
շերի 'ի վիհ մեծ խորափոյ, զմարմին 'ի
վերայ կափուցեալ: Իսկ ապա այդուն իբրեւ
զանխուլ իրին գոլով, ինքն 'ի խնդիր լինէր
խեղդամահ ժամուին, և առհասարակ ըղ-
ուրբ կուսակրօնսն 'ի քաղս և 'ի կապանս
ըմբռնեալ, իբր թէ նոքա գտան սպանօղ
կորուսեալ ծառայի նորա: Իսկ յայդ ապա ա-
ւեալ զտուն և զկայսն ուխտականացն,
երթայր քանզի զեւր վիճեալ ծառայի ծան-
կեալ վիհն, և խնդոյն ձիւ բարձեալ մարգա-
կերին մահապարտ՝ զսուրբ արուն պարտաւոր
առնէր. և փաղփաղակի ապա և տափկանէին
զգայուցանէր զայն ինչ՝ զոր ոչ երբէք գտա-
նէր տեսանել. և այնպէս զարիւն անբիծ
պարտաւոր արարեալ, հրաման ընդունի

յառաջիկանէ՛ն տուանց հարց և փորձ տաննի կատարել զուրբ արան։ Իսկ անօրէ՛ն փըշտաէր չար դահճա՛ն որոյ ձայրակ զսուրբ գունդն ահաւորակ տայր՝ առաւել քան ըզքաւատուն այր, և տապա զըռվանդակ ստասուցն բազմութիւն միանգամայն իսկ յինքն յափշտակեալ՝ ընդր զկորստական չար աւահաւթեանն չափ։ Իսկ 'ի բազմաց սակաւք մնացեալք, ելեալք 'ի փախստենէ փապարացըն, և եկեալ գտեալ բազմախողխող երկաթոյն տապաստ անկեալ զգլխաւոր սրբոյն, և զեկեղեցին Քրիստոսի խրթնացեալ 'ի բարեզարդութենէ բեմին, ողբս ողորմելիս փոխանակ խորախճանական երգոց յարդարէին, մանաւանդ զի և ոչ կարացմանն աչաց նոցա արժանի գտան։ Նա այսպէս հազիւ իմն գերեզմանի զսուրբսն տուեալ, 'ի մխիթարութիւն իւրեանց բերէին զանբիծ արեանցն պատուասութիւն, որով ընդ Մարտիրոս անուանք նոցա գրեցան 'ի դպրութիւն կենաց։

Բայց յետ վախճանելոյ հայրապետին Յոհաբայ, զՍաղոմն ածեալ կացուցանեն յաթոռ սրբութեանն։ Սա էր 'ի քաղաքագիւղէն Դառնւոյ, և 'ի մանկութենէ առեալ էր զլուծ կրօնաւորութեան կարգի,

և բազում առաքինաջան երկոց զանձն ար-
ուեալ 'ի մեծ ուխտին Սաքենոցաց. այլ և
վարժեալ իսկ էր 'ի փիլիսոփայական արուես-
տս, և առաւել ևս հմուտ լեալ փաստաղ-
տութեան կրթանաց: Նա վասն զի 'ի ժա-
մանակս Սաղմոնի հարանց հօր՝ յերկուս լի-
նէր բաժանեալ ուխտն Սաքենոցաց, և
հայրն հարանց հասարակ բաժնիւ կրօնա-
ւորական դասուն երթեալ բնակէր 'ի Օր-
բեալ՝ որ 'ի Շիրակ գաւառի, զհետ նորա
և այս ևս Սաղմոն չուէր գնայր, և անդ
'ի միայնակեցի կարգ եղեալ լինէր 'ի խորձիթ,
բազում ձգանց և աշխատութեանց զանձն
տուեալ: Նա մինչդեռ 'ի խորձիթէ անտի ար-
տաքս հանեալ՝ չուեալ ածէին յաթոռ Հայ-
րապետութեանն, հարցաւ արար յամենից ա-
զատաց, թէ Վասն զի ծեր եմ և յանհնարին
ձգնական վարուց յոյժ անաւագեալ, ըն-
դէ՞ր յօժարեալ երթաս 'ի Հայրապետութի:
Նա որս պատասխանեալ նոցա ասէր. Նո-
թամ՝ զի գեղապանծոյծ նկարողաց սուել
զիս ընդ այլ Հայրապետան տամ յորմ եկե-
ղեցւոյն: Նա բատ ամին այսմիկ գործն կա-
տարեաւ, զի ոչ աւելի քան զմի ամ կեցեալ՝
փոխի յաշխարհէ աստի, և դնի ընդ հարս
իւր և կենդանագրի 'ի քաւարանի որբում:

Ապա զկնի սորա զԳէորգ 'ի գաւառէ Արագածոտն կացուցանեն 'ի Հայրապետութե ։ Նա վասն զի ապոռապուռ Հագարացւոցն տիրեցին, և կալան զՀայաստանեայս, և մեծամեծք աշխարհիս նուաղեցան, և մնացեալ բնաջնջեալ դադարեալ կային ընդ ընդ ծառայութեան նոցա, սակս այսորիկ իսկ յայսմ վայրի պակասեցաւ 'ի պատմութենէ ասողացս իշխանացն մերոց ։ Բայց եթէ զուցէ գայի ինչ, բաւական քեզ բերցի նախ. քան զմեզ պատմեալն 'ի Շապհոյ պատմագրէ ։

Բայց զկնի Գէորգայ զՅովհէփ 'ի գաւառէ Արագածոտն, 'ի բնակչաց սրբոյն Գրիգորի, կացուցանեն 'ի Հայրապետութեան ։ Յաւուրս սորա սաստկան ամն Խուզմա անուն եկեալ 'ի Դվին քաղաք ընդ իւրեւ կայծեալն նաւածէր ։ Նա տեսեալ բղգեղեցկութիւն մեծամեծ դաստակերտացն տան կաթուղիկոսարանին, զԱրտաշատն և զխուանկերան. և զՀոռոմոց մարդ՝ հանդերձ նոցունց ապարանօք. և դաւաճանեալ 'ի չար ցանկութենէն և 'ի դիւական ագահութենէն, ուժգին կմն դժուարութեամբ յինքն 'ի հայրապետէն. Յովհեփայ ինդրէր տալ նմա զմեծ դաստակերտն՝ ի-

բըռ ՚ի սրտամտաւս գնոյ արծաթոյ ։ Իսկ մեծի առնն զմահ ընդ կենաց խառնեալ , ամենեւին ոչ տայր տեղի չար և ապիրատ քանից նորա ։ Իսկ սուլթանն առ մղձեալ սրտին դնէր ՚ի բանսն զայրն Աստուծոյ , և կապէր զնա ՚ի շղթայս՝ և գանիւ հարկանէր , զի թերեւս զարհուրեալ առ նա ըղհայցեալն տայցէ ։ Այլ նա ոչ ինչ վարկեալ զտանջանսն եկեալս ՚ի վերայ , և ոչ գրեալ ինչ ՚ի բրածեծն առնել , քաջապէս համբերէր Աստուծոյ զայն ընծայելով ։ Իսկ իբրեւ այնպէս անխոնջ ետես ՚ի Հայրապետէն սուլթանն լինէր , ապա պայուսակօք երիւք գանձիւ լցեալ , և եդեալ ՚ի գլուխ իւրոց ծառայից , և հրապարակաւս զայն տարեալ՝ յայտնապէս առ Հայրապետն մատնել հրամայէր , և ընդ միւս կողմն գաղտագողութեամբ(1) առեալ տանել անդրէն ։ Իսկ ապա համբաւ հանեալ՝ եթէ փախուցեան նմա դաստակերտքն , և զայն Աստուծոյ արձակեալ ՚ի կապարանէ(2) բանտին , ՚ի տուն իւր առաքէ ։ Իսկ Նորա յետոյ(3) բազում ընդութիւն և աներկիւղաբար երկս աշխատանաց

(1) Այլեւս ամենայն օրէ · Հրամայէ գաղտագողութեամբ ։
(2) Չորս օրէ · ՚ի կապանէ ։
(3) Չորս օրէ · Իսկ նորա բազում ։

յառենի ուղղոց ցուցանէր. հազիւ ուրեք միայն զդաստակերտն Կուակերտ և զՀու-ռամից մարդ թափէր ՚ի ձառաց տաճիկանին չարի. Եւ այսպէս տարապարտ զրկեալ գը-տանէր Արտաշատէն յայնմանէ և առ յա-պա. Եւ սակս այսպիսի չար մախանաց միշտ ՚ի նենգապատիր միտս տաճիկանն ընդ Հայ-րապետին բերեալ, ՚ի հրամանէ նորա ծա-ռայք նորա ըմբռնեալ զեղբայր մեծին Յով-սեփայ, յակունս Մեծամօրի սպանեալ ընկե-ցին ՚ի ծովակն՝ որ է ՚ի հիւսիսոյ կողմանէ ականցն. Բայց Հայրապետն կալեալ զա-ռաջնորդութիւնն ամս մետասան՝ վախճա-նի. Յետ սորա Դաւիթ ՚ի գաւառէ Մա-զազայ՝ ՚ի գեղջէ Կակաղոյ, յաջորդէ զա-թոռն սուրբ.

## ԳԼՈՒԽ ԻԵ.

Յաղագս հարուածոց կոտորածոց ազգին Հայոց, և նահատակութեան բազմաց.

Ի ժամանակի սորա յայսմիկ տաճիկան ոմն Հօլ անուն, փոքր գնդաւ յամիրապե-տէ անտի ՚ի Հայս առաքեալ, և չուեալ հա-

ռեալ մնանէր բնակել 'ի Դվին քաղաքի ։ Իսկ Սեւադայ ոմն անուն 'ի Պարսիկ տոհմէ , որ առեալ էր իւր կին զԱրուսեակ 'ի Բագրատունի տանէ , և 'ի ձեռն այնորիկ զյոլով մասն երկրին բռնակալեալ սեպհականաբար իւր տիրէր ։ Այս Սեւադայ ընդվզեալ և խանդացեալ ընդ ոստիկանին Հօլայ՝ դումարտակ ընդդէմ նորա զօրաց բազմաց անուանէր , ընդ որս էր և մեծ սպարապետն Հայոց Սմբատ , և Սիւնեաց տէր , և այլ եւս ազատազունդ տեարք . և ապա հնարի կամ ըմբռնել զՀօլն , կամ դրժել 'ի մահ ։ Բայց Հօլն զհայրապետն Դաւիթ պատգամ առ Սեւադայ և առ սպարապետն Սմբատ և առ Սահակ Սիւնեաց տէրն յղէր , թէ Ընդէ՞ր և կամ վասն է՞ր իմիք այդպէս զօշաքաղութեամբ իմիք հպարտացեալ խրոխտայք դառնալ զիս . թէ ոչ զիս , առէ , կամիք ընդունել , վայրաց եկիցդ իմ տեղի առք 'ի բաց գնալով , զի 'ի ձէնջ աներկիւղաբար չու արարեալ երթեալ գնացից ։ Իսկ հայրապետն բազում բանիւք զնոսա համոզեալ և աղաչեալ՝ ոչ կամեցան լսել . ընդ որ յաւէտ ապա արտմեալ գնայր ։

Իսկ Հօլ իբրեւ գիտաց՝ թէ վճարեալ է չարութիւն նոցա , ապա աջողաձեռնաբար

էին ընտրեալ այս էին երեսունս (1) 'ի սիրտս և 'ի պատրաստութիւն զինուց՝ իբրև երկու հազար, փայլփլակի եղանէր ընդդէմ նոցա 'ի պատերազմ։ Այլ բանակ նոցա նըստէր առ եզերբ Հուրաստան գետոյ՝ հանդէպ դաստակերտին Կաւակերտի ։ Իսկ իբրև Հօլ ուժգին էին ասպատակ ածէր 'ի վերայ նոցա , և 'ի բախել ընդ միմեանս՝ 'ի փախուստ դարձուցին զօրք նոցա առաջի զօրուն Հօլայ , և բազում արեան ճապաղիս 'ի նոցանէ հեղուին՝ սմբակակոխ արարեալ։ Այլ ընդ սմին Սահակ Սիւնեաց տէրն , և սպարապետն Սմբատ և Սեւադայն հազիւ ճողոպրեալ անձնապուրծ փախչէին , ընդ նոսին և այլ ևս 'ի որոյն մնացեալ զօրքն ցան և ցիր սփռեալ գնացին ։ Այլ Հօլն դարձեալ 'ի Դվին քաղաք դառնայր ։ Բայց ըզմարմին Սահակայ Սիւնեաց տեառն բարձեալ տանէր մեծ Հայրապետն Դուին 'ի հայրապետանոցն սուրբ , և անդ դնէր 'ի քնարանի մերձ 'ի սուրբ քաւարանն ։ Իսկ զկնի Սահակայ տիրապետէ զտէրութիւն զայն Գրիգոր որդի նորուն , որ փառաքաջական անուամբ Սուփան անուանիւր ։ Իսկ տապլեալ Հայրապետին զկէս կենաց իւրոց՝

(1) Ըստ ոմանց օրէ․ ասէին՝ երկոտասունս ։

փափկանի, կայեալ զառաջնորդութիւնն ամիս քան և եօթն :

Իսկ զկնի նորա յաջորդէ զաթոռ նորա Յովհաննէս 'ի գաւառէն Կոտայից՝ 'ի գեղջէ Ովայից : Բայց յետ սկզբան ձեռնադրութե նորա իբրեւ անցին ամք ութ, բիւրք ամենք չարաբանք 'ի նոյն ինքն յինքնանեաց տան կաթողիկոսարանին, լեզուօք նենգաւորօք բանիւ ասլիստոս բամբասանաց 'ի վերայ յօղելին արքայ հայրապետին Յովհաննու, որպէս երբեմն սուրբ կոյսն Շուշան 'ի գառնայլ ծերոյն, կամ Նարկեսոս՝ 'ի զրադառ չարմեղսյին, կամ նոյն ինքն Տէրն Աստուած՝ 'ի Յուդայէ և յանօրէն քահանայապետացն : Եւ վասն զի 'ի ժամանակին Բագարատ Բագրատունի հրամանատար և իշխան իշխանաց Հայոց գտանէր առ նմա, սորա դիմեալ երթեալ չուէին չանսարդագուրդ[1] նամբակէ զուհայհոյիչք առ նն Աստուծոյ, զերկրուս զգէզուս խուբեանց ածեալ, և ղօղանջեալ առաջի նորա : Իսկ նորա 'ի սառանայական պարտախամթափ լեզուայն հրապուրեալ, և ախորժակս յիւր լսելիսն զպիղծ հայհոյութիւնս ամբարեալ[2], գրէ հրովարտակ առ ամենեսեան, 'ի բաց կալ յինքնունելոյ զհօտապե-

(1) Մէ օ:ի. անսարդագուրդ : (2) Մէ օ:ի. ամփոփեալ :

տըն, ՚ի մտի եղեալ այլ եւս՝ կացուցանել Հայրապետ ըստ խրուին ձեռներիցութեան: Իսկ մեծի առնն Յովհաննու խմացեալ զլկանս սատանայական իշխանին, և հոգեւոր հատողական սրով զնա պաշարմամբ կապեալ, ինքն յարուցեալ գնաց ՚ի բանակետղ որբոյն Սահակայ՝ ՚ի վանս Սրբոց զօղեալ, և լռիկ լինի անդ մշտնջենաւոր[1] աղօթից պարապեալ: Զայն ապա իմացեալ սպարապետին մեծի Սմբատայ և Գրիգորի Սիւնեաց տեառն և այլ եւս նախարարաց Հայոց, և համագունդ ՚ի միասին եկեալք, և ժողով եպիսկոպոսաց արարեալ, և սուգաղէտ իմացուածիւ իմացեալ զ՚ի նմին իժաթոյն չրթանց չար հայհոյչային սուլթի. հաստատեն դարձեալ յաթոռն սրբութեան զայրն Աստուծոյ: Իսկ ապա այնուհետեւ եկեղեցիք Քրիստոսի՝ որ երբեմն խորթնացեալ էր ՚ի վարատմանէ փեսային, դարձեալ յինքն զփեսայն առագաստեալ նորազարդէս պայծառանայր:

Բայց իշխանն Բագարատ եւս առաւել փառս այնորիկ զշարեալ լինէր, զի առանց կամաց նորա եղեւ Հայրապետն[2] հաստա-

(1) Չորր. օրէ. մշտնջենոյր:

(2) Մի օրէ. քահանայապետին:

տութիւն. և խուր ոչ ընկալեալ զնա, խնդրէր ժամ՛ դիպող զայլ փոխանակ նորա կացուցանել. Բայց քրմքն անօրէնք սատանայէս պատուհասիւ առհասարակ սատակեցին յաստուածասաստ բարկութենէ անտի, ոմն 'ի բարձրաւանդակ քարանձաւաց 'ի վայր հոսեալ, և քարաժայռքն բաժինս 'ի մարմնոյ նորա առնուին, մինչ զի ոչ մնայր ոսկր առ ոսկեր: Իսկ ոմն 'ի բարձրաբերձ սահեաց 'ի վայր գիշերի գլեալ, և բոլոր անդամք նորա ջարդեալ ջախջախեալ՝ և այնպէս սատակեալ: Եւ այլ ոմն յորձանաց ուղխից գետակէժ լեալ, և ոչ գերեզման անգամ՛ զնա ընկալաւ: Եւ այնպէս վերջին անհարկութեամբն վրէժս չարաչար 'ի նոցանէ վասն ապիրատ լեզուացն խնդրեցաւ, առ 'ի յուսումն խրատու այնոցիկ՝ որք զկնի գալոց են, մի արկանել ձեռս մեղանչականս յօծեալս Աստուծոյ:

Յետ այսորիկ սակաւ ամին Ապուսէթ անուն՝ առաքեալ յամիրապետէն Ջաֆրէ, չուէ գայ 'ի Հայս: Երբեւ եհաս 'ի Տարօն գաւառ, իսկ և իսկ 'ի կապանս զիշխանն Բագարատ ըմբռնեալ՝ ետ տանել առ ամիրապետն. և որ սակս որոց Հայրապետին զանիրաւն խորհէր, աստ ապա զիրաւացի

պատուհաս վրէժխնդրութեան ըստ արժա-
նի՛ն յանձին իւրում կրէր : Բայց բնակիչք
Տորոս լերինն ըստ աղխատորդ իւրեանց
բարուցն համագունդ 'ի մի վայր հաւա-
քեալ, և զմի զինուորութիւն զինուորեալ,
և յանկարծակի 'ի վերայ տարմաբար յար-
ձակեալ՝ սպանանէին զտաճկանն Եզուսէթ,
իբրու վրէժս իւր իշխանին Բագարատայ
պահանջեալ 'ի գայթագղութի անձանց իւ-
րեանց. և ապա սպայք զօրու նորա ցան
և ցիր սփռեալ, չուեալ գնացին առ ամիրա-
պետն, գուժ արկանել նմա զիւրն աղէտս:

Զայսու ժամանակաւ Գրիգոր Սենեքայ
տէրն՝ որ Սեւփանն յորջորջիւր, և Բաբգէն
Աբասեան նահապետն, գրգռութիւն չար
'ի մէջ իւրեանց զարթուցեալ, և գումար-
տակ 'ի վերայ իրերաց կարգեալ 'ի պատե-
րազմ. սպանանի ապա Սեւփանն 'ի Բաբ-
գենայ, և պայազատէ զտէրութիւնն Վա-
սակ որդի նորա ընդ նորա, որ ըստ փաղաք-
շական անուանն՝ Գաբուռ անուանիւր:

Բայց ամիրապետն իմացեալ զպատումն
Եզուսէթայ, այնուհետև զօր գումարէ,
գունդ կազմէ, ջոկս սպայից պատրաստէ,
և տուեալ 'ի ձեռս ուրումն ընդոծնի իւ-
րոյ Բուղայ կոչեցելոյ, առաքէ 'ի Հայս: Եւ

տալա հրաման անշուշտ 'ի վերայ եղեալ՝ զի զնշխարս աշխարհիս և զոսկերս համագունդ 'ի կապանս ըմբռնեալ առ ինքն տարցէ. և զայլ եւս ռամիկ հեծելազօրս՝ որ սուր յաղթեր ունել մարթացեալ, և կամ զզէն շարժել, զամենեսին սատակեսցէ։ Բայց միայն թէ 'ի լաւագունից ոմանց 'ի պաշտօն զօրնայն Ահմէտի ոք դարձցի, զնոսա ընդ իւր տարցի։ Իսկ նորա համագունդ զօրօք չուեալ եկեալ հասեալ 'ի Տարօն գաւառ, և իբրեւ զկայծակն իմն փայլակնահար զաշխարհն արարեալ, փաղփաղակի ըմբռնեալ լինէին և որդիքն եւս Բագարատայ ըմբռնելոյ՝ Աշոտ և Դաւիթ 'ի Բուզայէ, հանդերձ այլ եւս իւրեանց ազգակցօք. և 'ի դիպահօղ զնոսա եդեալ, ապարատակ զզօրն իւր սփռէ ընդ ծործորս 'ի լերինն Տարօնի, եւ ընդ երեսս գաւառին։ Եւ նախ զընակեալսն 'ի խոխոմս լերինն զորս ըմբռնէին, տապաստ երկրի տային անողորմաբար սրով։ Իսկ զգաւառին հեծելագունդն զընտիրս զոմանս որոց ճարակ տային, և զայլս ձերբակալս արարեալ՝ առ բռնաւորն հասուցանէին ստուամբք զնոսա քարշեալ։ Իսկ զանձնատեղս և զերեսաւորս և զգունդանիս արտաքոյ այլոյն որսհեալ, վասն յանօ-

րէն յօրէնս իւրեանց դարձուցանելոյ ըստ ամիրապետի հրամանին. և զայլ եւս մնացականս առ ՚ի նոցանէ հրամայէր սրով վանել: Եւ այսպէս անդ ըստ գաւառաց գաւառաց շրջելով՝ բազում աւուրս(1) վտանգէր, մինչեւ զիշխանն Աշոտ և զեղբայր նորա Դաւիթ առ ամիրապետն խաղացուցեալ առաքէր հանդերձ հարազատութեամբքն իւրեանց. ապա անտի չու է գնայ զկողմամբք Վասպուրականի: Իսկ մեծ իշխանն տանն Արծրունեաց Աշոտ Թէպէտ և հանդերձէր զինքն իւրայովքն վառելովք մարտ ընդ բըռնադատին Բուղայի դնել. սակայն նախարարքն իւր ոչ գտանէին նմա համամիտք ՚ի գործ պատերազմի:

Ապա այնուհետեւ ակամայ կամօք հարկեալ երթայ առ Բուղայ: Եւ նորա վաղվաղակի զնա ըմբռնեալ հանդերձ համագունդ համազգօք իւրովք, և աւուրս ինչ ՚ի դիպահոջ կացուցեալ, ապա առաքէ գնացուցանելով առ ամիրապետն՝ կանամբք եւս և որդւովք հանդերձ: Եւ այնուհետեւ ձեռըս զգաւառօքն արկեալ, զամենայն այր պատերազմական՝ որ սուր ՚ի ձեռին առեալ է, կամ զզէն շարժեալ, հրամայէ ձերբա-

(1) Ոմանք՝ աւուրս:

կալս առ ինքն տանել ։ Եւ ըստ օրինակի կող-մանցն այնոցիկ Տարօնոյ՝ և անդ ես նոյն-պիսաբար արարեալ, և տուեալ զբարեհա-ւակաչականն և զյաջողաձեռնականն 'ի պէտս իւրեանց պաշտամանցն բերել, և զայլսն կե-րակուր որոյ տային(1) արեամբ լցեալ զա-տորեան ամենայն ։ Եւ ինքն չուէր գնալ հասանել նովին իսկ ասպատակաւ հինի զկող-մանս մայրաքաղաքին Դւինայ ։

Իսկ մեծ սպարապետն Հայոց Սմբատ իբ-րեւ ետես զառ 'ի նմանէ վրդովեալ սատա-նութիւնն, և զաստակիչ որոյ զճարակումն՝ որ(2) եհաս ազգացն այնոցիկ. զմահ 'ի կեա-նս խառնեալ սակս աշխարհին իւրոյ փր-կութեան, գնայ ընդ առաջ նորա բազում ընծայիւք և պատարագօք ։ Եւ առընկալեալ 'ի նմանէ պատուաւորաբար, առա 'ի կամս նորա յամենայնի բերեալ կարապետէ ա-ռաջի նորա, և ճանապարհ նմա հորդէ յա-մենայն ուրեք՝ ուր և նա խորհեցի երթալ. և բազում խնամատութեամբ զաղաղ և ըզ-մտաւ միտս նորա յինքն յանկուցեալ վս-տահէ, այնպէս զի խորհրդակից իւր բըռ-նաւորն եւ կամակից զմեծ սպարապետն

(1) Մի օրէ․ որոյ ճարակ տային ։

(2) Ամենայն օրէ․ ունէին՝ զոր ։

կացուցանէր ։ Եւ առհասարակ 'ի միասին չուեն երթան մտանեն 'ի Պոլիս քաղաք ։ Եւ անդ եւս այս ձեռն շուրջ զգաւառօքն սփռեալ, եւ տաղաւարս հինից տարածեալ, եւ զայս միանգամ 'ի գլխաւորական կարգէ սուսերամերկս եւ զինաւեթափս գտանէին՝ զամենս խմբակերան երկաթին տային կերակուր, իսկ ոմանց տառունս 'ի պարանոց արկեալ՝ այնպէս առ բռնաւորն քարշեալ ածէին. եւ անդ այս կրկնակի ընդ ընտիր զամենեսեան հանեալ, զորս 'ի կողմանցն Տարօնոյ եւ 'ի Վասպուրական նահանգէ ընդ իւր առեալ ածէր, եւ զայժմու եւս ընկենեալ զդխաւակափայելուչն սրահեալ 'ի բաց, եւ 'ի բանս արգելեալ, եւ զայլն անողորմ որոց տային կերակուր ։

Բայց յաղագս բանտարկեալ կապելոցն դնէին 'ի միտս խորհեանց՝ փաղփաղակի զնոսա հնազանդեցուցանել 'ի հաղորդութիւն օրէնացն Մահմէտի ։ Իսկ երբեւ հարցան 'ի բռնաւորէն Բուղայէ՝ ուրանալ զՔրիստոս, եւ 'ի կանոնս պաշտաման նոցա դառնալ, նոքա գեղեցիկ իմն մոլութեամբ զփոյթ ողդութեան յանձինս ընդունէին, առ Քրիստոս լաւ փարկեալ երթալ՝ քան առ ժամանակ մի վայելել 'ի մեղս ։ Եւ ցուցանէին՝ եւ յայտ առ-

նէին, թէ չե՛ն արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոյ փառացն՝ որք յայտնելոց են 'ի մեզ: Եւ այնուհետեւ սաստկապէս 'ի չար բռնաւորէն յուզեցան մախանք 'ի վերայ սրբոցն՝ կապանօք գնալ և խոշտանգելով, և բանտիւ և հարուածովք և անուանարկութեամբ, զի թերեւս զարհուրեալ նոցա 'ի դառն կտտանացն, 'ի կամս բռնաւորին եկեալ լիցին: Իսկ նոցա ամենայնիւ յամենայնի քաջապէս համբերեալ նախատանաց և չարչարանաց և գելարանաց և հարուածոց, մինչ զի առ հասարակ կեղեքեալ լինէին մարմինք նոցա: Եւ այնպէս արհամարհեալ և առ ոչ ինչ զիջեալ կրեալ՝ համբերէին բազում ձգանց և չարչարանաց. և եկին 'ի մահ խնդութեամբ. վասն զի զօրանային միշտ 'ի բխմանէ (1) անտի ջրոյ կենդանւոյ, որ ելեալն էր 'ի կողիցն Քրիստոսի և ցօղիւք (2) 'ի վերայ նոցա: Իսկ տեսեալ բռնաւորին զամենեւեան գնալ սիրով և փութալ 'ի մեռանել վասն առ 'ի Քրիստոս հաւատոյն, յղեցաւ զայրացութիւն բարկութեան 'ի վերայ նոցա իբրեւ զչար գազան, և հրամայեաց հրոյ ձարակ գնալ տալ, ոչ 'ի միում ժամու՝ այլ 'ի բազում աւուրս առ

(1) Զոյս օր. 'ի բխմանէ: (2) Ընդ՝ ցօղոյ կամ ցօղոյ:

տակաւ տակաւ զնոսա վառնեալ, և ածեալ իբրև զոչխար 'ի սպանդ, զի թերևս զղջացեալք ուրասցին։ Իսկ նոցա յուսովն աստուածայնով ոչ 'ի բարւոյն 'ի չարն, այլ 'ի չարէն 'ի բարին զղջացեալք լինէին։ Եւ այսպէս բազում վիշտս կրեալ համբերութեամբ բազմաւ, կցորդք բարեաց վաստակաւորաց գտան, և կատարեալք որով՝ պսակեցան 'ի Քրիստոս։

Էին 'ի նոցանէ այլ ևս այք եօթն, որոց անուն գլխաւորի նոցա Սամ Ճանաչխուր, 'ի գաւառէ Սլուակաց՝ Արախրանս գեղջէ։ Եւ վասն զի զուարթագին երեսօք էին և գեղեցկադիտակք, և աջողակք 'ի զէն չարժել, ոչ զնոսա ընդ այլն որով կատարէին, զի դեռ ևս ակն ունէին գտնելոյ զնոսա յուրեանց թերևս արկանել խորխորատ կորստական։ Եւ բազում պարգևս բարեաց նոցա և գանձս ոսկւոյ և արծաթոյ առաջի արկանէին. այլ և գիւղս և դերդաստանըս տալ խոստանային, և երևելի և փառաւորս 'ի դրան արքունի առնել։ Իսկ երանելիքն ամենեքին բնաւին իսկ անհաւան միտս նոցա յայնմիկ ցուցեալ, իբրև նահատակք քաջք՝ նորոգեալ լինէին 'ի խոստովանութեան իւրեանց, զՔրիստոս բառ

գրեցելումն համարեալ իւրեանց կեանս՝ և զմեռանելն շահ ։ Ապա յայնմ հետէ ևս առաւել սաստկացեալ լինէր բարկութիւն բռնաւորին ՚ի վերայ նոցա . դառն տանջանարանս զնոքօք հրամայէր հեղուլ, և արկանել զնոսա յամենայն չարչարանս և բախմունս կտտանաց, զոր ոչ լեզու բաւական լինի պատմել, և ոչ գրով բովանդակել ։ Սակայն յոյն աւետեաց և սէրն Քրիստոսի, և ուրախութիւն վկայութեանն թեթևացուցանէր նոցա զանհնարին ծանրութիւն բեռանցն . վասն որոյ ծանուցեալ բռնաւորին զանհրապոյր միտս որոցն, հրամայէ զնոսա զփայտէ կախել ։ Եւ մինչդեռ ըստ կերպարանաց խաչի կախեալ կային, ուժգին պաղատանօք սուրբն Ատոմ քաջալերութիւն ընկերայն մատուցանէր ։ Մի, ասէ, զարհուրիք, եղբարք, յառժամանակեայ մահուանէս . զի թէպէտ և չարչարիմք վասն Քրիստոսի, հաղորդութիւն ունիմք ընդ Աստուծոյ կենդանւոյ ։ Եւ ապա յերկինս փոխանակ աչացն զխորհուրդս իւր ամբարձեալ՝ ասէ . Յիսուս Քրիստոս, յոյս իմ, ուխտաւոր գոլով իմ յայսմիկ տօնի տարեկանի մեծի նահատակին Գէորգայ՝ նախալ պատարագ՝ և վասն փառաց անուան քո ։ Եւ արդ՝ այսու-

հետեւ զնա ինքն քեզ փոխանակ նոխազի մատուցանեմ, ընկալ զողջակիզութիւն անձին իմոյ՝ որ ընդունիչ ես պատարագաց․ և խառնեա զնա և որք ընդ իս են՝ 'ի թիւ վկայից քոց սրբոց, որք սիրեցին զօր երեւելոյ գալստեան քո ։ Եւ այսպէս առհասարակ նորա համբերելով մեծի պատերազմին բազում երկայնմտութեամբ, և յաղթելով ամենայնի աւանդեցին զհոգիս իւրեանց, և ընկալան 'ի Քրիստոսէ զպսակն անեղծութեան ։ Իսկ ժողովք քրիստոնէից թէպէտ և փախանողքն սակս առաւելի սրոյն կոտորման զարհուրեան Աստուծոյ, սակայն զանձեաս մեծ կատարէր նոցա Քրիստոս 'ի ձեռն վկայիցն ։

Կատարեցան ամենայն սուրբքս որ առաջի և վերջի՝ յերեք հարիւրորդի երկրորդի թուականութեանն Թորգոմայ, ընդ ամենայն աւելի քան զհարիւր յիսուն այր․ թող զայնոսիկ որք յայլ գաւառս և 'ի քաղաքս եղեն վկայք, որոց և անուանքն նոցա գրեալ են 'ի դպրութիւն կենաց ։ Նոյն մեծ հայրապետն Յովհաննէս օրհնեալ յիշատակի ամենայն սրբոց այսոցիկ՝ տարեւորական պատուով տօնէին զօրս կատարումին 'ի մեհեկի ամսեան՝ որ օր քսան և հինգ էր ամսոյն, 'ի փառս ամենակալին Աստուծոյ ։

Այլ էին եւս ոմանք 'ի նոցանէ որք ոչ կարացեալ տեւել, ժուժալ, տանիլ և համբերել պատերազմին, լքեալք լուծեալք դարձան յետս յանօրէն օրէնս իսմայէլեան բռնաւորին, և ուրացեալք 'ի քրիստոնէական հաւատոյն՝ ըստ գրգռութեան սատանայական արբանեկացն, զածխուն հնոցի միայն զանձամբ արկեալ, տրտմեալք և կուրացեալք և գունատեալք և ամօթալիցք, թերեւս և ոչ սորայնոցս հասեալ հայթայթանաց՝ կորուսին զանուն և զկեանս մշտնջենական, որ քան զամենայն պատիւ բարձրագոյն և փառաւորագոյն է, և հրոյն գեհենի միանգամայն իսկ գտան ժառանգորդք:

## ԳԼՈՒԽ ԻԶ.

Յաղագս այլոց անգթութեանց Բուղայի ոստիկանի, և նահատակութեան Աբրայ ազարապետի:

Բայց բռնաւորն Բուղայ իբրեւ ետես զամենայն ինչ յաջողեալ ըստ իւրոց կամացըն, ապա հրամանս առաքէ Վասակայ Սիսական իշխանի, և եղբօր նորա Աշոտոյ, և

այլոց եւս տերանց աշխարհի նորա, զի ըմբռնեալ վաղվաղակի առ ինքն հաստատեսցեն զնոսա: Բայց յոլովք 'ի տերանցն կուսակալաց յանուանիկ ամիրայն Բաղդադ դիմեալ հաւաքեալ՝ փրծանէին 'ի ձեռաց նեղչացն:

Իսկ իշխանն Վասակ հազիւ 'ի նոցանէ ճողոպրեալ փախստեայ գնայր չուէր ընդ կողմանս Կոտայս գաւառի: Զայն զգացուցեալ վաղվաղակի Բուղայն, զօր զհետ առաքէ ըմբռնել զնա: Իսկ իբրեւ զհետ կրութեալ հասին հուպ յիշխանն հէնք հրոսակին, ասպաս ընդ կրունկն դարձեալ նորա՝ առ 'ի գործ զվաղակաւորն առեալ, առ հասարակ զնոսա թաւալգլոր(1) խաղացուցանէր. և ինքն անցեալ գնայր յարեւելս յաշխարհն Գարդմանից, առ իշխան աշխարհին որ Կորիճն անուանէր: Բայց և յայնմ եւս՝ ոչ եւս եղեւ տեղի գտեալ փրկութեան իշխանին Վասակայ 'ի Թշնամւոյն, վասն զի իշխանն Գարդմանից գաւաճանեալ 'ի դիւէն, կալեալ կապէ զնա, և առաքէ տայ 'ի ձեռս Բուղայի, 'ի մահ եղեալ՝ Թէ գուցէ(2) փոխիչն ինչ բարուց 'ի Բուղայէ սակս այնորիկ նմա գացի: Իսկ բռնաւորն առեալ ընկալեալ զնա,

(1) Մի օր. գիաթաւալ կոյուցանէր:
(2) Ի բաղդատեալն չէր՝ գուցէ:

ապա և զեղբայր նորա զՄշոտ, և զմեծ տե-կլինն զմայր նոցունց ըմբռնեալ զօրացն առ-պատակերոց՝ առ նա փաղփաղակի հաստուցա-նէին 'ի Դվին քաղաք ։

Ստանօր ապա մեծ հայրապետն Յով-հաննէս, վասն զի շրջէր ընդ մերձակեայ կողմանս գաւառին Գեղարքունւոյ, լուեալ զկէտ կենաց իւրոց՝ փախձանի, 'ի մեծ ուխ-տի կրօնաւորական կայանին Մաքենոյաց, և 'ի նմին ուխտի սրբոյ 'ի հանդիստ զնա փոխէին, որ կալաւ զառաջնորդութիւն ամս քսան և երկու ։

Բայց բռնաւորն Բուղայ զմբռնեալ-սն առ ինքն՝ և զ'ի դիպահող (1) կացու-ցեալս առեալ (2), չուէ գնայ զկողմամբք ա-րեւելից, պայման պատգամաց առ սպա-րապետն Սմբատ յղեալ՝ փաղփաղակի զհետ նորա չուել երթալ հասանել ժամանել յան-բաւ գործոյն ։ Այլ նա նախ հրամայեալ ժողով եպիսկոպոսաց լինել 'ի քաղաքագիւղն Երազգաւորս, ձեռնադրեն 'ի հայրապետու-թիւն զԶաքարիա՝ 'ի Կոտայս գաւառէ, 'ի գեղջէ Ձագայ, և ողօթից նորա զանձն իւր յանձն արարեալ՝ ինքն չուէ գնայ առ բռ-

(1) Այլ նոյն օրի . ոռնէին՝ զդիպահողսն ։
(2) Չորս օրի . առաքեալ ։

նաւորն Բուղա։ Իսկ Բուղայի երթեալ ըմբռնէ զմեծ իշխանն Ատրներսեհ որ բնակեալ էր յամրոցին Խաչենոյ, և զայլ ևս զհամազգիս նորա։ Իսկ անտի չուեալ գնայ 'ի գաւառն Գարդմանայ, և պատնէշ և պաշարումն շուրջ զԳարդման բերդիւ եդեալ. ըմբռնէ անտի և զիշխանն Գարդմանայ ըդ-Կորիճն՝ 'ի կապանս կապանաց արկեալ։ Իսկ անտի ևս չուեալ Մուխ գաւառ, ձերբակալ 'ի Տուս գեղ առնէ զՍտեփաննոս, որում՝ և Կոն անուանէին զնա, որ 'ի նախնեաց իւրմէ Սևկայ՝ Սևորդիք ազգն անուանէին։ Իսկ ապա ևս իշխանն Աղուանից Եսայի նենգապատիր լեալ առ 'ի նըմանէ, ըմբռնի 'ի ձեռս նորա հանգերձ համազգօք իւրովք. ընդ նմին ևս և այլ տեարք և իշխանք աշխարհին Աղուանից կալեալ կապեցան ընդ ձեռամբ նորա, ոչ սակաւ ինչ աւերման ձապաղիս հեղեալ ևս յայնմ աշխարհին։ Իսկ այնուհետև զամենեսեան զնոսա որք 'ի կալանաւոր կապանաց և 'ի գերպահոց առ նմա բերէին, և առեալ ընդ իւր խաղացուցեալ չուէ գնայ՝ տանելով զնոսա առ ամիրապետն։ Նոյն և զսպարապետն Սմբատ առեալ ընդ իւր տանի (1)

(1) Ա․ ձեռոյն օրէ․ տանէին՝ տանելով։

յարքունական դուռն, կարծիս ինձ նմա տալով, թէ միամտութեան նորա առ 'ի նա փոխարէն բարեաց՝ յամիրապետէն շնորհեսցի իշխել իշխաբար բոլոր Հայաստանեայցս, և առնուլ պարգեւս և պատիւս յարքունուստ, և այնպէս դարձեալ դառնալ յիւրական աշխարհս։

Նա երբեւ չոգան հասին 'ի դուռն արքունի. և յանդիման ամիրապետին եղեն, որպէս և զնա եւս ընդ այլոց կապելոցն հաւատարեալ եղին 'ի բանտի, և ոչ յիշեցան առաջի նորա երախտիք միամտութեան նորա առ նոսա։ Իսկ սոքա յետ ոչ բազում ինչ աւուրց հարցափորձ 'ի վերայ հաստակաց կապելոցն ամբանից և իշխանացն Հայոց և Աղուանից ածէին, զի կամ դարձցին յանօրէն օրէնս նոցա, ուրացեալք ըզՔրիստոսի աստուածպաշտութիւնն, և այնպէս բազում պարգեւս և պատիւս 'ի նոցանէ առնուցուն, և յուղարկեսցին 'ի հայրենիս աշխարհն և 'ի տունս իւրեանց. և կամ սաստիկ խոշտանգանօք և չարչարանօք և անհնարին մահու հասանիցեն զլոյս կենաց նոցա։ Եւ տեսին զի այսպէս զհրամանս կատանաց 'ի վերայ նոցա սաստիկ զարհուրմամբք որ ըստ օրէ զարթուցանէին, ժամա-

նակ ինչ յերկարեալ զնեղութիւն անձկութեանն, ոմանք 'ի նոցանէ հաւանեալք բանիցն արքունի, դարձան . . . , յաստուածածանօթութիւն նոցա . և ոմանք թէպէտ և ոչ առժամայն կրեցին թլփատութիւն, սակայն յանձին կալեալք՝ զի և նոքա եւս 'ի ժամ դիպող կատարեալ լնուցուն զկամս ամիրապետին:

Բայց մեծ սպարապետն Սմբատ քաջապէս ընդդէմ ստութեանն՝ ստուգութեամբ վառեալ ըստ զուարթածաղիկ ալեացն, և կատարելագոյն հաւատոցն՝ որ 'ի Քրիստոս, և ըստ յուսոյ կենացն յաւիտենականաց՝ որ միշտ յինքեան շտեմարանէր, բնաւ ոչ ինչ շեղեցաւ 'ի բանս հրամանաց նոցա, լաւ համարեալ մեռանել ընդ Քրիստոսի, քան առ ժամանակ մի վայելել 'ի մեղս: Եւ այնպէս ընդդէմ հարցողացն նա առնէր պատասխանի՝ անհնարին գոլ թողուլ նմա զօրէնս քրիստոնէական հաւատոյ, զոր աւազանին շնորհօքն ընկալաւ պարգեւս բարեաց, քան պաշտել զօտարոտի օրէնս անօրէնս . և այսպէս ոչ միանգամ կամ երկիցս, այլ բազում անգամ աներկիւղաբար առնէր ընդդիմութի նոցա: Իսկ իբրև զփորձ նորայն կամաց առին, և ծանեան զմիտս նորա անհը-

րապըրս, խորհեցան դառնաշխատ տանջանօք զնա կորուսանել: Իսկ երկնաւոր այցելութիւն պարտական մարմնոյ մահուամբ՝ հաճեցաւ ազատել զնա 'ի յաւիտենական մահուանէ հոգւոյն, և խորով մահու վախճանեալ՝ ոչ անկաւ զնովաւ ուրացութիւն սուրբ օրինացն Քրիստոսի, այլ ընդ 'ի մարմնի խորում զհանդէս մարտիրոսական պատասխանատուութեանն: Զոր և բարձեալ իսկ ըզմարմին նորա քրիստոնէական դասուց, սաղմոսիւք և օրհնութեամբ և երգօք հոգեւորօք տարեալ եդին 'ի վկայարանի սրբոյն Դանիէլի մարգարէին. որ և ընկեցեալ իսկ ըններ նա 'ի գուբն առիւծուց: Իսկ զկնի նորա պայազատէ զմեծ տէրութիւնն զայն Աշոտ որդի նորա:

Բայց այլոց խղճմտանացն թուի ինձ և ոչ մի ինչ մնացեալ՝ որք ոչ եղեն հետևեալք յաստուածակոխմանն. կամ ոչ շեղեալք յանօրէն օրէնսն . . : Վասն զի պակուցեալք և զարհուրեալք յառաժամանակեայ մահուն երկիւղէ, ոչ առին 'ի միտ զանմահ մահուն դառնութիւնն, և ոչ ինչ փոյթ արարեալ զարտասիելի աւետարանութիւնն Փրկչին Քրիստոսի՝ որ ասելի լինելոց է յահագին ատենին, թէ Ո՛ ուրասցի զիս առաջի մարդ-

կան, ուրացայց և ես զնա առաջի Հօր իմ-
մոյ որ յերկինսն է։ Նոյն միայն Սանեփա-
նոսն՝ որ Կրնն ՚ի ռամկաց աշխարհական խառնից
ամուսնէր, և զկնի նախարարացն Հայոց
հալածանօք աքսորեալ եղև ՚ի Բիւզանդ ՚ի
գաւառս արքունի, ուր և միայնացեալ կեայ. բա-
զում՝ հալածանօք տանջեալ վասն խաւարա-
նութեան ամուսնոյն Պրիսկոսի. որ դառ-
նեալ ՚ի Հօրէն լուայ, գրեալ զանուն իւր
՚ի դպրութիւն կենացն, որ կատարեցաւ ՚ի
ամի (608) թուականին Հռոմայ.

## ԳԼՈՒԽ ԽԸ.

Յաղագս պայազատութեան Շիրոյ որդւոյ Սմբա-
տայ. և դարձի նախարարացն Հայոց ՚ի գերութենէ.

Յայնժամ ապա եղէ թեթև եր-
ևայի քեզ, զառ ՚ի ձեռանեացն անցեալ
բան՝ ՚ի պարզաղունդն չարաբերակէս հան-
դիպեցայց. Վասն զի հանձեցաւ բանս ոչ երկ-
բաղել միանգամ զհետեւանս զաւացոց
Շահեկ Բագրատունւոյ, և մերումն ձա-
նանակի պատմագրի, որ յայտարարեալ խաղ
ապաքեալ է զայս պայազատութեան որ-

դուռ Նշանց տպարանութեան Սեբաստայ վե-
խանական արուեստին , և զԹարգմա-
նացն Հնդկաստանի զկարգս , և կամ ըղ-
ղարձ գերեզմանն ի Նուզայէ՝ զՀայաստա-
նեայս իշխանաց և նախարարաց , յիւրաքան-
չիւրն սեփական իշխանութեան տեղւոյ կա-
ցեալ հաստատեալ : Եւ թէ ո՞ք ի նոցանէ
հայկազունք և հարուստք և մեծազունք ընդ-
դէմ հակառակորդաց հնից զնան . և կամ
ո՞ք յումեքէ եղեն հարստահարեալք , և
կամ զխափանումն նոցա յիւրաքանչիւր բաժնեալս :
Զի թէպէտ աւագութիւն սահմանական
բանի բազմապատկութեան , և զօրութեան բա-
ժանումն ազգայնոց ոչ կարացեալ բառ
քերթողական հռչակագոյն համառօտ-
բար ընծայել , սակայն յաւէժ բաւէ ժամա-
նակի բնաւին զօրով նոցա գրուագն ան-
նայինս՝ գեղզուկ բանիւ բառական ընդ այս
պատճառս անգիտութեան :

Արդ՝ այսպէս են ստորին զբօսանդակն
ի նոյն թագաւորութեան . և որ ինչ հարկաւո-
րապէս այժմ ինչ պիտոյ է ձեռին արուես-
թիւն , զայն և եթ համառօտ ընդ ընձե-
ռութիւն ատեսուն՝ փափաքեցայց սակաւուք
խորհուրդ նեխանձութեան եղանակաւ : Այլ և
վերադասութեան սոցա՝ ի հնախօսութեանէ մինչև

յերեւոյթս երկրատարդութեանն զԱ՛շոտոյ որդւոյ Սմբատայ սպարապետի զզօրութիւնս եւ զքաջութիւնս եւ զպատերազմունս եւ զհրամունս յոյս, եւ զայլոց եւս 'ի նմա` բաւական բերցի քեզ առ 'ի Հայոց պատմեալքն ։ Իսկ յորժամ փոխանակ Սմբատայ հօր իւրոյ պայազատէ զսպարապետութիւնն Հայոց, գրեթէ ամենեցուն քան զնա նախագունիցն մեծագոյն ճանաչէր. վասն զի ընկալեալ զմեծարանս` 'ի բաց արհամարհէր զանարգանս. եւ միշտ 'ի հրահանգս բարւոյ կրթութեան զինքն վարժէր, եւ բարի ազդումն իւրոյ հոգւոյն տայր ընդ ամենեսեան սէր սերտ (1), եւ ոչ 'ի հակառակութիւնս ինչ կամ 'ի կռիւս ընդ թշնամիսն մաքառեալ, քան թէ բարեզգեաց բանիւք եւ բարի օճանաւ (2) ածեալ զնոսա յուղղութիւն եւ 'ի կամս իւր։ Իսկ զպաճարանս սնոտի չահուց վնաս իւր վարկեալ, եւ առատաձեռն առ ամենեսեան գտեալ. յինքն զբազմաց միտս յանգուցանէր սիրալիր սրտիւ, որպէս զի յայսմ ամի ամենեքեան իսկ նմա հաճեալ հաւանեալ էին։ Նա՛ այսպէս ապա զկարգս սպարապետութեան քաղաքակա-

(1) Մէ օրէ. կալեալ սէր սերտ ։

(2) Մէ օրէ. բարի օրինակաւ ։

բեալ, մինչեւ համբաւ բարւոյն 'ի դուռն արքունի հասանէր ։

Ապա ոստիկան ոմն 'ի Հայս առաքեալ՝ որ Ալի Արմանի անուանէր, ըստ հրամանի ամիրապետին իշխան իշխանաց Հայոց զնա կացուցանէր՝ բազում զգեստուք եւ արքունական պատուով ճոխացուցեալ, 'ի նա հաւատալով զարկս Հայոց. և զամենայն բեկար արքունի ։ Եւ այսպէս պատուականագոյն և առաջին նա գտեալ եղեւ քան զամենայն նախարարութիւնս Հայոց, և ամենեքեան դաշինս ընդ նմա դնէին՝ որպէս արդարեւ ընդ Թագաւորական զարմի ։ Այլ և 'ի միտ ամենեցուն եղեալ, զի թէ դէպ ինչ պիտոյից գտցի, նաեւ 'ի տոհմ իւր արժանի լիցի նմա տուչեալ 'ի Թագաւորութեան ցեղս, զնոսա որոշել յայլոց նախարարութեան ցեղից ։

Բայց զայսու ժամանակաւ յահագին իմն շարժմանց եղելոց 'ի Դվին քաղաքի՝ բազում սասանութիւնս և փլուզմունս տանց և պարսպաց և ապարանից լինէր, և առհասարակ քանդումն և դղրդումն առնոյր քաղաքն. այլեւ մահ յոլովից մարդկան 'ի վերայ հասանէր, և այնպէս ահագին իմն լինէր վտանգ տագնապին, մինչեւ ոչ ոք

մնալ ընդ յարկաւ, այլ 'ի հրապարակս և 'ի փողոցս ելեալ հաչեալ հառաչէին։ Իսկ ցրտաշունչ սառնամանիք ձմերայնոյն առաւել բերէր զդ.բուցումն հեծութեան, զի յոլովք մերկացք և ծարաւեալք լինէին։ Իսկ սուրբ Հայրապետն Զաքարիաս ուժգին աղօթիւք և պաղատանօք մշտնջենաւ մռունչ և ողբրալի աղօթս առ բարեգութըն Աստուած մատուցանէր, և երկնային աղդեցութեամբ 'ի բաց բառնայր զաստուածասաստ բարկութիւնն, մինչև զեկեղեցին Քրիստոսի պահեալ 'ի բազմաբեր ցաւմանէ փրկէին։

Բայց իշխանք և նախարարք Հայոց, որք ըմբռնեալք գերեցան 'ի Բուղայէ, զայս ժամանակաւ մի բաս մինչ 'ի կարգ մնկեալ՝ չուէին յաշխարհ տէրութեան իւրեանց, և 'ի սեպհականութիւնս և 'ի տունս։ Եւ սոքա մերկացեալ յանձանց իւրեանց զախտանից ուսմունս . . . օրինացն Մահմետի, զքրիստոնէական օրէնս հայրենիս առհասարակ բարձրացուցեալ բերէին յանձինս իւրեանց. ոչ 'ի ծածուկ երկիւղիւ ինչ. այլ կերեւ 'ի վերայ բարձր տանեաց քարոզէին զՔրիստոսի աստուածպաշտութիւնն։ Ընդ որս հաճեալ Տէրն, բնակեցոյց յուսով զնոսա.

յորմէ և օրհնութեամբ Տեառն օրհնեցան, և նովիմբ զօրեցան. հերկեցին հերկս՝ և ոչ ՚ի վերայ փշոց. և ապա ձայն խրախճանաց ցնծացելոց ՚ի յարկս նոցա լինէր, և ձայն հարսին և փեսայի: Օ՛հան որդիս՝ և արարին պտուղ, և բնակեցան իւրաքանչիւր ոք ՚ի ժառանգութեան իւրում. և այց արար Տէր նոցա, և յաջողեաց ՚ի բարութիւնս:

## ԳԼՈՒԽ ԻԲ.

### Յաղագս խաղաղութեան Երկրին Հայոց, և միաբանութեան նախարարացն:

Յայսմ ժամանակի Վասակ Հայկազուն, որ Գարեգին յորջորջիւր, վասն զի փեսայացեալ էր Աշոտայ իշխանաց իշխանին, իշխան ապա Սիւնեաց զնա կացուցանէր՝ յարքունուստ նմա առնելով պատիւ. որ բազում ճոխութեամբ վարեալ զիշխանական պետութիւնն իւր, սիրելով միանգամայն Սիւնական ազգին: Բայց զմեծ սպարապետութիւնն Հայոց տայ Աշոտ եղբօր իւրում Աբասայ, որ էր այր քաջանձնեայ և թիկնաւէտ, առոյգանձն և գեղեցիկ հասա-

կաւ, կորովի և աջողակ 'ի պատերազմունս․ որ և աջակցեալ իսկ եղբօր իւրում Աշոտոյ, զամենեսեան հնազանդէր ընդ լծով ծառայութեան, 'ի բազում կողմանս բազում անգամ արութիւն ցուցեալ, և հռչակաւոր և հոյակապ 'ի մէջ բազմաց երեւեալ։

Բայց եղեւ յետ վախճանելոյ Աշոտոյ մեծի և հռչակաւորի իշխանի տանն Արծրունեաց, և դնելոյ զնա 'ի շիրիմս հարց իւրոց, պայազատէր զիշխանական պետութիւնն զայն Գրիգոր որդի նորա ընդ նորա, որ Դերենիկ անուանիւր։ Այլ էր նա այր սէգ և զգաստ և սոս(1) 'ի գնացս ոտից, և զօրաւոր արդեամբք և բանիւ, և տնօրինէր միշտ յամենայն բարեձեւութիւնս բերիլ։ Այլ վասն զի փեսայացեալ էր Աշոտոյ իշխանաց իշխանի, ապա այնորիկ հայրախնամ կամօք և խոհական սիրելութեամբ միշտ խրատ բարեաց նմա մատուցանէր․ որ և 'ի սկզբան անդ ընկալեալ՝ հլու և զգօն մտօք հաւանէր ընդունել, և յատին զբոլոր թշնամիս 'ի սադրելոյ նորա կացուցանէր։ Այլ շինութեան և խաղաղութե՛ պարապեալ, յապահովս 'ի բնակութեան իւրեանց պատ-

(1) Երկ․ օրի․ սօտ։ Մի օրի․ զօր։

րաստէր զհայրենի տէրութիւնն իւր 'ի բոլոր հինից ։ Բայց յետոյ 'ի կամս անձին զխնչպխտութեան բերեալ, ոչ անսայր բանի խրատու անձրոյ իւրոյ որպէս յերէկն և յեռանդն, և չլինէր նմա այն յաջողումն ինչ 'ի բարութիւնս ։

Բայց մեծ իշխանն Սիւնեաց Վասակ, որ ըստ փաղաքշականին Իշխանիկ անուանէր, յաւէտ իմաստութեամբ և հեզահամբոյր հանդարտութեամբ և հաւանութբ մեծաւ հնազանդէր Աշոտոյ իշխանին իշխանաց, և խրատու նորա զունկն մատուցանէր խնամով, իբրև զօրէնս միշտ 'ի սրտի իւրում պահելով. և 'ի ձեռն այնորիկ յաւէտ իմն ընդարձակագոյն զտուն տէրութեան իւրոյ յարդարէր (1) 'ի բոլոր բարեմասնութիւնս, և կայր բազում խաղաղութբ ըստ ամենայն հանդիսի բարեպաշտութեան ։

Բայց միւս ևս Սիսական իշխանն Վասակ, որ Գաբուռն փաղաքշաբար անուանէր, յայսմ ժամանակի վախճանեալ և եդեալ 'ի շիրիմս հարց իւրոց, պայազատէ զհայրենի տէրութիւնն Գրիգոր որդի նորա ընդ նորա՝ որ Սուփանն յորջորջէր ։ Սա իմաստութեամբ և աջողաձեռնութեամբ և շի-

(1) Մի օրի, հաստատէր ։

նութեանց բազմաց անդր եւս քան զպաշ-
տմանն լինել զգաւի հայոց իւրոց ։ Նոյն սա-
տեղ յեկեղեցեաց Քրիստոսի ՚ի շինութիւն
եւ ՚ի նորոգութիւն զինչն մեծապարգեւէր ։ Իսկ
մեծ եւ սուրբ հայրապետն Զաքարիա երբե-
եկաց յառաջնորդութեան անդ երբեւ ամս
քսան եւ երկու , փոխանեալ գնի ՚ի քրիս-
տոսի հօտոյն սրբոց ։ Նոյն իշխանաց իշխանն
Աշոտ ընտրեալ զայր մի պատուական յի-
տանեաց տանն կաթողիկոսարանին Գէորգ
անուն, որ էր ՚ի գեղջաքաղաքէն Գառնւոյ ։
հրամայէ ձեռնադրել զնա յառաջնորդու-
թիւն տանն Թորգոմայ ։

## ԳԼՈՒԽ ԻԹ.

### Յաղագս Թագաւորելոյ Աշոտոյ իշխանաց իշխանին . եւ օծանման Գէորգայ Արծրունոյ ։

Այլ ինձ տեսանել ոչ արդեօք այլ
ինչ է քան սիրելի , քան թէ գեղեցիկ ՚ի
բանս զանձեալս՝ որ վասն Աշոտոյ իշխանաց
իշխանին են հետեւմունք ։ Վասն զի ՚ի սոյն
համեալ միջնորդութեան՝ քաջահայեաց էր ։
Նաեւ անձնեայ եւ թիկնաւէտ եւ զօրութ-

երկոս և մայրն․ ՚նկարէն իմն և ՚նիշ արևմտ յայսմ ամենայն՝ որպէս զանկինեմ կայծակ ՚ի մէջ մարդկային ծագելով․ և փայլեցուցեալ զերեւելութեան ամենայն․ Ոչ ծիծաղ և քաղցքարոն․ և առ կերպարանս խորհրդենոց (1), ոչ խոնարհեցեալ (2) նորա ընդ բռնաւորութիւն, և ոչ արհամարհելով զնուաստութիւն, այլ հաւասարակից ՚ի վերայ տարածէր զգեստ խնամոց իւրոց․ և զամենայն ինն կշռէր նախ զնա՝ և ապա զամենեցուն կենցաղս․ միանգամայն իսկ առնէր՝ եթէ որ ինչ մարդկութեանս է սխրալից, ոչ ինչ կատեցուցանէր․ Զայսպիսի այս սնուցեալ քաջառողջէին աշխարհութիւն իշխանացն և նախարարացն Հայոց, խորհուրդ միաբանական առեալ՝ թագաւորեցուցանել զնա ՚ի վերայ ինքեանց, զեկեցանեն սահմանադրելովն ՚ի ձեռն առաքելոյն Յաբեթի որդւոյն Նոյայ․ Զոր և սիրալիր որպէս զարժանաւորս իմաստոյն ընկալեալ, առաքէ առ Աշոտ թագ թագաւորական․ զոր և ընկալեալ իսկ առաքելական Յաբեթի, ընդ նմին և այլ ևս զգեստ թագաւորական,

(1) Այսպէս Ներսէ սահմանէ զիշխանն ամենայն օրինօք, և Նոսա ասէ՝ առ կերպարանս խորհրդենոց օրինաց․ հետեւեալ Մովսէսի Խորենացւոյ․ որպէս ասէ և ՚ի հնգամեայ բանս նախարարութեան տանցն Աշոտոյ։

(2) Երկու օրէ․ խոնարհեցեալ։

և պարգևս և պատիւս, և երկիւղալս օգտա-կարին, զինուք և զարդուք ձառուցանէին առաջի նորա: Նոյնպէս տայր և անդ մեծ հայրապետն Պետրոս, և զհոգևոր օրհնութեանցն զախութիւնս աստուածայինս ՚ի վերայ կատարեալ՝ փոխանակ օծման սրուակի իւղոյն, պսակէն զնա թագաւոր ՚ի վերայ Աղուանական ազգին:

Նա այնուհետև բազում և երևելի կարգօք յարդարէր յաշխարհի արքութեան իւրոյ. յօրինուածս տանց ազգաց, քաղաքաց, շինից, դաստակերտաց, և հարթ հաւասար իւրաքանչիւրոյն կատարէր կարգս իշխանաց, և ջերմահաւանս բարեխառն դատաւորաց: Նա զամենայն տափարակ ակերս ագարակս և գանձ գնէր, և զծառայս յաղթիս և ՚ի բազմաստան զարդարէր. և զամենայն որ ինչ օրէն է թագաւորութեան, և որ ինչ ՚ի թագաւորութեան և որ շուրջ զթագաւորութեամբ, ոչ ինչ իմիք կասեցուցանէր. և գրեթէ հարստացն և իշխեմանցն քան զամենայն թագաւորութիւնս դանէր: Նա այսպէս ՚ի նորոգատուր թագաւորութեանն բարձրացուցանէր զազգս Թորգոմեան:

Նա տայր ձեռն զհիւսիսային կողմանս

ապրեալ 'ի ծործորս մեծի լերինն Կովկասու , որ 'ի հովիտս և 'ի ձորս երկայնագոյս ընդա-կեալք էին աստ՝ ընդ խուժան Հնազանդե-ցուցանէր ։ Այլ և զազատորդս ընտանեացն Պուլղարաց , և զերբս զաւառս մարզին Սեաւ գաւառի առհասարակ ընդ ձեռամբ նուա-ճէր , 'ի բաց 'ի նոցանէ հերքելով զաւազա-կութիւն մարդասպանութեան . և իբրև օրինաւորս և հլուս զամենեսեան կազմէր , և առաջնորդս և իշխանս նոցա կացուցանէր ։ Այլ և զԹագաւորն եւս Հնդկացւոց 'ի սէր միաբանութեան ընդ իւր կապակցեալ՝ այն-պէս նմա այցելէր , մինչ զի ամենայն հաս յոր-դորութեան աւելի զոլով՝ մեծամեծար պար-տաւոր միշտ նմա 'ի ծառայութիւն բե-րէր ։ Այլեւ մեծ կայսրն Յունաց Վասիլ ոչ փոքր ինչ պայման խաղաղութեան և հաշտութեան և սիրոյ հաստատէր ընդ ար-քային մերոյ Աշոտոյ , որպէս սիրելի զնա ա-նուանելով , և հարազատակից կացուցանելով յամենայն թագաւորութիւնս թագաւո-րութեան իւրոյ ։ Եւ այսպէս առաջ լեալ և կատարեալ լինէր բարեխնդաբար բոլոր կարգս առաքինի գործոց , քան կարգի այնց պարծանաց զորս ընկալեալն էր ։

Զայսու ժամանակաւ մեծ իշխանն տանն

Արծրունի Գրիգոր, որ Դերենիկն յորջորջէր, ձեռն զգաւառօքն և զքաղաքօքն արկեալ զկողմամբք Հերայ և Զարաւանդայ, ՚ի հնազանդութիւն ընդ իւրեւ զկողմանսն զայնոսիկ նուաճէր։ Իսկ իսմայէլականն ազգին գլխաւորք, որք բնակաւորեալ սեփականեալ էին զսահմանս քաղաքացն և գաւառացն այնոցիկ, թէպէտ և չկամէին ընկալել հպատակութիւն և զհնազանդութիւն առ իշխանն Գրիգոր ցուցանէին և յայտ առնէին, սակայն սիրոք իւրեանց հեռացեալք մեկուսի էին ՚ի նմանէ։ Այս յաւուրս աշնանւոյն մեծ իշխանն չուէր գնայր զկողմամբք Հերայ, և ՚ի հանդիպումն գլխաւորի քաղաքին. և իբրև եկ առ իշխանն, դաւաճանութեամբ ՚ի ծածուկ զօր զօրեալ թագուցանէր ՚ի խորխորս այգեստանի։ Եւ ՚ի հանդիպել իշխանին՝ յանկարծօրէն յարուցեալ զօրն իսմայէլեան ՚ի տեղւոջէ իւրեանց, ՚ի թիկանց կալան իշխանին ՚ի վերայ զեղեալ հեղան, և առ ժամայն հարեալ զիշխանն սրով սուսերի յերկիր կործանեցին։ Եւ այնպէս խարդաւանեալ յանօրինաց՝ բարձաւ մեռեալ, և տարեալ թաղեցաւ ՚ի շիրիմս հարց իւրոց։ Եւ զկնի նորա սպարապետ զիշխանութիւն մեծ՝ Աշոտ

որդի իւր, Թոռն արքային Աշոտոյ։ Բայց զմնացորդս բանից այսոցիկ՝ զօրութեանց և քաջութեանց և մրցմանց և պատերազմաց, և բազում բարի օճանից, ահաւասիկ գրեալ է ՚ի գիրս պատմութեանց Հայոց Բագրատունեաց, բաւական քեզ կացուցանել տեղեկացոյն առն՝ն բարերարութեան։

Իսկ Վասակ Սիւնական իշխանն, որ ըստ փաղաքշականին Իշխանիկն անուանէր, առատաձեռն պղտորայի և բարեպաշտագոյն հանդիսի քաղաքավարեալ զկեանս իւր՝ վախճանի, եդեալ ՚ի շիրիմս հարց իւրոց։ Եւ սորա եղբայր նորուն Աշոտ ընդ նորա պայազատէր զիշխանութիւնն զայն, այր հեզահամբոյր և խաղաղասէր, բարեպաշտօն և երկիւղած Աստուծոյ, և ամենայնիւ յամենայնի շնորհութեան զինքն պայծառեցուցեալ հայրենի տէրութեան իւրոյ։

## ԳԼՈՒԽ Լ.

Յաղագս մահուան Աշոտոյ արքայի, և խաղաղութեան եղելոյ ՚ի մէջ Աշոտոյ սպարապետի և Սմբատայ արքայորդւոյ, և վասն Գէորգայ կաթողիկոսի։

Բայց Աշոտ արքայ Հայոց յետ փայլեցուցանելոյ զամենայն ուղղութիւն, և

յաջողութիւնս կարգաց և գործոց և գնա-
ցից Հայաստանեայցս, այս հիւանդացաւ
հիւանդութիւն մեծ, որ և մեռաւ իսկ։ Եւ
մխիթարեալ 'ի մահիճս անկեալ դնէր, ոչ սա-
կաւ ինչ ընդ մարմնոյ խնամոց՝ անձեռացուցա-
նել ջանայր և զհոգւոյն ևս խնամութիւն։
Վասն զի առ ինքն զմեծ կաթողիկոսն Պե-
տրոս կարդացեալ, և զփրկութենագործ ըզ-
մարմին և զարիւն Տեառն Թօշակ յետին
առ 'ի նմանէ խոր ընկալեալ, ոչ սակաւ ինչ
քան թէ զբազումս բաշխէր գանձս ոսկւոյ
և արծաթոյ 'ի նմանիս և յաղքատս։ Նա և
'ի ձեռս Հայրապետին հաւատոյ զխոստա-
ւոր զանձարանացն մթերս, և զերամակս
ձիոց և զղաստակս անդեոց, և զհօտս ոչ-
խարաց՝ ամենեւին ընտանին բաշխել յեկե-
ղեցիս ուղղափառաց 'ի նուիրումն սպասա-
ւորին սրբութեան, ուր զիարդ պիտոյ ինչ
լինէր։ Եւ այսպէս առս զախտացեալ մի-
տս արտաքնոցն 'ի մաքրութիւն նորոգման
ներքին մարդոյն անտեսաբար կենդանացու-
ցանէր. յետ որոյ բարւոք ծերութեամբ բա-
ւոյ բարեգործաց բարուց հանգեաւ 'ի Քրիս-
տոս։ Եւ վասն զի 'ի ձմեռնապարհի յիջեւա-
նս 'ի Քարապատն կոչեցեալ տեղ ապառա-
ժի եղեւ նորայն վախճան, բարձեալ ա-

ուր զխաչն գաւազանօք՝ առեալ զնա 'ի Թա-
գաւորանիստ ոստանն Նազարան․ ամենահա-
ւրն հանդերձիւք և ոսկէզօծ փառօք ըղ-
գաստայն զարդարեալ, և խումբք զօրաց
զինուք և զարդուք, ընտանեօք(1) և նշանակօք
շուրջ պաշտպանեալք մեծի Կաթողիկոսին ․
և այլ ևս կղերք եկեղեցւոյ առաջի ևս
գնացեալ՝ զխաչակրօն սաղմոսերգութիւնս
և զձայնս օրհնութեանց նուագէին ․ Իսկ ե-
րեք որդիք նորա զաւհերէցք առն արքայի
և այլ ևս բարեկամք՝ հետամտէին զկնի գա-
ւազանին , բայց միայն 'ի Սմբատայ՝ որ իշ-
խան իշխանացն Հայոց էր ․ զի նա 'ի կող-
մանս Պուգարաց 'ի նուաճել զազգսն զայ-
նոսիկ գնացեալ էր , ոչ ժամանեաց յանդիակ
զարծոյն ․ և այսպէս հասեալք 'ի տեղին ։
Անդ էր առա տեսանել կուսանս ողբերգա-
կըս , և արտասուաթոր կախանումն և աշխա-
րանս աղախնայն և տանտիկնայն , և այլ ևս
բազմութեան ռամկայն և անռամկայն ․ և
առա կազմեալ առաջան Թագաւորական՝ ե-
դին զնա 'ի ընտրանի հարց իւրոց ։

Իսկ զկնի այսորիկ չուէ գայ հասանէ բառ
համբաւոյն հանեալ՝ Սմբատ որդի է արքային 'ի
ներհակական կայուած Աշրապագուարկց Շիրա-

(1) Այլ օրի․ ընտանօք ․

կալեալ՝ բազում վշտահար հեծութեամբ , զոր երթեալ և 'ի մխիթարութիւն զնա համոզեալ մեծի Կաթողիկոսին , դադար վշտացն տայր՝ ոչ փոփոխել յինդրի իւր բարբական (1) բնութենէն : Գայր առ նա ապա և մեծ իշխանն Վրաց Ատրներսեհ՝ 'ի ցաւակցաբար վշտակցութիւն : Եւ վասն զի Աբաս տարապարեան Հայոց , և եղբայր արքային Աշոտ 'ի կողմանս պետութեան Վանանդայ առկայացեալ կայր , առ նա նախ բաս օրինի հրահանգաց խառարեալ մանկէր խօսել զբանս ախտախանոյ և նորայն եւս արխբախանոյ ոգւոյ . զոր պատուասիրաբար և բարւոքապէս ընկալեալ՝ ոչ կամէր նմա յառաջ կոյս եւս առ Աբաս չուել զնա . եւ 'ի մի դնելով թէ գուցէ յիմանալ դոցա դաւ դրժողութեան նմա յերկաքանչիւրոցն 'ի նոցանէ լինիցի , ոչ կարէր առնել զոր կամէրն , վասն զի յինքն զԹագաւորութիւնըն հնարէր նուաճել : Յորմէ պատասխանի լեալ՝ յաւէտ անտեղի գոլ զոչ երթալն , և առանց խիղճ փասից և պատճառաց յաղձանց չփոթից և աղմկից : Աբուժ Թիւր առուեալ՝ չուէ գնայ հանդիպի Աբասայ , և Թագաւորական զգեստուց զգեցմամբ՝ զսե-

(1) Այսպէս ունին ամենայն օրինակք :

ւամթոյր զգեստս նորա զգեցուցին ՚ի բաց թօթափել . և ինքն մեծամեծ և պատուական ընծայիւք ՚ի Սմբատայ մեծարեալ՝ դառնայ կրկնակի առ սպարապետն Աշոտ : Սոյն զարդարեալ պատուակալէս ՚ի քաւթենէ մանց՝ եթէ չար գնանել առ Սմբատ խորհեալ , կալեալ կայր զնա երկաթի շղթայիւք , և դնէ ՚ի բանտին ՚ի բերդին Կարուց : Եւ յայնմ՝ հետէ ասոր երկաքանչիւրոց անուն՝ ազնուկ շփոթի սատակեցեալ զմիմեանց զեղջր , և դոյթ սպայից յիւրեանց կուռեալ Սմբատ և Աշոտ . և մարտ մարտուցեալ ոչ սակաւ խուժան աւերանաց զաշխարհան զեղջր : Ընդ ՚ի մէջ կացեալ Կաթողիկոսն մեծ , ընդ խաղաղութիւն ընդ միմեանս խօսել խորհէր , և հայցէր զԱշոտերան արձակել ՚ի տեղի իւր , և հպատակագոյն բարկութեան տեղացումն ՚ի բաց արտահել ՚ի միջոյ : Իսկ սպարապետն խորամանկեալ և հաւանական իմն ցուցեալ միտս՝ տայ . Տայէ նմա տղէն Աշոտերանց զերկու ամրոցն , զոր յափշտակեալ խլէ ՚ի ձեռաց Գուրգենայ քեռն իւրոյ , և զԳուրգէն զորդի իւր գրաւական նմա . յայնժամ և ես թողից զնա խաղաղութեամբ : Եւ յայդմ բանի յետ կարի երդմամբ կնքեալ ուխտ ցսպարապետն մեծ : Եւ

այս իբրեւ էառ զխնդրելին իւր, դարձեալ դաւաճանեալ ՚ի դրժող դիւէ անտի, ոչ թողոյր զԱ՚յմենեանս . քամահեալ եւս զմիջնորդութիւն Կաթողիկոսին մեծի : Ընդ որ ափսոսական տրտմութեամբ եւ դառնութեամբ սրտի զգածեալ Հայրապետն մեծ, եւ խոժոռեալ խռովութեամբ մեծաւ, եղ զնոցա ան-սի ՚ի դատաստան Տեառն :

Իսկ ազարապետն խնդացեալ թերեւս խուժան հենից ասպատակեալ առ դուռն հասեալ կայ, երթեալ մատեալ դադարէր ընդամբոյս պարսպին ՚ի ներքոյ պատուարին: Ըստ այնմ հետեւ Ամրաս զօր մեծ դումարտակ արարեալ՝ ասպատակ տանէր ՚ի մերոյ աշխարհակալս չինիցն Արաւոյ շուրջզամիցաւն . որ զայլ դաւարին զօղեալ գաղարէր . յաւարի առեալ զգէնս որի արանցն եւ զբաշ երիվարացն . եւ իբրեւ յարդելան բանակի ՚ի դիպահօջ մնա ՚ի բերդին կացուցեալ բազում առարս՝ ատէպ ատէպ զայս առնէր : Յորժէ այս իբրեւ փանգեալ եւ ՚ի տաղնապի տարակուսանացն միխեալ, եւ հետոյ ադրա այլ ինչ ոչ մարթացեալ գտանել, ՚ի հեղութիւն եղբօրորդւոյն փախուցեալ՝ պատանդս առ ՚ի նմանէ խնդրէ զորդի նորին զխորն Համամու, եւ զԱ-

չոր զօրքն Ճապհոյ եղբօր իւրոյ, զի և նա եւս առ նա զԱրմէնեայսն հանեալ տացէ։

Իսկ խաղաղասէրն յամենայնի ոչ վրիպէր ի խնդրոյ նորա տալ զպատանդսն. և առեալ ածեալ յանձնեալ զԱրմէնեանսն, առաքէ մեծապատիւ շքեղութեամբ յաշխարհն իւր։ Այլ ի դառնալ նորա անտի, իսկ և իսկ ապա թագ արքայութեան նմա բերեալ մատուցանի յիշխանէ անտի Իսմայէլեանն Սփշնէ՝ որ Ամիրապետականի, ի հրամանէ ամիրապետին իւրեանց. ընդ նմին և ոսկիակուռ զգեստ, և նժոյգս իբրեւ օդապարիկս՝ ի զարդս և ի զէնս ոսկիակուռս պճնազարդեալս։ Արդ ապա ընդ առաջ ի Թէատրոն անդ եկեալ, դարձեալ դառնան յեկեղեցւոյն սուրբ, և հայրապետն Գէորգ ընդ նմա. և անդ աւետարանեալ ի մերոյ ղեւտական աղօթսն, և ածեալ ի գլուխ և ի գլխս և ի նկարս սեպհական զանձնաւնկ զդեցութիւնն, և եդեալ ի գլուխ ընթագ թագաւորութեան նորա, եղանէր ի հօգեւոր առաջնորդէ անտի՝ պսակադրեալ զնա Հայաստանեայս։ Վասն որոյ ապա սպարապետն Աբաս յաւէտ իմն զչարեալ և խանդացեալ ընդ իւր Կաթողիկոսին, իբրև զինչ գող պատճառս իւրում զղջութեան

և Սմբատայ թագաւորութեանն. և այս չա-
րաչար մախանօք առ ինքն դքիլն չարա-
բանս ՚ի բերանս նորա ձգէր, որք ՚ի տանէ
բուսեալք, և գիւղի չարի մատնեալք զերա-
ամնակս հոգւոյ իւրեանց, զձարակ հրոյ բա-
նիս բամբասանաց զորոյ Կաթողիկոսէն
խոխոսեալ յօղէին։ Եւ վասն զի այն սոքա
նախ քան զայս՝ զանօրէն ընդուս իւրեանց
ածեալ էին զերկիրս, և զամենս այլխատա
զուգակցեալ զբարբան չարիմացութեանն՝
կարծէին կարել կատարել զանկումն սրբո-
բոյ Կաթողիկոսին։ Եւ վասն զի ընդ այն
ժամանակս փայլատակեալ պայծառանայր
սուրբ այրն Աստուծոյ Մաշտոց՝ որ ՚ի Սեւան
կղզւոջ, որ զխառացն Աստուծոյ անշիջանե-
լի լուսոյ ճառագայթումն յինքն նկարէր
աստուածային ծուալմամբ և սրբափայլ կրօ-
նիւք կենդանականօք, և հոգխաղաղաց զօ-
րութեամբք ՚ի տեսականի (1) անդ զանասուն
տեսանէր, ասիս այնորիկ ամենեցուն աչք
՚ի նա հայէին յաղագս տրոհել և ճանաչել
մարթելոյ նորա զհոգեւորացն մասանց ըն-
տրութիւն՝ ստուգապէս խնայուածի։
Իսկ սպարապետն ՚ի մինի եղեալ, թէ
գուցէ հրապուրել զայրն Աստուծոյ կարա-

(1) Զօրս օրէ, ՚ի տեսականն.

ցէ, և ընդ նմին 'ի խորհուրդս չարութեան միաբանել, գրէ ապա թուղթ առ նա, նախ ներբողումն զնմանէ, ապա ամբաստանութիւն յոյժ բծամիտ իմն՝ զկաթողիկոսէն, որպէս թէ չէ պարտ քեզ լինել զնորայն անձնապատողութիւն(1) գործոցն խաւարի, և զվկայութիւնս ես կորստական չարացն յուշտարաբեալ։ Այլ գուշակեալ ես զնա ինքն 'ի պատիւ Հայրապետութեան փոխանակ նորա կացուցանել, միայն թէ հաւանեսցի 'ի ժողովս չարացն գալ հասանել և միաբանել։ Զոր և ընթերցաւ, զայրացաւ յոգի իւր՝ և ոչ կամէր առնել պատասխանի։ Բայց զի մի լռութեամբ նորա չարքն զօրասցին 'ի չարութիւնս իւրեանց, գրէ ապա օրինակ զայս։

«Եկն եհաս 'ի մեզ հրաման հզօրին պատկառելիք, զոր և ընկալայ սիրով հոգւոյ լոյս սննդակից գոլոյ իմոյ 'ի մանկութենէ օրինաց Աստուծոյ, և լոյս հաւատոյ հայրապետութեան դաշնաւորեալ 'ի հաւատակցութեան ձեր, որ լոյս Պօղոսի սերունդ էք, և ոչ առաքեալք, անկեալ երկիր պագի խորանին խոնարհութեամբ։ Բայց եթէ ինքնաբոյնութիւն հրեշտակական կար-

(1) Այլ օր. անձնապարծողութիւն։

գիս ընդ այլ ինչ շաւիղ տարեալ, թողա-
ցուցանէ զանուր հարկացն անհասութիւ,
մի թուեցիւք այնուիկ ըմբռնեցաք. զի Աստ-
ուածային բանն առ ՚ի մէնջ պահանջէ հնա-
զանդել Աստուծոյ առաւել քան մարդկան։
Յետ այսորիկ ապա ամենայն գլուխք պա-
գամանց թղթիս ամբաստանութիւն էր ընդ
մեծ Հայրապետէն և զինախնամորդէն Քրիս-
տոսի. զի (1) ցորքան նախորան որբութեան
փակէ զնա չուրջանակի, և հաստատեալ
փառաւորեալ է կոչմանբն Աստուծոյ, և ա-
ռաքելական արդարեօք փոխանակ Աստու-
ծոյ է, և զայս անուն անուանեմ զօրհանա-
պաղ։ Այս խաստութեամբ և ամբարտաւա-
նութեամբ և չափ չդիտութեամբ, և զդա-
տար առնելով նզովիւք պատուիրեալ էիք,
և զիմ նզովմն պատկեր կոչեալ նորա անըդ-
գամութեան։ Եւ այդպիսի երաշխաւոր եմ
ես առաջի Աստուծոյ, գիտելով վնորա զան-
չափ բարեբարոյն, որ պայմանաւ հրամանի
սուրբ գրոց մինչ առաջի ունիմք, փոխադա-
կի զիջանի և կատարելանայ, մանաւանդ
մինչ զանց է արարեալ զասանօք ՚ի մանկու-
թեանէ, և ՚ի ծերութեան դար հասեալ։

Բայց իմ՝ նզովք դատապարտութե յաւէտ

(1) Ի բնա՞ օրէ. պատճառն՝ զի ։

յիրաւի և արժանի էր, և զի փոփոխեցայ և ըստ արտաքի անկեալ ինքնահրաման բարձի ըղ-խարոց սուրբ հարցն՝ որ 'ի մէջ մեր և Քաղ-կեդոնականացն, վասն որոյ աղօթահայց ա-պաշխարութեամբ և առաջի անկմամբ պա-տուեցի նոցին սուրբ ձեռօք զձեռնադ-րեալսն զինէն կարծեօք։ Բայց ամենայն դի-տաւորութիւն թղթիս զմեղաց իմն ակնար-կէր զբարանս, այսա նոյա բանսարկեալ սատանայի վարդապետութեամբ, որ մար-դասպանն է 'ի սկզբանէ, կամ ոգեսպան, և բանսուս և որոմնացան. և որ զիս եւս զար-թուցեալ էիք, թէ չէ պարտ լսել քեզ։ Արդ՝ այս մի ինչ տեսեալ լիցի քեզ, տէր իմ, զի անհնար է զյանցանս իմանալ՝ իբր զճա-նապարհս օձի 'ի վիմի գնացելոյ, և հաստա-տուն վկայ՝ մարգարէն ասելով. Քննեցին զա-նօրէնութիւն, և պարտասեցան 'ի քննել զքննութիւն։ Գիտեմ և հաստատեալ եմ 'ի Տէր, որ թերատեսեալ զմեղս՝ նիւթեալ է հիւանդին զմահ, և ատեալ զեղջայրն՝ յոր-ժամ առ ումիկս իցէ. իսկ առն երևելոյ և 'ի բարձրագոյն աստիճանի կացելոյ սա-կաւ ինչ սասանութիւնք՝ մեծամեծք են վը-նասք հասարակաց գայթակղութեան աղա-գաւ, թող թէ աղտեղագոյն աղէտք ազգա-

պղծութեան որ թէ լինին ։

«Բայց ես այր մեղաւոր և վատթար, և անօրէնութեանց իմոց բարձրացելոց քան զգլուխ իմ, և ծանրապէս բեռնացելոց ՚ի վերայ իմ, ոչ կարեմ նախանձել զնախանձ Տեառն Աստուծոյ ամենակալի, և գերանակուրացելոյս՝ զմութն այլոց սրատեսել ։ Եւ արդ՝ բազում արտասուօք և հառաչմամբ սրտի գրեցի, զոր մի անգամ գրեցի ։ Աստուած զշաւիղս արդարութեան ցուցցէ ձեզ գնալ ընդ նա, և կատարեսցէ զկամս ձեր ՚ի կամս իւր. խօսեսցի ՚ի սիրտս ձեր զարդարութիւն և զիրաւունս. մի դրդուել անքննօղ լսելեօք՝ որ ոչ վայելէ ձերում գիտութեանդ, և զձերդ ձեզէն տեսէք ։ Այլ իմ մեռցի և կորիցէ անուն և յիշատակ յերեսաց երկրի. և խաւարեսցին բիբք աչացս, և մի տեսցեն զլոյս. և փակեսցին ականջքս, և համր եղիցի հոլեալ բերանս. և լեզու իմ ՚ի քիմս իմ կցեսցի (1). և մէգ և մառախուղ մեղաց և ստուերք մահու պատեսցէ զբոլոր անձնս, եթէ ինչ չարմեցայց, կամ զգացայց տեսանել կամ լսել կամ խօսել զարդարոյն զանիրաւութիւն, զապիրատութիւն ՚ի բարձունս խօսելով ։

(1) Չոր օր. յեցի ։

Զլեզուս անձեալ զերկրաւ , պարտախամթափ եղեալ և զօղանիջել 'ի սուր չրթունս : Բաւ լիցի ձեռս համբառնալ յօձեալն Աստուծոյ , և քրքահան մեղօք փտարանդի լինել անթողլին և անբժշկելին : Բաւ լիցի ինձ լինել Կորխ և Դադան՝ հակառակ ընտրելոյն Աստուծոյ . ապա թէ ոչ՝ բացցէ երկիր զբերան իւր , և կլցէ զիս կորստեամբ ընդ բանակն Աբիրոնի , և կենդանւոյն իջցեմ 'ի դժոխս :

« Ինձ այդ է , և յայդմանէ զիս ոչ ոք կարէ փոխել , ոչ գեհեննին երկիւղիւ՝ և ոչ արքայութե̃ն խոստմամբ . և յատեանն գոլով՝ հեղցի թարախեալ արիւնն սրտիս առ յանդիման Նզովելով զանդունողսն , որք ընդձեռն խռովեցուցին : Ի վերայ այդր ամենայնի յուշ լիցի ձեզ և արձանագրեալքն Աստուծոյ օրէնքն , յորում գրեալ է թէ՝ յայտնիքն որդւոց մարդկան՝ և ծածուկքն Տեառն Աստուծոյ . վասն որոյ և հաստատեաց օր՝ յորում ինքնին դատելոց է զգաղտնիս մարդկան 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի :

Եւ արդ՝ դուք անդր թողէք զ'ի վերդ(1) քան զձեզ , և մի 'ի կարծս(2) դառնէք , և մի

(1) Չորս օրէ . զվերդ :

(2) Երկու օրէ . զգործս : Մի օրէ . 'ի գործս :

ըստ խօսից յանդիմանէք, մինչև եկեսցէ Տէր՝ որ լուսաւոր առնէ զգաղտնիս խաւարի, և զիւրաքանչիւր զգործն հրով փորձէ, զի կարծիք և թուլիք նմանութիւն[1] և ստուերք են մտախք՝ արտաքոյ ճշմարտութեանն, և չհամայլն վկայութիւնք յիմաստացեալ ատենի ըստ պահանջելոյ Աստուծոյ, թէ յերկուց և յերից վկայից հաստատեսցի ամենայն բան. Որ և արտաքնոյն իմաստագունից յոյժ հաճոյ թուեցաւ, որ գողացեալ զմերն 'ի մէնջ, և այլակերպ արարեալ, և այլաբանութեամբ յառաջ բերեալ իբր զիւրեանց սեփհական, միայն զանուան պատուեալ[2] անշուշտ, որպէս հարոր 'ի վար. կամ դեղադիր 'ի դեղոցի։ Արդ՝ աղաչեմ ոչ լսել կամ անհոգ լինել, այլ խրատանց ուշ ունել.[3] զի որպէս մարդկան կարծիս և համբաւք են, ձեր նմանիք տկարացեալք՝ փակեալ թուլին ընդ սղալանօք[4]։ Բայց եթէ դէպ լինիցի և 'ի Հայրապետութիւն կոչել, յորդորէք և դուք, և չլինի խոտ[5] մեղացն։ Ով ոք լրբենի երեսօք կարէ

(1) Մի օրի. և նմանութիւնք։ Չորս օրի. 'ի նմանութիւն։

(2) Ամենայն օրի. ունէին՝ պատուիրեալ։

(3) Երկու օրի. ուշ առնել.

(4) Մի օրի. թուլին օրինակ՝ ըստ սխալանաց ընդ սխալանօք։ Երկու օրի. ըստ սխալանաց։ Մի օրի. ընդ աղաչանաց։

(5) Մի օրի. փոստ մեղացն։

յառաջ գալ և վկայ անօրէնութեան լինել, թողում ասել 'ի վերայ ընտրելոյն Աստուծոյ, վասն այնորիկ իսկ և հրաման Հոգւոյն սրբոյ զանյայտսն 'ի հօգիս իւր թողացուցանէ ։ Ա՛լ ապա լիցի ձեզ խուսափականս ինչ առնել, և խստութեամբ ընդդէմ խթանի աքացել, զի յաւէտ 'ի բաց տանի 'ի բոլոր շնորհաց այդպէս խորհել 'ի հաւատ. և չօրհնեցաւ իշխանն Նագարատ՝ որ զայդպիսիդ խորհեցաւ յոչ ինչ պէտս, որում (1) ամենեքեան իսկ գիտակք եմք կորստեան կորստականացն ։

“Ժողովք թէ հրամայէք լինել, մի լիցին ժողովք չարաց պաշտողաց՝ քինահան հրատաղաց, որք որպէս յայնժամ ժողովեցան ընդ Աննայի և ընդ Կայիափայ վասն Տեառն, և արդ վասն օծելոյ նորա. այլ զայն զոր ստացաւ 'ի սկզբանէ Տէր 'ի վիճակ ժառանգութեան իւրոյ, ըստ որում մարգարէն դասաւորէ ասելովն. Ժողովեցարուք 'ի լեառն Սիոն՝ քահանայք և ծերք արդարակորովք. քարոզեցէք պահս և պաղատանս. սրբեցէք զեկեղեցի լալով և կոծելով, զի այց արասցէ ձեզ Աստուած ։ Ըստ որում և արարին ձեզ նիկիական սուրբ հարքն տրեխաւորեալ ոտիք հետեւեալք 'ի քանակետղ սրբութե՜,

(1) Երեւ օրէ. յորում ։

զամն ողջոյն արձանացեալք պահօք և ա-
ղօթիւք ։ Կերլին գնաց նեղութեան գերա-
բեկն , և ջուր տառապանաց արբին՝ ՚ի գեհ-
նատարած խշտիս ընդ երկիր կցեալ․ բա-
զում զղջմամբ և հեծութեամբ զաւետա-
րանն սուրբ միջնորդ կացուցեալ , զի մի ա-
րասցեն բան կամս ինչ․ յորս հայեցաւ Աս-
տուած , և լուսաւորեցոյց նոցա զարժանն․
նոյնպէս այլք ամենեքեան ։

«Արդ՝ ես անարժանս հաւանեալ եմ ՚ի
խորհուրդս ուղղոյ , և ՚ի ժողովս բարեսիրաց
գալ հասանել , և զհերկս աշխատութեն նո-
ցա կատարել աղօթիւք [1] և ձգամբք․ և նոյն
Աստուած հզօր և կենդանի է առնել զհաճոյս
իւր ։ Եւ յաւելում յանդգնել ՚ի սոխակա-
ցըն անպարտութիւն , և երաշխաւորեմ՝ զի
թէ Աստուած զերդ և է [2] և ոչ այցելէ , զիս
ընդ չարագործն և ընդ մծղնեայն որոշե-
ցէք ՚ի նախատինս յաւիտենից․ միայն թէ
ժողովն բան տեսութեանս իմ երկեղի ։ Ամ-
ման լեզուայ մի ինչ ընդ միտս ածեալ
զարհուրիք․ զի լեզու ոչ եթէ նորագ ինչ
սրեալ է ՚ի դառնութեան , և բարեալ աղե-
ղըն թիւր պատրաստական , ՚ի ձգել [3] զնետս

(1) Մի օրի․ տարփելոյ աղօթիւք ։
(2) Մի օրի․ զխարդ և է ։ Որ նոյն ճշմարտագոյն է ։
(3) Մի օրի․ ձգել․

Հնոյց և հակառակութեան, հարկանել ըս-պանանել՝ որք ուղիղ են սրտիւք. և դեւք չարք ընթանան ծարաւելով զպատիւ սըր-բոյ՝ խորհել մերժել հնարիմացութեամբ որդւոց մարդկան բարկացելոց։ Որդ՝ այնք լեզուք են, որովք մարգարէքն դատափետք եղեալ թօսլեցան 'ի սուր սուսերի սատա-կեալք, փարիսակեան յորդորն և Հրէիցն ձայնն է՝ որով և Աստուածն բան համար-ձակեալ կորեան յաւիտենա յաւիտենից։ Քահանայիցն միեգնութիւնն է՝ որով աս-տուածամարդն եղեն։ Յուդայի կատաղու-մին է՝ որ լցեալ աչօք դիմեաց, և չկորոյս զերեսուն արծաթին, և մատնեաց 'ի տեղի իւր։ Այն իմացուածք են և խոհական հան-ճարքն՝ որք Աստուած և 'ի կայսր գիտացին պարտաւոր առնել զՈրդին Աստուծոյ, և օրինօք մատնեցին դատաւորին 'ի կորուստ անձանց իւրեանց։ Յիշեցէք զվկայսն Ստե-փաննոսի և Յակոբայ Տեառն եղբօրն, զՆա-կեռոսին զերեսին, (1) և մի խաբէք. զի առ-նել գիտեն որդիք մարդկան կամ կամա-կամ մոլորութեամբ բանսարկուին. վասն որոյ և գրեալ իսկ պահին չարութիւնքն ա-նօրէն վկայից 'ի զգուշութիւն առ յապա

(1) Մէ օրէ. երեցին.

եղելոցս․ որք որպէս զածելի սուր որեցին զնենգութիւն, սիրել զչարութիւն քան զբարութիւն, և զխօսս կործանման։ Վասն որոյ պաղատանս մատուցանէ մարգարէն՝ ապրել ՚ի մարդոյ չարաց, որք որեցին զլեզուս իւրեանց որպէս զօձ, և թոյնք իժից ՚ի ներքոյ շրթանց նոցա։ Յաւելում և զայս ևս, որ անձնամատն(1) գարշելի՝ չէ վկայ, և ոչ կարէ գալ յաւագ յատեան ուղղոց․ այլ բացէ ՚ի բաց հալածի․ քանզի զկիղծ դէմսն երեսաց կնոջ սուռնկի արարեալ, և ելեալ ՚ի թուոյ արանց։ Նա խոստովանելն առ քահանայն՝ չէ վկայ լոկ ունկնդրական կարգին, նախ քան զկատարումն ժամանակին սուրբ կանոնաց․ և խորտակեալ ապաշխարութեամբ, և առնել քաւութեանն իւրոյ վկայս զառաջնորդս եկեղեցւոյ։

«Արդ՝ եկեսցեն ապաշխարեսցեն նախ մեղաւորքն խորգով և մախով, կրօնաւորեալ սրտի մտօք, և ապա յետ ժամանակին հաւատարիմ բանք նոցա լինիցին։ Այլ եպիսկոպոսք ընտրեալք և պդղարք ոմանք ՚ի հեռաստանէ եկեսցեն, յորոց վերայ ոչ լինիցին կարծիք առնելութեան․ նոյնպէս և հարք սուրբք և աւագք թող քննեն՝ իւ-

(1) Անձնայն օրէ․ ռանկէն՝ զանձնամատն։

րև կամին, և հաւատարմանան զերդեւէ (1). և ապա յետ այնորիկ ամենայն իրօք՝ որք կարեն զսուրբ սեղանն և զսուրբ աթոռն փրրխայով պատել, զերեանց ոդխ պատեացեն իբրեւ զուգ առեալ վասն անկման փեսային, որ զՔրիստոս փոխանակէր 'ի մուտս որբութեանց հարսին եկեղեցւոյ. և շատ այլ ինչ աւելի քան ըստ արդար իրաւանցն՝ զոր սպասաւորեցայ գրել։ Նա յայնժամ լինի հրամայեալս 'ի ձէնջ թէ՝ զայլ ոք ընտրեալ կամենայք, որում չէ հնար լինել, բայց եթէ բուռն զօրութեամբ՝ և կամ կամակոր մտօք ընդ Աստուծոյ կռուել։ Բայց արդ դուք թիկունս տուք Աստուծոյ ըստ խնամս խորհրդակցութեան, զի առհանդերձեալն դատաստանք ձեր քաղցր եղիցին առաջի տիեզերական ատենին, և փառօք և պատուով ընկալջիք յԱստուծոյ ընդ երկայն աւուրս »։

Արդ՝ իբրեւ ընթերցաւ զայս յերկար նամակի, յոյժ զամօթի հարեալ՝ ստեաց չարագոյն նենգողացն. զի ուր և գրեաց նա զայսպիսիս, ոչ ուստէք ըստ կամաց ընկալաւ

(1) Ամենայն օրէ. ամենէին՝ զերդուէ ձամ զեդուէ. ընծեմնէ է ... Բերբեա զիարդ և է, համաձայն մեամ յօրինակին որ էդաւ Հերոդոյն։

զպատասխանիս , այլ բազում յանդիմանակաց մեղադրութիս ։ Մանաւանդ զի՝ ոմանք եւս ՚ի խրախտապանծ մոլեռնախանձ զրաբանողացին աստուածաստատ իմն գոգցես բարկութեամբ հարեալ կորեան ։ Զի ուրումն ՚ի նոցանէ ապիրատ շրթունք որդնեալ լքեալ ՚ի բազմաց տեսութիւն գոլով եւ ինձ իսկ գլխովին տառապեցայ ։ Իսկ ուրումն որովայնն հաչեալ (1) եւ հարեալ ընդ հարկաւոր պիտոյն գարշութեան խոռն ՚ի վայր վայթի . իսկ անձնամատն ջերմամբ մեծաւ եւ տապախառն հրով փութեալ , եւ խաղաւարք ՚ի վեր եռացեալք մեռանէր ։ Եւ միացեալքըն ապա դիմեցին մեղայապատութեամբ առ ոտս Հայրապետին , տագնապաւ տարակուսեալք եւ դողացեալք յիրաւացի պատուհասէն , որք եւ թողութիւն գտին ։ Նաեւ պարապեան մեծ տարամիմամբ որոյ զարհուրեալ , երկնչելով յարագահաս դատաստանացն Աստուծոյ՝ բազմահնարաւ պատուտանօք եւ արտասուօք անկեալ առ ոտս Հայրապետին , հայցէր զթողութիւն մեղանչական մոլորութեանն . զոր եւ ընկալաւ իսկ աննախանձ սրտի սիրով բոտ հաւատարիմ իւրնդրովին՝ արժանի թողութե եւ օրհնութեան

(1) Մի օրի . հալեալ ։ Մի օրի . հարեալ եւ հալեալ ։

զնոսա առնէր հաւատոց կատարելութեամբ:

Եւ այսոքիկ մեծաւ երկիւղիւ առ յինէն գրեալ գրոշմեալ ձեզ եղեւ յիշատակ առ յապայ, զի հայեցեալ յետ զնացից կորուստականայն պատուհասից, մի որ զնոյն անցեալ չարչարանաց՝ զձաղանս եւ զձաղկանս խախտեցի կլեւը, որպէս եւ նոքայն՝ որք ընդ Յուդայի անկեալք գնոյին ՚ի տեղիս խուբեանց:

## ԳԼՈՒԽ ԼԱ.

Յաղագս խռովութեան Աֆշնի ոստիկանին ընդ Սմբատայ արքային, եւ պատերազմութեան Դուին քաղաքի:

Բայց Սմբատայ հաւատարմէս (1) հաստատեալ թագաւորութիւն, հնարէր ըստ Պօղոսի՝ ընդ ամենեսեան յարդարել զխաղաղութեան սիրոյն պայման. եւ նախ ըստ հայրենի կարգացն ուխտի ոչ զատէր զինքն ՚ի սիրընթաց մտերմութէ կայսերն Յունաց Լեւոնի, ընծայիւք բազմօք եւ նուիրական պատարագօք զնա մեծարեալ՝ ըստ հեզա-

(1) Մէ օրէ. հաստատեալէս

համբոյր հանդարտութեան իւրոյ։ Վասն ո-
րոյ և կայսրն ոչ եթէ փոքր ինչ, քան թէ մե-
ծամեծս նմա ընձեռէր պարգևս և պատի-
ւըս գեղեցիկ զինուց և զարդուց, և ոսկե-
հուռ հանդերձ զգեստուց, և ըմպակս և
բաժակս, և կամարս ականակապս ՚ի համակ
ոսկւոյ. այլև մեծ քան զայն այն էր, զի որ-
դի սիրելի կայսր զՍմբատ իւր անուանէր՝
սիրալիր դաշամբք ուխտից։

Իսկ իբրև զայս ամենայն լսէր թագա-
ւորն Սմբատայ ոստիկանն Ափշին, և զհաս-
տատուն անշուշտ սիրոյ միաբանութիւն նո-
րա ընդ կայսեր, ՚ի խոր խոցեալ և խանդա-
ցեալ ընդ իրսն՝ եթէ գուցէ դաւ ինչ նմա
՚ի նոցանէ լինիցի, առ եղծանել հատանել
փութայր զկապ միաբանութեան սիրոյ նո-
ցա. վասն որոյ զօր բազում գումարեալ
խորհէր չուել գալ հասանել ՚ի Հայս։ Որ
փաղփաղուկն արքայն Սմբատայ գիտացեալ
զչարիմաց խորհուրդսն Ափշինի, փաղփաղա-
կի հրաման տայր զօրաց իւրոց՝ նախապա-
րաստ բազմութեամբ, և քաջամարտիկ ա-
րանց պատերազմողաց, և աջողակ զինաշար-
ժից՝ իբրև արանց երեսուն հազարաց. և
գնայր ընդ առաջ նորա մինչև ՚ի գաւառն
Ուտիկայ, մերձ յԱտրպատական։ Եւ մինչ

չեւ մերձեալ հասեալ էր 'ի զօրս Թշնամեացն, պատգամս 'ի ձեռն դեսպանի առ Նփշին առաքէր: Ընդէ՞ր, ասէ, զչարեալ դիմեալ գաս յոչ ինչ պէտս. զի Թէ սէր ընդ կայսեր եղի, և այն եւս վասն ձեր օգտի, զի Թերեւս որ պիտոյ է ամիրապետին մեծի, և դքոյ եւս դիւրաւ զպէտս 'ի յունականաց անտի գտանել մարԹասցիս, և 'ի նըպաստ օժտուԹեան ձեզ ընծայել զերեւելի հանդերձից և զարդուց և զպատուց վայելչական փառաւորականաց՝ որք ընդ դենիդ քո՝ բազմեալ ճանապարհ, զի արասցեն մուտ յաշխարհս նոցա, և 'ի նոցա լինուԹենէն վարձատրուԹեան զձեր գանձարանաց:

Իսկ իբրեւ այսպիսի հեշտալիր բանից ահ լուաւ Նփշին, և եւտես զի ընտիր ընտիր եկեալ սպասաւորէն հասեալ առ դուրըս մերձ կային, այնուհետեւ 'ի պատգամաւորուԹիւն սիրոյ զչարին բանս փոփոխէր: Էջ ապա երկաքանչիւրք նոքա երկիւղս ահիպարանոյս աշտանակեալք եւ հանդիպեալք միմեանց, և բազում պատիւս և պարգեւս ԹագաւորականԹ իրերաց ընծայեալ. նա դառնայր գնայր յԱտրպատական:

Իսկ արքայն Սմբատ ընդ կրունկն դարձեալ՝ հասանէր 'ի մայրաքաղաքն Դվին: Էջ

վասն զի լուր առաջնոյ կիսոյն եղելոյ ոչ ե-
հաս զնոսա հնազանդեալս 'ի ծառայութիւն
իւրեանց, և զսակ արքունի հարկաց և մաք-
սից նուաղեցուցեալ, և ապա դուռն եւս
քաղաքին փակեցաւ ընդդէմ նոցա: Նա
պաշարեալ ուժգնապէս զնոսա, և բազում
աղխատորդաց շփոթմունս և առարատութիւն,
և անկարգութիւնս և հրայանութիւնս
զնոքօք դնելեալ, ամէն ամէն զերկեամ մի
ըստ աներ: Յորմէ ապա նեղեալ տագնա-
պեալ տարակուսեալ. և զկնեամբք եկեալ
այնուհետեւ հանդիպագիրք մարտիւն, եւ
գլխաւոր ստափկանք և հրամանատարք քա-
ղաքին՝ եղբարք երկու, որոց անուանք Ման-
մէո և Մեմոյի, արտաքս եկեալ գիշերի փա-
խստեայք լինէին. զոր և զգացեալ և զհետ
կրթեալ զօրացն, և ձերբակալ արարեալ ա-
ծեն առքային: Իսկ նոցա տանամբք կապա-
նաց և վարոցօք զնոսա ատանջեալ, և առեալ
'ի նոցանէ բազում զանձս ոսկւոյ և արծա-
թոյ՝ առ կայսր | եւ ան երկաթի շղթայիւք ըն-
նոսա առաքէր, մինչ չեւ մտանեալ այնու-
հետեւ զքաղաքայինն ընդ լծով ծառայութե-
ւրոյ: Իսկ ինքն ձեռնթափ լեալ 'ի գիւտ
աշխարհաց բազմաց, զամենեսեան յանձն-
ձէ առծէ համագունդ, և ընդ խորեա նուա-

ձէ, զոմանս հեշտականաւ բանի, և զոմանս
արդեամբք յինքն յանկուցեալ, բատ որում
և մեծ կուրապաղատն Վրաց և համա-
խոհք [1] իւր, գեղեցիկ կարգաց ուղղու-
թեամբ հաւանեալք և հնազանդեալք լի-
նէին. իսկ զոմանս ձեռներէց զօրութեամբ
հարստահարեալ ընդվզեալսն՝ և յաւին կա-
ցուցեալ: Եւ այսպէս ձգեալ անձեցուցա-
նէր զշաւիղ տէրութեան իւրոյ յարեւմու-
տից հիւսիսոյ մինչեւ ցԿարնոյ քաղաք, եւ
անդր եւս քան զԿղարջս քերեալ մինչև առ
ափն ծովուն մեծի, և մինչեւ ցսահմանս Եգ-
գերացւոց, և մինչեւ ցստորոտ լերինն [2]
Կովկասու. զԴուգարացիս եւ զՕսանա-
րս՝ մինչեւ ցդուռն Ալանայ, առեալ
եւս յինքն և զամրոց դրան պահակի նորա.
և անտի 'ի հարաւակողմն կոյս՝ զԿուր գե-
տով մինչեւ 'ի քաղաքն Տփխիս, և զԱեւտի
գաւառ՝ մինչեւ 'ի քաղաքն Հունարակերտ,
և մինչեւ 'ի Տուս և 'ի Շամքոր: Եւ այս-
պէս ընդարձակեալ զսահման տէրութեան
իւրոյ, որ ընդ ծով աքսունի սակից և բե-
կարաց և մաքսից կացուցեալ, զդէն քաջու-
թեան մարտի իւրոյ նշան յաղթութեան
կանգնէր:

(1) Երկու օրէ. և մտախոհք: (2) Մի օրէ. յառաջ՝ մեծի լերինն

## ԳԼՈՒԽ ԼԲ.

### Յաղագս սասանման Դվնին քաղաքի, և գերելոյ Աշոտոյ Վարդապետի առ քաղաքայի Գեր Սենեքերիմեան :

Ցայսու ժամանակաւ ահագին ինչ յեղակարծում ժամու սաստիկ շարժմանց եղելոց 'ի գիշերի 'ի Դվին քաղաքի, բազում սասանումն և սարսափումն և դղրդումն և կործանումն զընդանկջօք քաղաքին վերելեալ. հիմն 'ի վեր տապալէր. վասն զի առհասարակ 'ի վայր փլուզեալ զպատուար պարըսպայն և զապարանս գլխաւորացն, և զտունս ռամկացն, իբրև զերկրուս վայրս աւապարաց յական թօթափել տեսանէր : Այլ և զաստուածաշէն եկեղեցին կաթողիկոսարանին, և զայլ ևս հաստահեղյս վկայարանս դղրդեալ քանդեալ աւերեալ 'ի վայր հոսէին. որ գրեթէ իբրև զփապարս մի-մասս դերբկաց սարսափելի տեսողացն երեւէր : Այլ և հեղձամղձուկ յարկածածուկ հողաթաւալ հողահեղձոյց սատակումն դիակոյտ բազմութեանն, որ կարծրագոյն քարեղէն և անկարեկիր միտս էր ստացեալ՝ յարդարէր զնա 'ի բազում ողբս և յար-

տօսրալժոր կականմունս ։ Թողում ասել զաղգակկիցս և զկարեկկիցս և զծակկից հարազատութիւն մարդկան, որոց կականումն եւ ողբումն և աշխարումն գուժից ճչոյ և կանչոյ և կառանչոյ, և աղխողորմ ձայնք երգեցիկ գուսանաց (1) և սեւազգեաց կանանց և արանց վշտահար հեծութեամբ սգացելոց՝ մինչեւ յերկինս բարձրացեալ հասանէր ։ Իսկ զբաղմութիւն դիականցն ոչ բաւեալ տալ գերեզմանացն, զբազումն 'ի վիհս և 'ի խորափիտս և 'ի դարափլակս (2) ընկեցեալ լինէին ։ Եւ այսպէս ահ բարկութեանն ահափետ զամենեսեան առնէր՝ պաշարմամբ զգածեալ զմնացեալն ։

Զայսպիսի լուեալ զաստուածասաստ բարկութիւն սրբոյ առն Նստուծոյ Անշտոցի, որ բնակեալն էր 'ի Սեւան կղզւոջ բազմահանդէս ճգնութեամբ, գրեալ թուղթ առ գանեալն մնացական, օրինակ զայս ։

« Զհամաշխարհականդ խորտակումն, զոր բուռն զօրութեամբ մանրեալ ճմլեաց աստուածային հնձանահար 'ի բարկութեան (3) մեղաց մերոց բազմացելոյ, գիտացի, հաւա-

(1) Ամենայն օրի․ ռանէին՝ կուսանաց ։
(2) Մի օրի․ 'ի տարափլակս ։
(3) Մի օրի․ աստուածային արդարութիւն 'ի բարկութեան ։

տացեալ և սիրուն սեւոյք իմ և սիրելի եղ-
բարք, զյանկարծակի հասեալդ 'ի վերայ ըն-
հնձանահարութիւն դառն արտասուաց, և
զօրհաս անտանելի տագնապաց մահու, որ
դարձոյց յողբ զխնդութիւն ձեր: Վասն զի
հուր եկեր միանգամայն, և փչեաց զնոյր
մարդկեղէն անտառաց. և ահա քայնու-
թիւն ծովու և բարձրութիւնք լերանց ոչ
կարացին արգելուլ պարագաթեւ հրամանն.
Նման դառն լուսոյ աւուրն կործանման, որ
մինչդեռ 'ի սեղանս վայելչութեան իւրեանց՝
կերակուրք 'ի բերանս էին, բերանացան 'ի
բարկ բաղխման անչափ աղէտիցն: Վասն
զի լքին ծնօղք զծնունդս իւրեանց, և որ-
դիք աղէտիւք հրաժարեցան 'ի ծնողաց.
գերեզմանք նոցա տունք նոցա եղեն, և 'ի
յարկս իւրեանց իբրեւ 'ի գամբարանի թա-
ղեցան: Նման 'ի վերայ չարչարեցելոցդ և 'ի
հնձեցելոցդ առհասարակ՝ հարցդ և եղբար-
ցդ. զի թախարթափակեալ Տէր զբազմու-
թիւն ազգաց ժողովրդեան իւրոյ աներ-
ւոյթ տեսերաւ, 'ի միում վայրկենի ժամա-
վանեալ, և իբրեւ զհուր հեղեալ ցամաքե-
ցոյց, կամ իբրեւ զծուխ սպառեաց և ա-
չախիլ խաւարու զամենեսեան զմեզ ծած-
կեաց: Աշխանի աչաց՝ որք ոչ տեսին զնոր և

զանդուր դատապարտութիւնն զոր ընկալաք և հատուցաւ մեզ. զի որ երբեմն 'ի միասին սիրալիր խնդութեամբ խրախճանացեալք բերկրէիք ծնողօք և եղբարբք և զարմիւք և զաւակօք ․ հնչեցուցեալ Տեառն զբարբառս օրհնութեան, այժմ անտանելի տարակուսանօք յանկարծահաս խաւարագնեալ մթութեամբք տոչորեալ, և տուեր անգամ ոչ թողու մխիթարութեան, և ոչ յոյս ինչ ելից զձեզ փոխանորդութեան և լուծման լատ կենացս, բայց միայն Աստուծոյ. և եթ մարդասիրութիւնն ։ Աստ որում և գիտեք խակ. զի ոչ ինչ կայ հոգ Աստուծոյ, քան թէ զմարդկան ուղղութիւն և փրկութիւն. վասն զի մեք մոռանամք զԱստուած, և զմեզ ինքն. այսպէս ապա ընդոստուցանէ լատ իւրում ողորմութեան և մարդասիրութեանըն ։ Բանիւ այսպէս հաւանիմ զտանջելն Աստուծոյ՝ ասեն գիրք, որով խրատէ զչարացեալ անզգամութիւնս մեր ։

«Դարձեալ՝ մի զարմանայք վասն անքննելի նորայն դատաստանաց, թէ զիարդ կորուսանիցէ զարդարն ընդ ամբարշտին ։ Նախ և առաջին՝ զի ոչ է արդար և ոչ մի, վասն զի ամենեքեան խոտորեցաք 'ի միասին և անպիտանացաք. ապա չէ ինչ կարի չար, եթէ

մահն՝ որում պարապեալ եմք, այն մեզ (1) մխիթարար համարիցի: Յետ այնորիկ ապա որպէս զարեւն եւ զանձրեւն եւ զամենայն բարութիս 'ի միասին վայելեն արդարք եւ մեղաւորք, այսպէս եւ զբաժակ պատուհասին 'ի միասին ըմպեն. իսկ իւրաքանչիւրոցն պատիւն եւ պատուհասն առ հանդերձեալ օրն պահի:

«Արդ՝ վասն զի այսպէս մինչեւ ցմեզ հաստատեալ են իրաւունք Արարչին, անաչառ վարելով ամենեսեան, ընկալարուք զակամայդ որպէս կամաւոր, որով յայտնի լիցի իմաստութեան եւ գիտութեան եւ հաւատոյ ձերոյ հանդէս: Եւ զպարտական գոհաբանութիւնդ ձեր մատուցջիք նմա, որ մխիթարիչն է վհատութեան սրտից. որով եւ բնականդ խոկ էք նորա ընտանութեամբ՝ ըստ քրիստոնեական հաւատոյն, եւ ուղիղ վարուց եւ առաքինասէր եւ ուղղափառ կարգաւ յերկիւղ Տեառն հաստատեալք: Եւ նա տացէ ձեզ հոգի մխիթարութեան եւ յոյս բարեաց 'ի սիրտ սուրբ, եւ բնական սփոփանօք լուսցէ զձեզ զմնացեալդ ամենայն՝ զհօտ եւ զհովիւ, մօտացումն առնելով ծանր եւ մեծ վշտացդ. եւ ըստ չարչարանաց ելից նոցա 'ի հովուէս տըր-

(1) Զոր օր. անմեղ:

տմութեան, հաւատար չարչարելոց վկայիցն Քրիստոսի՝ հաշտեացի, հանգուցեալ զհոգիս նոցա 'ի յարկս լուսոյ. եղծանելով ըղգիր պարտեաց նոցա՝ զբանից և զգործոց և զմտածութեանց, և դասաւորելով 'ի խոստացեալ բարիսն, որ պահի սիրողաց իւրոց՝ որ յաւիտենից »:

Զայս բան բարեզգեաց ընթերցեալ առաջի բազմաց, և լուեալ յունկանէ մեացելոց ժողովրդոցն. յահէ սաստից Տեառն ոչ սակաւ մխիթարութիւն յանձինս իւրեանց գնէին. Այլ և արժանի այնմիկ չար ամպրոպի զկնքեանս վարկեալս արժանիս, ընդ անօրէնս խառն 'ի նոսայն մեղաց՝ առ միմեանս ասելով. Յիրաւի թէ և քրիստոնեայք եաս, 'ի ծուխ բարկութեան հեթանոսաց թըմբեալ պատժապարտ գտան: Վասն զի ոչ եղեալք 'ի Մեգովբայ, խառնակեցաք ընդ Հագարացիսն, և ուսաք զգործս նոցա, որ գտաւ իսկ 'ի գայթակղութիւն մեզ: Այլ արդ այս սակս եղկելի տարակուսական աղէտիցս քեզ բաւականացեալ. զի մի առաւելն քան զայս պատերազմող լուելեաց (1) անցցէ. այլ մեք զառաջակայն տեսցուք:

(1) Այլնայն օրէ. [illegible] լռողաց. Մի օրէ. [illegible] 'ի [illegible] [illegible] լռելեաց. [illegible] [illegible]:

## ԳԼՈՒԽ ԼԳ.

### Յաղագս մարմնեղէն Աճճէի ընդ Ամբատայ արքայէ. և հատանաց համբողջէկութիւն :

Իսկ դաւաճանողն Աճճինն այն ստախկան, զորմէ կանխեալ ասացաք ընմանէ, իբրեւ ետես զպատշաճաւորս յաջողուածս արքային Ամբատայ, որ և զբարձրացեալն ամրէն հիւսիսականաց ազգացն, և ողոքել հրահանգել 'ի հնազանդութիւն իւր զգաւառաբարոյ դպրոհսն, եւ 'ի մտի իւրում ոչ կալ նմա յայնմհետէ ընդ իւր 'ի միաբանութիւն սիրոյ, և հնազանդութեան սակի խաղտմանն : Այլեւ ամին ածեալ եւս թէ գուցէ ոչ լինուցու զաւակ հարկացն որ 'ի վերայ կայր, և վասն այնորիկ ամծապարէ հատանել խզել զշնասուցն պատճառաց կապուածս, որ ընդ Ամբատայ էին նմա կարծեք : Իւ ապա վարանեալ 'ի գաղտնիս, և առ ինքն զբաղմութիւն զօրացն գումարեալ, իբր թէ յայլ իմն կողմանս նմա բան գնալոյ հաւեալ կայ, և իբրև զչուինդն իմն յորդեալ ելեալ հարեալ զօրէն հեղեղայ՝ յողողել գերփել կործանել զեղեալ հիմունս լաւութեան, ոչ գիտելով զայն արքային Ամբատայ, մինչեւ գայր

հասանէր սատխեանն 'ի Նախջաւան ։ Ուր թէպէտ լուեալ զբօթն , և հալածեալ սովալով ջանայր առ ինքն զզօրս իւր գումարել , սակայն ոչ ժամանէր աճապարել ընդ առաջ նորա որպէս միւսանգամն , մինչ եկն եհաս 'ի Գիլին քաղաք ։ Իսկ արքայի զթիկունս յամուր վայրս առեալ , և հրովարտակ ընդ ամենայն կողմանս սփռեալ , փաղփաղուկ զային կուտէին տարմաբար համագունդ նախարարք Հայոց՝ մեծաւ զօրու հանդերձ ։ Այլ և 'ի հիւսիսականաց մասն ոչ դուն ինչ եկեալք 'ի կոչնս արքայի , աղեղնաւորք կորովեաց , և տիգաւորք նիզակաց , փառեալք 'ի զէնս և 'ի զարդս . և այս դէտակն 'ի վեր ամբարձեալ ժողովէին 'ի գիւղն Վըժան՝ որ 'ի ստորոտ Արագած լերինն ։

Իսկ մեծ կաթողիկոսն Գէորգ գնայր ընդ առաջ սատխեանին , զի թերեւս ջանահնար լինել նորա առ Ափշինն՝ զխիրտ քարեղէն նորա կակղել բաւեսցէ , և խնամարկել բանաւոր հօտի Տեառն . զոր բարեբարոյ տեսութեամբ զնա նախ ընկալեալ , և ըստ արքանեկութեան նեւրին՝ յինքն զմիտս նորա յանգուցեալ , յղէ զնոյն ինքն պատգամ առ արքայ Ամբատ՝ դաւաճանութեամբ դաւոյ առ ինքն կոչել գալ թագաւորն . ոչ գիտե

լով արդարամիտ և պարզ սրտիւ այր Աս-
տուծոյ Կաթողիկոսն՝ թէ յորոգայթ իւր
զարքայն ջանայ խոնարհեցուցանել, և յա-
փշտակութեամբ առ ինքն ձգել։ Իսկ իբրև
մեծիմաստ խոհականն չառնոյր յանձն զեր-
թալն՝ ըստ սադրելոյ նախարարացն, դառ-
նայր գնայր Կաթողիկոսն առ ոստիկանն։ Եւ
թէպէտ բազում անգամ ամենեցուն աղա-
չեալ զնա երկնչել[1] չերթալ առ չարաբարոյ
հեթանոսն, սակայն չարգելաւ նա, իբր ոչ
առել զերդեալ ուխտն ընդ նմա։ Իսկ ոստի-
կանն իմացեալ զոչ դաւաճանելն Սմբատայ
ըստ պատգամաւորութեանն Կաթողիկոսին,
հրամայէ ունել դնել զնա ՚ի շղթայս և ՚ի
ձեռնակապս երկաթից[2]։ Եւ ինքն խաղայ
գնայ ՚ի վերայ արքային Սմբատայ, մուտ
առ նա կալեալ իբրև բանակետղ ՚ի գիւղն
Գողս։ Ապա յետ երից աւուրց գունդ-
կազմեալ՝ գումարտակ եդեալ ՚ի կռիւ ընդ
արքային կայքաւէր։ Ընդ ապա ՚ի քաջ արանց
սուսերամերկաց, և ՚ի լայնալիճ աղեղնաւո-
րաց նետից ահագին ահաւոր օրհասք մա-
հու հասուցանէին իսմայելեանն գնդի, և այր
զախոյեանն իւր հարուածեալ յերկիր կոր-

(1) Ամենայն օրի․ ունէին՝ չերկնչել։
(2) Մի օրի․ ձեռնակապս երկաթիս։

ծանէր՝ տապաստ դաշտոյն արկեալ . և ըզ-մնացեալս ցանեալ ցրուեալ և փախստեայ զօրականն այլազգեաց արկեալ , հալա-պահնակել պաշտպանել կարէին միայն ըզ-տեղի կայոցի կարաւանին իւրեանց ։

Այնուհետեւ ապա ոստիկանն չար 'ի ծովածուփ ալեաց կուտակելոցն (1) , և փըր-փրացեալ լեռնացելոց չիջեալ հատանէր . և փոխանակ գազանական ոստիցն՝ յաղէրս մատուցեալ . հայցէր տալ ցնա զաւկն ար-քունի , և դնել ուխտ երդման սակս ոչ զա-տանելոյ 'ի նորայն միաբանութենէ ։ Իսկ արքայն անօրինեալ գաշխարհի զխաղաղու-թիւն , անյապաղ զխնդիրսն կատարէր , և երեւելի պատուական օժտութիւնս ընծա-յից նմա մատուցանէր , ոչ սակաւս ինչ և առ 'ի նմանէ գտանէր ըստ թագաւորաց հրա-հանգաց պատիւս պերճութեան ։ Եւ ապա յուղարկեալ գնայր ոստիկանն , ընդ իւր տա-նելով զմեծ (2) կաթողիկոսն նոյնին չզթայիւք ։ Եւ անդ 'ի մէջ թշնամեացն մարմնոյ նեղու-թեամբ բառնայր զբեռն ծանրատաղտուկ տառապանաց . ոչ արշել նմա սպասաւոր ձեռնասուն զոք՝ որ պատրաստէր նմա մա-

(1) Երկու օրի . կուտացելոցն ։ Մի օրի . կուտակեցելոցն ։
(2) Չորս օրի . չիք մեծ .

հիմս, կամ ջուր 'ի ձեռս արկանել, կամ ջուր ըմպելոյ՝ առ 'ի զծարաւ բժշկել։ Եւ այսպէս ընդ որբոց կապելոց չարչարեալ, և արտասուօք միշտ թացեալ զանկողինս իւր՝ 'ի մշտնջենաւորունչ սաղմոս համակէր. և անձանձրոյթ յաղօթս նահատակէր, միայն զի ոչ վրիպեսցի 'ի նաւահանգստեան կենաց հասանել։ Իսկ իբրեւ ամիսք երկու կատարէր 'ի բանտի անդ, ապա ոստիկանն Հագարացի զանձս ոսկւոյ և արծաթոյ պահանջէր 'ի մեծ Կաթողիկոսէն, անշուշտ նամակ երդման կնքեալ, որ զի թէ տացէ, արձակեսցի 'ի կապարանէն, և առաքեսցի պատուով յաթոռ իւր։

Իսկ սորա զգացուցեալ մեզ հոգւով չափ զհոգն մեր(1) եպիսկոպոսի դրան իւրոյ, եւ այլ եւս կղերց եկեղեցւոյն ըստ օրինի գերելոց յածիլ շրջիլ ընդ գլխաւոր նախարարս և իշխանս աշխարհիս. և ժողովեալ միանգամայն զխնդիր պահանջման ոստիկանին, վաղվաղակի առաքեցաք ըստ հրամանի արքային Ամբատայ՝ առ մեծ իշխանն արեւելից Համամ։ Նան զի ոստիկանն ընդ այն ժամանակս հասեալ 'ի Փայտակարան քաղաք, ընդ իւր տանէր զմեծ Կաթողիկոսն. յոր

(1) Թոռն Սիւնեաց՝ զհոգն 'ի ձեռն եպիսկոպոսի։

իբրեւ ժամանեաց՝ հապճեպով մերքն հասին առ նա ։ Իսկ նա յինքն հայցեաց զՀայրապետն առնոյր , և յառաքեաց զանձն առ յիւրմէն եւս յաւելեալ ՚ի լրումն սակին , տայր տանել տանիկանին ։ Իւ հաւատոյ պաշտպանութեամբ թեւակոխեալ փախստեամբ իշխանն ՚ի տեսանել զմեծ Հայրապետն, և մարմնաւոր պիտոյից բովանդակապէս բաւականացեալ ՚ի հեռաւոր օտարութեան , և յարքունեկութեան պայմանի սպասաւորեալ, առաքէ զնա ՚ի Հայս ։ Որ իբրեւ եկին հօտքն զհովիւն բանաւոր ոչխարաց, մեծապէս առլցան խնդութեամբ բազմաւ , և յամենայն եկեղեցիս զպաշտօն բարեկարգութեան բարձրացուցեալ, անդադար բղխէրունեան կանոն աղօթիցն կատարէին ՚ի փառս Աստուծոյ ։

## ԳԼՈՒԽ ԼԴ.

Յաղագս ազատամբոխութեան Աշոտոյ իշխանին , և պատերազմելոյ Սմբատայ արքային ընդ Աֆշինայ ։

Յայսու ժամանակաւ Աշոտ իշխանն մեծ՝ Վասպուրական կողմանցն , և քեռոր-

դի արքային Սմբատայ, խոնարհեալ 'ի նենգապատիր բարբանջմանս սմանց, և հրապուրեալ երկփեղկեցաւ 'ի բաց զդաշինս ուխտին որ ընդ Սմբատայ արքայի քեռւոյ իւրոյ. և չուեալ գնաց առ ոստիկանն Ափշին՝ իբրեւ 'ի պատճառս պարգեւաց նմա 'ի յայտ ածեալ(1) զհնազանդութիւն միամտութեան առ նա, ոչ նկատեալ նախ զչարն՝ որ 'ի գոյացութիւն իւրն էր տեսանել: Եւ երթեալ ապա բազում և երևելի ընծայս ոստիկանին տարեալ մատուցանէր, և այլ ևս կարասիս բարձեալ տարեալ միում միում նախարարաց նորա գաղտախնթէր, մեծագունի ակնկալեալ բարձի և պատուի, և վերընկալուչ զնա առնելոյ ինքնիշխան կամաց. որ ոչ թերևս աւելի քան որ 'ի ձեռս իւր էր՝ առեալ լինէր. բայց միայն պատուասէր զարդու զնա զգեստաւորեալ և յուզարկեալ՝ եկեալ(2) 'ի բաց. միայն զօրհասական վէրսն յոգիս ընդունէր: Իսկ արքայ Սմբատ միայն զլռութիւն պատուեալ. սպասէր առ 'ի նմանէ հաւանական միոս դարձի առ նա ստանալ. և մերկանալ զամօթալի դէմս ագխոսութեան. այլ նորա անխիղճ զայս արարեալ՝ ոչ դառնայր 'ի բերոյս բարւոյն արկից:

(1) Չորս օրէ. նմա և յայտ ածեալ.
(2) Մէ օրէ. եկայ 'ի բաց.

Յետ սակաւ աւուրց ինչ և մեծ իշխանն Սիւնեաց ըստ սորին սակի զոյն զայս գործեաց. երթայր և նա առ Աֆշինն, յորմէ և նա թափուր իբրև զնա դարձեալ եկեալ։ Եւ ապա այնուհետև զգուշացեալ զփեռեկտիլն ՚ի միաբանութենէ ազգայի. խաղաղատելով աղերսէր՝ մի ունել նմա ՚ի բանի զյանցուածս իւր, կամ մերժել յառաջին խնամոցն հայրաբարուն սիրոյն։ Իսկ արքայ Սմբատ ոչ ինչ անջրպետ ՚ի մէջ արկեալ նախկի անցելութեանն, գրկալիր սիրով առ ինքն յանձանձէր ածել՝ իբրև զորդի սիրելի մեծապատիւ պերճութեամբ զնա շքեղացուցանել։

Յայնմ ժամանակի իմաստութեամբ և շնորհօք և քաջութեամբ և ուժոյ պնդութեամբ երևելի էր Գագիկ Արծրունի. և զի էր նա աներ Աշոտ իշխանին մեծի՝ զորմէ բանս նախաճառեցաք, յինքն ապա զիշխանն մեծ յանգուցանէր նանրական և նենգ խորհրդոյ սրտիւ. և ՚ի պատճառս զբօսանաց սիրոյ զերեսին եղբարն բարեալ ածեալ ՚ի միասին՝ զԱշոտ փեսայ իւր և զԳագիկ և զԳուրգէն, և ՚ի միասին զնոսա կապեալ երկաթի կապանօք՝ դնէ ՚ի բանտի. եւ յինքն զտէրութիւն նոցա գրաւեալ, իշխան

առ հասարակ կողմանցն այնոցիկ կարգի հա-րստապէս ճոխութեամբ ։ Իսկ արքայ Աբաս թէպէտ և ընդ ակամբ հայեցեալ ոչ կամէր չայն այնպէս լինել , սակայն և ոչ ընդ պա-տուհասից կորզան զիշխանացեալն Գագիկ հանէր , մանաւանդ զի միամտութեամբ սըր-տի հնազանդեալ նուաճիւր ընդ լծով ծա-ռայութեան արքային ։

Յետ այսորիկ արքայ Աբաս իբրեւ ե-տես զմիատարր խաղաղութիւն մշանջենա-ւորեալ ՚ի Հայս , և միաբան ընդ նմա լինել նախարարաց յուխտ սիրոյ , եդ ՚ի մտի իւ-րում երթալ հարթել հաստատել և նուա-ճել զաշխարհն եւս Տարօնոյ , և զկողմանս նահանգին Աղձնեաց , զի մի տարամերժեա-ցի սեպհականութիւն ազգայն այնոցիկ ՚ի բնիկ տէրութենէն ։ Վասն զի մեծ իշխանն խամլէլեան Համտա , որ տիրեալ ունէր ըղ-միջագետս Ասորւոց մինչև ցՊաղեստին , ձեր-բակալ արարեալ զփեսայացեալն Արծրու-նեաց Ապլմախրայ , որ ՚ի ծածուկ ունէր զհաւատ քրիստոնէութեան , և փոխանակ ըդեշխացն սպասաւորէր զաշխարհն Աղձ-նեաց , և ՚ի բանտի զնա եդեալ յինքն գրա-ւէր զսեպհականութիւն տանն , և զբնակիչս Սիմ լերինն ։ Իսկ յետ սակաւ ինչ ապա փոխ-

ձանէր և մեծ իշխանն Տարօնոյ Դաւիթ Բագ-րատունի, և փոխանակ նորա կացուցեալ 'ի տեղի՝ եղբօր որդի նորուն Գուրգէն. ապա և ընդ նմա եւս Աշոտոյ մարտ եդեալ՝ մինչեւ սպանաւ 'ի պատերազմին:

Իսկ Աշոտն ոտն առ ոտն յառաջ մատուցեալ՝ միապետել ջանայր զկողմանն զայնոսիկ: Այլ վասն զի որդի Դաւթի իշխանի մեծի փեսայացեալ Շապհոյ եղբօր արքայի, և փոքրիկն ամբաստանութեան նորա յաճախէր, և չարութիւն Աշոտոյ մերկացեալ յայտ եկեալ էր, այնուհետեւ գումարտակ արարեալ արքայի զնախարարս Հայոց, և համագունդ զամենայն զօրս իւր արս իբրեւ վաթսուն հազար, և գնայ չուէ երթայ հասանէ մինչեւ 'ի հանդէպ լերինն բառ արեւելից Տարօնոյ, բանակեալ անդ կալեալ տեսանել զօրպէսն: Իսկ բիւրս բռնաւորն Աշոտ նստէր յարեւմտից Տարօնոյ, բանակեալք անդ կալեալ առ ափն Եփրատ գետոյ: Այլ վասն զի բան միաբանութեան էր առ Աշոտ 'ի գաղտնիս իշխանացեալն Վասպուրականի Գագկայ, նենգաւորաւոր խաբէութեամբ քաղցրացոյց 'ի կամս արքայի չուել գնալ անտի 'ի հարաւակողմ կոյս հանդէպ քաղաքագեղջն Հողոյ, իբր թէ յայնմ մար-

զէ գող նոցա պատշաճ զգործ իւրն (1) վճարել խռովութեամբ, կամ խաղաղութեամբ ։ Իսկ արքայի ոչ ինչ կարծիք լուեալ զնմանէ լեալ, գնաց ընդ նմա ։ Իսկ նորա նախ փաղփաղեալ և զհրապուրումն զայն զեկուցեալ Ահմատայ, և 'ի պայմանն պատշաճ ժամու կիտոյն եղելոյ՝ հրաւիրէր զալ 'ի վերայ. և ինքն առաջնորդէր բազմութեան զօրացն ընդ լեռնակողմն անջրդի ապառաժ մացառախիտ քարաժայռ անպողոտայ առիափայ գնալով զօրն ամենայն, զի յոլովք 'ի ծարաւս իւրեանց կըթուցեալք սատակէին ։ Նա այլ ևս զօրքն ամենայն փայրագնաց ջլաձիգ խղմամբ տաժանեալ, փատտակեալ, լքեալ, թալկացեալ թանձրադանդաղ ձանձրութեամբ, և հառկեալ հողւս հատանէին 'ի ջուր ինչ գեղջմի թուղիս անուն, և անդ զրեթէ իբրև զգանեալս և զյօդալոյծս առհասարակ անկեալ դնէին ։

Իսկ Ահմատայ ըստ եղելոյ կիտոյն Դադկայ՝ սոփալեալ զզօրս իւր, մինչդեռ առաւօտն զգիշերին մերկանայր. հատանէին հրոսակք սուսերամերկին սփռեալ 'ի վերայ նորա ։ Ընդ ապա 'ի հինէն հասելոյ ընդոստուցեալ իւրն զօրացն լքելոց, և հալածեալ փախեալ

(1) Զօրս օրէ. զգործ իւր.

'ի զբաղս և 'ի շէնս և 'ի զարդս, և ձի կալեալ՝ նախ ինքն իսկ արքայ յասպարիսի անցեալ առաքինանայր, ապա և այլք ումանք զկնի ասպատակ տուեալ, և ձի 'ի ներքս տարեալ՝ ընդ կրունկն զջոկս ռազմի թշնամեացն դարձուցեալ հատակոտոր առնէին։ Իսկ զայնպիսի արիաբար մրցմունս տեսեալ Գագիկն՝ որ բղխեալն էր առ 'ի յիւրմէն ըղհոտ մահու, առ մղձկեալ սրտին՝ այլ իմն չար խորհրդոց արբանեկեալ, և հէն հարեալ առհասարակ բանակին, և հրամայէր նախ զխորան իւր յերկիր ընկենուլ, և բեռնակրացն բառնալ գնալ ընդ կրունկն. զոր տեսեալ բազմութեանն և խռովեալ զայն կարծեալ ամենեքեան նոյնպէս առնէին։ Վասն որոյ տեսեալ զայն արքայի, և իմացեալ թէ յայնմհետէ ոչ յաջողի նոցա գործ պատերազմին, յետոյս զինքեանս մղեալ՝ 'ի փախուստ դառնային։ Ընդ ապա անկանէր անփոյթ և անկիրթ երիտասարդն չքնաղագեղն Աշոտ քեռ որդի արքային, որ 'ի մեծ նախարարութենէ Տայկականս գրոհի, ընդ նմին և այլ եւս տեարք պատերազմողք յաննշանից ումանց, յիսուն՝ աւելի կամ պակաս. և այլ զօրքն ցրուեցան և գնացին յիւրաքանչիւր տեղիս։

Իսկ արքայն եկեալ դադարէր 'ի Բագ-րաւան գաւառ , 'ի հանգուցանել զխոնջ աշխատութեան իւրոյ ։ Բայց դրժադաւ (1) իշխանն Գագիկ ջանայր զկիս նենգութեանն 'ի խորոց սրտին իբրեւ ընդ դրուանաւ թա-գուցանել, ոչ գիտելով թէ՝ չէ ինչ գաղտնի որ ոչ գայցէ 'ի յայտ ։ Եւ իբրեւ եկն նա 'ի Վան՝ 'ի Տոսբ գաւառի, անդ սպա զուար-ճանայր զուարթանայր 'ի խրախ լինել, ըստ որում թէ՝ սրտի բերկրեցելոյ երեսքն ծա-ղկեն ։ Իսկ 'ի վաղուեան անդ աւուրն պատմուճանեալ նորա արքունական զգես-տիւ , և հեծեալ 'ի ջորւոջ իւրում, ճախր աւեալ ձեմէր յապարանի անդ ։ Իսկ Գա-գկին եղբայր մեծի իշխանին Աշոտոյ , երկու եւս համախոհ Ամատունի արամբք՝ յան-կարծակի 'ի վաղակաւորն յեցեալ, և 'ի վե-րայ յարուցեալ իշխանապանծ խոչխոտեցե-լոյն՝ որոյ ճարակ զնա տայքն. և այնպէս յեր-կիր անկեալ վախճանեալ՝ թաղեցաւ ընդ հարս իւր ։ Իսկ կապեալն Աշոտ եղեալ՝ հաս-տատիւր եղբարքն հանդերձ 'ի սեփհական իշխանութեան իւրում։

Բայց նախ քան զայս՝ երկու իշխանքն

(1) Ոմանք դժախտարմատ , կամ դրժադաւան , կամ դժուա-րադաւ ։

մեծամեծք գլխաւորք եւ ալեւորք հերօք. Մուշեղ իշխանն Մոկաց, և Գուրգէն իշխանն Անձեւացեաց, առեալ հակառակութեան 'ի մէջ իւրեանց բարկութեամբ բարբոքեալ, սաստիկ դըզրդմամբ մարտ ընդ միմեանս եդեալ կռուէին. յորում պատերազմի սպանաւ իսկ Մուշեղ իշխանն Մոկաց 'ի Գուրգենայ: Իսկ յետ երկեամ՝ մի ամաց՝ Գուրգենայ հեծեալ յերիվար սպիտակ, և յորս բաջաղեալ՝ եղեւ նմա անցանել ընդ փոքր ինչ հեղեղատ. ուր ապա երիվարն վազառեալ փընդացոլ, և անկուշեալ յետոյս զիշխանն ընդոստուցեալ ընկենոյր, և բարձեալ զնա մեռեալ՝ տարեալ թաղեցին ընդ հարս իւր: Այս պայազատէ զուէրութիւնն զայն մեծն Աշոտ որդի նորա ընդ նորա:

## ԳԼՈՒԽ ԼԵ.

### Յաղագս դիմելոյ Աֆշնի 'ի վերայ Սմբատայ, և գերելոյ զընտանիս նորա:

Իսկ վատասէր չարասէր ոստիկանն Աֆշին՝ լուեալ զայսպիսի գործեցեալ ոճիրս, և

զդաւադրժող փախուստն Ամրատայ, և ըզ-
բուռն և զլուծումն զօրացն Հայոց, և ըզ-
նենգումն իսկ մեծամեծ աւագանւոյն, զայ-
լոցն ես չեշտակի կտուրն 'ի միմեանց լի-
նել, 'ի ձահ առեալ զայն ժամ դիպող եւ
պատշաճ գոլ իւրոյ կամաց կատարման. եւ
'ի ծննդականութիւն չարի կառավարեալ
զմիտս իւր, դիմեալ, մնմնեալ, յարուցեալ
գայր իբրեւ զհեղեղատ սաստիկ, զի չար
ուղխիւքն դղրդելեաւ ողողեսցէ զտունս
Թորգոմեան, և թափեսցէ 'ի թագաւորն
զթոյնս դառնութեան իւրոյ: Եւ չուեալ
ընդ Սեւոփ գաւառ՝ գայ 'ի կողմանս Բու-
գարաց և Վրաց, զի նախ զնոսա նուաճես-
ցէ, կամ շփոթ ամբոխից 'ի մէջ արկցէ, զի
մի յաջողեսցի ուրեք երբէք փախուստ 'ի նը-
մանէ Ամրատայ: Եւ վասն զի նախարարք
կողմանցն այնոցիկ ոչ բերան ընդ նմա յուխտ
ապստամբութեան, և ոչ կարաց հպել բըռ-
նութեամբ յանմատչելի ամրոց նոցա, դար-
ձեալ ել 'ի Հայս ընդ գաւառն Վանանդայ,
և անդ խորհուրդ առեալ հետամուտ ըզ-
հետ կրթէր Ամրատայ: Իսկ իբրեւ նա յա-
մուրս քարաժայռ ձորոյն խորափեաց Տայոց
անկանէր, և գիտաց ստախկանն եթէ ոչ դա-
ւով զդժողութե̄ նմա առնանել ինչ կարէ,

և ոչ պատերազմաւ 'ի հրահանգս կրթու-
թեան վանել, ապա երթեալ պաշարէ զա-
մուրն Կարուց 'ի Վանանդ գաւառի. վասն
զի անդ զօղեալ, թագուցեալ, զետեղեալ,
գագարեալ կային խարազնազգեաց կրօնա-
ւորեալ տիկինն Հայոց՝ կինն Սմբատայ, և
նու նորին իսկ՝ որ էր դուստր արքային Եգ-
գերացւոց, և այլ ևս կանայք ազատագունդ-
արանց: Եւ պահնակ ամրոցին էր Բանա-
նխա յազգէն Գնթունի՝ Հասան անուն,
յոյժ հաւատարիմ և հրամանակատար 'ի
վերայ տանն արքայի. այլ և գանձ եւս և
կարասի բազում արքայի 'ի գանձարանս ամ-
րոցին պահէր. զոր իբրեւ (1) ստուգեալ գի-
տաց Աֆշինն յամանց իրազգաց նմա եղելոց,
ուժգնապէս մղութեամբ և պատնէշ պա-
շարմամբ պատէր զամրոցն: Վասն որոյ ա-
պա Հասանն՝ խոհական իմացուածիւ ուշ
'ի կուրծս արարեալ, և գիտացեալ ոչ այլ
ինչ իւիք փրկիլ նոցա յայնմանէ, որ բացեալ
երբեւէր դուռն կորստեան. և կազդուրեալ
'ի կամս երկնաւոր այցելութեանն, խընդ-
րէր յետկար երդման յԱֆշինէ՝ զի տացէ նը-
մա զամրոցն, և առ 'ի նմանէ գտցէ աներ-
կիւղութիւն արեան և ամենայն չար ամպ-

(1) Աժենոյն օրի . ռանէին՝ զոր իւր եաս :

բոցաց։ Իսկ նա փաղփաղակի աներկբայաբար զխնդրեալն յեակար փառահութեան տուեալ, բացաւ զուռն բերդին, և մտանէր Նշխենն։

Իսկ մարդիկ ամբոխին Թէպէտ և խուճապեալք լինէին իբրեւ յահագին բեկանող զաղանէ, սակայն նա ոչ ինչ զնոսա որոշեաց ՚ի փառանդս տագնապի տարակուսանաց մահու, կամ յարգել բանտի, այլ ՚ի բաց զբազմութիւն ռամկին (տայ) հանել և ոզատել ՚ի բոլոր հինից. միայն զոփկինն հանդերձ նուաւն իւրով և զհրամանատար տանն արքայի գ[illegible]սաանն, և զայլ եւս խուն ինչ աղաս կանայս, և զգանձս և զկարասիս առեալ ընդ իւր տանէր ՚ի Պոլին քաղաք, ոչ Թերեւս մտաւլուս ինչ տագնապ տարակուսանաց զկնի տարելոյն (1) ցուցեալ՝ քան Թէ յաւէտ ինն զմեծարանս պատուաւորութեան ՚ի նմանէն ընկալեալ, որ յետ աւուրց ինչ Թողոյր եւս գ[illegible]սաանն գնալ առ Թագաւորին իւր։ Իսկ արքայ Սմբատ դարձեալ եկեալ յամրոցն Կարուց, և տեսեալ զի այն ինչ յափշտակեալ էր ՚ի Թշնամեացն, ոչ ազատաղէր զինքն ՚ի յուսոյ երկնաւոր փրկուԹեանն, այլ լիաբերան գոհութեամբ Նատուծոյ կամացն հաւատայր տալ զգիւս կե-

(1) Ըմն՝ տարելոյն ։

նաց նմա, և ղանդիւս կորուստ՝ թշնամւոյն։ Եւ վասն զի ըստ ձմերային ժամանակին ոչ կարաց անդ որոշել կայանս, գնայ անտի յա-մաւրս Երասխաձորոյ՝ 'ի գեօղն Կաղզուան։

Իսկ անդ ապա (1) երկոցունց կողմանց դեսպան զկնի դեսպանաց տարուբերս առ-նէին՝ Սմբատայ և Ափշնին. և առեալ հար-ցափորձի 'ի մէջ առեալ՝ 'ի միմեանս հար-կանել թափել ջանային զմեղադրութիւն ի-րեն գործեցելոյ։ Ապա խնդրէր ոստիկանն պատանդս յարքայէ զուստր նորա զաւագ, և զուստր Սահակայ եղբօր արքային։ Իսկ զդ-դուստր Շապհոյ կրսեր եղբօր արքային՝ իւր 'ի կնութիւն, իբր սաղապս խնն մնոսխ հա-մարեալ զուխտ երդմանն Սմբատայ, և մի-այն զայս և եթ խնդրեալ պատճառս վստա-հութեան և անվրդով խաղաղութեան։ Իսկ արքայ ոչ անսեալ զհարթայարմար միաբա-նութիւն նախարարացն ընդ ինքեան, և ոչ այլ ինչ ելս աղագս գտեալ, այլ ակամայ կա-մօք 'ի կամս նորա դառնայր, տայր զԱշոտ որդի իւր և զՍմբատ եղբօր որդի իւր 'ի պայման պատանդաց. այլ և զդուստր Շապ-հոյ կրսեր եղբօր իւրոյ 'ի կնութիւն նմա, զոր իբրև առընկալաւ, և զհարսանեաց

(1) Ամենայն օրէ. յաւելուն՝ առաջ ջեա երկոցունց։

պարս պարեցին, և զկաքաւսն կաքաւեցին, ոչ կամեցաւ գնալ 'ի դառնաշունչ ձմերային ժամանակի ։

## ԳԼՈՒԽ ԼԶ.

### Յաղագս կաթողիկոսութեան Մաշտոց վարդապետի, և Յովհաննու պատմագրի ։

Յայսմ տեղ վախճանէր մեծ հայրապետն Գէորգ 'ի գաւառն Վասպուրական, զոր տարեալ համախումբ քահանայից և իշխանաց աշխարհին, եդին զնա 'ի քնարանի Ձորոյ վանաց՝ որ 'ի Տոսբ, մերձ յեկեղեցին՝ ուր եդեալ իսկ էր սորա Լուսաւորչին մերոյ զգաւազանն իւր, և զսեղանն տէրունական խորհրդոյն, զոր նախ քան զհաստատելն եկեղեցեաց սորա 'ի Հայս՝ ընդ իւր շրջեցուցանէր ։ Իսկ իբրև ձմերային սաստկութիւնն 'ի գարնանային բարեխառնութիւն (1) օդոյ յեղանակէր զփոփոխումն, ապա ոստիկանն բազում հրահանգաց պատուով (2) յուղարկեալ առ արքայ, և զկինն

(1) Զորս օրէ . բարեխառն ։

(2) Ամենայն օրէ . ռոնչին՝ պատուեալ, զոր մեծ [illegible] [illegible] ։

եւս արքայի ։ Առ ինքն զՇապուհ զեղբայր արքայի կոչէր, և նախախնամեալ մեծարէ զնա՝ իբրեւ հարազատի շնորհելով բարեփայլուն պարգեւս և պատիւս ։ Եւ նա յուղարկեալ զփեսայացեալն իւր Ափշին հանդերձ դստերբն իւրով, և այլ եւս պատանդօքն, և ոփկնաւն և նուաւն արքայի. և ինքն դառնայ առ արքայ Սմբատ ։

Իսկ փառն զի հրաժարեալ էր 'ի կենաց տանն մեծ հայրապետն Գէորգ, ապա Թագաւորն և համագդիք իւր զհոգեւնիւթ և աստուածաշնորհ այրն Աստուծոյ զՄաշտոց ընտրեցին 'ի հայրապետութիւն, որ աստուածային ծաւալմամբ և հոգիախաղաղ զօրութեամբ գրգեալ զհոգեւոյն շարժմունս՝ իբրեւ պարարտ անդաստան բուսուցանէր ըղհոգեծաղիկ առուշահոտութիւնս ։ Եւ սրտամերժեալ 'ի բաց ընկեցեալ զկատակս կերակրոց, մեկնիւր հեռանայր եւս և 'ի համարակ կերակրոց՝ 'ի հացէ և յըմպելոյ ջրոյ. սակաւապիտութեամբ լոկ բանջարով զհարկաւոր պէտսն լծարեալ։ Ընդ որ հաճեալ հաւանեալ Թագաւորն և գահամեծար իշխանքն և պատուականն արք ազատք ընդ գեղեցկայարմար խորհրդականն գնացս նորա, կացուցին զնա յաթոռ սուրբ Լուսաւորչին Գրիգորի, զո

րոյ և զգօնութիւն բարեբարոյս (1) բեղնոյ ընձիւղման նորա, որ 'ի պարարտ անդաստանի հոգւոյն երեւէր, ոչ է այժմ ժամ ճառել, այլ այլում տեղւոյ և ժամանակի թողլի է: Բայց սուրբ այրն Աստուծոյ մինչդեռ սքանչելագործ գոլելն վարդապետութեամբըն իւրով չմնէր հաստատէր և յարդարէր 'ի կարգս բարեաց գնացից և գործոց զհօտս իւր հաւատացեալ՝ արտաքոյ բոլոր վշտակիր հեծութեան, հանդերձ 'ի Քրիստոս, ամիս եօթն միայն կալեալ զաթոռ հայրապետութեանն:

Զկնի սորա հէքս ես և թշուառականս և պաքեալս ըստ հոգեւոր արբուցմանն խըրատու. Յովհաննէս, որ զայն զայս գրեցի գիրս, ոչ ըստ արժանեաց ածայ յաթոռ սըրբութեան, թերեւս ոչ կարացեալ գիմակ գող հրամանի արքային, և կամ այլոց եւս նախարարակոյտ բազմութեանն: Զի թէպէտ և յաշակերտութենէ առն սրբոյն Մաշտոցի 'ի մանկութենէ իմմէ, այլ և ազգակից հարազատութեան նորա ըստ մարմնոյ, սակայն կուրացեալ գերանով մեղաց իմոց, ոչ բաւական զանձն վարկայ դնել՝ 'ի նշմարել զշիւղ յական եղբօրն, կամ յառաջա-

(1) Զոր՝ օր. բարեբոյս:

պէտ լինել յառենագրութիւնս նորս Իս-րայէլի։ Բայց դարձեալ զհնազանդութիւն յանձին բարձրացուցեալ, որ է մայր ամենայն առաքինութեան, և զունկնդրութիւնըն բարի գոլ [1] վարկեալ՝ քան զզոհ ընտիր, եւս զոչ հակառակէն, ածայ յայս՝ միայն ինձ թողեալ յոյս առաջնորդական հանգիսի՝ զԱստուծոյ և եթ մարդասիրութիւնն։

Յայսու ժամանակս ի քաղաքագլուխն մեծ Նորագդաւորս, եկեղեցին որ նախ յարքայէն Սմբատայ հիմնադրեալ եղեւ՝ մերձ ի թագաւորական նորա ապարանս, բովանդակեալ շինութեամբ ի գլուխ ելեալ ատանօր, և ըստ օրինակի կարգաց աստուածայնոց զնորին նուաստախս պատուեալ բարձրացուցանէին ի պաշտօն ցնծութեան։ Նուչքնաղ և երեւելի զարդուք յոսկէձամուկ հանդերձանաց, և ի շղաշատեռ առագաստից զնա պճնեալ պայծառացուցանէր. և կամար եւս ի համակ ոսկւոյ ականակապ յարդարեալ, և ի քրիստոսական սրապիզին եդեալ ածեալ։

Բայց մեծ կուրապաղատն Վրաց Ներսեհ անվրդով և անշուշտ ուխտ խաղաղութեան և սիրոյ միաբանութեան ընդ ար-

(1) Մէ զէ · չէ՝ գ"լ։

քայլ Սմբատայ պահէր 'ի բոլոր մասունս՝ առ 'ի բովանդակ մտաց և 'ի զօրութենէ իւրմէ, մեծաւ պատկառանօք իբրեւ հօր հնազանդեալ. կամ թէ եւս առաւել քան զայս իբրեւ զծառայ 'ի Տեառնէ իւրմէ կամակրեալ զպահման երկիւղի չափաւոր մտութեամբ. և զաչս իւր մշտակարկառ յարքայ հարեալ համակեալ մեծաւ զգուշութեամբ, և նմա զանձն եւս հաւատացեալ։ Ընդ որս յաւէտ իմն հաճեալ և հաւանեալ արքայն Սմբատ, բազմացեալ նախախնամութեամբ յինքն զնա ածէր յանձանձէր. և ապա թագակապեալ նմա մեծապատիւ պերճութեամբ և գեղեցկայարմար զարդու, նաեւ զինու զարդարեալ ըստ օրինի թագաւորաց, կացուցանէ զնա թագաւոր Վրաց աշխարհին, և երկրորդ իւրոյ տէրութեանն զնա հաստատէր։ Ուստի ապա ընկալեալ զյառաջադիմութիւն արքայական պատուոյն, ոչ ինչ թերեւս վասն այնորիկ ամբարտաւանեալ՝ քան թէ միշտ ընդ խոնարհս զիջանէր, հեշտ և համբոյր մտօք 'ի նոյն պայման զինքն յարադրաբար բերեալ արքայի Սմբատայ՝ տայ ըստ առաջին հանդիպադիր կարգացն բարեաց։

## ԳԼՈՒԽ ԼԷ.

Յաղագս ապստամբութեան ընտանեացն արքային, և պատերազմելոյ Ափշնի ՚ի վերայ Սմբատայ, և սատակումն նորա:

Յետ այսորիկ ոստիկանին Ափշնի դարձեալ դաւանս յինքեան բերեալ յամենից ուղղակարծ լեզուագարաց, և ներհակապատիր խաբէութիւն ՚ի սիրտ իւր նիւթեալ. սկըսաւ շրջել զքաղաքօք ոմամբք իբրեւ նուաճել զնոսա: Եւ ապա գնայր չուէր հասանէր ՚ի Տփխիս քաղաք, և անտի ապա իբրեւ հողմավար փոթորկեալ յանկարծակի դիմէր գայր զկողմամբք Շիրակ գաւառի. դարձուցեալ[1] զմիտս իւր ՚ի հին մոլորութի[2], յուսացեալ ՚ի կախարդս գաղտնիս՝ թերեւս մարթասցէ դրժել դաւողական հնարիմացութեամբ զարքայն Սմբատ: Իսկ թագաւորն սակայն սուղ ինչ գունդ կազմեալ՝ սաստիկ տագնապաւ անկանէր ՚ի կողմանս ամրոցացն Տայոց, ՚ի կալուածս կուրապաղատին Ատրներսեհի սիրեցելոյն իւրոյ: Իսկ ոստիկանն իբրեւ ետես եթէ անհնար է արքայի դաւաճանիլ առ ՚ի նմանէ, և զի միանգամ և երկիցս և երիցս զփորձ առեալ էր, դար-

(1) Չորս օրէ. դարձուցանէ: (2) Մէ օրէ. մոլորութիւնն.

ձեալ ապա յայնց բարուց՝ թուեցուցանէր սակս բարեխորհրդութեան և սիրալիր գթոյ զգայն իւր առ այլս ։ Եւ ապա չուեալ գնայր 'ի Պոլին մայրաքաղաք , և անդ առ 'ի հաւատարմացուցանել ջանայր զամենենգ սիրոյ գգուշինս . և փոխանակ իւր թողեալ ընդ Պեւզաան զորդի իւր , և զմեծ ներքինապետն , և ինքն հալածեալ առեալ գնայ յԱտրպատական ։

Ընդ ապա յառաջ աճապարէր տիկինն մեծ՝ կինն Սահակայ եղբօր արքայի , զկնի իւր տարեալ ոսկի և արծաթ և կարասի բազում ։ Եւ հանդիպեալ 'ի Շարու դաշտի՝ առաջի ընծայէր արխառուր նմա զպատարագն տարեալս ընդ իւր . և ընդգծեալ առաջի իւր արտօսրաթոր կականմամբ խնդրէր զորդեակն իւր զՍմբատ , զոր պատանդ իսկ առեալ էր յառաջագոյն ոստիկանն յարքայէն Սմբատայ . և առաջի դնելով նորա զեղուկ աւաղումն այրութեան իւրոյ , յայտ ածէր զաղեկտուր խնամոյն . ընդ որ յաւէտ իմն ձըմլեալ սիրտ ոստիկանին , ողորմեալ բարեխնամէր . վասն զի բազում անգամ մարդիկ որք չարքն են , երբեմն և բարի բաստ դիպուածոյ լինին ։ Եւ առեալ ապա զպատարագն 'ի ձեռաց տիկնոջն , տայ նմա զորդի իւր . և նորա

առեալ զմեծապարգեւութիւնն՝ դառնայ 'ի տուն իւր ։

Իսկ արքայ Սմբատ 'ի դառնալն իւր 'ի Տայոց՝ երթայ հանդիպի ներքինապետին մեծի մերձ յամուրն Ոնի յեզր Ոխուրան գետոյ, 'ի պայման սիրոյ ընդ միմեանս բերեալք ։ Ընդ որ յաւէտ հաճեալ ներքինապետն 'ի տեսանել զարքայ, խոստովանէր ոչ զոք թերեւս համեմատ նմա տեսանել ։ Եւ ապա համախորհ եւ համակամ եւ համագործ յայնմ օրէ եւ անդր ներքինապետն արքայի լինէր ։ Եւ բազում պարգեւս եւ պատիւս ընկալեալ 'ի նմանէ, գնայր ներքինապետն 'ի Փայտակարան քաղաք ։ Իսկ որդի Ափշնի Դեւդատն եկաց մնաց 'ի Դւնին քաղաքի, ռոճիկս պատրաստեալ նմա թագաւորին Սմբատայ՝ սուղ ինչ պակաս քան զամ մի ։

Բայց 'ի գնալն ներքինապետին յարքայէ, զճանապարհայն 'ի հրապարակս ցոփութեան բերեալ 'ի բանից բանսարկութեանց ոմանց՝ որք 'ի չարն հակամիտեալք էին, չուէ զօրուծանու հրոսակ Դէորգեայ նահապետին Սեւորդեայ, որք ասին Սեւ կոչեցելոյ հաւուն իւրեանց՝ ազգն յայն անուն Սեւորդիք անուանէին ։ Եւ ապա յեղակարծումն ժամահասեալ 'ի վերայ տարմաբար, թէպէտ եւ

յարէ արանց քաջապէս պատերազմ ընդդէմ ներքինւոյն զինեալ, սակայն սակս յանկարծահասն գալոյ ոչ կարացեալ զդէմ ունել, ձերբակալ զՊետրոս առնէին հանդերձ եղբարբն իւրով՝ որ Ռուբէն անուանիւր. և առեալ գնաց 'ի Փայտակարան քաղաք: Բազում ապա հարցափորձ մօտալուտ դահիճքն դառնութեան նոցա մատուցանէին, ջանացեալք դարձուցանել զնոսա 'ի քրիստոսանուէր օրինացն . . . յօրէնս Մահմետին իւրեանց: Որում ոչ բնաւ տուեալ տեղի բանիցն, և ոչ հաւանեալ աղաւաղել կամ փոխանակել զերկնաւոր կենացն ըզփրկութիւն ընդ անգիւտ կորստեան և ընդ սնոտիաւէր կենացս, որով կատարեցան և զանուն իւրեանց գրեցին 'ի դպրութիւն կենաց:

Իսկ յետ այսորիկ ներքինապետն խուճապեալ և հատուածեալ յՌփշնէ, և ընդ իւր առեալ զՌշոտ որդի արքայի. որ էրն իսկ 'ի պատանդի և 'ի դիպահոջ առ ներքինւոյն, այլ և զկին եղբօր նորա Աշոտայ՝ զոր դերեալ տարեալ էր 'ի բերդէն Կարուց. փախչակի գայ հասանէ առ արքայ Սմբատ, և տա նմա զորդի իւր հանդերձ նուովն: Ընդ որ յաւէտ իմն խրախ լեալ սակս այցելութեա-

նըն Աստուծոյ և փրկութեան գերելոցն , պատուասիրապէս յինքն ածէր յանձանձէր զներքինապետն, մեծաւ շնորհակալութեամբ և առատ ձեռնածրիւք[1] և պատարագօք ընծայեալ զնա , յուղարկէ զնա 'ի կողմանս Ասորեստանի ։ Չուեալ գնացեալ ներքինւոյն 'ի սահմանս Եգիպտոսի , և անդ ըմբռնեալ սպանանի յամիրապետէն իւրմէ ։

Զայս ամենայն լուեալ սուլտանն Միչլն , իբրև զանգառապեղ գաղան զայրագնութեամբ մռմռեալ ընդդէմ Սմբատայ , իբր թէ զնա գոլ խրատատու և պատճառ գործեցեալ իւրն չարի 'ի ներքինւոյ իւրմէ , և մեծագոյն եւս ամպրոպ և ուղխ չարի 'ի վերայ խորխոտայր հասուցանել արքայի ։ Հրովարտակս ընդ բոլոր ոլորտս իշխանութե իւրոյ սփռեալ , զի առ նա փաղփաղակի հացեն արի արք , քաջք , երիվարօք զինուց և զարդուց , և լեզէոն հետեւակախումբ զօրօք ։ Արդ՝ մինչդեռ եկեալ դիմեալ հասեալ ժողովեալ գումարեալ էին բազմութիւն զօրացն , և հանդերձեալ էր ելանել չուել գալ , և զմղձկեալ սրտին դդառնութեան թոյնն յարքայն Թափել , յանկարծակի անկեալ յախտ դժնեայ ցաւոց՝ ջեռաւ փոր նորա ,

(1) Մէ օր · առատաձեռն ձրիւք ։

Եւ տրոփեալ գոգոց նորա՝ ՚ի վայր քամեալ մղէին յորովայնէ անտի կատարումն աղեաց նորա. և նախ քան զքակտել հոգւոյ նորա ՚ի մարմնոյն, բղխեաց ՚ի նմանէ հոտ մահու: Եւ այսպէս հեղձամղձուկ սատակեալ՝ էջ ՚ի դժոխս անհնարին դառնութեամբ: Ընդ-նմին ևս ՚ի զօրաց անտի նորա ՚ի նոյն ցա-ւըս դառնին տաղտկութեան հարեալք՝ բա-զումք սատակէին, և մնացեալքն ցանեալ ցրուէին յիւրաքանչիւր տեղիս: Եւ այսպէս ապա աղօթահայց պաղատանացն առ Աս-տուած՝ թագաւորին Սեբաստոյ և բովանդակ ընդ մեզ ևս կղերց եկեղեցւոյ Քրիստոսի արտօսրաթոր խնդրուածք (1) լսելի լինէր յա-կանջս Տեառն զօրութեանց. և ոչ եկն ՚ի վերայ մեր ոտն ամբարտաւանութեան նորա, և ոչ մեղկաշօշափ ձեռք նորա կարաց դողա-ցուցանել զմեզ, և ոչ ուրախ եղեւ ՚ի կեա-նս իւր խաւարատէր Թշնամին, այլ կորեաւ յունայնութեան յուսոյ. և հաւատացեալ հօտ Քրիստոսի համդերձ հօտապետօք ա-ռաջնորդեալք, զօրացան ՚ի նոյն ինքն ՚ի համ-դխադիկին Քրիստոս, որ կամի՝ զի ամենայն ոք (2) կեցցէ, և ՚ի գիտութիւն ճշմարտու

(1) Ամենայն օրէ. ուղէին՝ խնդրուածովք:
(2) Մի օրէ. ամենայն մարդ:

թեան եկեալ է ։ Իսկ Գուրգէն որդի Ապլճանի իբրև լուաւ զսատակումն հօր իւրոյ, ելեալ գիշերի գաղտագողի գնաց փախստեայ Վասպուրական աշխարհն ։

## ԳԼՈՒԽ ԼԸ.

Յաղագս Աշոտոյ և Հասանայ Արծրունեաց խռովութեանն, և մահուանն Աշոտոյ ։

Զայսու ժամանակաւ մեծ իշխանն Արծրունեաց Աշոտ, որ ՚ի բողբոջից բուսոյ Սենեքերիմայ արքայի, ելեալ գնայր շրջէր զկողմամբք իւրոյ տէրութեանն փոքր ինչ գնդաւ. և հասեալ ՚ի ձորակ մի զոր Փորակշամբայ (1) անուանեն, երեկօթս անդ առնէին յագարակի միում, յորում բնակէին Գաւառնացիք ընդ յարկաւ շինուածի տանցն մնեալ զետեղեալ սակս ձմերային ժամանակին ։ Իսկ Հասանն Արծրունի որդի Վասակայ ուրացելոյ զՔրիստոս, և հօրաքեռ որդի նոյն իշխանին Աշոտոյ, բնակութիւն կայանի իւրոյ ունէր զամրոցն անուանեալ Սեւան ։

(1) Ոմանք Փորակշմբոյ · այլք՝ Փորակշմբայ ։

Իսկ երբեւ բուռն զիշխանէն յայնմիկ ձո-րակի[1] գող յիջեւանս, դաւաճանեալ 'ի չար գիւղ անտի, եւ կամաւոր կուրութի յինքն կլեալ, զոր 'ի գաղտնիս իմն կազմէր, որ-կայս պատրաստէր, աղեղնաւորս չերաաւորս սուսերաւորս փախճանախառս[2] կարավիս, զէնս չարժեալ, եւ ինքն իսկ հուպ ընդ նոսին ար-բեխառուրեալ, եւ յեղակարծ դիմեալ չուեալ 'ի գիշերի հասանէին 'ի վերայ իշխանին. Ի-պարզայածեալ, պատեալ, շրջափակեալ, պա-շարեալ պահէին զդրունն տանցն՝ յորում օթագայացեալն լինէր իշխանն. Նշոտ ի-րայմքն, 'ի գիտահոյզ իմն զնոսա բերեալ, եւ 'ի ձեռս կարծեցեալ ըմբռնեալ. Իսկ այս Հասանն յեցեալ 'ի նիզակն զոր ունէր, եւ-կեցս երբեւ զայծեամն ընկեցեալ 'ի տանիսն՝ յորում իշխանն կայր, փախչէր՝ եւ 'ի արախ-կան գոմնանէ ասկցն Թողեալ տանիքն եւ 'ի վայր փլուզեալ հասեալ՝ անկանէր զինի վե-րուզմանն Հասանն 'ի տուն անդ. Իսկ այս 'ի հողադամփուռ ձոյնէ խոսիցն Հասանայ զնա ծանուցեալ, եւ վաղվաղակի ըմբռնեալ ածէին զնա իշխանին. Իսկ աղխատոյդ չե-փոխմանն իրագզած եղեալ զօրացն Հասա-նայ, երբեւ զծուխ 'ի միրկէ հալածեալ եւ

(1) Երեւ օրի. փորակի. (2) Մի օրի. փախճանակուռս.

փախստեայք անհետ կորնչէին ։ Եւ այսպէս զգուբն զոր փորեաց և պեղեաց Հասանն, ՚ի նոյն ընկլուզաւ՝ զոր և գործեաց ։

Իսկ իշխանն Աշոտ ՚ի շղթայս կապարանի զնա արկեալ, և առեալ տարեալ զնա յամրոցն Սեւան, ՚ի դուրս առ ինքն զամրոցն տալ հայցէր ։ Իսկ մայրն Հասանայ և եղբայր նորուն, որ առ ՚ի մօրէ և ոչ ՚ի հօրէ, բռնադատեալ ոչ կամեցան տալ զբերդն, ոչ կարացեալ փառաց լինել ՚ի խոստացեալ բանըս իշխանին վասն ողջանդամ զկապեալն Հասան թողլոյ ։ Նորա զգացուցեալ որդւոյ Սմբատայ՝ հարկ առնէր ինձ երթալ յամրոցն գործոյն, թերևս կարողութիւն լիցի փակել զկապանական դուռն՝ զոր անձամբ անձին երաց Հասան ։ Իսկ իմ երթեալ չուեալ և համոզեալ զտիկինն վասն զամրոցն տալոյ, և փրկելոյ զՀասան ՚ի մահու երկիւղէ, և ողջանդամ զնա լուծանել ՚ի կապարանէն ։ Ընկալայ ապա և յիշխանէն յետակար առաքիկ երդմանց, լուծանել թողուլ ողջանդամ և անվնաս զՀասան ։ Իսկ ես իբրև առեալ եառ զամրոցն ՚ի ձեռն իշխանին, ապա ՚ի նախրանկան չար խորհրդոց ազատաց անանց հրապուրեալ՝ փորէ զաչսն Հասանայ, կուրացուցեալ զնա ազխատարար ՚ի կորուստ ան֊

ձին խորշ, վասն զի որք երդմանց օրինաց և միջնորդաց հետևեալք և զխորափոխք զասմէին 'ի հակամիտութիւն հակառակայն բերեալ, այնպիսիքն մահու անձանց առիժ գտեալք, ոչ կարեն հաստատուն կեանս իւրեանց ստանալ: Իսկ իմ՝ զաւետարանական իշխանութիւն 'ի գործ արկեալ, և բանիւ սահմանականաւ կապեալ զիշխանն, տրտում՝ Թախծանօք (1) անցեալ գնացի:

Նոյս յետ ամի միոյ անցելոյ՝ ազատութիւն յանդգնութեան արկաւ իւրև. զօթոց զբարեփայելուչ և զպատկառող և բըչքնաղատեսակ զխօսկուն Նշոյս: Նոայսպէս զխախձան կենաց ընկալեալ 'ի սխս երիտասարդութեան՝ սաստիկ տուգ տրտմութեան զմեօք զեղեալ յարտաքսեր: Զկնի այս եղբայր նորուն Գագիկ պահապանէ զիշխանութիւնն զայն մեծ, և զկրտսեր եղբայր նորուն զՆուրգէն կացուցանէ մարզպան Հայոց արքայն Սմբատ:

(1) Երէց օրէ. Թախանձանօք տրտում գնացի:

## ԳԼՈՒԽ ԼԹ.

Յաղագս ոստիկանութեան Յուսփայ եղբօր Աֆշնի, և մահուան Շապհոյ և Դաւթի՝ եղբարց արքային Սմբատայ։

Բայց թագաւորն Սմբատ իբրև լուաւ՝ եթէ Յուսուփ (1) պայազատէ զտէրութիւնն (2) զայն վախճանեալ Աֆշնի եղբօր իւրոյ, եդ ՚ի մտի խորհուրդ ոչ ևս դարձեալ դաշանս կռել ՚ի խաղաղանել երկիւղէն, և կամ՝ դաշինս սիրոյ դնել ընդ այնմիկ՝ որոյ խոստմունք բարձեալ է յերեսաց նորա, և ընդ հեռացեալ բան արդար ՚ի բերանոյ նորա։ Այլ գրէ հրովարտակս և առաքէ դեսպանս և ընծայս գեղեցկայարմարս իսմայէլեան ամիրապետին ՚ի Բաբելոն, և հայցէ ՚ի նմանէ զինքն հատանել յազգէ յայնմանէ, որ խոստմունք Աստուծոյ տարամերժեալ արտաքսեալ է ՚ի նոցանէ, և ՚ի բարուց անտի որ ՚ի չարին միջի հակամէտ գտեալ։ Զոր իբրև ընթերցեալ զնամակն և լուեալ բերանացի պատգամաւորացն, փափագանօք խնդութեամբ զոր խնդրեացն կատարէր. և թե-

(1) Մի օր. Յովսեփ։

(2) Մի օր. զպետութիւնն։

Թեւաբեռն զսակն արքունի արարեալ, եւ յինքն իսկ հրաւիրեալ առ ինքն զփառս Թագաւորին կացուցանէր։ Եւ ապա երեւելի զգեստ արքունական, եւ Թագ արքայական, եւ կամար ականակապ 'ի համակ ոսկւոյ, եւ սուսեր պատուական, եւ երիվարս իբրեւ օդագնացս իմն՝ կազմուածով զինուց եւ զարդուց առաքէ Սմբատայ։ Զոր իբրեւ առընկալաւ՝ յոյժ ուրախ լեալ զուարթացեալ զուարճացաւ, եւ այնուհետեւ 'ի կարգս այլոց եւս հնազանդելոց եւ նա եւս մտանէր 'ի կարգուածս լծոյ ամիրապետին. եւ այսպէս անդադրապէս եւ անշուշտ 'ի կամս արքունականս զկամս իւր բերելով նուաճէր։

Զայսու ժամանակաւ մեծ սպարապետն Հայոց Շապուհ եղբայր արքային Սմբատայ՝ կիսակատար կենօք վճարեալ զնոտխասէր կեանսն՝ վախճանեցաւ, յաւելեալ առ հարս իւր։ Եւ անդ ապա չուեալ եկեալ արքայ Սմբատ համագունդ իւրայովք համազգեօք, եւ արարեալ կոծ մեծ 'ի վերայ նորա, եդին զնա ընդ հարս իւրում 'ի շիրիմս քնարանայն՝ որ 'ի քաղաքագեօղն Բագրանու։ Եւ ապա կացուցանէր արքայ Սմբատ զանձնադեղն եւ զպարեփայելուչ երիտասարդն զԱշոտ որդի Շապհոյ՝ սպարապետ Հայոց փոխանակ հօր

իւրոյ ։ Իսկ նա 'ի սկզբան ազատապետական պայազատութեանն զխորհուրդ բարեաց զանձամբ արկեալ, չինէ ապա զմեծնապայծառ եկեղեցին Նազարանու, որ 'ի վերայ Ախուրեան գետոյ՝ և զարդարէ բազում և երևելի ապատուք, և առնէ Նուակախս տառածայլին գոգցես պատշաճողութեամբ. Օծնի ապա հիմնադրէ եկեղեցի 'ի քաղաքագեօղն Կողբ՝ բազմածախս փարթամութեամբ, և առնալով ջանայր գտանել և զկատարումն նորա, թէ Տէր կամեսցի ։

Յետ սակաւ ժամանակի ապա վախճան կրէր 'ի կենացս այսոցիկ և միւս եւս եղբայրն արքայի Դաւիթ, որ էր իշխան իշխանաց Հայոց, այր համեստ և հարթ հաւատարութեամբ 'ի բոլոր գործառնութիւն բարեաց. ընդ որս յաւէտ իմն սպասեալ արքայի, և տագնապաւ տարակուսանաց մըխեալ 'ի խորս խաւարին սգոյ, 'ի մշտնջենաւոր ախրութիւնս զինքն արկեալ. ուստի և միխիթարական կարգօք հաստատեալ իմ զնա 'ի յայն կենաց անմահից, վերականգնեցի 'ի գլորմանէն յիւր գործոց թագաւորական յարդարմանց, հոգս տանել սխրաւակին կենցաղականացս՝ որ հաւատացաւ նմա Աստուծոյ խնամել զհօտ իւր ։

## ԳԼՈՒԽ Խ.

### Յաղագս դիմելոյ Յովսեփայ 'ի վերայ Սմբատայ, և խաղաղելոյ և միաբանելոյ ընդ միմեանս.

Բայց ոստիկանին Յուսփայ յաւէտ ևս չար թուեալ հատուածելն 'ի նմանէ թագաւորին Սմբատայ, և իմաստուն կորովութեամբ կշռեալ զգործ իւր, ջանահնար լինէր յինքն դարձեալ դարձուցանել, և միաբանորդ զնա առնել, որպէս երբեմն էր ընդ եղբօր նորա Աշոտի: Եւ վասն զի նախ յամիրապետէ անտի հայցեալ առ ինքն ընդ Սմբատ դարձուցանել, և ոչ եղեւ ունկնդրութիւն նմա, և ոչ եհաս երազայոյս կարծեացն, այնուհետեւ ապա 'ի կարգս խռովութեան մտեալ եւ թիկունս դարձուցեալ, զօր բազում գումարէ, և չու յուղի անկեալ գայր հասանէր 'ի Փայտակարան քաղաք, և անտի ելեալ վաղվաղակի ընդ Ուտի գաւառ՝ գայ մինչեւ ցՏաշրատափ:

Զայս իբրև լուէր արքայ, զօրաց բազմաց 'ի միասին հրաման տուեալ երթալ ունէր զկիրճս և զնեղուցս պողոտայիցն կողմանցն Աշոցայ և Տաշրայ, ոչ տալ նմա թոյլ հետի աղագաւ անցանել: Իսկ ապա զայն ան-

սեալ Յուսիփայ, գաղտաբար խնն զարեւմը-տեայ կողմամբ լերին պարառոցեալ՝ ընդ-ցածուն վայրս լերինն բարձանց անկանէր յայսկոյս 'ի գաւառն Շիրակայ. և անդ ե-րեկօթս արարեալ, փաղփաղակի ձեպեալ հասանէ 'ի Դվնին քաղաք: Իսկ արքայ իբր յապագայս խնն խմացեալ զչուելն Յուսիփայ ընդ արեւմտեայ կողմն լերինն, թէպէտ և հետամտէին զնի, սակայն ոչ ժամանեալ հասանել, գումարտակ չլինէր 'ի քաղաքա-գլուխն Սրուճ, 'ի ծործորս Արագած լե-րինն: Իսկ իբրև գիտաց սատիկանն Յուսուփ զմերձ առ նա լինելն արքայի. առաքէ զմի 'ի պատուականաց իւրոց անտի 'ի քարտու-ղարաց Մարի ազգէ՝ եւ դենիւ քրիստո-նեայ, յուէս խնն սիրալիր հեշտ և կամակ և հաճոյր պատգամօք. և բաղում պա-տուով էր նախախնամութեամբ դաշինս ուխտից ազդեալ 'ի սիրտ արքայի, և զամե-նայն փախս և զլառաղայս 'ի բաց 'ի խորհրդոց նորա տրոհեալ տարեալ, այլ և զսակն ար-քունի 'ի կամս անձին նորա բառ կարի և կամաց թողացուցեալ, միայն թէ ընդ նմա յուխտ խաղաղութեան միաբան հարթ հա-ւասար դարձցի. Նորա զայնպիսի բարի լուրս լուեալ բարեզգեաց բանի պատգամաց, և ա-

խարժեալ 'ի կամս իւր (1), արարեալ հրամեշտ բանից հեշտականաց՝ փոխարէն պատասխանի հատուցանէ քարտուղարին 'ի բոլոր արգասիս սիրոյ ընդ նմին սակի . ապա յետոյ երդմանց միմեանց կնքեալ տային ։

Իսկ արքայ դարձեալ չուէ գնայ 'ի գըլուխ գաղաթան Աշտախաձորոյ՝ 'ի գիւղն 'Նախճրաձոր , անդ ձմերեալ ։ Վասն զի ոստիկանին կամ՝ եղեւ զհիւսիսային դառնաշունչ ժամանակ ձմերային ցրտոյն 'ի Կլին անցուցանել ։ Եւ ապա յայնմ սառնասոյց յեղանակի գեղեցիկ իմն և բաղում առ միմեանս բերէին հարկ յարմարութիւն սիրոյ առատ ձեռաձրիւք ըստ պիտառութեան ձմերայնոյն ։ Իսկ անդ ապա թագաւորն Վրաց Ատրներսեհ ըստ (2) պատուատէր պայմանի և սրբնթաց ոտիւք արագեալ 'ի տես արքայի Սմբատայ՝ առ 'ի միասին տօնախմբել զօր մեծի պասեքի Զատկին , յուղարկեցաւ յարքայէ բազմաբաշխ և երևելի ընծայիւք ։ Իսկ արքայ Սմբատ չուէր գնայր յարքունական ապարանս իւր 'ի քաղաքագիւղն Երազգաւորս ։

Եւ իբրեւ 'ի բաց եղաւ ձմեռնային ձիւ-

(1) Մէ օրէ . 'ի կամանս իւր . . . պատասխանի մատուցանէ ։
(2) Յօրինուածն չէ ըստ . այլ յաւելուած ըստ մտաց ։

նախաղաղ (1) առանձնանեաց ցրտութիւնն, և գարնանային հարաւահողմն շնչեաց՝ զսեղին փախաբերեայ, ապա սափրանն Յուսուփ բազում երփնս սրանկարս սօսս և ահապարանդս պատրաստեալ՝ բազմազան պճնայարմար զարդուք և զինուք ոսկեանձ ոսկենկար պաճուճանօք, այլ և Թագ եւս յակուց ափերայ կազմեալ, և 'ի նմա յելուզեալ յեռեալ փառակալ մարգարտաւ ապազարդութիւ. և այլ եւս ականս պատուականս. և բազում և երևելի զգեստս արքունականս ոսկեճամուկս և շղաշաւեռն հրաշանկարս, միանգամայն առաքէ 'ի պատիւ մեծարանաց արքային Մեքաայ: Նայ և Նշոտի երիցու որդւոյ արքայի Նորանշան իւն պատիւ յարգարեալ՝ իբր օգտարարին իւն երիվար գեղեցիկ զարդուք և զինուք և պերճապաճոյճ երանգս զգեստուց, և կամար ականակապ ընդ մէջ ածեալ, և կացուցանէ զնա իշխան իշխանաց Հայոց: Նայց և ես եւս՝ որ զայս գրեցի, պատուեցայ պատուաւորաբար յաոփկանէն զգեստուք՝ ըստ օրինակի կարգիս. և ջորի պաճուճաբար ոսկէզօծ զարդուք առաջի մատուցանելով ինձ: Իսկ արքայի իբրախ լեալ 'ի բարեձիր պարգեւս նորա, և

(1) Մէ ձռ. ծիւնախաղաց:

ընկալեալ մեծաւ շնորհակալութեամբ, ոչ սակաւ ինչ քան թէ բազմամանաբար յիւրմէն եւս նմա ընծայէր բարեվայելուչ և չքնաղատես և երեւելի զարդս հանդերձանաց, և նկարակերտ կազմուածս բազմականաց կարմրութեամբ որդանց, և ըմպանս և նուագս. և կամաւ ՚ի համակ ոսկւոյ՝ գործ հանճարական ճարտարաց, յերանգս գունակ գունակ ապակւոյ, տուեալ եւս տասնապատիկ յաւելուածով՝ քան զխնդրանսն իւր ընկալեալն առ ՚ի նմանէն: Եւ այս յուղարկեալ Յուսուփ յարքայէ՝ գնաց ՚ի կողմանս Ատրպատականի:

Իսկ աշխարհիս Հայաստանեայց յաւուրսն յայնոսիկ այց արարեալ Տէրն, և պատապարեալ և յաջողեալ ՚ի բոլոր բարութիւնս. բնակեցան իւրաքանչիւրք ՚ի ժառանգութիւնս իւրեանց. և անփոխանեալ զերկիր՝ տնկեցին այգիս, և արմատացուցին բուրաստանս ձիթենեաց և պարտիզաց. հերկեցին հերկս արտորայս փշոց. և կթեցին պտուղս հարիւրաւորս. զեղան շտեմարանք ցորենոյ ՚ի ժամանակի լրութեան հնձոց. լցան գուբք գինւոյ ՚ի կութս այգեստանեայց. և լերինք պճնութիւն զգեցան, զի բազմացան ՚ի նմա արօտականք անդեայք ար-

ջառոց եւ հօտք ոչխարաց ։ Ո՞ւր գլխաւոր նախարարք մեր յապահովացեալք եւ հանգուցեալք ՚ի հինից ժամանակաց , չինէին եկեղեցիս վիմարգս հաստահեղոյս ձուլեալ կրով՝ ՚ի մենաստանս եւ յաւանս եւ յագարակս ։ Բայց առաւել եւս քան զյոլովս հոյակապանցն գերահի իշխանն Գրիգոր , եւ նորին եղբարք Սահակ եւ Վասակ , որք հայրենական սեփհականութեամբ տիրէին գաւառացն , որք շըրջապատեալ կան շուրջ զեզերբ ծովակին Գեղամայ ։ Ո՞ւր այսպէս վիճակ ցանկալի լի պըտղատածօղ արգասիք պարարտութք տահատարակ ամենեցուն տուաւ ձրի նորին շընորհօքն Աստուծոյ . եւ ի նորին (1) յարմար կաղմածոյ . ՚ի տանէ Տեառն բղխէր աղբիւր բարեաց ըստ մարգարէին , եւ ոռոգանէր զձորն վիճակաց ։ Ի վերայ այսոցիկ բարեբաստութեանց՝ թագաւորն Հոռոմոց Լեւոն ոչ ինչ սակաւ նախանձամէր զարքայ Սմբատ իբրեւ զորդի սիրելի , մտերմութեամբ ընդ նմա բերելով ուխտ միաբանական սիրոյ , եւ բազում ընծայս եւ պարգեւս եւ պատիւս ամ՝ յամէ առաքէր ։ Իսկ եւ Սմբատ ՚ի շնորհակալութիւն բարերարութեան արքային Հոռոմոց , առատաձիր պարգեւօք հատուցանէր

(1) Ոմանք . եւ նորին յարմար կաղմածոյ ՚ի տանէ ։

զգանձ փոխարկմանն տասնապատիկ յաւելուածով, իբրեւ վեհագունի քան զմիւսն և հօր հարազատի :

## ԳԼՈՒԽ ԽԱ.

Յաղագս պատերազմին Կոստանդնի Եգերացւոյ արքային և ըմբռնման նորին, և ազատութեան [illegible] ընդ Սմբատայ :

Յայսու ժամանակաւ թագաւորն Եգերացւոց Կոստանդին յայլանդակ բարս գժնեայս դաւաճանեալ, և ոչ ամբարձեալ զաչս յուղղութիւն՝ քան թէ ՚ի խորհուրդս չարութեան, զօրս գումարէ, խաղայ չուէ գնայ զհիւսիսային կողմամբք որ ՚ի ծործորակերպին Կովկասու, միանգամայն խել և յաշխարհն Գուգարացւոց, և որք մերձ ՚ի դրունս Ալանաց բնակեալք են՝ զի ընդ իւրեւ ձեռամբ զնոսա նուաճեսցէ : Եւ վասն զի ազգքն այնոքիկ հաւանեալք և հնազանդեալք և նուաճեալք էին ընդ ձեռամբ արքային Սմբատայ, գրէ ապա թագաւորն Վրաց Ատրներսեհ վաղ ընդ փոյթ առ թա-

գաւորն Եգերացւոց, վասն զի փեսայ նորա էր. ցրել 'ի բաց քակել և կործանել 'ի նմանէ զընդունայն և զապիրատ և զմնոտի խորհուրդն, և ոչ շամբուշ միոջ ընդ վեհոն քան զինքն հակառակել : Իսկ իբրեւ լսելիք խցան նորա, և բանից ունկնդրութիւն հեռացաւ, և ոչ բերաւ 'ի խորհուրդս իմաստութեան, ապա արքայ Սմբատ զօրու բազմի գուութ իմն 'ի միասին առեալ, և ընդ իւր եւս առեալ զթագաւորն Վրաց, գնացին 'ի միասին հրասակ ընդ առաջ Կոստանդնի : Նա իբրեւ ետես թէ ոչ կարէ ընդդէմ նոցա կալ, ընդ կրունկն յածից փոքր ինչ դարձեալ ուղխանոյ՝ հայցեալ 'ի նմանէ զհաշտութիւն : Իսկ արքայ զաներ նորա Եորմներունեհ և զկանայս եւս յիւրոց նախարարաց առաքէ խօսել ընդ նմա 'ի խաղաղութիւն. որք իբրեւ 'ի հանդէպ(1) միմեանց բերան, և դեգերեցան 'ի բանս ինչ. յանկարծակի բառ հրամանի Եորմներունեհի նախարարք արքային ձերբակալ արարեալ զթագաւորն Եգերացւոց՝ ածեն առաջի իբրեւ զուլ մի յայծեաց, զայն՝ որ իբրեւ զառիւծ 'ի մարտս իւրմէ ելեալ, փափաքէր վանել վարատել զայգս : Իսկ արքային Սմբատայ բա-

(1) Եղիշ. գր. հանդէպ :

զում՛ ամրոցս յինքն դրաւեալ ՚ի Վուրի աշխարհի, և կուսակալս կողմանց այնոցիկ կացուցեալ, առեալ զեգերացին Կոստանդին ընդ իւր անդ, ՚ի դխպահօչ կացուցեալ յամուրն Ճնի երկաթի շղթայիւք. սակայն ոչ քամահանօք ինչ, այլ կրկին պատուով առատացուցեալ նմա զամենայն հանդերձանս, և ռոճիկս պիտոյից ըստ անդաստին բարեբարոյ մտաց իւրոց։ Նա այնպէս ապա ամիսս չորս միայն զնա պահէր յարգելանի բանտին։

Իսկ իբրև ետես զերկպառակութիւն Եգերացւոցն, որք չէշտակի ճեղքեալ, և թէ հանդերձեալ են զայլ ումն բռնաւորագոյն քան զԿոստանդին կացուցանել իրեանց թագաւոր, ստուգապէս իմացմամբ ոչինչ զանգիտէր փութանակի զնա արձակել, և հաստատել ՚ի կարգս առաջնոյ տէրութեան իւրոյ։ Մի՛ վասն զի փեսայացեալ էր նա թագաւորին Վրաց, իբր ՚ի շնորհակալուս զայս նմա առնէր. և երկրորդ՝ զի թերևս իբրև զձեռնասուն իւր, յայնմ հետէ նա գտցի ՚ի սակի հնազանդութեան՝ յազագս առ նա անցուցանելոյ զբազում երախտեացն տեսակս։ Նա ապա զգեստաւորէ զնա թագաւորական զգեստու, և դնէ խոյր ոսկի ընդելուզեալ մարգարտով ՚ի գլուխ նորա, և

ականակուռ ոսկի կամար ածէ ընդ մէջ նորա։ Եւ այլ ինն փայելուչ կազմուածս ըստ ուղեւորութեան պիտոյից նմա յարդարէր, և զօր ՚ի ձեռս նորա գումարեալ՝ առաքէ զնա յաշխարհ տէրութեան իւրոյ։ Եւ երբեւ չոգաւ հաստատեցաւ, և միապետեաց զիւր սեպհական տէրութիւնն, ՚ի բազում հնազանդութի և մտերմական ծառայութիւն համախոհութե զինքն արքային Սմբատայ բերէր՝ սակս հայրաքուն նախախնամութեան նորա առ նա, հեշտ և բաղձալի զայն իւր փարկեալ։

Բայց Թագաւորն Վրաց յաւէտ իմն ըղչարեալ վասն որ՝ակմանն Կոստանդնի, իբր ՚ի պատճառս հակառակութեան կամ մարտից և թշնամութեան (1) զայն գործեալ, և յանմահեալ և անդր աննախանձ (2) պարգեւատուքն իւրում Սմբատայ ՚ի դրդռութի մարտկաց լինէր, թէպէտ և ոչ յայտնի։ Իսկ Սմբատայ զարմացեալ ընդ թերի խորհուրդըս նորա, ոչ ՚ի բանի ունէր զնորայն կառավարութիւն կամաց որ ՚ի չարն, այլ միշտ զինքն յաղթանակէր ՚ի սէր նորա, վասն զի ոչ բերիւր յիմաստս նորա խռովանէր միտք։

(1) Ի միում օրի. Նիւ կամ մարտից և թշնամութեան։

(2) Երկու օրի. Նա նախանձ։ Մէ օրի. նախանձ, էզոտ ըստ քննութիւն.

## ԳԼՈՒԽ ԽԲ.

Յաղագս չարութեան Հասանայ և Արծրունեաց ընդդէմ Սմբատայ որդւոյն՝ առ ՚ի սպանանել զնա ։

Իսկ ոստիկանն Յուսուփ զայսու ժամանակաւ յապստամբութիւն զինքն զինեալ ընդդէմ ամիրապետին մեծի. ոչ սակաւ ինչ գործէր նախճիրս ընդդէմ նորա, ՚ի բաց լքեալ և ընկեցեալ և ՚ի կոխումն գոեհաց տուեալ զհրաման արքունի ։ Որում իրազգաց իսկ ամիրապետին գտեալ, փաղփաղակի հրովարտակս և գեսպանս յղէ ընդ բոլոր ծագս երկրի իւրոյ տէրութեանն, և վրէժխնդրութիւն յարուցանել Յուսուփայ անիրաւ ապստամբին ։ Ըստ սմին այսմ սակի ապա և առ արքայ Սմբատ յղէ զոմն պատուական քարտուղար իւր անշուշտ հրովարտակաւ, զի և նա եւս միջամուխ լիցի զօրու բազմաւ երթալ ՚ի վրէժխնդրութիւն Յուսուփայ, և խոստացեալ եւս թողուլ նմա զամի միոյ զհարկն արքունի ։ Իսկ թագաւորն թէպէտ և յաւէտ դժկամակ այսմիկ գոլով վաոյն դաշանց սիրոյն՝ որ ընդ Յուսուփայ եդեալ էր, սակայն ոչ կարացեալ մերժել լքանել ՚ի բաց զարքունական հրամանն, ակամայ առ

ածխանէ քարտուղարի, զօր գումարէ, գունդ կազմէ, 'ի զէնս և 'ի զարդս պատրաստէ զամենեսեան, առաւել զինքն քան զյոգունս ցուցեալ 'ի վրէժխնդրութիւն ապստամբին. և արս իբրև հազար մի՝ որպէս թէ թուեցուցանէր կարապետ առաջի իւր առաքեալ ընդ կողմն Վասպուրականի ընդ այն չուելոյ։

Եւ իբրև գնայր 'ի նմանէ քարտուղարըն, ապա արքայ հրովարտակ 'ի ծածուկ առաքէ ոստիկանին Յուսփայ, իբր թէ 'ի թիկունս օգնականութեան նմա զայն զօր գումարեալ, և ոչ 'ի պատճառս թշնամութեան ինչ ընդ նմա բերեալ։ Իսկ ոստիկանն թէպէտ և յընթեռնուլն զհրովարտակն անսայր բանիցն, սակայն 'ի սադրելոյ սպրդող չար լեզուաց՝ հակամէտ 'ի չարն բերէր. և դարձեալ իբրև յամուր ուջս 'ի չար խորհուրդս իւր բունեալ հին վիշապն, խնդրէր ժամ դիպող թափել զթոյնս յարքայն և 'ի նուաճեալս նորա. տապալել, քանդել, հըրդեհել, ճարակ սրոյ զամենեսեան տալ։ Բայց ոչ կամեցեալ յայտնել առ ժամայն զչարութիւնն, գրէ պատասխանի նամակին՝ որ 'ի վերայ ունէր զաւետիս կենաց, և 'ի ներքոյ զդառնութիւն մահու։ Յետ այսորիկ ապա հաւանական միտս Յուսփայ իւր ստացեալ.

և 'ի հարթայարմար հնազանդութիւն ամե-քապետին բերելով, զպետութիւն կալուածոյ նորա դարձեալ առ նա նուաճել տային։ Եւ այնուհետեւ ապա յերկոցունց կողմանց՝ յամբարտաւանէ անտի և Յունաց սահմանէն բան պատրաստ առ արքայս տասնանայր կրկին ուժգնապէս հայցեալ տալ ընսակն արքունի, այլ և զամուր ընդ ծառայութեանն ծանրաբեռն գրեալ։

Իսկ Ալեքսիոս, վասն զի բռնաւորութեանն դդէմ չկարէր ունել, և զնծիրս միաոյն առ 'ի նորանէն առձեռն պատրաստ ունեսանէր, եւ 'ի մի դնէ՝ զի թէ զկոյ ամի զանկն ընդ բաւականացի, և զամենայն չորութեանն առ ժամայն աւանդս տրահեալ, զատագայն ապա այցելութիւնն Նաւծոյ հոգացի ըստ նախախնամող զօրութեանն իւրոյ։ Եւ ապա ընդ բոլոր աշխարհս աներութեանն իւրոյ հինգերորդել հրամայէ զամենայն երամակս ձիոց, և զանդեայս արջառոց, և զհօտս ոչխարաց, և տալ 'ի զբաղատ սուզանս ամկին. 'ի միոս իւր զայս միայն զետեղեալ բերեալ, զի թէ միայն յաղթութեան խաղաղութիւն գտցի, չարիքն դիւրաւ զայրուստ անձանց մարթի վճարել։ Իսկ եթէ 'ի բաց տարեալ տրահի խաղաղու-

թիւնն, և ոչ ՚ի հինգն ևս միանգամայն զտեղի առեալ պիտառոցի ինչ կցորդութիւն կենաց մարդկան. և զայս ապա արարեալ, զվճար առնոյր այնմ ամին սակ: Իսկ այսոքիկ ապա յաչս նախարարացն արքայի յաւէտ իմն ծանր համարեալ թուէր, զանգիտացեալ ողխաբար զառ ՚ի յարպայն՝ որ գալոցն էր ձաղանս և ձաղկանս:

Այս ոմն ՚ի պատուական նախարարաց անտի՝ Համան անուն, որ իշխան և հրամանատար էր բոլոր տէրութեանն արքայի, և չէր ոք բնաւ որ ընդ ձեռն (1) նորա իշխէր երանել, այլ և ինքն իսկ թագաւորն միշտ բանի բերանոյ նորա անսայր լսել. սա ապա զՄ.քիտափայն կրելով կկոս չարի, և զձախող և զանազգակ իրաց բուռն հարեալ, զապանաւթեան խորհուրդ խորհէր արքայի. և չար անզգայեա ՚ի մէջ արկեալ՝ քակէր յարքայէ զոմանս, և յայլոց ևս նախարարայն Վանանդացեաց և Հաւունեաց զհամադգիս իւր զգլխաւորս՝ ի բրեւ առ հնդեստասան: Այլ յիւր կորստեան կեղծաւորութեն բերեալ բանս ծանուկս ընդ թագաւորին Վրաց, համառօտէին սպանանել զՍմբատ, և փոխանակ նորա զնա կացուցանել հրամա-

(1) [illegible]

նստար Հայաստանեայցս , միայն թէ ընդ նոսա 'ի գործ չարի մասանցն բերցի ։ Իսկ նորա 'ի նոյանէ փաղփաղակի հրապուրեալ, այնուհետեւ համագունդ միջամուխ լինէին 'ի բանս ապստամբութեան արքային ։ Նա ապա զոմն Հունունի՝ զմներ Հասանոյ, որ միաբանեալ էր 'ի չար խորհուրդս նոցա , քաջալերեալ յուղարկէին 'ի սպանումն արքային , և զայլ եւս համախորհուրդս ընդ նմա միաբանեալս . որք երթեալ չուեալ 'ի պատճառըս ծառայութեան արքային , և իբրեւ ընդ գրուանաւ զխաւարային խորհուրդս ծածկեալ՝ խնդրէին ժամ դիպող ։

Իսկ Թագաւորն Վրաց , և երկրորդն Աքիտոփէլ Հասանն , և այլ եւս միաբանեալքն ընդ նոսա իբրեւ հասին յայն օր պայմանի՝ զոր վասն խողխողմանն արքային եդեալ էին ընդ Հունունեայն զոր առաքեցինն , և կարծէին կարել կարկատել ինչ զղրաւ սպանմանն, առ մղձկեալ սրտիցն ոչ ժուժեալք՝ շտապով տագնապաւ ելանէին զօրու բազմաւ 'ի կողմանս գաւառին Շիրակայ ։ Նա իսկ և իսկ ապա Հասանն տայր զամրոցն Անւոյ 'ի ձեռն Ատրներսեհի , և ինքեանք արձանացեալք դադարէին յարքունական ապարանսն Երազգաւորից , վասն զի արքայ Սմբատ էր 'ի

սահմանս Տաճկաց ։ Ընդ այս յոմանց արքայի լինէր վասն գործեցեալ դաւաճանութեանն մի ըստ միոջէ, և վասն Սորնեբանձի և Հասանայ և նորին համախոհացն, որք առձեռն պատրաստ եկեալ հասեալ որջացեալք էին Ալչրաղգաւորս ։ Իսկ իբրև իրքն սառգապէս յայտ եկին, փաղփաղակի սուսերով հինի ձեպով հասանէ 'ի Շիրակ գաւառ. այս Սորնեբանձ և Հասանն տեսեալ՝ եթէ խորհուրդ սպանմանն ոչ ել՝ 'ի գլուխ, ահ երկիւղի զնոսա պատեալ պաշարեալ էր. ստէպ ստէպ այս յաւարի առեալ զօրս 'ի ձեռն ըմբռնեցաւ, այլ և զկարասի բաղում որ եդեալ պահիւր յամրոցին Անի, փախուցեալ յամուրսն Տայոց չուեալ անդ անկանէին ։

Իսկ իբրև գոյժ աղմկի աղաղակին ընդոլորտս տէրութեանն արքայի սփռիւր, ամենայն պատերազմող մարտիկ զօրք անցեալք 'ի հանդիսի, զմի սիրտ առհասարակ յինքեանս բերէին և զմի զինուորութիւն զինուորէին, և զմի զրահ ճշմարտութեան ագանէին, և միագունեալ քաջագունի պընդէին զմէջս. և զմահս իւրեանց իբրև զանշուշտ կեանս 'ի վերայ վրէժխնդրութեան թագաւորին համարէին ։ Ուր այսպէս այս

համագունդ հասեալ ժողովեալ առ Թագաւորն, չուէ գնայ 'ի դիմի հարկանել ոսոխին չարի, և այլոցն եւս ապստամբ դառնացողաց: Որ իբրեւ հասանէին յաշխարհս տէրութեան Մորներուհի, ամենայն այր առանձին գրեթէ ըստ Դաւթի զինքն զինեալ 'ի նահատակութիւն, ոչ 'ի պատրաստել զզէնն միայն զըրուրն մանեղէն, այլ բազում ապամբք պատերազմողք արեան ծապաղխ հեղուլին. որոց ոչ տուեալ թոյլ արքային, թէ անձն որ մեղիցէ՝ նոյն և կորիցէ, 'ի բաց տարեալ արոհէր զսուրն յարանց անմեղաց. և միայն զպարտաւորսն 'ի ձեռն տալ հայցէր: Այս Մորներուհ իւրովի իսկ զհրամայրս չարիմացութեանն խոստովանեալ՝ զթողութիւն յարքայէ հայցէր: Իսկ հեզահամբոյրն ցածուն մոօք ընկալեալ՝ զհաշտութի՛ նմա ընձեռէր, և զերէց որդի նորա 'ի պայման պատանդի առեալ ընդ իւր ածէ, և ըղձղմող զնախարարսն զիւր առհասարակ 'ի նմանէ 'ի ձեռն առեալ, և զամենեցուն աչսն խաւարեցուցեալ կուրութեամբ, առաքէ ապա և զոմանս առ արքայն Հոռոմոց, եւ զոմանս առ Թագաւորն Եգերացւոց: Եւ այսպէս աստուածական իմն փոգցես տեսչութք հաստատէ կրկին զԹագաւորու՛ իւր:

## ԳԼՈՒԽ ԽԳ.

Յաղագս հաստատուն թագաւորելոյն Գագկայ Արծրունւոյ, որ եղեւ պատճառ խաղաղութեան մեծի.

Զայսու ժամանակաւ գլխաւոր և գահերէց իշխանն Գագիկ Արծրունի աշխարհահայց յորդւոյն Սմբատայ լեալ, առ ինքն զքաղաքն Նախջուան խոկայր դարձուցանել. իբր թէ ի հաւու և ի հօրէ նոցունց իւր տան և ազգի պատշաճեալ և նուաճեալ ունէր զնա, և զիշխութիւն իւր զօրացուցանէր քաղաքին առ յիւրմէ վարկանէր: Իսկ արքայ՝ վասն զի յառաջագոյն տուեալ էր ձեռս պարգևաց Սմբատայ իշխանին Սիւնեաց, որ արտաքս բերէր միշտ զձեռն յինքնութիւնակից հպատակութենէ, և մեծարժական ծառայութեամբ կատարէր ըզբոլոր սպասաւորութիւն նորա, ոչ կամեցաւ զձեռնագիրն իւր ի ձեռաց իշխանին յափշտակել, և ոչ զընծայեալսն նմա մեծարանս՝ յանարգանս արհամարհանաց դարձուցանել: Ընդ որ յաւէտ իմն իշխանին Գագկայ դժգմեալ դրժողութեամբ չարահաւակ (1) առ արքայ լինէր. և այս բա-

(1) Մէ օրէ. չարահաւան:

զում նուէրս ընծայից եւ պատարագաց պատրաստեալ. չուէր գնայր առ ոստիկանն Յուսուփ ի Պարս. եւ առաջի մատուցեալ զխորհրդականն իւր ընծայս, զզրկանաց ամբաստանութեան իւրոյ բան բարձրաբարբառ զօրացուցանէր զարքայէ: Իսկ նորա ախորժաբար ընկալեալ. տայ նմա թագ արքայական եւ պատիւս եւ պարգեւս արքունականս, ի քակտումն միաբանութեան նոցա զայն հնարեալ գործել, զի դիւրագաւ (1) լիցին այնուհետեւ երկոքանչիւրքն առ ի նըմանէ դրժելոյ: Սակայն ի ծածուկ իմն ըստ սողնոց ապրդեալ իբր ի ծերպս վիմաց, ոչ բերէր առ ժամայն ի կգայութիւն զգործեցեալ խորակութիւնն. բայց իբրեւ եկն թագաւորեալ իշխանն Գագիկ յաշխարհ իւրոյ տէրութեանն, ոչ սակաւ չխոթ տրտմութեան առհասարակ զամենեքումբք զեղոյր. վասն զի խրադդացք լինէին խաւարաւէր խորհրդոց ոստիկանին, որ զկորստական դուռն բանալ հանդերձեալ էր, զոր ոչ այլ ումեք՝ բայց թէ Աստուծոյ գոյր կարողութիւն փակել (2) զնա: Սակայն արքայ ծննդագործեալ ի միտս իւր բարեաւն յաղթել չարին, ոչ կասեցուցանէր հատանել նմա ըն-

(1) Մի օրի. դիւրաւ լիցին. (2) Երկու օրի. փրկել զնա.

սակ սովորական ծառայութեանն , մինչեւ սպառսպուռ մերկացաւ չարութիւն նորա ։

Իսկ արդ՝ իբրեւ բացաւ պատուակն , զեկուցաւ մեզ մամուռն եւ սպառնութիւն վայրագն գազանի Հագարացւոյն , ըստ բարոյականն (1) կամեցողի արքային Սմբատայ , եւ այլոց եւս նախարարացն սադրելոց , դէմ եդեալ ես տարադէմ գնացի 'ի Պարսս Նորպատմականին առ ոստիկանն դառնացող , ընծայիւք եւ պատարագօք բազմօք յարքունի թանգարանաց , երեւելի ոսկեճամուկ ըզգեստիւք , եւ 'ի նկարակերպ կամանց ոստայնանկութեանց բազում բազմակամս կազմեալ , եւ բազում ձիս եւ ջորիս 'ի զարդս եւ 'ի զէնս յարդարեալ , այլ եւ գանձս ոսկւոյ եւ արծաթոյ ։ Ոչ միայն զայսոսիկ , այլ եւ 'ի տանէ որբարանաց մերոց ըստ ձեռքն բաւականի՝ ընդ իս առեալ տանէի նմա 'ի նպաստ օժտութեան , զի թերեւս նախ քան զըղխումն թունից նորա եւ զխառատումն քարանց եկեղեցւոյ սրբոյ եւ զկորստական գերչութի ժողովրդոց Քրիստոսի , մարթասցի հեռի աղագս ինչ խաղաղութեան առ 'ի նմանէ գտանել , զի մի սպառսպուռ մայր Սիոն ըստ նմանութեան մօր անզաւակացի յորդւոց

(1) Ոմանք , ընդ բարոյականի ։

խորոց։ Նա թէպէտ և ՚ի սկզբան բարով ի-
մին ընկալեալ, և արքունական պատուով և
պաշտամամբ բուսուցանիւ առ ՚ի նմանէ պա-
տուեցաւ, և յանձն եւս առեալ ամենայն ի-
րօք զհաշտութիւն աշխարհի շնորհել, և ար-
քային զխաղաղութեան կեանս, սակայն կար-
ծեմ ՚ի սաստկելոյ նմա ՚ի մերոց ատոկ՝ պատ-
ճառս առեալ զընդունայնակաց հպարտու-
թիւն ապիրատութեան, ոչ թերեւս բառ
յառաջակաց բանիցն զհորհուրդն հարթու-
թեամբ հաստատէր։ Նա այնուհետեւ մա-
հացու խարդախութեամբ վառեալ իւր
բռնէր զնա, և ՚ի դիպահող բերեալ ՚ի խա-
ւարչային անդունդ, և չարչարեալ բազում
պահնակօք, և դատապարտեա ազգականն զնա պա-
շարեալ՝ յարուց իւրն կապուցանէր։

Նոյն՝ մինչդեռ այսպէս չարմեցեալ գայր
՚ի մերոց իմ ընդունայնակաց հպարտութիւն
ատոկանին, յանկարծակի զօրէն իմն օդա-
պարիկ թռչնոց գայր հասանէր առ նա մարդ-
կանէն Հայոց Դուրդէն՝ եղբայր թագաւո-
րեցելոյն Դադկայ, անխորհ և անկիրթ մի-
տօք հանդէպ պատկանին վասն յաշխարհս
մեր գալոց և երանելոյ. և ապա կարկութ
կցուեալ զերկրպագութիւն իւր նմա, և մա-
տուցեալ զընծայսն առաջի նորա, և ՚ի նմա-

նէն ընկալեալ զպարտսն պատուին պայմանի դառնայ անդրէն՝ հրաւիրակ յոստիկանէն առաքեալ եղբօրն իւրում գալ առ նա ։ Իսկ յետ ամսոյ մինչ ապա գայ հասանէ Թագաւորն Գագիկ ըստ խոստման բանիցն և ըզ-գործն կատարեալ, և ըստ վարժից իմն և հրահանգաց կրթութեան զպարտս մտերմական սակին վճարեալ, և ՚ի լիապատար Թանգարանաց իմն նմա ընծայաբերեալ, ամենայն պատգամք բանի խորհրդոց նոցա առ իւեարս այս և եթ գտանէր, հորդել յարդարել զչու ճանապարհին ՚ի Հայս, և առհասարակ զկրերաց զկէժ խնդրել յարքայէն Սմբատայ ։ Ոչ իմացեալ եթէ հուր հրդեհեալ յոր կողմ և կարէ զնիւթ լուցկեաց գըտանել՝ անաչառապէս ճարակի յայրել և յապականել. և ապա կրկին Թագիւ առ ՚ի նմանէ պսակեալ, և այլ ևս պատուասիրութիւ մեծարեալ դառնայ՝ հանդերձեալ զկնքն ՚ի կարապետութիւն գալստեան ոստիկանին ՚ի Հայս ։ Բայց ես ակնակառոյց իմն ՚ի գալուստ Թագաւորին Գագկայ լինէի, զի Թերևս ՚ի սադրելոյ նորա լուծումն ինձ ՚ի կապարանէն լինիցի, որպէս և քրիստոնէական պարտն պահանջէ ․ այլ ակնկալութեան ոչ հանդիպեալ ․ այլ ևս չարաչար ըստ մեղաց իմոց կապեցայ ։

Իսկ իբրեւ գարնանային հարաւահողմ զձմերայնոյն ժամանակի ցրտութեանն 'ի բաց մերկանայր, ապա ոստիկանն գումարեալ զօրու բազմի կազմեալ, չուեալ խաղայ գայ հասանէ յաշխարհս մեր անհաշտ խռովութեամբ սրտին մռմռեալ, զկնի իւր և զիս կապանօք տանելով ։ Եւ ապա դիմեալ հասեալ 'ի Նախջաւան քաղաք, և անդ աւուրս ինչ զետեղեալ, մինչեւ կարապետքն հրաւիրեալք՝ Գադիկ և Գուրգէն գային հասանէին, և գունդք գունդք լինէին ։ Ապա զօրէն իմն հրասակաց դիմէ ելանէ նախ զկողմամբք Սիւնեաց աշխարհին ։ Իսկ դահերէց գլխաւոր իշխանն Սիւնեաց համազուն եղբարքն իւրով և համագունդ զօրօք աճապարեալ ունէին զանցս մտիցն, և զկիրճս ճանապարհացն արիական քաջութեամբ ըստ հոյակապ անուանակիր հռչակութեանն. զէն 'ի վեր առեալ, առնազէն վառեալ, և զբազումս թաւալգլոր խաղացուցանէին ։ Բայց վասն զի այցելութիւնն Աստուծոյ անտես արար զնոսա, ոչ զօրեցին զօրաւոր կատաղութեանցն թշնամեաց հերքել զնոսա, այլ փախուցեալ յամուրս քարանձաւաց և 'ի ծործորս լերանց բարձանց անկանէին ։ Իսկ անօրէնն ընդ կրունկն 'ի նոցանէ դարձեալ, զօ-

ըլս միանգամ (1) գտանէր յաշխարհէն փախըստէից տեռաշերծեալ և մնացեալ յեակոյս, զոմանս ճարակ սրոյ տային, և զայլս ոմանս 'ի գերութիւն վարանդեալ։ Եւ այս լինէր յաւուրս տօնի մեծի պասեքի Զատկաց, և յերեքհարիւրորդի յիսներորդի ութերորդի շրջագայութեան թորգոմեանս համարոյ։

Իսկ սոսիկանն իբրեւ աւուրս երկոտասան անդր երեկօթս արարեալ, անցեալ գնայր զարեւելից հիւսիսով 'ի մայրաքաղաքն Դւին։ Եւ անդ ապա զեօղ առեալ յեզր գետոյն Երասխայ. փայփաղակի գայր հասանէր առ նա տէրն Սիւնեաց Սուփան, անձնատուր լինելով 'ի սպասաւորութիւն սոսիկանին։ Ընդ որ յաւէտ իմն սխրացեալ, եւս քան զեւս զօրանայր 'ի գրգռութիւն չարութեան ընդ արքայի։ Եւ ապա 'ի խաբէութիւն մտաց զինքն զինեալ, առաքէ առ արքայ Սմբատ, զի թէ բոլորապէս զաւակ ամին հատուցէ նմա, զխաղաղութեան պայման անշուշտ նմա պարգեւեալ՝ անցեալ գնասցէ։ Իսկ նա թէպէտ և գիտէր ոչ ուրախ լինել 'ի բանս պատգամաց խաւարասէր թշնամւոյն, սակայն 'ի մեղադրութենէ ա-

(1) Եղեւ օրէ · միանգամայն ։

տուածայնոց և մարդկայնոցս արտաքս զեն-
քըն ոլցեալ (1), տայր փաղփաղակն զմնդլոյն՝
իբրեւ կշեռս փայթուռն հազար դարհեկանաց.
զոր իբրեւ առընկալաւ, խել և խել զհետ
երթեալ ձեպէր Սմբատայ մինչեւ յաշխարհ
Վրաց տարեալ մղեալ հանեալ զնա, մինչև
անկանէր մերձ յանմատչելի ամուրսն Կղար-
ջաց: Իսկ զիս արգելեալ ՚ի քաղաքն Դվին
՚ի մեւտաղս բանտից և երկաթի կապապա-
նաց (2), կրեցի այնուհետեւ ՚ի դահճաց ան-
տի մահահոտ իմն բուռնոք գանս և բան-
տըս և գելարանս և արգելարանս ՚ի խաւար-
չուտին տեղւոջ և յանձուկ վայրս. այլև ՚ի
վիրապս և ՚ի վիհս խորոց ընկեցայ սաստիկ
և դառն կտտանօք: Եւ պահապանացն սաս-
տիկ աղաղակն և ձուչն դատափետ՝ միշտ ոչ
հեռացեալ հատանէր ՚ի լսելեաց իմոց յերե-
կոյէ մինչեւ ցառաւօտն, և սակս այնորիկ
բարձեալ էր յինէն նինջ արտեւանաց և
հանգիստ լերանաց իմոց:

(1) Մի օրէ. ոլոցեալ:
(2) Երկու օրէ. կապանաց:

## ԳԼՈՒԽ ԽԴ.

Յաղագս անձնատուր լինելոյ Յուսփայ Աշոտի սպա-րապետի, և ազատութեան Յովհաննու կաթողիկոսի:

Այլ ոստիկանն Յուսուփ 'ի բոլոր ե-ղանակս ամբարշտոյն լրբեալ զանգատագեղ առիւծ մռմռեալ, և յորս զենուլ Սմբատայ պատրաստեալ, այնպէս 'ի բազում աւուրս դեգերէր: Սակայն ոչ կարացեալ առնանել ինչ նմա յայնմ՝ նուագի, սակս 'ի լերինս բարձունս ամրանալոյն և 'ի խորափիտ ձորս և յամուրս քարանձաւաց, ապա չու եդ գայ դարձեալ 'ի Դուին քաղաք: Անդ ապա ընդ առաջ եկեալ հասեալ լինէր նմա չքնաղա-գեղ և առատամիտ և առատաձեռն 'ի պար-գեւս բազմաց սպարապետն Հայոց Աշոտ՝ եղբօր որդի արքային Սմբատայ, ինքնակամ դիմագրաւ երթեալ հասեալ անձնատուր լեալ, և 'ի հնազանդութիւն Հագարացւոյն մտեալ. Թերևս զմտաւ ածեալ նորա զխար-թամաշնորհն Յուսուփ (1), զի գուցէ թէ և նա ևս լուր նորուն սակս գոյցէ շնորհս ա-ռաջի երկրորդն փառաւորի, և նոյնաքար դարձուցանել բանեցէ 'ի բարիս զբարս ա-

(1) Զորս օրէ. Յովսէփ:

ոփկանին չարի՝ ընդ այլս գրոհի տան իւրոյ. կամ թէ ըստ անրջնիցն տեսութեան՝ թերևս ստացի ձեռն բաւական շտեմարանել զխորհրդական ցորեանն ընդդէմ սատակացեալ սովոյն՝ առ 'ի յապրուստ կենցաղական կարգաց նորա Իսրայէլի, 'ի տոհմական կորստենէ անտի որ հանդերձեալն էր լինել։ Այլ իբրև ետես զ✝ագարացին զայն Փարաւոն՝ որ ոչ գիտէր զՅովսէփ, և 'ի մտի առնոյր զհնարիմացողութեան նորա զխորհուրդ՝ առ 'ի չարչարել զազգս մեր, և զոր խնդրէր նա՝ այնմ ոչ եհաս, զանգիտեալ այնուհետև 'ի մախացօղ խորամանկութենէ բռնադատին, միանգամայն խոկ և 'ի մահուն երկիւղէ, և ոչ ինչ ելի աղագս հաստուածի գտանել մարթացեալ, այնուհետև ակամայ կամօք հարկեցաւ ամենայն իրօք բերել 'ի կամս տափկանին՝ արդեամբք և խորհրդովք և բանիւ մերձաւորութեամբ, զկնի ընթացաբար բերեալ հետևել 'ի կատարելութիւն կամաց նորա. սակայն և այնպէս ոչ կարէ լիակատար յինքն յանգուցանել զկատարութիւն որտի սաղապ և մնոտի խաբեբայն։

Իսկ տափկանին առկայացեալ որջանայր 'ի Դուլին, զդառնաշունչ եղանակս ձմերայնոյն 'ի նմա անցուցանել։ Իսկ ապա այնուհետև

հարկեցայ ես խնդրել ելս հրաման Թագու-
թեան յաստիկանէն, որպէս սմն երբեմն 'ի
սանդարամետէն Պրոզերփինայ. և այս ոչ
թերեւս 'ի զանգիտելոյ յառժամանակեայ
մահուանէն որ ըստ Աստուծոյ, այլ վասն զի
սակս սակւոյ անօրինէր, և 'ի բազմաց օգնա-
կանութենէ բազում հատուցեալ էի զգրա-
ւատ գանձուց պարտապանութիւն, և այլ
ոչ եւս ունէին ընաւ ձեռն բաւական 'ի հա-
տուցանել ինչ, և ոչ ոք էր որ օգնէր ինձ,
սակս այնորիկ յայս ածայ: Եւ վերջին օգնա-
կանութիւնն արտաքս զիս առ 'ի նմանէ կոր-
զեաց, որոյ ձեռք իւր լի էր արեամբ, և սակս
ահէ ծանր որոյն փարաւոնի փախեայ ըստ
Մովսիսի 'ի Մադիամ. և յերկրորդն Յեզաբէ-
լայ ըստ Եղիայի՝ 'ի Սարեփթա Սիդոնեան:
Եւ վասն զի չարայն գերչայ չար հէնք դեռ-
եւս սասանկայէս մածեալ ունէր զաշխարհս
մեր, սակս այնորիկ և ես ըստ աքրունեան
հրամանի հալածեալ շրջեցայ 'ի քաղաքէ 'ի
քաղաք 'ի կողմանս արեւելեայ Աղուանից, առ
մեծ իշխանն Սահակ երթեալ, և առ թա-
գաւորն Նոյունց Արմներատէ՝ որ ըստ արե-
ւելից հիւսիսոյ Կովկասու, զի և նոքա 'ի
ժողովրդենէ մերմէ և խաշն արօտի (1) մերոյ

(1) Մի օր. յարօտէ:

էին . և 'ի նոցանէն ոչինչ սակաւ ծախս ռոճ-կաց ըստ խրախճանութեան ամսկի կարգէր մեզ պարտապանաբար՝ վճարելով զայս ա-մենեցունց : Եւ անտի ելեալ գնացաք 'ի կողմանս Գուգարացւոց . և անդ բնակեցաք՝ ակն ունելով փրկութեան մերոյ 'ի Տեառնէ :

## ԳԼՈՒԽ ԽԵ.

Յաղագս խաղաղութեան Աշոտոյ և Սմբատայ արքայ-որդւոյ . և հնազանդութեան Աբուրդւոյ . և ըմբռ-նման Սմբատայ :

Ապա իբրև եկն սատիկանն 'ի Դվին , ապա և արքայ Սմբատ դարձեալ 'ի փախս-տէութենէ իւրմէ՝ գայ 'ի սեփհական կա-լուածս տէրութեան իւրոյ Վաղարշապատ : Իսկ իբրև դրունք գարնայնոյն բացան , և աւուրքն ջերմացք զուեղի փոխարկեցին , ա-պա սատիկանն գունդս զօրաց բազմաց պատ-րաստեալ , իբր հրամանս իմն արքային Սմբա-տայ՝ տայ 'ի ձեռս Թագաւորին Վրաց , և յայլ ևս իւրոց նախարարացն . և գաղտա-կծութեամբ իմն առաքէ զաւրս 'ի վերայ նորա : Իսկ Սմբատայ զգացուցեալ սմանց

զգլխող զուարճութիւնն , ապա և նա ևս տագնապով (1) սախալեալ գումարէ զօրս բազումս , և տայ ՚ի ձեռս Աշոտոյ և Մուշեղայ որդւոց իւրոց , և հրամայէ զգուշանալ ՚ի ճանապարհայն : Իսկ նոցա չուեալ հասեալ ՚ի Եկղ գաւառ , տեսին զի ճամբար Ապղգեացն բունեալ դադարեալ էր ՚ի հովիտս հարթայատակ վայրի միոջ՝ առ ստորոտով լերինն , ընդ որոյ և Թագաւորն եւս Գագիկ : Արդ՝ իբրև այն այնպէս իմն նոցա ՚ի դիմի հարկանէին ակամայ կամօք , ապա ՚ի մարտ պատրաստեցան ոչ գիտելով զնենգութիւն զօրաց իւրոց բնակչաց Սեւոյ գաւառի , որք են Սեւորդիք : Ընդ ապա Աշոտ և Մուշեղ նախ ինքեանք իսկ անցեալ յառաջխաղ՝ չահատակեալ առաքինանային , և բազմահանդէս քաջութեամբ հատեալ ըղռազմ՝ պարու նոցա՝ զմիմեանս արկանէին : Իսկ իբրև խոր խոյեցաւ պատերազմն , և տապատակին խառն ընդ միմեանս հարան , յանկարծակի ապա զօրքն Սեւադի ընդ կըրունկն դարձեալ՝ ըստ նենգապատիր խորհրդոցն անդառնալի գնացին ՚ի կամս անձանց : Իսկ վասն զի յայնմ կողմանէ զօրուն էր Աշոտ . յակամայ հարկեցաւ ընդ նմին

(1) Երեւ օրէ . տագնապելով :

գառնալ յետս կոյս, զի ապաստան Ս. Յաղ-
գեայն զօրացեալ սատակմանցն: Իսկ Մու-
շեղ ի մէջ թշնամեացն անկեալ՝ բազում ան-
հնարին քաջութիւնս ցուցանէր, մինչ ի
զարմացումն զամենեսեան ածեալ. սակայն
մենամարտութեամբն ոչ կարացեալ դիմա-
կաց լինել բազմութեանն, ձերբակալ զնա
արարեալ տանէին առ տաճիկսն: Իսկ նորա
զուարթացեալ զուարճացեալ ընդ բերբա-
նումն թագաւորազուն մանկանն Մուշեղայ,
խրախութիւնս բազումս յարդարէր զօրաց
իւրոց: Եւ յայնմ հետէ ապա նիւթ հրա-
բորբոք դառնութեան մասոյ զանեալ զայն-
պիսի յաղթութիւն, հրամանութիւնս բա-
զումս ափռեալ տարածանէ ընդ ալլաս եր-
կրի մերոյ. և ի միջօրէի կիրճ ի գիշերի մութ
և մէգ և մառախուղ և խաւար աղջամղջին
պատեալ պաշարէր զՀայաստանեայս ազն. և
ի ծակս կցուոց եղեալ զերկանս տագնապ
տարակուսանաց, հակամիտեալ կուտեալ
գանձէին ի վերայ մեր ծանրատաղտուկ ա-
նուր Հագարու՝ առաւել քան զքարինս
ծորոյն Նաքովրայ. վասն զի նետք հինից և
ամէ գբ Տեառն անցացին ի վերայ մեր: Բայց
զի արդեօք դառնութեամբ զոր երբեմն իշ-
եաց Տէր ի տանէ Թորգոմայ, կրկին շա-

առուխղեալ անկելոյս յխնամոյն յայգեստանս մեր՝ 'ի փչելոց մոլարս վերլուծեալ յեղծումն եւ յապականութիւն ։

Այլ այսուհետեւ ահա սիրտ իմ տանջեալ տաղնապի տարակուսանօք, եւ հաշեալ(1) մաշի փոր իմ 'ի լալոյ. զի յանօրէնութեանց մերոց այցելութիւն Տեառն անտես արար զմեզ, եւ 'ի սեւաթոյր անլուսութեան(2) գործոց մերոց՝ խեթիւ հայեցաւ 'ի մեզ արեգակն Ճշմարիտ, եւ մատնեցաք 'ի ձեռս ծանրասրտի երկրորդն փարաւոնի եւ դառն գործակալաց նորա, որք առաւել եւս քան զանուր կաւախառնեալ աղիւսագործութեան՝ վէրս 'ի վերայ եդեալ՝ կործանեցին զմեզ անհնարին հարուածովք 'ի վերայ հարուածոց ։ Վասն զի իբրեւ զմրրիկ հողմոյ շնչեալ 'ի մեզ մահաբեր խանձելեան օդն դառնաշունչ, եւ ըստ նմանութեան փոշւոյ պատուաստեալ ցնդեալ՝ 'ի բաց զմեզ տարագրեաց 'ի մեր բնակութենէ . եւ ըստ սաստկութեան ուղխից յորձանաց հեղեղեալ ողողեալ՝ արբոյց զհոգի յիմարութեան առհասարակ, իբրեւ զոչխար 'ի սպանդ զմեզ վարատեալ ։ Այլ արդ՝ սակս այսորիկ որ յիմումս շտեմարանի մնացս է տեսութիւն

(1) Մէ օրէ . հալեալ ։ (2) Մէ օրէ . անլուսութեան ։

չարժութեան, չլացեալ և ունայնացեալ՝
ոչ բաւէ բանիւ լնուլ զնպաստ խորհրդոյն՝
ըստ զգալի աղէտից հասելոյ եկելոյ զմեզ:
Սակայն զհամարձակախօսն Եղիշեաւ յօժան-
դակութիւն ինձ բերեալ, զի խնամատարել
և ողբալ ուսուցէ զկղկղայթս մերձաւոր
հարուածոց բարկութեան և խրատու ողոր-
մութեան Տեառն: Զարթիր, ասէ, զար-
թիր, և արի կաց. և զխռնես ինձ ասա, Ե-
րուսաղէմ, զոր արբեր զբաժակն կործան-
ման, զբաժակն սրտմտութեան՝ զոր արբեր
և թափեցեր, և ոչ ոք է յորդւոյն քոց՝ որ
զքեզ մխիթարէ: Եւ ըստ միւսումն անկա-
լեալ, թէ՝ ո՞ ընդ իս սրտմեսցի, և ոչ ոք գը-
տաւ մխիթարիչ ինձ: Եւ ըստ այլումն թէ՝
Ո՞վ եղիցի արտասուաց ինձ, մի թէ բեկո՞ւմն
քո, կամ՝ սասանութիւն ամրա և սրտի: Զի
արդարև իսկ ըստ նախագուշակ ասացելին՝
ոչ կարեն մխիթարել զմեզ որդիքն մեր տա-
րագնեալք և գերեալք և հալածեալք և
սպանեալք, և ննջեալք ՚ի կիրճս ամենայն
ճանապարհաց: Եւ յիշուի ՚ի մեզ բղխեաց
սրտալի մահաշշուկ հառ դառնութեան.
զի որովք պատուեցաքն և վայելեցաք յորհ-
նութիւն քաղցրութեան կանոնացն Նաւուծոյ,
ոչ ծանեաք զնա արժանապէս՝ յորմէ զրա-

րին (1) կլմեցաք, և ոչ գոհացաք զտուողէն մխիթարութեանն՝ որով զպարտն պահանջէր. և սակս այսորիկ ապա 'նորխիք և խրատեցաք. և ապա եօթնպատիկ հատուցան մեղք մեր 'ի ծոցս մեր ։

Սուգ առնու և լինի մեզ մարգարէութիւնն ասելով. Հրեշտակն կործանեցաւ, և խանգարեցաւ փառքն Սիօնի ։ Վասն զի թողան միանգամայն խել 'ի խնամակալութենէ Նարձրեայն աստուածայէն եկեղեցիքն Բզբնատակի, երբեմ զտապաւար յաղթող, և երբեմ պհօմանի մեգապահոյց 'ի մէջ սեւխենեաց. և փայտառոք և մեծօք կործանեցին զդրունս նորա, և հրկեզ արարին զարքութիւն նորա, և պղծեցին զխորան անուան նորա. և ժառանգութիւն Տեառն կախեցաւ 'ի գարշապարաց պղծոց, և 'ի խաղական երկրապիշ անցուորաց Ճանապարհի. և անգին արիւն կղերց եկեղեցւոյ տարապարտ հեղաւ երբեմ զջուր շուրջ զԵրուսաղէմաւ. և 'ի տանէ տաււեղ քան յօտարաց բռնաւ արմամբ զատնութեան. Զի կործեցեալ սիւնք ամենք տապառակեցան 'ի Տեառնէ, և զինեալք ըղձեղուս իւրեանց նանրութեանն և անօրէ-

(1) Մէ օրէ․ զխարին․

թեամբ. խօսեցան խոտորնակս թիւրս առաջի իշխանաց մերոց. և խաբեբայք եւ պատրիչք փոխաբերեցան ընդ արանց արդարոց և ստուգաբանից. և յոչս զօրականաց մերոց և գլխաւոր իշխանաց անարգեցան ստոյգ հովիւք հօտի Տեառն. և ստացան հովիւս բազումս ՚ի գայթակղութիւն իւրեանց: Եւ սակս այսորիկ ստացաք նախատինս յարանց ստոց և անզգամաց, և եղաք ՚ի կատականս ծաղու ազգաց որք շուրջ են զմեօք. եւ հօտք հանդերձ հովուօք յափշտակեցաք ՚ի խոտաց ապստամբողաց ՚ի գերութիւն մատնեալք, և վաճառակուր լեալք: Իսկ այլք ամանք սուրբ ձեռօք և ամբիծ սրտիւք՝ բազում գանից և գելարմանց և կապանաց և խոշտանգանաց և բանտից և անհնարին նեղութեանց զփորձ առին, և բարձան յերեսաց անիրաւութեանց այնոցիկ՝ որք բարձրացուցին իւր զանարգանս մոլորութեան յանձինս իւրեանց: Եւ դիակունք ծառայից Աստուծոյ՝ գէշ թռչնոց երկնից արկան, և մարմինք սրբոց Բարձրելոյն ՚ի կերակուր գազանաց տուան. և ոչ ոք գտաւ որ յինքեան բերէր զնախանձ Տեառն ամենակալի, և ՚ի բաց տարեալ տրոհէր ՚ի տանէ Տեառն զմշակին անիրաւութեան, և

կամեցողք այսպիսեացս ապա յիրաւի զու-
նարգութիւն մոլորութեան յանձինս իւ-
րեանց կրեսցին ։

## ԳԼՈՒԽ ԽԶ.

Յաղագս կոտորելոյ Յովսեփայ զանձնապաստան իշխա-
նացն, ընդ որս և զՄուշեղ ։

Եւ արդ՝ ես այսուհետեւ դարձեալ դարձուցից անդրէն զբանս յողբս իմ. և թախծեալ սրտիւ ոչ դանդաղեցայց ՚ի խորհուրդ առնուլ ՚ի մերոց վտանգաւոր կրից՝ զթռուցեալ դերանդին ընդ օդս. ՚ի Զաքարիայ առածութեանցն զսուրն երկսայրի ընդ արբեալն արեամբ որդւոց երկրիս մերոյ. ընդ բազմախողխողն զառաքեալն ՚ի վրէժխնդրութիւն գողոց և գողակցաց, ստոյ և ստերդմանց ։ Ըստ որում և տեսեալ իսկ եղեւ մեզ յերեսաց հարաւոյ բորբոքեալ չարիք, և յոգնածախող տանջանարանք յորդիս ժողովրդոց մերոց, որք և հարան իսկ և խողխողեցան սովով և սրով և խարդաւանական դրժողութեամբ՝ մինչ ՚ի մարմին և յոսկերս և յուղէղս թափանցանց բերեալ ։

Մ՛ի անտեսեսցի ինձ տատանօր և միւս մագդարէութիւնն, որ իբրեւ զինձ պատահեալ. ասէ, յուզուոչ այնոցիկ՝ որք չարութեամբ են զգածեալք, իբրեւ յայնժամ ուքեմն երբեմն զկուածոլ Նաբեաստնեացն: Յաուաջ կացցէ և ինձ առ Մովսէս այրն Նստուծոյ, որ զհատուցումն գործոց վերիժուց մերոց՝ հրապարակագոյժ առնէ յաւուր վախճանի խնդութեան մերոյ, փայլակնաբար իմն որեալ սուսերին՝ 'ի վերայ հատանել և յագուրդ ոչ ունել առ 'ի յուտել զմարմինս վիրաւորաց գերելոց գլխոց իշխանաց մերոց: Զի որք երբեմն 'ի բարձրագոյն առոփձանս նստէին, և 'ի խորանս պետականս վերամբարձ ձոխանոյին, արդ աւաղիկ խարդաւանեալք զեւրաղաւ եղեն, և այլոտաւորք մահուն առագանաց 'ի չար տախկանէն: Վասն զի զամանս 'ի մեատասա բանակց բերեալ տակաւին դատէր սով և սուր և գանիւ, իսկ զամանս զօր և պատուաւորս առ 'ի յինքենէ թուեցուցանէր տեառնայն. զնոսա 'ի ծածուկ խարդաւանէր մահու պարտաւորութեամբ. ըստ որում նախ դատեալ դժրեացըն 'ի գաղանի զիշխանն Գրիգոր զհայկազունան զարմի, և զքեռորդին արքային Արմբատայ, որ ըստ նախապատմեալ իմոյ բանին՝

անձնատուր լեալ էր ՚ի ծառայութիւն նմա, զոր դեղըմպութեամբ մինչ ողողեալ զու-րոխայն նորա, այնպէս տագնապաւ տարակուսից վախճանէր, տարեալ թաղեալ զնա ՚ի ձեռակերտ իւր ՚ի սրբարանին սուրբ Շիմոնեայ: Այնպէս և զքաջարի մանուկն Մուշեղ որդի արքային Սմբատայ, որ ըստ նենգ գործելոյ ՚ի բնակչաց Սեւոր գաւառի ձերբակալ եղեւ, և զնա եւս ՚ի նոյն տանջանս հարեալ, և զդեղ մահու արբուցեալ՝ վճարէ ՚ի կենացն. զորոյ բարձեալ և զմարմին սպարապետին Աշոտոյ, առաքէր հանգուցանել ՚ի քնարանի նախնական հանգըստարանացն ՚ի Բագարան: Այնպէս և զըղ-զուարթածաղիկ տիօք գեղեցկատարդն Սմբատ՝ զեղբօր որդի Սմբատայ, որ ինքնակամ զխմնգրաւ դիմեալ ՚ի ծառայութիւն Հագարացւոյն, և զնա եւս նովին դժրողութբ դառոյ կորուսանէր ՚ի կենաց սատի, զոր տարեալ թաղեցին ՚ի Դարօնս ընդ հարս իւր: Եւ վասն այսորիկ իսկ ՚ի բերան առեալ իմ զսուգ սիրելեացն, և ձայնիւ չոթանց գուժեալ լալոյ և պաղատանաց կոծիմ կոծ ողորմ՝ զի վասն մեղաց մերոց վախճանեցան սուրբք մեր ամպով, և կորեան յունայնութեան յուսոյ:

Իսկ ապա և զայս ամս ազատագունդ զօրեարս ըստ ամին սակի սպառեալին, զորս ոչ է ինձ այժմ ասել մի ըստ միոջէ, և գրեթէ ՚ի պատուաւորաց անտի ՚ի մեծամեծացն յանձնաուր նմա եղելոցն, և ընդ ձեռամբ անկելոցն ոչ ոք ապրեցաւ ՚ի չարախօսական և ՚ի խարդաւանական մահուն տուգանաց, բայց միայն խոհեմամիտ Թագաւորն Գագիկ և չքնաղագեղ ազարապետն Աշոտ, որ ուշ ՚ի կուրծս արարեալ, և խմաստոյեցը մնաց խորհրդեամբ տեսեալ միանգամայն խել զելըս գնացից տերանց և եղբարց իւրոց առաջի իւր, և յայնպիսի անհնարին մահուց զանգիտեալ, ամենայնիւ յամենայն բերեալ հարան ՚ի կամս ոստիկանին ՚ի կատարելութիւն բանի և խորհրդոց իւրեանց ձեռպեալ զանձինս: Նոյն և պատանի մանուկն Վասակ եւս՝ որդի Աշոտոյ գահերէց իշխանին Սիւնեաց, որ անձնատուր իւրովի լեալ ոստիկանին, և ապա ՚ի դիպահոջ գնա արարեալ: Իսկ յաւուր միում իբրև գիշեր նսեմանայր, յանկարծակի զվաղաղակաւորն պղպղատիկ ՚ի գործ առեալ՝ զպահապանն դիաթաւալ կացուցանէր. և ապա հարուստ մի անցեալ գնացեալ, և կախեալ ընդ պատուար պարսպի քաղաքին փախչէր: Իսկ իբ-

րեւ ձայն պահնակացն զօրացեալ լինէր , և հրոսակս զինի պատրաստէին . մինչ յայս մինչ յայն՝ նա 'ի փողոցս այգեստանոյն (1) անկեալ , երթայր գնայր 'ի հայրենի ամրոցս աշխարհին իւրեանց :

Նայս այնուհետեւ չարութիւնն զգաղտնի պատրուակն մերկացեալ , զոմանս 'ի պատուական ազատացն բազմախողխող երկաթին տային կերակուր . իսկ այլք ոմանք փախստեայ 'ի ծործորս և 'ի ծերպս վիմաց տարեալ մղէին . և ապա տարեալ ամենայն աշխարհն սրեցին յայրս , թաքեան յանտառս , ելին 'ի քարանձաւս : Իսկ ապա կանայք եւս պատուականք տիրուհիք ըմբռնեալք 'ի գերչաց անափ , առաւել եւս բարձին զբեռն ծանրութեան մարմնոյ նեղութեանց , ոչինչ յիշեալ զանուն փափկութեան մայրենի ազատութեանն : Այլ ոմանք 'ի գիպահող բերեալք 'ի խաւարչային տեղիս , գրեթէ քըրձագեացք և խոշորագեացք , և կաշկանդեալք չքաւորութեամբ , և կարօտեալք աւուրն պարենի . և ոչ թերեւս ազատ փափկացեալ լինէր քան զգեղջուկ մշակացեալ : Իւ այլք ոմանք մարք յղիք 'ի տուգանս անհնարինս մահաբերեալք՝ գերեզմանք լինէին

(1) Մէ օրէ . այգեստանացն :

մանկանց իւրեանց։ Իսկ այլք չարախօսականս դաւանութեամբ մահու սպառեալ զկեանս իւրեանց, ոչինչ ընդհատ երեւէին յայնցանէ՝ որ ոչ ճաշակեցին պաշխարհս։ Նա ապէս ոչ գտաւ լուծեալ կապարան դատերաց երկրի մերում, և ոչ թօթափեալ փոշի գլխոյ անդստին իսկ 'ի փշալիքեր տիկնաց, որ իբրեւ պահիւն հնոցի մածեալ ունէր. այլ եղկելի տագնօք և հեծութեամբ բաղձատանջեալ։ Նա սուգ զգեցան սպասք զարդուց նոցա, և խանգարեցան սպասք երախանաց նոցա. և ծխոտեցան իսկ միանգամայն սրահակք և ոսկապանք նոցա. և այսպէս ապա զօրացեալ մահու, և կլեալ զբազումս՝ արտօր հատեալ կալաւ զամենայն երեսս երկրի։ Այլ այսքիկ քեզ բաւականացեալ՝ ես 'ի կարգ պատմութեանս դարձայց, ոչ թողլով կիսակատար զբանիցն ոճ։

## ԳԼՈՒԽ ԽԷ.

### Յաղագս Սահակայ և Վասակայ գործոյն, և անգիտութեանն Յունաց։

Յայսմ վայրի հայկազուն եղբարքն հարազատք Գրիգորոյ զրաւամահ եղելոյ յառիկանէ անտի՝ Սահակ և Վասակ, զխոյթ

ակնդուլթեան յանձինս բարձրացուցեալ 'ի ժամանակս հալածանաց, և գուն գործեալ զի գոնէ հնարս մարթասցէն գտանել, և 'ի դերեւս 'ի նեղչացն ելանել. և ամրանալ 'ի ամփոփական ամրոցի ուղղութեան իւրեանց, և ոչ գնալ չուել յաշխարհս օտարաց՝ մինչեւ անցցէ, ասէ, բարկութիւն Տեառն: Եւ այս նաւակառոյց լեառք (1) որպիսիք թխակոյք էին 'ի տապանի իւր երթեալ ղօղեալ ամփանայքն 'ի Սեւան կղզւոյ հանդերձ քրիստոսակրօն և ճգնաւոր մարքն իւրեանց, և կանամբք և որդւովք, և ապաստանունք բնակով. վասն զի զդահեղեղ յորձանուտ պղտորութիւն խառնակելեան հինիցն եւս քան զեւս տառապեցեալ բախէր զաւազահիմն ատեն բնակութեանս մերոյ: Իսկ այս այլք լեալ այն կամանցախօս դառնահամբոյր Հագարացւոյն, և զօրս զումարեալ՝ առաքէ 'ի վերայ նոցա. եւ իբրեւ հասին յեզր ծովակին (2), սուր թշնամւոյն սպառնէր պաշարմամբ շուրջ զնոքօք պատեալ: Իսկ այս 'ի մոյ եղեալ 'ի միաբան սիրելի եղբարցն՝ թէ զուցէ լեուցուն իւր նոցա 'ի թշնամեացն լիցի, և 'ի ջրապատ անդնդոցն ոչ գամիցի

(1) Այնոյն օրէ. նաւակառոյց լեառք:
(2) Մի օրէ. յանկարծ՝ Գեղամայ:

տեղի փախստեան, և մտանեյին 'ի ձեռս հեթանոսական բռնադատացն և նոցա աղդ-մուս չարութեանն. և այնուհետև զձեռս նուաստեայն զօրացուցեալ, և նուեալ չը-ուեալ գնացեալ մարբն հանդերձ, և առ-հասարակ ընտանեօք և աղխիւ եւս, որչափ ձեռն բաւականէին կարէր կրել, անկանէին հասձեալք յամուր գաւառն Սիւափորոյ:

Իսկ Իսմայէլեան զօրապետին մտեալ 'ի կղզի ամրոցին, զմնացեալ կապուտ աւարին ոչ սակաւ ինչս քան թէ բազում ժողովեալ՝ 'ի դխպահոջ թողըր, և ինքն տապատակ ավի-ուեալ՝ դիմէր կրկէր անցանել զհետ նոցա: Որոց ընդ կրունկն դարձեալ առ 'ի դիմի հա-րեալ թշնամեացն, և բազում վիրաւորս 'ի նոցանէ խածատեալ. և ճարակ սրոյ տուեալ 'ի փախուստ զնոսա դարձուցանէին, և ին-քեանք չուեալ երթեալ գնայեալ զօղեալ դադարէին յանձաւախիտ ամրոցս մայրեացն Գարդմանայ և Արձախայ, անկեալ ող-ջերութեան Տեառն: Ընդ հանդեաւ 'ի Բը-րնտոս պարկեշտաստուն և որբափայ կրօնիւք մեծն 'ի ճգնաւորս մայր նոցունց, և քոյր արքային Սմբատայ. որ յետ ամաց ինչ դառ-նալոյ և ամրելոյ նոցա 'ի վերայ սեփհական և հայրենի իշխանութեանն, տարեալ հան-

գուցանէին զմարմին նորա 'ի քնարանի իւրում մերձ 'ի ձեռակերտ եկեղեցի իւր 'ի Շաղաքայի ։

Իսկ անօրէն ոստիկանն տեսեալ՝ եթէ կուսակալք և կողմնապահք իւր ձեռնթափ լինէին յաղթութեամբք մեծաւ յամենայն կողմանս երկրիս մերոյ, և ոչ ոք է որ 'ի դիմի նոցա հարկանէր, այնուհետև սաստապատակ չար հինից ընդ ամենայն կողմանս սփռէր 'ի Սիւնական ազգս, և 'ի յայնկոյս Տաշրաց և Կանգարաց, և յեզր ծովակին Գեղամայ ։ Եւ ապա զԹագաւորն Գագիկ հանդերձ իւրովքն ևս նախարարօք, և բազում զօրօք առաքէ յամուրն Վաղարշակերտի, պատնէշիւ պատել պաշարել և առնուլ զնա. որք և երթեալ գնացեալ խոկ, և 'ի բազում աւուրս մարտ ընդ ամրոցին եդեալ, ոչինչ կարէին առնանել նմա ։ Եւ Թէպէտ և մարդիկ ամրոցին բազում վիրաւորս 'ի Թշնամեաց տապաստ արկանէին, սակայն նոքա ըստ հրամանի ջերմանելոյն ոչ իշխեցեալ անցանել, նստեալ պահէին զամրոյն 'ի բազում աւուրս ։ Իսկ այն զօր՝ որ 'ի կողմանս կողմանս առաքեցան յապստամբող ոստիկանէն, իբրև զհուր կայծակնահարեալ ընդ ոլորտ երկրիս մերոյ, 'ի վեր բարձրացուցին զբոյն

տաճարին՝ առ ՚ի յիշել և ՚ի հնձել և ՚ի մաշել զարամեան ազգին բնակիչս. և միանգամայն իսկ ազատն և անազատն, զօրաւորն և պատերազմօղն, զինուորեալն և դատաւորն, խորհրդականն և քննիչն, իմաստունն և հանճարեղն, ծերն և տղայն, մեծն և փոքրն մատնեցան ՚ի ձեռս բռնաւոր գերչացն, ըստ մարգարէութեանն՝ թէ Խաբեբայք տիրեսցեն ձեզ: Եւ այսպէս նախանձ Տեառն զօրութեանց եղիցի մեզ յաւուրս վրէժխնդրութեան մերոյ՝ զինչ լինելոց էր յայս ժամանակի:

Եւ արդ ամենայն որ ողբակից ինքեան առեալ առանձին զԵրեմիաս, և հայցէ ծով զգլուխ իւրեանց, և աղբերս արտասուաց զաչս. զի մի լքանիցին ողբալ գուժել և կոծել զանցս անհնարին աղէտիցն, վասն զի հէնք իսմայէլեանց ապստամբեացն իբրև ըղհրդեհս յանտառս և ՚ի շամբս վառեալ այպէս սփռեալ տարածեցին զճարակս բոցոյ ՚ի մէջ ժողովրդոց մերոց, և գտաւ ամենայն գլուխ ՚ի ցաւս, և ամենայն սիրտ ՚ի տրտմութիւն:

## ԳԼՈՒԽ ԽԸ.

Յաղագս անօգնական մնալոյ Սմբատայ արքային, և անյնապար լինելոյ Յովսեփայ, և փախստեանն Գագկայ:

Օայս ամա տեսեալ, և զմտաւ միանգամայն ածեալ Թագաւորն Գագիկ հանդերձ եղբարբն իւրով Գուրգենաւ, իբր Թէ 'ի ձեռանէ նոցա և 'ի կարապետելոյ այս ամպրոպ չարութեան և ոճիրք դառնութեան զեղեալ շուրջ զեկեղեցեաւ Քրիստոսի, և զԱստուծոյ հաւատացեալ ժողովրդովք, այլ և զիւրեանց եւս անձանց զկարգաւանական մահու կարծիս 'ի մտի եդեալ, և զանգիտեալ յերկիւղէ բռնադատին: Այնուհետեւ ստուգածայրին իմն գոգցես երկիւղիւ կշտամբեալ և յանդիմանեալ զանձինս իւրեանց, և զղջացեալ 'ի սիրտս իւրեանց, ապաշխարեցին ապաշխարողական կարգօք, և 'ի մտի եդեալ հաստատել զինալ յաշխարհ տէրութեան իւրեանց. սակայն առ ժամայն ոչ յաջողեցաւ նոցայն խորհուրդ: Ապա այնուհետեւ զնոյն բարեաց իմացուածս յայս ածեալ արքային Սմբատայ, և միաբանեալ ընդ նմա ծածկաբար, խնդրէր ժամ դիպող զիմաստ խորհրդեանն կատարել, և զգործե-

ցեալ չարութիւնն գեղեցիկ բարեպաշտութեամբ հանդխու 'ի բաց մերկանալ յանձանց :

Բայց արքայ Սմբատ չուեալ երթեալ դօղէր յամրոց փայրս Երասխաձորոյ , դեռ եւս ակնկալեալ ցածուցանել թերեւս զբորբոքեալ սրտմտութիւն չարին , որ մածեալ ունէր զաքանդայեան ազնս : Վասն զի 'ի բանի արարեալ զմեծ և զխոհեմ և զհանճարեղ իշխանն Հայոց Գրիգոր , խնդրէր զխաղաղութիւն յամիրապետէն առհասարակ հօտին Քրիստոսի , և շիջուցանել զհարեալ հուրն յանօրէն ոստիկանէն : Իսկ իշխանն մեծ թէպէտ և գուն 'ի վերայ գործեաց ոգւով չափ , բայց զի արքունական դուռն ընդ այն ժամանակս փոխեալ էր յապարաժբացն Եգիպտացւոց ըստ հնարիմաց իշխանին խնդրոյ , ոչ կարացին ժամանել յօգնականութիւն արքային Սմբատայ : Բայց և արքայն Հոռոմոց Բարսեղ իբրեւ լուաւ զայս ոճիրս չարի զմեօք մածեալ , բազում զօրու հրաման տուեալ գալ յօգնականութիւն Սմբատայ , յանկարծակի ժամանեալ նմա ելք հասարակաց կենաց մարդկան , և փոխանեալ՝ թագաւորէ ընդ նորա եղբայր նորին Աղէքսանդր . և ապա չխոթ աղմկի ըզ-

նովաւ շուրջ պատեալ յապստամբողաց ա-
րանց, և նա ևս ոչ կարաց ժամանել յօգ-
նականութիւն։ Այլ և համագունդ ես ար-
քայիւ մերով՝ իշխանք և կուսակալք և պետք
ոմանք, ապառեալք խոկ էին ՚ի խարդաւա-
նական մահու յատրիկանէ անուն ըստ նա-
խապատում իմոյն բանի. և ոմանք ՚ի հար-
կէ, և այլք ոմանք առանց հարկի պատճա-
ռանաց՝ մերձաւորք եւ հեռաւորք յաւէտ
հեռի եղեն ՚ի նմանէ արդեամբք եւ խոր-
հրդեամբք, և ծանեան զօտարս քան զնա.
և զորս նայն սիրէր բարեկամութեամբ՝ քե-
ցեալ ՚ի բաց բերան ՚ի նմանէ խառնեալք
ընդ թշնամիսն։ Իսկ ոմանք ընդվզեալք ես
՚ի վերայ յարուցեալ յարձակէին ընդդէմ
նորա նախատանօք առ ՚ի մահ ըստ սադրելոյ
Հագարացւոյն, որպէս երբեմն առ մերոյն
Տրդատայ։

Զայսոսիկ և եւս առաւել քան զայն
զմտաւ ածեալ արքային, և թէ չոգաւ իւ-
րաքանչիւրոց զհետ հաճոյից իւրոց չարաց,
ապա բառնայր յոյս փրկութեան նորա առ
՚ի մարդկանէ, և միայն երկնաւոր այցելու-
թեանն սպասեալ։ Այնուհետեւ երթեալ
յամրոցս քարանձաւին ՚ի Կապուտոյ որ ՚ի
ձորն Եղրախոյ, անդ դարեալ դադարէր,

վասն զի անտուրիկ խել էր նա ՚ի մարդկանէ, և վասն զի ձեռն Իսմայէլի սպառասպուռ առաւել քան զկարն ծանրանայր: Զկնի ամի միոյ՝ յաւուրս Թշնամւոյն պատնէշ պաշարմամբ պատեցաւ շուրջանակի զամրոցաւն. և այնուհետեւ ըստ հրամանի ջերմանելոյ ոստիկանին ռամիկն գրգռէր զազմուկն ՚ի պատերազմ և ՚ի սպանութիւնս բազմաց՝ իբրև ՚ի բեկանող գաղանաց ահագին իմն թընդմամբ ձայնի: Իսկ մարդիկ ամրոցին անձնըն-ծեր լեալք. և կորովութեամբ կշռեալ ըդձգտումն մեքենայից, և զնետաձիգս ՚ի լայնալիճ աղեղանց. և զքարինս ՚ի պարսատակաց, յաւէտ ևս և անհնարին խաղխաղումն ՚ի վերայ մարտիկ զօրացն հասուցանէին: Նավասն զի ընդ ձեռամբ Հագարացւոյն բազումք էին զինուորեալք ՚ի հաւատացելոց Քրիստոսի. զնոսա միշտ զինեալ տայր ընդդէմ պատերազմի ամրոցին՝ յիւրան խնայելով: Իսկ զայն ոճիրս տեսանելով արքային Սմբատայ. և զկորուստ քրիստոնէից՝ որ իբրև մօտալուտ իմն դաժանաց լինէին խողխողեալք. այնուհետեւ զմահ մարմնոյ նպատակ կեքեան առաջի դնէր, և անձամբ անձին վճիռ հատեալ, և փրկութեան այլոց հոգացող գտեալ՝ զիւր փրկութիւնն անտես

տրար . և ըստ Յովսէփու՝ մարգարէաբար-
բառ բանին առ Տէր պարտ վարկաւ , զի ինքն
միայն մեռցի , և մի ամենայն ժողովուրդն
կորիցէ . և ըստ Եղիազարու ըստ համարեալ
զմահ քաջութեամբ՝ քան զկեանս խղճիւ ։
Եւ արդ յետկար երդման ուխտի յատեկա-
նէն խնդրեալ՝ դէմ եդեալ էջս առ նա առ-
նէ , և այնպէս փրկէ առհասարակ զքրիս-
տոսադրաշմ ժողովուրդն ՚ի տարապարտ մա-
հուն վտանգէ՝ զոնդ իւրով ձեռամբ կա-
ցեալն յամրոցին, այլև որք ընդ ձեռամբ հա-
գարացւոյն էին զինուորեալ քրիստոնեայք ։

Իսկ ստախօսն դաւաճանող ըստ խորա-
մանկն սատանայի՝ որպէս երբեմն ընդ Ե-
ւայի , այնպէս և սա ընդ խորհրդականն
առ՚ն կածաւէր բարեհամբոյր բանիւ . եւ
նախ ասկեհուռ մետաքսէիւք եւ լակնացի
զարդուք և շղաշատեա վտաւիւք զնա զար-
դարեալ . և զհարդամանս ջախջախս նմա
հնարէր մատուցանել առ ՚ի հաւատարիմ
զուխտ երդմանցն իւրոց նմա ցուցանել ։
Նա և ըստ ագահութեան իւրոյ մտացն ՚ի
ցանկութիւն ընչից հարեալ՝ վարանէր ՚ի
միտս իւր , թէ գուցէ գտանիցի ինչ ոսկեայն
՚ի պահեստի , եւ այսպէս բարեպաշտու-
թեամբ յայտ եկեալ առցէ . և իբրեւ ըդ-

ծառ որ [1] բերէ պտուղ չար , զծածուկ հնարս իւր յօրինեալ , համայն կործէր նր֊մա թուեցուցանել խորամանկելով բաս որդւոյն կորստեան ։ Այլ հանճարեղ ունկնդրին ոչ հաւատայր զանձն նմա . զի ուշիմ մտաց ընտրութեամբն գիտէր ըղ֊քծնումն քաղցրագոյն և զկատարումն դառնագոյն ։ Եւ այսպիսի վրիժագործ բարս խարդախս առ փոքր ինչ դադարեալ՝ գնայր 'ի գաւառն Շիրակ . և այնուհետև բա դարանակալ օձին Գանայ 'ի դերև եղանէր խոկացեալ դաւաճանութիւնն ։ Իսկ զայսպիսի աղէտս տարակուսից 'ի միտ եդեալ իմաստնոյն Գագկայ , և թէ ամօթ պաշարեալ զընդունայն վտանգին , և բուծա սիրտ թագաւորին , և ըստ սիրո իշխանացն , յանկարծակի 'ի ձի աշտանակեալ՝ փախստեայ անկանէր յաշխարհն իւր ։ Զի թէպէտ և ըղթագաւորել Հայոց ստիկանն նմա հաւատայր , սակայն նա խորհրդական իմաստիւ գիտէր զպատրուակ մահացուն գրժող դառնութեան մտաց նորա . զի որ կամաւոր կայութիւն չինքն կցէ , ոչ երբէք եկեսցէ յառողջութիւն ։

(1) Յօրինակին չէր որ . ուր յաւելաւ ըստ Մորաչի .

## ԳԼՈՒԽ ԽԹ.

Յաղագս պաշարման ամրոցին Երնջակայ, և փառաւոր նահատակութեան երջանկին որդւոյն Սմբատայ, և սքանչելեաց որ եղեն ի վերայ նորա :

Իսկ յետ չուելոյն Գագկայ ապա ոստիկանին եկեալ ի Դուին քաղաք, և զօրահետ փութեալ տարապարտ ի վերայ արքային Սմբատայ. յայնմհետէ խոկայր նմա պղաւաճանութիւն անհնարին մահու, և ընդ կեանս զմահ խառնեալ ի բանտ արգելոյր. եդեալ ի յոյս նորա պաշտարումն (1) երկաթի շղթայից. և դժոխմբերելի իմն զդուռն բանտի նմա պատրաստեալ ի միգի, ըստ բանին Յոբայ` տարածանէին զանկողինս նորա, և լուսոյ` գիշեր նմա եղեալ. լոյս մերժեցաւ յերեսաց նորա ի նսեմութենէ կայանին : Եւ այս առաքինութիւն չարչարանաց և կապանաց և խոշտանգանաց գրեթէ զամ մի բովանդակ ձգեալ ընդերկարէր :

Իսկ զկնի այսորիկ ապա ոստիկանն իբրև զկամաց յեռանդեան` ի չար միտս իւր բորբոքեալ, զնայր չուէր յամրոցն որ կոչի

(1) Երկու օրի. ի պաշտարումն : Թերևս ընթեռնլի է ուղղագոյն եան` զյոյս նորա ի պաշտարումն :

Երնջակ, ՚ի խլել ՚ի բերել և ՚ի կորուսանել և յատակել. վասն զի անդ գոլեալ ամբարեալ կային տիկնայքն բարեպաշտօնք, մայր մեծ իշխանին Սիւնեաց Սմբատայ, և կին նորուն՝ քոյր Գագկայ, և կին Սահակայ եղբօր Սմբատայ, և այլ եւս պատուականք յազատաց՝ արք և կանայք։ Այս առեալ ընդ իւր տանէր և զարքայն Սմբատ պարաւանդեալ ՚ի չղթայս. և անդ ապա զամրոցն ահագին բռն մարտոյ պատերազմաց շուրջանակի պատէր, անդուլ և անդադար զգրգռումն աղմկին ՚ի վերայ յաճախեալ։ Իսկ ապա արքային Սմբատայ զմահ անհնարին ըղձացեալ (1) ոստիկանին, տակաւին սկսանէր կտտանս դատապարտութեան զնա դատեալ, և ՚ի բարկութիւնս վրիժուց հատուցման վառեալ, և կրճտեալ ՚ի վերայ զատամունս՝ մատնէր զնա անօրէն դահճաց, յորմէ և տանջանս չարաչարս գանեալ՝ թափէին ՚ի նա զթոյնս դառնութեան իւրեանց. և ՚ի վերայ յաճախէին սպառնալիքն ՚ի գան հարկանել, և ՚ի կոճեղս արկեալ՝ և գելոյօք վարակել և խորտակել։ Այլ և սաստիկ սովով և ծարաւով ծնդեալ և անուաղեալ, ոչ միայն զի դահիճքն արգելուին զհարկաւոր պէտս ճաշա

(1) Մէ օր. յղացեալ։

կայն , քան թէ առաւել յիւրոց իսկ կամաց անսուաղացեալ՝ Նուածոյ ընծայէր զպխտելն զճաշակսն , որպէս ուրեմն երբեմն Դաւիթ 'ի ծարաւս իւր զջուրն՝ որ 'ի ջրհորոյն Բեթղեհեմի ։ Եւ այսպէս ոչ գոյր նմա 'ի նոցանէ և ոչ սակաւ ինչ մասն 'ի խնայութե . և եթէ էր երբէք ուրէք մեկուսի լինել , և կամ ժամուց ինչ 'ի վերայ անցանել 'ի մենամարտիկն լինելոյ ընդդէմ գաւհձացն , զայն 'ի մշտնջենաւորունչ յաղօթս և յաղերսալս գոհութիւնս և յօրհնութիւնս Քրիստոսի ծախէր . և ըստ անշարժ հաւատոցն որ 'ի Քրիստոս՝ ապա և աստուածային գոհութե խորհրդոյն արժանի գտանէր հաղորդիլ 'ի վերակացուէ ումեմնէ օրինացն՝ ըստ տեսչութեան Տեառն անդ հանդիպելոյ ։

Իսկ իբրև 'ի վախճան անդ կնա տարեալ մղէին , տեսիլն տուեալ չարչարանաց նորա 'ի հայեցողսն առաւել ողորմելի և սքանչելի էր՝ քան զգործսն գլխալլն , որ և յիշատակաւս իսկ ես կշտամբեալ ցնդիմ յարտասուս ։ Վասն զի յոգնաբիծ և մարդախանձ գազանացն զնենգաւոր շունչ թունից օձին առեալ , որ ընդ նմին իսկ զմահ բղխէր արտաքոյ մարդկային բնութեանս բերան , և ապա զնէր դիւրին 'ի վշտաւէր չարա-

ւէր դեղ կորստեան փոխարկելով, և զեւր իսկ զանձեւուցիկն 'ի նմանէ 'ի զատ յափշտակելով, հարստապէս նովին իսկ ձուին ըղբերան նորա, և զփողն փորոցք 'ի ներքս տարեալ մղեալ, և զբեխէ մինչեւ 'ի ներքս յառագաստ սրտին զեղեալ լցեալ, այնպէս իմն հնարէին արգելուլ զառուրեաւ չնչոյ կենդանութեան որ 'ի նմա ։ Եւ ապա գելոց կապանաց արկեալ 'ի կզակն և 'ի պարանոց նորա՝ պնդէին անհնարին առատիօք իբրեւ 'ի հիւսանաց ճաճուր. և բազում կարասիս յարաբարդեալ 'ի վերայ գլխոյ նորա, և աւելի քան զսաստ այր՝ ըստ նմանութեան վեմաց յոլովաբար 'ի վերայ արկեալ՝ այնպէս հեղձամղձուկ մեքենայիւք հնարէին կորուսանել ։ Իսկ իբրեւ յայնմ եւս մասին պարայածեալ և շունչ նորա ընդերկարեաց, անուհետեւ դարձեալ յանդամն ծածուկս և յարուլթիւնս նորա տանջանս և չարչարանս անպատումս և անողորմս հատուցանէին մինչեւ 'ի շունչն վերջին ։ Իսկ յետ այսպիսի անհնարին և դառն կտտանաց և խոշտանգանաց և բրնահար աշխատութեանց՝ հատանէին սրով զգլուխ նորա, վճարեալ 'ի կենաց աստի, որ թագաւորեաց ամս քսանեւերկուս ։

Իսկ ապա լէին տարակուսութեամբ և անսալըր պղծութեամբ ստախօսն ոչ հրամայէ զնա թաղել, և զմարմին նորա յերկրի տալ. այլ 'ի վերայ փայտի տարածեալ բևեռակապ պրկէին 'ի Նոլին քաղաքի. զի որ թաղեալն էր ընդ Քրիստոսի մկրտութեամբ 'ի մահ, պարտ էր նմա զի ընդ նմին և խաչակցեսցի իսկ, և մի մերժեսցի վկայօրէն համարձակութիւնն առ 'ի նմանէն, յորում և կայ մեծաց վարձուց հատուցումն։ Իսկ 'ի տեղւոջ անդ յորում զերանելի և զերջանիկ թագաւորն բևեռակապ 'ի փայտին բարձու պրկեալ էին, ոմանք 'ի հաւատացելոց և յանհաւատից եւս՝ ասէին տեսանել լոյս ճառագայթաւէտ վառեալ իբրև զճրագ ճաճանչաւոր նշուլիւք հարուստ 'ի վեր քան զգլուխ թագաւորի կշռադատեալ հաւասար նմին. և ոքք ասէինն զայս, ստուգութեամբ իմն հաւաստի զբանն առնէին։ Բայց մեք զայսոսիկ 'ի տեսողս անդր թողացուցեալ, և զորս աչօք իսկ տեսեալ է մեր՝ ոչ դանդաղեսցուք պատմել։ Վասն զի հող երկրին՝ յորում 'ի պատուական մարմնոյն աւիշն որ անտի (1) կաթեալ իջեալ էր, բազում բժըշկութիւնս հիւանդաց և վտանգելոց և ախ-

(1) Եւլ. օրի. աւիշն կորանի։ Մի օրի. աւիշն կաթեալ։

տաժեսայ կատարէր ։ Եւ սակս այսորիկ
նշանաց՝ ոմանք 'ի հեթանոսաց անտի 'ի հա-
ւատս քրիստոսականս զանձինս վերածէին ,
և աւազանին լուսոյ վերստին ծնանէին 'ի
Հոգին սուրբ Աստուծոյ ։

## ԳԼՈՒԽ Ծ.

Յաղագս առման և հարուածոցն ամրոցին Երնջակայ ,
և չարչարանաց և աքսորանաց Եղբօր որդւոյ
Սմբատայ , և Բագարատին նորին ։

Բայց ոստիկանն անօրէն արձանացեալ ,
և մարտ զամրոցաւն զԵրնջակաւ եդեալ՝ ոչ
հեռանայր անտի , մինչև զաղատաբար յինքն
գրաւեալ յափշտակէր զամրոցն . զդուռն կո-
րստեան կենաց բնակելոցն 'ի նմա բանայր ,
և զբազումս 'ի նոցանէ բազմախողխող եր-
կաթոյն տայր կերակուր . և զայլս ոմանս ըստ
չարատանջ խմատից լեռնեանց սոդոմակա-
նաց (1) 'ի գերութիւն վարէին ։ Իսկ զհուշա-
կաւորան և զերանելին 'ի կանայս զարբե-
պաշտօնս , և զգերիմաստ մայրն Սմբատայ իշ-

(1) Երկու օր . սոդոմայականաց ։

խանին Սիւնեաց , և զբարեպաշտուհի կին նորուն հանդերձ ամնդեաց իւրոյն որդեկաւ , և զկին Եղբօր նորուն Սահակայ Սիւնեաց տեառն , գերեալ յածրզէ անտի փարանդեալ պահէ 'ի Դւինն քաղաքի բազում նեղութեամբ և տառապանօք . որպէս զի ոչ ոք 'ի նոցանէն երեւեալ լինէր՝ թէ ո՞ր տիկինն իցէ , և ո՞ր նաժիշտն : Եւ որ նախ քան զայս գրգեալք և գգուեալք էին 'ի դահաւորակս իւրեանց , այժմ մատամբք իւրեանց փատակէին.և զպէտս ոչ եղբարհին այնուքիկ վճարէին. վասն զի տուան գանձք նոցա , եւ աւար հարան զարդք և կազմածք տանց : Եւ այսպէս կոծ և աղաղակ և կականումն և ձիչ բազում յարքունական ապարանս նոցա լսելի լինէր :

Իսկ երբեւ զայս աղմկի աղէտին համբաւ լսելի լինէր յականջս բարեպաշտպաշտ իշխանին Սմբատայ , և եղբօր նորուն Սահակայ , միումն 'ի կողմանս Վասպուրականի և միւսումն 'ի կողմանս Գուգարաց , թէպէտ և արիաբար զմի զինուորութիւն զինուորէին 'ի վերայ թշնամեացն դիմեալ , և զրաւաթափ գերելոցն ընտանեացն լինել , սակայն ոչ կարացեալ վաղվաղակի գումարտակս զօրաց կազմել , և ոչ 'ի հեռաստանէ ածապա-

բեղ յանբաւ գործոյն, մինչեւ 'ի մետաղս բանտից արկեալ ընդակայոմ զպահպանութիւն պատրաստէին: Ընդ այս տիկինն մեծ մայրն Սմբատայ, և որդեակ նորուն իսկ իշխան՝ փախձանեալք թաղեցան 'ի միասին առ դուրս մայրաքաղաքին եկեղեցւոյն Դըւնեայ: Իսկ զկանայս երկոցունց նոցա բարձեալ տարան 'ի Պարս արքայականի, 'ի դիպահոջ ամուրս իւրեանց կացուցեալ:

Իսկ բազմահանդէսն այն և աջողակն 'ի հրահանգս կրթութեան փարթից մարտի Աշոտ որդի արքային Սմբատայ, բազում ընթացութիւնս և նահատակութիւնս քաջութեանց ուժեղակ մրցութեամբ ցուցանէր 'ի ժամանակի հալածմանցն, եւ անցանէր զանցանէր զամենեքումբք արիաբար հանդիսիւ, որք կենօք և աւուրբք զուգահաւասար նմա էին: Սա նախ քան զկատարումըն վկայօրէն փախձանի հօր իւրոյ՝ գրեթէ իբրեւ զործուի սաւառնաթեւ սլացեալ ընդ օդս, այնպէս սրավարեալ խոյանայր ըզկնի գիշատեալ ալդաղեայն, որք ապատակ ափռեալ տարածեալ էին ընդ երեսս երկրի մերում. և նախ քան զամենայն ինչ 'ի փոքր մի փայրկեան ժամանակի յինքն ահասարակ գրաւեալ նուաճէր զբոլոր իսկ

ամրոցս տէրութեան հօր իւրոյ, զոր առեալ կալեալ էր սափկանին։ Եւ զօրս միանգամ պահնակս անդ 'ի Սարակինոսացն գտանէր, Ի սուր սուսերի մաշէր. և պահնակօք և պատուարօք և բազում ռոճկօք զամուրսն ամրացուցեալ, և ինքն զհետ թշնամեացն կրթէր, ուր և ասպատակք իսկ հինից իսմայէլականացն(1) գտանէին. և ամենայնիւ յամենայնի աներկիւղաբար սրտի դրեթէ զեղխական պատերազմն յարդարէր ընդդէմ հակառակամարտիցն՝ հանդերձ հարազատ եղբարբն իւրով Սբատաւ։ Եւ ապա կառավար կալեալ զմիտս իւր, առ Աստուած հայէր. և հասեալ 'ի վերայ իսմայէլեան զօրուն, որ նստէին իսկ 'ի Բագրաւանդ գաւառի, սրոյ ճարակ զամենեսեան զնոսա արար։ Եւ զգլխաւոր երեց նոցա ձերբակալ արարեալ՝ հրամայէր տիկ ձեւացուցանել և կախել զպարսպաց ամրոցացն առ 'ի տեսիլ և յահաբեկութիւն բազմաց։ Եւ ինքն ապա չուեալ գնացեալ 'ի Շիրակ գաւառ, և 'ի վերայ հասեալ զօրուն՝ որ 'ի նմա որջացեալ զետեղեալ կային, և զայն եւս առհասարակ ընդ սուր հանեալ. և զմնացեալսն վարատեալ վանէր։ Եւ անտի դարձեալ

(1) Մի օրի. յաւելու՝ իսմայէլականաց թշնամեացն։

իբր զօղապարիկ ինն երկթեալ շուէ զկով-մամբք Պուգարաց, և զայնս ևս ամիսս իւրոյ (1) ոչքուրթեամբն առհասարակ յինքն գրաւէր նուաճէր: Եւ ապա անտի յեզա-կարծուին իբրև զորգայթ ինն հասանէր ի վերայ զօրուն Հագարացւոց, որ ի մայ-րաքաղաքն Վրաց կային ի Տփխիս. և անդ զոմանս որոյ ձարակ տայր, և զայլս ի պա-տուակմանց ձերբակալս արարեալ՝ երկաթի կապանօք ի մեսադս բանտից պահէր, զի ընդ այնպիսի քրիստոնէից փոխանակեսցէ գե-րուաժամփ առնելով՝ որք ըմբռնեալք իսկ էին ի ձեռն չար ոստիկանին: Եւ ապա ան-տի առեալ զաւար և կապուտ բազում, դառնայ ի գաւառն Տաշրաց. և լուեալ թէ զօր իսմայելեան զօրեալ նստեալ դա-դարեալ կայ յամուրս խորաձորս Աղստե-ւոյ (2), և այնու հետև անձնիշխանս զզօրս իւր արարեալ իբրև արս երկու հարիւր, և եր-թեալ գնդաւ ինն ի վերայ զօրու Հագա-րացւոյն, տուեալ անհնարին մարտ քաջու-թեամն՝ առհասարակ զնոսա սրոյ ձարակ տայր. և առեալ զկապուտ կողոպուտն դառնայր ի բանակն իւր: Եւ իսկ և իսկ չուեալ եր-

(1) Ե. Ձեռ. գրչ. իւրեանց . . . ինքն:

(2) Երկու գրչ. Աղստեւոյ. այլ գրչ. Աղստաւեայ:

թեալ առ յաւէտ սիրելի իշխանն իւր Գուրգէն, և անդ 'ի միասին զհասարակացն հոգս խորհրդաբար տեսեալ. ապա երթեալ գընայր զկողմամբք ամրոցացն Արշարունեաց։ Եւ յայնմհետէ ոչ ևս յաւելին ելանել ապականիչքն յաշխարհ տէրութեան նորա։

Զայս տեսեալ ապա թագաւորն Վրաց, այլ և զօրացն իւրոց՝ եթէ այց արար նմա Տէր. և պատրաստեաց նմա և յաջողեաց 'ի բարութիւնս, ապա այնուհետև հարթ հաւասարութեամբ 'ի մի կամս և 'ի միաս զինքեանս բերեալ, և թագ նմա կապեալ թագաւորեցուցանէին զնա փոխանակ հօր իւրոյ. յինքնակալութեան իմն պայմանի պատուոյ զնա համարեալ, և Աստուծոյ ամենակալի զապագայն յանձն արարեալ։

## ԳԼՈՒԽ ԾԱ.

Յաղագս յաջողութեանց Գագկայ արքայի. և դառնալոյ հարուածոց երկրի Մերոժ, և նահատակութեանց բազմաց։

Յայնմ վայրի ապա և թագաւորն Գագիկ հանդերձ վացեքաղխոսիկ և բարեպաշտօն եղբարբն Գուրգենաւ, ոչ սակաւ ինչ

քան թէ բազում մարտս տագնապալից ՚ի վե-
րայ պատրաստէր թշնամեացն, որ ջոկերս ա-
ռեալ էին ըստ հրամանին Յուսփայ ՚ի կող-
մանս Նորպատականի ։ Նոյն այսպէս անհա-
բար քաջութիւնս յանձինս իւրեանց սպա-
ռօրեալ հանդերձ սպասալար և պայազատ
գնդիւն, զբազումս ՚ի Հագարացւոցն թա-
ւալգլոր խաղացուցանէին. ոչ մի անգամ՝ այլ
և բազում անգամ՝ տեղւոյ տեղւոյ զայս արա-
րեալ՝ առ ստորոտով աշխարհին Կորդաց և
Ոստակաց (1) և Նորպատականի. յորմէ խու-
ճապեալ թշնամեացն իբր յահագին իմն ձայ-
նէ բեկանող գազանաց՝ արգելեալ գտանէ-
ին ՚ի սաստիկ ասպատակէ հինիցն ։ Այլ և
զՄիսականաց տերանց և ազգաց ոչ սակաւ-
ինչ աղմուկ շփոթի շուրջ պատէր յատիկա-
նէ անտի, որք և ամրացեալք իսկ ՚ի խոխոմ
խորոցն ձորոց, և յամուրս քարանձաւաց՝
բազում արշաւանս հէնս ՚ի վերայ թշնա-
մեացն հասուցանէին, և գումարտակս սփ-
ռեալ արեանց ճապաղիս հեղուին ։

Զայս ամենայն ոյժ պնդութեան տե-
սեալ չար ոստիկանին ըստ ամենայն կուսա-
կալութեանց, և ահագին իմն զայրագնաբար
մռմռեալ մղձկեալ սրտիւ ՚ի թեթեւագոյնս

(1) Մի օր. Ոստականաց ։

անդր զթոյնս թափէր. և այնուհետեւ ապա հետամուտ լեալ, և զհետ մտեալ[1] իւրաքանչիւր ոք 'ի կուսակալաց պալատեաց լաւ իւրաքանչիւրոց կողմանց 'ի փախուստ 'ի նոցանէ դառնային ռամիկն և անռամիկն, մինչեւ ոմանք 'ի մերոց անտի հատկեալ շնչով հազիւ թէ ճողոպրել կարէին 'ի սրոյն՝ որ լցեալն էր արեամբ. վասն զի կարիք մեղացն զօրանային յանդգամն ամենեցուն առ 'ի պարզաբերս առնել զմեզ մահու: Իսկ մեծամեծք աւագանւոյն՝ ձորոց և լերանց և անապատից և քարածայռից եւ ամրոցաց պարապէին[2]. և այլ եւս խառնիճաղանճքն և բոկոտն և մերկանդամ և թափառականն, 'ի սով և 'ի ծարաւ և 'ի լքուցումն հարեալք և մաշեալք, ցան և ցիր լերանց և դաշտաց բերէին: Ոմանք 'ի ձմերային սառնասաստ ձիւնախաղաղ սառնամանեացն մեռեալք ծայրատէին և հեղձնուլին. իսկ այլք յամառնային հիւղական[3] յորդաբորբ ջերմութենէ տօչորմամբ կիզեալք այրէին և խորովէին: Իսկ անկարացեալքն 'ի հալածեալ փախստենէն, և մատնեալք 'ի ձեռս դրժողացն՝ անխնայ անողորմ որոյ նոցա տապաստ արկեալ՝ սու-

(1) Մի օրի. զհետ պնդեալ:
(2) Մի օրի. պարապէին:
(3) Մի օրի: հիւսական:

գանէին արեամբ զերեսս երկրի. և ոմանք գրեթէ իբրև զանբան անասունս 'ի գերութիւն վարէին. բազում երեւելի արս և կանայս և մատաղ մանկունս իբրև զգառինս 'ի մէջ գայլոց ածեալ 'ի պանդ վարէին: Իսկ զոր պարոն վարկանէին փախստական լինել, զայն արտաքոյ տարեալ արոհէին յայլոյն, զորդի 'ի հօրէ, զեղբայր յեղբօրէ, զկին յառնէ, և զմայր 'ի դստերէ, և զհարսն 'ի սկեսրէ, և զանդրանիկն 'ի մօրէն 'ի սնենէ 'ի բաց 'ի գրկացն յափշտակեալ:

Ո՜ւ անդ էր ապա տեսութիւն ողորմելի, և ողբք անհանդուրժելիք, և լալումն անտանելի, և բախումն կրծից, և կքումն արտեւանաց, և դողումն անձին, և սարսափումն սրտի, և ճչումն կոծոց, եւ ցաւումն գեղոյ, և խզումն հերաց: Իսկ զոչ պիտանացուսն 'ի գործ փախստեայ կամ սոդոմայական արբանեկութեանց՝ 'ի մետաղս եւ 'ի բանտս և 'ի շղթայս տարեալ մղէին, սաստիկ տանջանարանօք խոշտանգեալ, և ըստ հոմերական օտար կանոնին՝ 'ի փարթամէն և 'ի փանաքէն զնոյն կշիռ միապէս պահանջէին գանձս ոսկւոյ և արծաթոյ: Ո՜ւ միանգամայն խոկ զմեծս և զփոքունս 'ի մի տանջանս մահու դատապարտեալ սպառէին ըն-

պանմամբ յաշխարհէ աստի . և զայս եւս ոմանս ըստ Մոզոմննեան ողէկին՝ առ սակաւ սակաւ զարիւնս նոցա ծծէին , ազձատեալ չարխնոյ խորհրդով ապահովեն յագուրդ ոչ առնելով : Իսկ զայս ոմանս մանկանց դե-ղձմտութեամբ խարդաւանեալ՝ որպէս թէ ողորմութեամբ զայն 'ի նոցանէ լեալ այնոցիկ զոյս ներգործէին զչարն , և զայս հնարիմաց խեղդաւանօք (1) հեղձամղձուկ սատակէին : Նա զոմանց զարհաւիրելիս իմն ընդ կեանս խառնեալ . զի մինչ դեռ եւս յատանուր նոցա կալով՝ կենդանւոյն 'ի կրծիցն 'ի վայր դաշհիձքն սրով զորովայնն հերձուին , և մինչեւ զունչն աւանդեալ էր՝ 'ի դուրս զերդն կորզէին , մասունս տալով զայն իւրաքանչիւր ումեք իբր 'ի կատարումն իմն լուսթեան սկիզբ պաշտամանն իւրեանց : Իսկ այլք ոմանք՝ որք թեթեւ համարեալք և անատեսեալք էին յաչս նոցա , համարձակութիւն տային այնոցիկ առեալ , իբրև զաւիկ կէին և գնային . զորոց պհետ մնեալք վաղերեք եւտապարօք և նրանօք իբրեւ զոռունկս իմն ուտաքանց արարեալ ծայրատէին , և անպիտանս առնէին 'ի ձեռաց և յոտից և 'ի բոլոր ան-

(1) Այսպէս ունին ամենայն օրինակք . գուցէ՝ խեղդամնօք կամ խարդաւանօք :

դամաց ։ Իսկ այլ ոմանց պարանս առատկաց յերկոսին կողմանս 'ի գլուխս և յոտս նոցա եդեալ, եւ բազում ուժեղակ մարդկամբ այսր անդր ձգձգեալ՝ մինչեւ լուծանել միջոյն. և ապա երկաթի սրով բախեալ միջով չափ ընդ երկուս բաժանէին ։ Իսկ զի գեռեւս շնչոյն 'ի նոսա գոլով՝ առ տապոյ վըտանգին, կամ յայլոց եւս ձեռաց ապրելոյ՝ ըստ գլխոյ կուսէ մասնն կանգնէր կայր փոքր մի 'ի վերայ հատածի միջոյն, և խոխոտէր խօսել կամ զանգս ինչ աղէտին, կամ ըստ հայցուածոյ ինչ նմա ումանց, թէպէտև վըտանգն չուեթափութի լեզուին տուեալ՝ ոչ բաւէր զբանն իմքնակատար յայտնել ։ Իսկ զումանս հրամայէր զի կապեսցեն յանխնայ և հատուածեսցեն մարախօք արջառաչլաց 'ի կողս և յորովայնս թափանցանց վիրաւորեալք ։ Եւ մինչ շունչ նոցա կենդանի էր 'ի նոսա, արկանէին յերկիր և քարշէին ։ Իսկ կիսոց զունչս և զականջսն հատանէին, և զմատունս մարմնոյ նոցա կոտորէին, և զմատունս նոցա ծայրաքաղ առնէին. և զոմանս յետ անհնարին հարուածոց 'ի կոճեղս պնդէին, և արկեալ կային ընծառօք յոտն յերկոսեան, մինչ զի անհնարին լինէր նոցա նստել կամ ընկողմնել. և զխանջ տապոյ աշխատութեան ոչ կար ինչ բժշկել ։

Լցին 'ի նոցանէ և յոլովք բազմաց (1) որք վասն առ 'ի Քրիստոս հաւատոյն բազում անգամ 'ի հուրց և 'ի փորձ արկանէին, պարգեւս և պատիւս բազում պերճութեանք խոստանային. և պաճուճազարդ պատմուճանս եւ երեւելի զարդս նոցա պատրաստեալ յարդարէին առ 'ի խաղել ական տեսանելոյ. եւ պատուաւորաց ոմանց գանձս եւ գերդաստանս առաջի մատուցանէին, միայն թէ զանոսի պաշտամունս նոցա պատուեալ պաշտեսցեն: Այլ Քրիստոս որ յանձինս նոցա զարթոյց զկամս կենարարս (2) և զայս զքանչելի հանդատեանն, նոյն ինքն հրաշիւ աստուածայնով զնոսա ջեռուցեալ 'ի սէրն սուրբ Աստուծոյ. և միջամուխ հաւատով ընդդէմ նոցա վառեալ, զի ապականեսցեն 'ի բաց դնել իմաստութիւն (3) չարին, և լուասցեն զկապուտակ ներկուածս նախանձու հակառակորդին, եւ հասցեն զարմանս ազահութեան 'ի հոգեւոր պատերազմին: Եւ այսպէս զամենայն սատանայական դիւթութեանց պաշտամունս առ ոչինչ համարեալ, ոչ շեղեցան 'ի շղուարա-

(1) Ի միւս օրի. էին՝ բազմաց:
(2) Մի օրի. կենդանարարս:
(3) Մի օրի. ոմնէր յետոյ ուղղեալ և եդեալ զչարախմացութիւն:

ընդ շողշողութիւնս նոցա, և ոչ զարհուրե-
ցան յահագին սպառնալեացն և ՚ի տանջա-
նարանաց՝ զոր պատրաստէին նոցա։ Եւ իբ-
րեւ այսպէս առհասարակ սոքա զգաստա-
ցեալք լինէին ՚ի պատասխանատուութիւն
աւետարանի փառացն Քրիստոսի, եւ ըղ-
լուեալն յունկանէ իբրեւ ՚ի վերայ բարձր
տանեաց քարոզէին, թէ քրիստոնեայք եմք,
և . . . օրինացդ ձերոց ոչ կարեմք հնազան-
դել, այնուհետեւ զանդատապարտն իբրեւ
զգաստապարտ վարեալ, և մինչ մահու ՚ի
դատաւորաց անտի ՚ի վերայ նոցա եղեալ,
որով զնոսա առհասարակ վատնէին. որք և
ընկալան իսկ զերանելին յաղթութեան՝
յԱ՚ստուած թագաւորեալք։

Իսկ յայլում վայրի դարձեալ այլք ումանք
ըմբռնեալք վարեցան ածան առաջի դատա-
ւորացն։ Եւ իբրեւ հարցան ՚ի նոցանէ, և
բազում աղերսալի և հեշտալի բանս բար-
ւեաց պարգեւաց առաջի դնէին, միայն ե-
թէ պաշտօն մատուցան կուռանին Անահի-
տի հաւանեալ դարձցին։ Նոքա եւս ոչ պա-
տասխանեցին անգամ զդատաւորին արժանի
գրեցին, այլ միայն ընդ միտս խուբեանց և
ընդ Աստուծոյ խօսէին, որոյ հաւատա-
ցեալք յարդարութիւն, և բերանով խոս-

տոլաննեալք զփրկութիւն ։ Եւ այնուհետև հարուածս 'ի Թիկունս 'ի Թշնամեացն ընդունէին, և ապտակս 'ի ծնօտս, և գան սաստիկ 'ի պարանոցս, և հանեալ մղեալ վարեալ տանէին յասպարէզ կատարմանն ։ Եւ 'ի մի ջոկ ղուրբան գնդեալ, և իբրեւ զպարիսպ շուրջանակի զնոքօք փաղակաւոր դահիճքն բազմացեալ, այնպէս սուր 'ի վերայ եդեալ կատարէին ։

Իսկ արք ոմանք 'ի Թշնամեացն յայնցանէ որ շուրջն կային, տեսեալ 'ի սրբոցն անտի մանուկ մի ղուարճատեսիլ և գեղեցիկ երեսօք՝ Մ՝իքայէլ անուն, յաշխարհէն Գուգարաց, որոյ չեւ եւս էր փաղփաղեալ բողբոջեալ մրուքի բոյք մօրուացն ընդ ծնօտսին, եւ իբրեւ մարդասիրել 'ի նա խոկացեալ. և բուռն հարեալ զնմանէն (1) յինքեանըս կորզեալ ձգէին, զի մի ընդ այլսն և նա կորիցէ ։ Իսկ նա արտօսրալԹոր կականմամբ զաչսն յերկինս համբարձեալ, և զօրացեալ վերին օգնականութեամբն, 'ի բաց զինքն 'ի նոցանէն շոպեալ ճողոպրէր, և հապճեպ տուեալ և դիմագրաւ դիմեալ առ ընկերս իւր՝ առաջի սոյն զգլուխ իւր կամաւորաբար մատուցանէր ։ Եւ այսպէս 'ի բանս

(1) Երկու օրէ . 'ի նմանէն ։

ւոր ողջակիզումն զինքն Քրիստոսի նուիրէր ընդ այլ եւս անարատ պատարագայն եւ զենմանց ՚ի հոտ անուշից հօրն երկնաւորի ։

Այն յայնժամ եղբարք երկու, ՚ի նախնեայն Գնունիք, որոց անուանքն միումն Գուիւթ եւ միւսումն Գուրգէն ճանաչիւր, որ եւ ըմբռնեալք ՚ի գերչայն՝ ածան առաջի բռնադատի ոստիկանին ։ Նա եւ երբեւ հարց եւ փորձ ընդ նոսա լեալ, եւ գրեթէ զկէս տերութեանն իւրոյ տալ նոցա խոստանայր, այլ եւ բազում զգեստս եւ զարդս ոսկեճամուկս, եւ ծիրանիս եւ երեւելի լակմացի, եւ բեհեզս նոցա մատուցանէր. եւ կամարս եւ մանեակս ոսկեղէնս, եւ նժոյգս սպաւորս ճոխապաճոյճս ՚ի զէնս եւ ՚ի զարդս. եւ ապա ըզձեռն իւր ՚ի նոսա կարկառեալ. եւ գիրկս ըզպարանոցօքն արկեալ, եւ հուպ ընդ հուպ ՚ի համբոյր մերձեցուցեալ զնոսա՝ այնպէս շողմոգէր շողոմութեամբ բանին, հնազանդել նորայն բանի, եւ խնայել յորբունս մանկութեան իւրեանց, եւ դառնալ . . . յօրէնս զոր ինքն պաշտէր ։ Իսկ նոցա գեղեցիկ իմն մոլութեամբ ՚ի զէն զինուորութեանն Քրիստոսի զինքեանս վառեալ, համարձակաձայն բարբառով զարուք դաւանութիւնն քարոզէին առաջի ամենեցուն՝ թէ "Քրիստո-

նեայ.ք եմք և զճշմարտութիւն Աստուծոյ՝ որ յինքն զանմահութիւն ունի, և 'ի լոյս անմատոյց է բնակեալ, ոչ կամիմք փոխանակել ընդ ձերում ստութեանդ, որ ոչինչ իսկ են, և յոչինչ համարեալ»: Իսկ երբև զխորհուրդ նոցա այսպէս 'ի սէր նահատակադրին Քրիստոսի արձանացեալ տեսանէր Թշնամին, հրամայէր այնուհետև սրով զնոսա սպանանել: Իբրեւ ածան 'ի Թէատրոնն իբրև զոչխար 'ի սպանումն, աղօթս մշտնջենաւորունս և պաղատանս աղերսալից անդր առ Աստուած մատուցանէին, գրել զնոսա 'ի Թիւ վկայից որոց, որք սիրեցին զօր երեւելոյ գալստեան նորա: Իսկ հանդերձեալ դահճացն զերէց եղբայրն կատարել սրով, նա աղաչանս նոցա մատուցանէր, նախ զկրտսերն քան զինքն տալ կերակուր սրոյն, 'ի մտի եդեալ Թէ գուցէ 'ի վերջ քան զնա մնալով՝ ըստ մանկութեան տիոցն զարհուրեսցի ինչ յիսմայէլեան սրոյն սպառնալեացն. վասն զի մրազարդ (1) մօրուքն 'ի ծնօտսն դեռեւս էր տիգեալ և ընձիւղեալ. և դարձեալ յեղբայրըն կոյս ասէր. «Եղբայր ցանկալի, նախ դու ընծայեցիր Քրիստոսի յուսոյն մերոյ՝ մատուցանելով զքեզ ինքն բանաւոր ողջակէզ և

(1) Մի օրէ, մրացեալ:

զենումն նուիրական նմա , որ փառս մեր եղև մեռեալ . և վերագրեալ զմեզ 'ի կեանս »: Իսկ նորա ոչինչ գրեալ զմիշտն , և ոչ 'ի մտի եդեալ զանձնային մահուն տուգանս , յօժարութեամբ դիմեալ 'ի սուրն : Այսպէս հաստատ գլուխ նորա , պսակեալ 'ի Քրիստոսէ անթառամ պսակաւն : Զկնի սորա երեց եղբայրն յետ բարւոք պատերազմին և կատարման ընթացիցն և պահպանութեան հաւատոցն՝ 'ի նոյն միտս զինքն վառեալ , յանողորմ սրոյ անտի սպանանի 'ի կենացս , և կենդանանայ յանդ երանութիւնս անփախձան ուրախութեանցն վերին արքայութեան :

Այսպէս ամենեքեան սոքա սուրբք՝ որ առ 'ի յինէն պատմեցան , յիրաւի տարեւորական տօնախմբութեամբ պատուին միշտ յեկեղեցիս սրբոց , որ յիշատակի սոցա սահմանեալ մարերի ամսոյ՝ որ օր քսան և եօթն : Վասն զի չիջուցին զհրապուրանս տանջանաց , և գրեցան յորդիս վերին Սիոնի , անխէթ հաւատով յաղթեցին խորամանկութեան նոցա , և հատին կտրեցին զսուր մահաբեր պողոց նոցա . զի չէր ինչ ահաւոր՝ ուր սէր Հօր է . և ոչ այն ինչ որ ցաւեցուցանէ՝ ուր փառքն Քրիստոսի են : Եւ այսպէս տապա

աստուածային իմաստութեամբն ՚ի բաց մերժեալ յանձանց զամենայն ինչ որ ապստամբ և վայրենի է, և որբեալ զինքեանս ՚ի մարդկանէ պղծոց և կորուսելոց, կենացուցին իւրեանց զհարկաւոր մահ մարմնոյ, և կամաւորաբար ածան իբրև զոչխար ՚ի զենումն, և փոքր նեղութեամբ վայրկենիւ՝ յաւ և յերկիւղ Տեառն յղացեալ, երկնեցին և ծնան զհոգի փրկութեան. և սուրբ խնդրուածք նոցա ելուցին զհրեշտակս ՚ի փրկութիւն իւրեանց, և նովին խոնարհութեամբ հասին երկնաւոր բարձրութեանն: Լուան աւետիս ՚ի հեռաստանէ, և զուարթագին ուրախ զտանջանս և զմահ իբրև զանմարմինս կրեցին. նմանեցան քաջ նահատակացն մահուն, և դիմեցին խաղաղութեամբ առ Աստուած ժամանեալք. առին զյաղթութեան բրաբիոնն, և վերադառնեցան յորդիս վերին Երուսաղէմի: Որպէս սկսանն քաջութեամբ, նովին և կատարեցին զհանդէս նահատակութեան ընդ երկնաւոր սիրոյն, և արտափայլեցին իբրև զարեգակն ՚ի մէջ տիեզերաց, որոց և անուանքն նոցա գրեալ են ՚ի դպրութիւն կենաց:

Իսկ այլք ոմանք թշուառականք և կախեալք ՚ի սատանայէ, զարհուրեալք յաւ-

ժամանակեայ մահուանէս , և դիւրացուցեալ 'ի սիրտ իւրեանց զ'ի նմին և զանոյշ խոստմունս նոցա , շուրջ զինքեամբք պատեցին զերկուս մեղաց մահու , և ուղխիւք անօրէնութեան հեղեղեցին զանձինս իւրեանց , և վրիպեալք 'ի ճշմարիտ լուսոյն՝ խաւարագած նմանութեամբ կուրացան . մոլորեալք յարքունական պողոտայէն , և քեցեալք 'ի բաց յատակ ծորանէ քաղցրութեան խորհրդոյն աստուածայնոյ՝ զմուր դառնութեան բաւականաբար արբին , որ վերջին է չարութեան և առաջին կատարատութեան . և ուրացեալք 'ի հաւատոյ՝ չար ես քան զանհաւատն գտան , ոչինչ օգտեալք և 'ի խոստմանց ինչ նոցա՝ գոնէ միայն ըստ մարմնոյ կենացս . այլ երերածուփք և տատանեալք և թշնամանեալք էին , և յամենայն կողմանց հարեալ և փաթարեալ։ Եւ ապա մարդիկ այնպէս ուրացութեամբն ձաղեալք և հասեալք 'ի խոր աղքատութիւնս , մինչեւ 'ի դրունս անանկաց շրջել և հաց մուրանալ . և միայն զկորստական մոլորութեանն և զանարգութեան անուն ժառանգեալք ։ Եւ ոչ գտաւ խոստովանութի 'ի շրթունս նոցա . իջին 'ի դժոխս անհնարին դառնութեամբ , առ իմք գտեալ հրոյն գե-

հենի ։ Նոյն այս գրեալ եղեւ յինէն առ ՚ի կշտամբութիւն յանդիմանութեան այնոցիկ · որք խորհին ցանկացողք գործոց նոցա լինել ։

## ԳԼՈՒԽ ԾԲ ·

### Յաղագս յանձնելոյ օտար ազգաց ՚ի ձեռս երկրի մերում , և անմիաբանութեան նախարարաց մերոց ընդ իրեարս ։

Բայց և ես ողբական ողորմութեան բանս ինչ յառաջ բերեմ ասել · քանզի դրացիք մեր և ազգք որ շուրջ զմեօք են , Յունականք և Եգերացիք և Գուգարացիք և Ուտէացիք , և Հիւսիսական ազգք բնակեալք առ ստամբքն Կովկասու , ՚ի միոյ եղեալ՝ եթէ գուցէ յինքեանս հետի աղագս գտանել մարթասցի սատիկանն չար , թէ երբէք չէին գոյցէ զքաղաքս և զաւանս և զգեօղս , վասն այսորիկ ՚ի խլել և ՚ի բրել , կործանել և յատակել ջանացան առ ստորոտով իւրաքանչիւր աշխարհացն իւրեանց ։ Նոյն այս խառն ընդ նոսին եւս ուսաղակք (1) և որի-

(1) Մի օր · ռամիկք ։

Հայք եղեն ՚ի մարտս ընդ երկրի մերում. Ե բազում ինչ այն էր՝ որ ՚ի նմանէ անցք ընդ աստուածաշէն եկեղեցիս անցանէին յեղծումն և ՚ի խոպանումն եւ յապականումն վարակեալ: Եւ զբազումս զաշխարհս իբրև զանապատս անկոխ (1) անջրդի ցուցեալ տապալէին. եւ դրեթէ իբրեւ զերկիր որ ոչ անց մարդ ընդ նա, և ոչ բնակեցաւ ՚ի նմա որդի մարդոյ, այնպէս զապատն անապատ առնէին: Եւ փառն ընդ միմեանս բախեալ՝ բազում ձայնախս արեան հեղեալ. դիակամբք լուին զերեսս երկրի մերոյ, և առհասարակ յաւարառեալ կարօտ բազում խաղացուցանէին յինքեանց ըստ իւրաքանչիւր աշխարհաց կշիռ: Եւ այսպէս անմարդացեալ և անզաւակացեալ, խոպանացեալ և անշքեղացեալ, այնուհետեւ (2) անդաստանք մեր եղեն իբրեւ զանդաստան մայրառախիտ, և ցամաքեցան բողբոջք բուսոց արտավարաց եւ արօտից. և քաղաքք մեր կործանեցան առ ՚ի չգոյէ բնակչաց, և երկրագործք մեր սպառեցան, և սուգ զգեցան: Եւ այսպէս ծածկեցին զմեզ անօրդանք մեր. և ՚ի մեզ բովանդակեալ լցաւ մարգարէու-

(1) Յեղեալ օրէ. չէր՝ անկոխ:
(2) Մէ օրէ. այնուհետեւ ասանք և չէնք ը եղեն::

ճչիւնն Եսայեայ, եթէ՝ Երկիր ձեր աւերակք, քաղաքք ձեր հրձիգք. զաշխարհս ձեր առաջի ձեր օտարք կերիցեն, աւերեալ և կործանեալ յազգաց օտարաց:

Իսկ իբրեւ այսպէս կրեցաք տագնապս տարակուսից 'ի հինից օտարաց, 'ի մերս ապա լինիցուք 'ի թագաւորս և յիշխանս աննախառուցց, այլ և 'ի պետս և 'ի նախարարս երկրի մերոյ. և յուսացեալ ապաւէնք ոչ եւս ընդ փորձութեանն խառն վրիպել ացա և անկանել, այլ ջան առաջի դնել և զէն նեղութեանն հնարել. և վայելչաբար 'ի միասին կապակցել հասարակ եղբայրութեամբ, և իբրեւ զմի այր միանալ. և ըստ (1) Դաւթի պարսաքարել զնոսա Գողիաթու մեծազէն բուրգն, կամ ըստ Գեդէոնի ըստ հոլովելոյ նկանակին սրով Տեառն վանել զճամբարս թշնամեացն, կամ ըստ Յայէլի թերեւս զոնէ յետ զկաթն արբուցանելոյ՝ ցցով վարսաւորել ընդ ծամելեան Սիսարայ, կամ իբրեւ զՄակաբէ՝ 'ի շուրջ պատեալ պատերազմէն փրկել: Եւ այսպէս ազատել զկաթուղիկէ եկեղեցի, և լուծանել զլուծ 'ի պարանոցէ հաւատացելոց, և շահել զօր-

(1) Ակնարկէ զբէ. տանէկն՝ ընդ Դաւթի. ... ընդ Գեդէոնի. ընդ Յայելի:

գիս սպանելոյ ։ Բայց ոչ զայս եղեւ տեսանել մեզ , այլ զնորին հակառակն կրեցաք . վասն զի նուաղունքն քան զմեծամեծսն ձեռներէց լինել ջանային . և ծառայքն ըստ Սողոմոնի հնարէին՝ զի զտեարս տրեխաւորեալ ՚ի գետնի գնացուսցեն , և ինքեանք ելցեն յերիվարս ահիպարանոցս և առաթուր հարողս , խրոխտացեալք և սնքացեալք մեծաապստամբութեամբ ։ Իսկ թագաւորք մեր և պետք և իշխանք , զորս ՚ի բնէ նախարարութիւնքն էին , ջանային փարատել և խըլել յիւրաքանչիւրոցն բնակութեանց , եւ ըստ ախորժից իմն ձեռական և նոր ստեղծանել պայազատս և սպասաւորս ։ Նա և եղբայր ընդ եղբօր , և ազգայինք ընդ ազգայինս ընդվզեալ՝ ՚ի նախանձ և ՚ի չարակնութիւն և ՚ի գրգռութիւն , և ՚ի կատարեալ ատելութիւն ընդ միմեանս բերէին ։ Ոչ այսպէս համագունդ ընդ միմեանս հարեալք ՚ի հակառակութիւն և ՚ի կռիւ պաքարէին , և միշտ սուր յազդեր ունելով՝ բաղում եւս քան զթշնամին հեղուին ՚ի միմեանց զարեան ճապաղիս ։ Ոչ առհասարակ զքաղաքս և զգեօղս և զաւանս և զագարակս , այլ և զտունս իւրեանց քանդէին ձեռօք իւրեանց . և գրեթէ այն ինչ ոճիրք

հակառակութեան դատն պատճառք հինից եկեղեց 'ի վերայ մեր բառ Սողոմոնի, թէ՝ Ատելութիւն գրգռէ զբարկութիւն: Եւ առ մեզ լցաւ միւս մարգարէութիւն, եթէ՝ Անկցի այր ընդ այր, և այր ընդ ընկերի իւրում. ընդհարցի մանուկ ընդ ծերոյն, և անարգն ընդ պատուականին: Որպէս ապա ամենայն առաքինի քաջողջութիւն եւ շինութիւն և խաղաղութիւն քայքայեցաւ, և եղծումն և ապականումն զանեղի փոխաբերեաց: Եւ սակս այսորիկ ապա մարգարէն ընդ մեզ ողբակցէ պառաւքին բարեզարդութիւնն, և զվերջին ընդդիմակազմութիւնս. եթէ առաջ նորա դրախտ փափկութեան, և վերջ նորա դաշտ ապականութեան:

## ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս դառնութեան տարերց և սովոյ և հարուածոց թշնամեաց, և մարդակեր գազանաց:

Ըստ հարուածոցս դաժանութեանց և տարերքս եւս յեղափոխեցին 'ի մեզ ըզդառն առարկութիւն չարի. վասն զի բա-

րեխտուն օդք հիւսիսայինք 'ի դառնաշունչ հողմ հարաւային շնչեցան, և քաղցր և հեշտալի գարուն 'ի ձմեռային սպառութիւնս յեղանակեցաւ ։ Յայնժամ (1) երկրագործք մեր բազմայորդոր էին 'ի վաստակս ձեռաց իւրեանց, իսկ այժմ լքեալք և ընդարմացեալք. յայնժամ շտեմարանք զեղեալք, իսկ այժմ դատարկացեալք և ամայեցեալք ։ Ընդ հօտք արօտականք ծաղկաւէտք խայտացեալք, սոս խամրեալ և յոյժ պակասեալ ։ Յայնժամ դաշտք պարարտութեամբ լցեալ, իսկ այժմ ախտութեամբ ։ Ընդ և հովիտք բազմացուցեալ ցորեան, սոս կարկամս և չոր ուղխիւք հեղեղեալ ։ Յայնժամ անձրևք քաղցունք և շահեկանք, իսկ այժմ անպիտանք և ջաղք և թորթորեալք, յապականել զհունձս և զկալս՛ թէ և գտանի ուրեք պտղեղութիւն (2) ։ Ընդ լերինք պնծութիւն զգեցեալք, իսկ արդ անզարդացեալ առ 'ի չգոյէ արօտականաց ։ Տան քուծք եզանց գործեցաք, և սափոր մի մեզ տուաւ. սերմանեցաք՝ և ոչ հնձեցաք, տնկեցաք՝ և ոչ կթեցաք. թզենի ոչ ետ պտուղ իւր, որթ և ձիթենի ոչ ետուն զզօրութիւն իւրեանց, թէ չունմարանեցաք ինչ, և զայն ես այլոց

(1) Մի օր. յառաջն ։ (2) Մի օր. պտղաբերութիւն ։

թողաք։ Եւ այսպէս անդրադարձեալ ճչե-մեղ տէրունեանն բան. զի մեք վաստակեցաք, եւ այլք 'ի վաստակս մեր մտին։ Եւ այսպէս յամենայն յուսոյ բարւոյ զրկեալք՝ ծածկեցին զմեզ անարգանք մեր։

Եւ այսպէս 'ի յափշտակութենէ թշնամեաց եւ յանարգիւն անպատուութեանց, ապա եւ սովն եւս 'ի վերայ սաստկացեալ զօրանայր ուժգնապէս։ Վասն զի հուրն կայծակնացայտ որ ունեղեացն 'ի մեզ, եւ սուրն անողորմ պատերազմողացն որ միշտ 'ի մեզ բղխէր զհոտ մահու, մինչեւ յեօթն ամ ձգեալ ընդերկարեցաւ. եւ վասն այսորիկ մնացեալքս պանդխտեցաք 'ի վանս Կեսարու, եւ թափառեցաք եւ ունայնեցաք 'ի ստացուածոց, եւ 'ի բոլոր պարենից ռոճկաց, եւ 'ի չգոյէ կերակրոց։ Ապա այնուհետեւ սկիզբն առնոյր սովն կոտորածին, եւ ապականէին առհասարակ այրարատեան աշխարհիս ծնունդք, 'ի քաղաքս եւ 'ի գիւղս եւ յագարակս իբրեւ զփակուտս գունատեալս եւ լքեալս դանդաչէին։ Եւ այլք 'ի փարթամաց զստացուածս իւրեանց առ սակաւ սակաւ վաճառեալք ընդ աւուրն պարենի՝ 'ի վերջին տնանկութիւն հասանէին, եւ յաւէտ յաղքատութիւն եւ 'ի կարօտութիւն։ Եւ

կեցք 'ի խոտաբուտ կեանս 'ի հարկէ սովոյն բերեալք՝ զմոլեխինդն և կամ զայլս ոմանս զնմանակար բանջարս լոռ գիւղաց իմն ծառակեալ յապականութիւն մահու հասանէին. զի վասնզ սովոյն հասարակ շարժէր 'ի կարօտութիւն՝ զամենայն ինչ 'ի կերակուր նոցա բերել. Իսկ ոմանք զսիրելի որդեակս իւրեանց ընդ սակաւիկ ինչ ռոճկաց թշնամեացն վաճառեալ 'ի սադնայէ վասնգին, ոչ յիշեցան նոցա աղեկտուր խնամք ծնողականաց։ Եւ կանայք պատուականք 'ի հարկէ կարօտութեանն զքօղումն 'ի գլխոց մերկացեալք՝ և զհանդերձս յանդամոց, առանց ամօթոյ 'ի հրապարակս ելեալ՝ առ տադնային մուրացիկ շրջէին։ Եւ ոմանք ծիւրեալք և ծնդեալք և ցամաքեալք 'ի տարակուսական սովոյն՝ իբրեւ զմեռեալ պառկէին գանդաշէին, և թօթափեալք այսր անդր սակս նքողմանն՝ և ընդ միմեանս հարեալք կործանէին զկրեալս։ Եւ այլք իբրեւ զգիակունս բազմակոյտս 'ի հրապարակս անկեալք և լըքուցեալք, մինչ շունչ նոցա մերձ էր յելանել՝ աղաչէին զանցաւորս ոմանս զի կարկառեսցեն նոցա նշխար ինչ կտորոյ հացի, և այնպէս զատուէին 'ի կենաց։ Իսկ եթէ 'ի մեծատանց ոք տայր ինչ այլին նոցա ողոր-

մութիւն, յետոյ յանդորրում բարս խաղաղութեան ընդ մուրացիկս դառնային, զի խրդձէին եթէ գուցէ կճնիցին և Նոքա իբրեւ գնտաս: Նուաճեալ էր ապա յամենեցուն 'ի Նոյանէ սեղան ուղղել. զի ոմանք առ սատիկ կարօտութեանն զցորեանն իբրեւ չէր աղացեալ կամ թրմեալ՝ ուտէին, և այլք 'ի կրակարանաց զաղաճուճն յափշտակեալ ուտէին: Զարչարանաց էր կերակուրն՝ զոր թէ գտանէին երբէք, և արտասուաց արժանի տարժանական և ողորմելի ճաշակքն:

Դողումն և սովումն և սարսափումն աստանօր զիս պատեալ պաշարէ 'ի բանէս՝ որ առաջի կայ տանել. զի մարդք հաւատարիմք ստուգեցին մեզ զբանս ճշմարիտ, եթէ մարք ոմանք պատառմամբ որդւոց իւրեանց զմարմինս 'ի կերակուր իւրեանց պատրաստեցին: Եւ այլք զընկերակիցս իւրեանց դաշնակցութեանն խին իբրեւ զոչխար 'ի սպանդ վարեալ՝ կերակուրս իւրեանց պատրաստէին: Եւ այս անդր եւս քան զվրէժխնդրութիւն Երուսաղէմի արժանի անհնարին ողբոց գործս ինչ տեսեալ լինի. վասն զի ձեռք կանանց ողորմածաց եփեցին զմանկունս իւրեանց, և եղեւ նոցա 'ի կերակուր. և որ 'ի գիրկս գըրկեալք և գգուեալք էին, գիրկս արկեալ

աղբեւաց թարթափեալք թաւալէին և ու-
տէին երբեմն զկերակուր ։ Կցեցան լեզուք
դիեցիկ մանկանց ի քիմս իւրեանց՝ ի ծա-
րաւոյ իւրեանց, զի ոչ գոյր նոցա դիեցումն
ի մարց. տղայք չորաբեկ հացին խնդրէին և
արտասուք ընդ ծնօտս նոցա թորէին, և ոչ
ոք էր որ տայր նոցա. և այնպէս աստ պա-
կասեալ թափեալ հանեալ զոգին ի ծոց
մարցն իւրեանց, ընկեցեալ զրուեալ ցի-
դեալ կային առհասարակ ծնեալքն և ծնող-
քըն ի մէջ քաղաքաց ։ Այսպէս մատնեցան
որդիք ժողովրդեան մերոյ յապականութիւն
ի յանօրէնութեանց մերոց. և ձաղքալ ե-
ղեն ի փայլկեան ժամանակի ։

Բայց առաւել քան զայսոսիկ խռովչացն
զկանկ խոշտանգանաց զնոսա կոտորանէր,
զի ըմբռնեալքն ի ձեռաց նոցա ի հարուա-
ծըս անհնարին չարչարանաց տանջեալ լինէ-
ին, թէ գուցէ գտցին ինչ առ նոսա կերա-
կուր ։ Այլ թէ գտանէր երբէք ուրեք, կրկնա-
պատիկ աղդի աղդի տանջանս հնարէինայս ի
վերայ նոցա ածէին. ոմանց պատուականս ընդ-
ներքին համան փորէին. և այլոց փայտս որ-
բեալ յերաստանն ցցէին, և կիտոյ զաճիւն
հնոցի հրախառն ի ծոցս և ի գլուխս փայ-
լծէին ։ Ոմանց զներքին անդամսն եւ զծա-

ծուկ արուեսթիւնն կազեալ սամետօք, ե-
նովիմբ զլուարձու վանդակաց կախէին մինչ 'ի
խաղել խաղել խաղ 'ի բաց համոյն , յորմէ և սա-
կաւք 'ի բարձանց թէ ապրէին . և զայս ոչ մի-
այն 'ի թշնամեան՝ այլեւ 'ի մարդս մերձաւորս
և յընկերակիցս և 'ի ծանօթս էր ատեսանել :
Նա այսպիսի խոր խորամուխութիւն ստանէր զ.քա-
ղաքօք , և գիշեր ըն մահուամբ զգուշիւք և
զգերդաստանօք . և մարմինք մերկք ընկե-
ցեալ կային 'ի փողոցս և 'ի հրապարակս . և
տեսիլ սարսափելի անարգութեան այնի
տեսողացն , որպէս զի ոչ եւս ոք կարէր տալ
զնոսա գերեզմանաց : Նա այսպէս ապա շանց
և շաղղակէր գազանաց և թռչնոց երկնից
լինէին կերակուր . և յայնմանէ առխտութի
կալեալ գիշամուխ գազանայն՝ յորդեցին
զօրացան բազմացան աշխարհակեր գայլք .
և այնուհետեւ փախստական դիմակաց զկեն-
դանաւէր մարդիկ իբրեւ զանբան անասուն
ժանեօք մանրեալ աղացեալ ուտէին . և 'ի
միասին հնձեալք լինէին 'ի ձիրանց գազա-
նաց անտի՝ պատառականն և անարգն . քան-
զի թմրութիւն մեղաց և զանմեղս եւս ընդ
միգով խորով լծեալ ծնդէր . վասն զի ելք
էին հասարակաց 'ի տարերց տառի յաշխարհէ .
և սահմանեալ աւուրն հատուցման պահի

պատիւն (1) և պատուհասն ։ Այսպէս տարա-
ծեցաւ մահ 'ի սակաւ աւուրս , և բնաջինջ
արար զազգաբնակեան այն , և առ ամենայն
մարդիկ քարոզեալ երևեցաւ չար ամպրոպաց
արկածք , և ստուերք մահու մեղաց ծածկե-
ցին զմեզ յոյժ . փասն զի ոչ կացաք յուխտի
Տեառն , անփոյթ արար զմեզ ։

Իսկ ես աստանօր պանդխտաբար ընդ հա-
լածանաց ժամանակին նստեալ կայի 'ի մէջ
Գուգարաց և Վրաց , մերձ առ մեծիմաստն
Ատրներսեհ թագաւորն կացելոյ յայնմ նա-
հանգի . որ թէպէտ բազում հիւրամեծա-
րութեամբ և առատաձեռն ռոճկօք առ 'ի
նմանէն պատուեցայ , սակայն ընդերկարեալ
իմ 'ի պանդխտութեան անդ՝ որպէս երբե-
մն Իսրայէլ 'ի վրանս Կեդարու , յաւէտ իմն
տրտմեալ տառապէի անձկացեալ և սպա-
սեալ փրկութեան Տեառն Աստուծոյ ։

(1) Մի օրէ . պատիժն և պատուհասն .

## ԳԼՈՒԽ ԾԴ.

### Յաղագս Գրելոյ Նիկողայոսի պատրիարգին Կոստանդինուպօլսոյ նամակ առ Յովհաննէս կաթողիկոսն, և նորա ևս գրելոյ առ Կոստանդին կայսր :

Ապա սակս սասանութեանց և վրդովմանց մերոց լուեալ մեծի պատրիարգին Կոստանդինուպօլսի՝ Նիկողայ [1], գրէ թուղթ առ իս օրինակ զայս :

"Վսեմական, աստուածասէրդ և հոգևոր հօր՝ տեառն և յաւէտ սիրելի եղբօր մերում Յովհաննու կաթողիկոսի Հայոց մեծաց : Ի Նիկողայոսէ ողորմութեամբն Աստուծոյ յարքեպիսկոպոսէ Կոստանդինուպօլսի, և 'ի ծառայէ ծառայից Աստուծոյ՝ Տերամբ խնդալ :

"Կարծեմ ոչինչ զանխուլ է, տէր իմ, 'ի քոյ յաստուածասիրութենէդ՝ յոյժ տրտմութիւն և անպակաս ցաւք սրտից մերոց յաղագս Հայոց և Վրաց և Աղուանից միահամուռ քոյդ հաւատացեալ հօտից. որ եհաս 'ի վերայ դառն տագնապ չարչարանաց և նեղութեան 'ի Սառակինոս իսմայէլեան բռնակալացն : Զի թէպէտ մարմնով մեկու-

(1) Մի օրի. Նիկողայոսի.

ոչ եմք, և այժմ ոչ տեսեալ զկամս հօտի
ձերոյ, սակայն 'ի լսելն 'ի չարեն չարչարեալ
զաշխարհն ձեր, յոյժ կոծիմք անձամբք և
յոգւոց հանեմք մեծաւ տրտմութեամբ:
Իսկ եթէ մեք հեռաւորս 'ի ձէնջ միայն 'ի
լսելն այսպէս ընկալաք յանձինս մեր սուգ
դառնութեան, ապա որչափ ևս առաւել
դուք հաղորդեալքդ 'ի չարչարանս ընդ հօ-
տից ձերոց, և հալածեալքդ յանօրէն և
պիղծ ապստամբացն. և զի՞նչ պարտ է և
պատշաճ է լինել, և կամ զի՞նչ այնչափ չա-
րութեանն խնամոյ մխիթարութիւն. և որ-
պէս ուղղութիւն պէտս եկեղեցւոյ փարատել
զառաջակայն որ գալոցն է գայթակղութիւն:
Արդ՝ եթէ պատշաճ թուեսցի սրբութեանդ
ձերում, պարտ է նախ զաստուածային այ-
ցելութիւն և զօգնականութիւնն յամենայն
ժամ վերակարդալ, և ձեռս 'ի վեր համբա-
նալ, և բարձրաձայն սրտիւ 'ի գութ ողորմութե-
կոչել զամենակալն Աստուած քրիստ. հօտից
Հայոց և Վրաց և Աղուանից, և խնդրել ըն-
հասարակացն օգուտ. և ապա մի ևս այլ
բնաւ անսալ կարատեան դոցա. և փոյթ յան-
ձին ունել ամենայնիւ յամենայնի առհա-
սարակ զամենեսեան խրատել աստուածային
ճշտութեամբ, և քրիստոսաւանդ բանիւն

կալել և արձակել, որպէս և ընկալաք պա-
տուէր իշխանութեանդ (1) իսկ յերկինս և
յերկրի, և գաղափարեցուցանել զնոյն ՚ի հա-
կառակութենէ չարութեանն որ ընդ մեզ-
մեանս։ Իւ մի տար թոյլ՝ մնալ ՚ի վայրենի
գազանութեանն, որք բարկացեալք և դի-
մեալք են ՚ի ապանումն մեռելոց և գտա-
նել ՚ի մարդկային մտածութիւնս, և ՚ի քրիս-
տոնէական հանդարտութիւն, որով բերի
իսկ ՚ի փրկութիւն մնացելոցս մասանց մարդ-
կան Հայոց աշխարհացդ, և Վրաց և Աղուա-
նից։ Զայս նուաստութիւնիմ յառաջադրեալ
փութացուցանել ձեզ ետ ձեր սուրբ ինչ
պատճառ յորդորման սիրոյ (2)։ Իսկ սմին սակի
աւարեցաք թուղթ և առ կաթողիկոսն,
և առ աւագն Մխիթարայ խրատելով առ ՚ի
լինել խրատուցդ ձերոց, և մտանել ընդ
մխեալս հարուածն, և նոյել ՚ի սէր և ՚ի
միաբանութիւն և ՚ի հաշտ խաղաղութիւն
ընդ մխեալս, և ընդ հասարակ իշխանս
Հայոց և Աղուանից, և միանալ միաբան,
և մարտնչել ընդդէմ ամբարիշտ թշնամւոյն
Ասորեստանեայ (3). զի մի հասարակ ձեզ կորուստ

(1) Մէ օրի. ընկալցուք պատուէր իշխանութեան . . . և
մի տալ թոյլ։

(2) Երեք օրի. յորդորման սիրոյ.

(3) Ի միում օրի. չէ՛ Ասորեստանեայ։ Մէ. օրի. յանեցու՝ սպ-
ւոյն Ասորեստանեայ.

եղիցի, և որ ընդ ձեօք այլ ևս մերձաւորաց ազգաց սատամումն բերցի։

Իսկ արդ՝ պարտ է ձերում արքունեանդ բերան 'ի բերան և Թղթով և պատգամօք, և եպիսկոպոսօք և քահանայիւք, և որբովք արամբք դուն գործել, և 'ի բաց 'ի միջոյ բառնալ զչար հակառակութիւնս դոցա. և առանց բանի պղերգութեան հետեւել յաջողակի մատակարարութիւնս, և մաղթել դառնալ 'ի լուսադոյնն և առ փրկական խորհուրդս և գործս. զի այդպէս միախոհք և միաբանք լինելով՝ մի ևս կարօղասցի ինչ 'ի վերայ աշխարհիդ ձերոյ ապականիչ չարն։ Իսկ մինչ այդ այդպէս 'ի ձէնջ կազմիցի, ապա և ինքնակալ և աստուածապսակեալ Թագաւորս մեր 'ի դէպ ժամանակի պիտոյից առաքեսցէ զօր բազում յօգնականութիւն ձեզ. զի և կուրապաղատ ևս և աւագն Սմբատայ, և իշխանք և մեծամեծք Հայոց միաբանեալք մերոյն զօրաց, մեծաւ օգնականութեամբն Աստուծոյ և ձերով մեծ քահանայագործութեամբդ պատերազմեալ ընդ Թշնամիսդ՝ (1) կարծեցեալ կորստեան որբանեկին սատանայի վերագոյն գտցին։ Յայնժամ ապա և մեղանչականու-

(1) Երէ. օրէ. պատերազմել ընդ Թշնամին.

թիւն հակառակութեանն՝ որ ընդ միմեանս եղին ապիրատութեամբ, և դուք և մեք առ հասարակ դոցա թողու՟թի շնորհեսցուք: Եւ զիւրաքանչիւրոց զիրաւունսն յիւրաքանչիւրսն ընծայեսջիք, որպէս և վայելէ իսկ ձերում սրբութեանդ. զի յառաջագոյն իսկ 'ի կարգս քահանայապետութեանն իւրաքանչիւրոց արժեալ հաստատեցի: Յայսմ հետէ խաղաղութիւնն Քրիստոսի հաստատեսցի 'ի ձեզ, և սրբափայլ աղօթք ձեր եղիցի ընդ նուաստութեանս մերում»:

Իսկ ես ընթերցեալ զայս և ընկալեալ սիրովն Քրիստոսի, 'ի նոյն միտս և 'ի նոյն խորհուրդ համոզեալ հաստատեցի զթագաւորն Վրաց, մինչև խոստովան եղև զհետ երթալ խաղաղութեան և սիրոյ և միատարր միաբանութեան ընդ ամենեսին՝ ընդ իշխանս և ընդ ամենայն աշխարհիս Հայոց և Վրաց, անշուշտ յերկար երդման իւր ադրմ մասին առեալ: Իսկ ապա լուեալ ես զտառապանս տրտմութե անիրաւաց՝ որ անցուցան իսկ 'ի վերայ ժողովրդեան Տեառն, առ ի սուգ սաստիկ, և այն իմ իջոյց զարտասուս զհոսանս ջուրց: Վասն զի տեսի բարձեալ զվայելչութիւն 'ի տանէ Տեառն, եւ պղծեալ զսրբութիւն նորա 'ի հեթանոսաց,

և զի քահանայք նորա հաչեն և հառաչեն, և յուղւոյ երանեն. և յիշել զօր տառապանաց անձանման իմոյ, որ երբեւ զցանց ձըգեալ էր իմոյ սրտիս. և զակարացեալ զօրութիւն իմ՝ սակաւ ինչ կազդուրեալ և զօտեւորեալ՝ չուեցի գնացի յաշխարհն Տարօնոյ, և անդ 'ի մերձաւորաց իմոց իշխանաց և ժողովրդոց գտեալ՝ 'ի մխիթարութիւն տառապանաց վշտաց իմոց, արծարծեցաւ յիս հոգի իմ:

Բայց հակառակորդն մեր՝ որ կոխեալ ըզսրբութիւն Տեառն, դեռեւս արձանացեալ նստէր 'ի մայրաքաղաքն Դվնի, և մռմռեալ անհնարին դառնութեամբ, շրջէր խնդրէր հայցէր թէ զո՞ կլանիցէ: Եւ ընդ բոլոր ծագս երկրի մերոյ առատակ զզօրս իւր սփռէր. եւս առաւել զմիտս իւր՝ որ էր 'ի ծննդականութեան չարին՝ 'ի Թագաւորն Պարսիկ քան յայլս ամենս հնարէր թափել. որոյ և բռնազդած իսկ լեալ նորա նենգաւորին արբանեկութեանն չարի, և տեսեալ զեկեալ հասեալ առ դուրս մերձեալ հէնոն, այնուհետեւ ապա զգալթ ընտանեաց իւրոյն և զկապուտն գանձարանաց, այլ և համագունդ իսկ զամենայն աշխարհակոյտ խառնիճաղանճս տէրութեան իւրոյ 'ի ծործորս

տմուր լերանցն Սոկայ և Կորդուաց չուեալ զօրեալ բռնեալ թագուցանէր։ Նաև ինքն եղբարբն իւրով և սպասալար գնդիւն փառելովք արձանացեալ դադարէր ՚ի միջերկրայս, անդ զգուշացեալ յանդառապեղ գազանէն, ՚ի պատրաստի միշտ ունելով զմիտս իւրեանց ընդ որս էր և մեծ իշխանն Սիւնեաց Սմբատ, սպասելով յաստուածուստ խաղաղութեանն։

Բայց սպարապետն Հայոց Աշոտ դեռևս ՚ի մէջ ուղխիցն չարութեան կայր տակացեալ, և ոչ կարացեալ կարողել (1) ըդհատուածիլն ՚ի Յունաց, վասն զի միշտ ՚ի վերայ նորա զհայեցուածն իւրեանց զգուշաբար պահէին ՚ի ծածուկ։ Սակայն սպարապետն գերիմաստ արտադրութեամբ բազկամս ստեղծանէին ամենայն իրօք զկնանս իւր նուաճէր, միայն զփրկութիւն անձինն առ ՚ի նմանէն անօրինեալ հոգայր Բայց Աշոտ որդին Սմբատայ՝ զոր թագաւորեցուցին Վըրաց արքայն և զօրք իւր ՚ի վերայ Հայաստանեայցս, այսր անդր յածուրս աշխարհի տէրութեան իւրոյ տարուբերէր. բազում մրցմունս և արիական քաջութիւնս ընդդէմ բոլոր թշնամեացն մարտիւ կանգնէր և կար-

(1) Մէ զէ. կողել։

դէր, ոչ միայն ընդ Սառակինոսայն, այլ և ընդ Վրաց և ընդ Գուգարաց, որք ամբաստ ընմանէ խորհէին: Իսկ իմ՝ ապա տեսեալ զծփական և զանդուլ հինից արշաւանըս, մինչ դեռևս էի 'ի Տարօն գաւառի, գրեցի թուղթ առ Կոստանդին կայսր Հռովմայեցւոց՝ օրինակ զայս:

« Գերարքուն և ինքնակալ կայսր Հռովմայեցւոց օգոստոս Կոստանդինոս, յաստուածուստ պսակեալ և պերճացեալ մեծ և բարեյաղթ թագաւորք տիեզերաց՝ աստուածասէրք և բարեպաշտք. 'ի հանդիսի կենացս հասարակաց լուսաւորութեանց մերակացուք, և հանուրց եղելոցս ճշմարիտ խաղաղարարք, երկնացեղիկ ինն դասուցն համեմատք, և շինութեան հոգեւորի առիթք. այսքանեաց և այսպիսեաց ազգաց և ազանց՝ առուգապէս առաջնորդք աստուածային, արդարև արմաւենի 'ի տան Տեառն տնկեալք: Ողջոյն ձեզ և խաղաղութիւն և խնդութիւն բազում և սէր հաստատեալ յայսմիկ կաթուղիկէ եկեղեցւոյ. որ թէպէտ և 'ի թշնամեաց սաստի քերեալ, և իբրև զանապատ անջրդի խոպանացեալ՝ ըստ նմանութեան մօր անզաւակացու յորդւոց, սակայն կայ և մնայ 'ի սէր փառացն Աստու-

ծոյ։ Ողջոյն եւս և յինէն 'ի Յովհաննիսէ Հայոց մեծաց նուաստ կաթողիկոսէ ։

« Շնորհք և խաղաղութի բազմասցի ըստ Աստուծոյ Հօր, և Տեառն Յիսուսի Քրիստոսի։ Այլ և որ ընդ իս իսկ եպիսկոպոսունք և բովանդակ ուխտք սրբոյ եկեղեցւոյ, որք և գամեալք իսկ և հարուածեալք և չարչարեալք և հալածեալք եղեալք 'ի մահառիթ և 'ի նենգաւոր չնչոյն Ամաղեկայ, որ բղխեալն զմարդանախանձ (1) չարին զչար մախանուն. եւ ըստ վայրենի մոլորութեան իւրոյ առղեալ 'ի մէջ զամպրոպ դառնութեան և ըդսրամտութիւն բարկութեան վրիժուց անհնարին։ Սակայն մեք կայցուք յանձին մեր զշնորհս ուրախութեան և սիրոյ Տեառն. և ըստ սուրբ առաքելոյն Պօղոս, նախ քան զամենայն արասցուք աղօթս մշտնջենաւորունս և պաղատանս աղերսալից, և խնդրուածս հաշտարարս, և գոհութիւնս արժանընկալս յաղագս անյաղթ և ինքնակալ և աստուածապսակեալ թագաւորացդ. կեալ ձեզ յամայր ամս ըստ պայոյ արդարութեան կենացս, և ճշմարիտ խաղաղութեան երկնաւոր թագաւորին, և ըստ վայելուչ և գեղեցիկ տիեզերաբնակ բնակութեան պայա-

(1) Մէ օր. մարդախանձ ։

տանդ կայսերականի ։ Եւ զի պատրաստաբար և հանդարտաբար եղիցի գնալ ձեզ 'ի խորհուրդս կենակիցս և աստուածամերձս, և ամենայն աստուածպաշտութեամբ և նազելի սրբամտութեամբ և սուրբ ուրախութեամբ և մեծաւ խնդութեամբ ծաղկաւէտեալ ձեզ զկէս հանդիսի աստուածայելուչ հանգստեանն ձերոյ. ըստ որում և ընկալայք(1) իսկ պարգեւ 'ի բարեսիրութենէ այսի ձերմէ ըստ արժանի քաջնախայլ պերճութեան և առաքինազօր կրօնից ձերոց. որով հաւատացեալքդ(2) իսկ էք և սիրուն, և սրազինեալ եւս ընդ ուս՝ 'ի հատուցումն(3) վրիժուց ամբարշտաց ։ Աստուծոյ սպասաւոր և մեզ 'ի բարիս բարեյաջողարար և ինքնակալ քրիստոսապսակեալ կայսր Հռովմայեցւոց. զոր այժմս համարձակեալ հարկեցայ ընծայել հրաշափառապէս պատմութեամբ ընդ արկածս նեղութեան՝ որ հասին մեզ. յաղագս մերոց տարակուսելոցս է՝ վասն որոյ և խօսիմք իսկ ։ Խորհուրդ խօսողացս 'ի ձեզ հային յուսով խնդութեան, և այն եւս մեղմով և հեզիկ որպէս և ուսաք իսկ՝ եթէ մի

(1) Մի օրէ. ընկալաք ։ (2) Մի օրէ. հաւանեալ ։

(3) Այսպէս ամենայն օրինակք մեր. իսկ ըստ այլոց՝ սրազինեալ եւս ընդունի զհատուցումն ։

որ լուիցէ արտաքոյ զլսարբաւ նորա . վասն
զի աստուածամերձ լինելք ձեր ոչ ձայնի կա-
րօտանան առ 'ի զգալ , քան թէ երկնային
խնամատուութեանն 'ի ձեզ տպանալոյ , 'ի շարժ-
մանէ նորին ճանաչել զհայցեալն :

“Նոյն արդ՝ շնորհս ունիմ այնմիկ որ պատ-
րաստեալ զօրացոյց զօգտակարն և զինք-
նակալ թագաւորդ յաղաւինութիւն մեզ :
Վասն որոյ և զգացուցանեմ զհայթայթանս
համբաւոյ նեղութեանս մերոյ 'ի ներքոյ լը-
ծելութիւնդ բարեպաշտացդ : Վասն զի յա-
մենայն զօրութենէ խուժէ յուղեցաւ 'ի վե-
րայ մեր մախանք դաղանականք թշնամւոյն
ճշմարտութեան , և երբեւ զսեղեխ չարա-
վախչ աւփանօք յանդգնեալ յարձակեցաւ
յանպարտ աւազատ հարսին եկեղեցւոյ՝
առ 'ի յապականել զմաքրութի̄ Տեառն ,
և պղծել զտաճար սուրբ նորա . այլ և յա-
րագել 'ի կախումն և 'ի կործանումն և յըն-
կճումն , և 'ի կորուստ ժողովրդեան Տեառն ,
և ծառքելով ուսել զնորա Խրայէլ , և աւե-
րել [1] զտեղի փառաց անուան նորա :

“Նոյն քանզի յայտնի էր ամենայն ազգաց
պաշտպանական սպարիսպ ամրութեան երկի-
ղի ձերոյ ընդդէմ թշնամեաց , և 'ի հովանի

(1) Մէջ . աւերել :

թեւոց մեքենակալաց սպառապատրաստակու-
թեամբ կայաք որպէս 'ի վայելուչ քաղաքի ·
յայնժամ' ապա և առագաստ հարսին եկե-
ղեցւոյ ոչ աղտեղացաւ 'ի բնակողէն Կեդա-
րու , որ առեալն իսկ զողջոյն սրբութեան[1],
և բռնութիւն մարտակցին բելխարայ զխա-
ղաղարար փեսայն ոչ կարաց հեռացուցա-
նել ։ Իսկ իբրեւ անփոյթ գտաք 'ի ջատա-
գով լինել ձեր , և զանխուլ եղեւ թոյնք
գարանակալ օձին Դանայ յիրաւադատ մե-
ծութենէ , և ոչ խնդրեցաւ պարտապանու-
թիւն վրիժուց չարախօսին մերոյ , դարձեալ
միւսանգամ' սկսաւ անիծեալն տարապարտ
սողել զեռալ սպրդել' զանձն 'ի ներքս ար-
կանել 'ի հոգեւոր ցանկապատ յայգեստանս
Տեառն զօրութեանց ։ Եւ հուրն որ երբեմն
արհամարհեցաւ և շիջաւ , սկսաւ վերստին
արծարծիլ , և բոցակէզ հրդեհս մեծամեծս
գործել ։ Եւ դժոխք խարդախք գտան քր-
րիստոնէական հաւատոյս որ 'ի Պարսս ,
և յարուցեալ հալածանս 'ի դէմ եկեղեցւոյ
սրբոյ , արարին իբրեւ զխուղս մրգապահաց ·
և իբրեւ զանտառս փայտից' փայտատով կո-
տորեցին զդրունս նորա , և այրեցին 'ի հուր
զսրբութիւն Տեառն , և պղծեցին յերկիր

(1) Այլ օրէ · զանջոյն սրբութիւն ։

զխորան անուան նորա, և զենլին զենումն անօրէնութեան, և զոհեցին զոհս պղծութեան ՚ի յարկս արդարոց, և արհամարհեցին զյուսացեալս ՚ի Տէր Աստուած. և ՚ի կերակուր գազանաց և ՚ի գէշս թռչնոց երկնից արկին զդիակունս մարմնոց որոց Բարձրելոյն, և տարապարտ արիւնք կղերց եկեղեցւոյ իբրև զջուր հեղան շուրջ զԵրուսաղէմաւ։ Այլ և քաջութիւնս պատերազմող ձեռաց լքուցեալ սպանմամբ մեծաւ և արեամբ թօթափեցին. և զնախապատուութիւն Թորգոմեանս ազգի՝ զքաղաքականս և ըղձեղջուկս առհասարակ փարատեալ փոխարեցին զառն տաժանմամբ. զոմանս մաշեալ ՚ի բանտս և ՚ի շղթայս, և յանտանելի մետաղս չարչարանաց, իսկ զոմանս ծախեալ ծառաւի սրով. և զայս չարաչուք դժրդութեամբ գերեալս փախստական լինել. և մնացեալքն ՚ի չար արքանեկութենէ չարացին՝ մեծամեծք և փոքունք ցան և ցիր ցնդմամբ սփռեալք ընդ երեսս երկրի, զօղեալք և թափուցեալք ՚ի լերինս յայրս և ՚ի փապարս, մերկութեամբ և սովով և սառնութեամբ և դողմամբ ահի, և դառնաշխատ քրտամբք յերկունս մահու փանգեալք, և իբրև զնաւ ինչ ՚ի հողմոց տարաբերեալք՝

դանդաչեն իբրեւ զկիսամեռ 'ի վտանգէ նեղութեանց: Եւ յայսմ՝ ամենայնի ձեռն Ամենակալ ոչ վաստակեցաւ զբազմախողելով երկայն ամեամբ արբուցանել. զի 'ի նենգաւոր շնչոյն իւրոյ մահ բղխէ յամենեսին. զոմանս կոտորակաւ եւ մահացու դեղօք արբուցմամբ 'ի ծածուկ խարդաւանէ, իսկ զոմանս հրկիզութեամբ առկայծեալ մաշէ, եւ զայլս հեղձամղձուկ սատակմամբ վճարէ. եւ զոմանս սրախողխող զառնութեամբ տապաստ արկեալ, մինչեւ 'ի սպանելոյ անտի լցեալ եղեն հիմունք երկրի մերում:

«Օ՜ ի՞նչ բան այս ասս յաւագ բերից յաղագս Աշոտոյ Բագրատունւոյ, եւ բարերից արեւելեայցս գլխաւորի, որ հոգեւորապէս արժանացաւ անուանիլ 'ի ձէնջ որդի ձեզ ծառայն ձեր. զի առ բարեգործն այն եւ խնամակալն եկեղեցւոյ եւս չարահատոյց քան առ ամենեսեան գտաւ չար թշնամին: Այն զի բաս մեղաց մերոց մատնեցաւ խնամածուն այն հօտին Քրիստոսի 'ի մէտաղս անդգամին եւ ամբարշտին, եւ վտանգեալ տագնապեալ չարաչար չարչարանօք զնա, որ 'ի ծերութիւն պարարտութեան հոգեւոր խաղաղացուցեալ էր զՀայաստանեայց ազգս յամենայն վրդովմանց չարի 'ի սադրելոյ իշխանակալ թագաւորաց.

և ժողովեալ զամենայն հօտս Քրիստոսի ՚ի փառս և ՚ի գովեստ Աստուծոյ ։ Զի յարգելոյն բանտից և ՚ի խաւարային տեղիս և ՚ի մինչ անհնարինս և յանձուկ վայրս , և յաղէտս չարաչարս տագնապեալ տառապեցոյց զծերութիւն նորա ։ Յետ որոյ ապա և դառըն կոչկոծմամբ , և փութամահ տանջանօք մաշեալ զնա ՚ի սպառումն որոյն ծարաւոյ . և առհասարակ մեք զրկեալ մնացաք ՚ի խնամոց հաւատարիմ ծառային ձերոյ ։ Իսկ ահա այժմ մարաք ՚ի ներքուստ , և արհաւիրք ՚ի վերուստ տագնապէ զմեզ . և խորհրդական որդիացեալն ձեր չէ ՚ի միջի , որ խրատէրն և յորդորէր ՚ի մարտս զամենայն ձեռն պատերազմողաց ։ Մեղեկլիա ՚ի գերութիւն վարեցաւ , և Զօրաբաբէլ ոչ ուրեք է , որ նորոգէ զպետութիւն դըրդեալ աշխարհիս Հայոց ։ Աղայէլ հրաւիրեալ է ՚ի կոտորել զԻսրայէլ , և պատերազմ զմեզ շուրջ պատեալ և պաշարեալ , և Սենաքէ խարդաւանեալ ՚ի դահճաց չարագունից՝ ոչ զօրէ փըրկել զմեզ ՚ի վտանգէ նեղչացս ։ Անտիոքոս բռնադատէ թողուլ զքրիստոնէական օրէնս կարգաց մերոց , և Մատաթիաս չէ կենդանի՝ որ ընդդիմախօսէ ընդդէմ չարամարտ բըռնաւորին ։ Իսկ այսպէս եկեղեցի Քրիստոսի

խոպանացեալ եղեւ և իբրեւ այրութեամբ կին անխնամ և անհոգացող մնացեալ, և լքեալք 'ի տօնից տարեկանաց . եւ հօտք Քրիստոսի միանգամայն իսկ զրկեալք 'ի հայրենի օժանդակէն, և 'ի սեփհական վերակացուէն . և եղկելիք և աշխարելիք մնացեալ աշխարհս արեւելեան միշտ շարժմամբ հեծէ . և աշխարանս ողբերգական արտասուաց բերէ զյաւէտախաղաց արկածս չարիս այսմիկ հասելոյ կալելոյ զմեզ, և զդայութիւն դառն կատանացս ։

“Օ՛ ինչ տալս զիմ նուաստագունի Յովհաննու նեղութիւնս բերից 'ի համար, զի ոչ իսկ համարիմ զանձն արժանի արդարոցն լինել չարչարակից . այլ որ լաւ մեղաց իմոց սատակեցաւ 'ի վերայ իմ վտարանդումն և նեղութիւն, և փրկութիւն 'ի փորձութեանցն որ կամաւ զիս առաջի եդի՝ հարկ առնեն այսուքիկ ըստ Պօղոսի պարծել զտկարութեանն . զի ժուժկալութեամբ ամամբ (1) ընկալեալ զվտանգաւորսն՝ բազում տառապանօք տագնապեցայ 'ի ձեռաց որդւոցն Հագարու, խաւարային բանտիւ և ընկեցիկ լինելով 'ի գուբ աղմոյ, և կապեալ երկաթի շղթայիւք, և գելանիւ և գանիւ, և այլս

(1) Ամենայն օրէ . ամենեին ամանք .

պէսպէս հնարիմացութեամբք, որ բաւական էր քաղել համեղ զշունչ իմ յինէն։ Այլ թէ-պէտ և այր մի տառապեալ եմ ես, սակայն յոյս մեր Քրիստոս, որ զօրութեամբ ձանա-չի և ոչ տեսլեամբ պատմի, ապրեցոյց զիս 'ի մարմնոյ աստի մահու, և դարձոյց զգերու-թիւն իմ և որք ընդ իմն են որպէս զուղխս 'ի հարաւոյ, և արտասուս կորզեալ եհան 'ի փանեաց մլշայլին, և ըստ Եղիայի փախըս-տեայ եղէ 'ի Սարեփթա Սիդոնեան 'ի մար-դարէապըտուն Յեզաբելէ, և ըստ Պօղոսի վանդակաւ կախեցայ ընդ պատուար պարս-պին Դամասկեայ, և փախեայ յազգապետէ Արետացւոյն։ Իսկ կրեալ զայս ամենայն ըստ արժանի իմում, և ըստ տէրունեան հրամա-նին հալածեալ քաղաքէ 'ի քաղաք, հասեալ կամ առ դուռս հզօրագունիցդ եւ մեծա-գունից ինքնակալ թագաւորացդ, 'ի հե-ռաստանէ աստի խնդրել ողորմութիւն 'ի բարեպաշտից և 'ի ներողամիտ խնամածու-թեանէդ ձերմէ. ոչ միայն ինձ, այլեւ բոլոր Ասքանազեանս գրոհի. շահել ձեզ զորդիս տարանելոց ծառայիցն ձերոց, որք առհասա-րակ արբեալ զբաժակն բարկութեան 'ի հա-րաւային բռնութենէ. արբեալ և քամեցաք զմրուր սրտմտութեան և զբաժակ խռովու-

թեան 'ի թշուառացուցչացն մերոց ։ Այլ ա-
ղաչեմ զայն՝ զի խնամատարութեամբ և բարերա-
րութեամբ ընչոյ ձերոյ համբարձջիք զձեռս
ձեր 'ի վերայ ամբարտաւանութեան թշնա-
մւոյն մինչեւ խարիսխ , և փրկեսջիք զվիճակ
ժառանգութեան ձերոյ , և լցուցանիջիք լի-
փիւռ ծախիւք զտաճար մեծվայելչութեան
Աստուծոյ բարձրելոյ , որ գերեալ և կապուտ
կողոպուտ մնաց յապստամբացն աստի ։ Այլ
հալածեալ զգազանս չարաչարս , և զգայլս
յափշտակողս , և զհեթանոս ապստամբս ,
և զբարբարոս վայրենիս , նուաճեսջիք ըն-
կողմանս զայսոսիկ՝ զոր տեսցայք 'ի սկզբանէ
'ի ձեռն քաղցր օրինաց ձերոց , որ լի է ողոր-
մութեամբ ։ Այլ թօթափեսջիք զմեզ 'ի հո-
ղոյ աստի՝ յոր և մտան մեղք մեր . և լուծէք
զլուծ 'ի պարանոցէ մերմէ , որ 'ի ձեռն բռ-
նակալս այսմիկ ծանրացաւ մինչեւ 'ի մահ .
և ազատեսջիք զայս աշխարհ և զքաղաք , որ 'ի
հակառակութիւն և 'ի նախանձ արկաւ 'ի
այլոց և 'ի կորուսելոց , և 'ի չարաչար իշխա-
նաց ատելեաց Աստուծոյ . և ըստ մարգարէ-
ականին ժառանգեսջիք զերանութիւնն ,
հատուցանելով զդստերն Բաբելացւոց թըշ-
ուառականին , զորս եւ նա մեզն հատոյց ։
Վասն զի և ըստ սմին իսկ պատճառի ընա-

ընայ իւր Աստուած զանձինս բարեյաղթ թա-
գաւորացդ, զի որք սիրեն զԱստուած 'ի ձե-
ռըն բարերարութեան կամաց ձերոց, խա-
ղաղութիւն տայի նոցա, և խաղաղաւէտ
կենդանութեամբ զպարտական ծառայու-
թիւնն հաստուսցեն ինքնակալացդ, և խաղա-
ղութեամբ ժամանեսցեն առ Աստուած ։

"Եւ այսքիկ վասն հաստատակացս բանա-
ւոր հօտի հաւատացելոց ինձ 'ի Տեառնէ
մաղթանք աղերսանաց առաջի ձեր եդաւ ։
Իսկ անձին առանձին այս ինչ է, զոր առ
քրիստոսապսակ և բարեյաղթ թագաւորացդ
ունիմ ասել. նեղութիւն և անձկութիւն,
հալածանք և չարչարանք, և սով և սուր և
գերութիւն, և հարաւային բռնութեամբն
անցեալ տագնապեաց զծերութիւնս իմ ։
Արդ՝ 'ի գետս Բաբելացւոց նստեալ տըխ-
րիմ բազում արտասուօք, յորժամ յիշեմ ըզ-
գերութիւն Սիօնի, և 'ի խնամս ողորմած և
ինքնակալ կայսերդ ապաստանեալ հասեալ
կամ առ ոտս ձեր, հայցեմ, ոչ զոր ոչ լեալ (1)
նախ քան զայս բնակութիւն և կայանք ա-
թոռակալացն սրբոց որ յառաջ քան զիս է-
ին, այլ զոր 'ի սկզբան հաւատոյս 'ի հովանի
թևոց 'ի նախնեաց ձերոց ունէին զբնակու-

(1) Մի օր․ եղեալ ։ Երկու օր․ ելեալ ։

թիւնս. և (1) յարահաւանեցեալք 'ի զօրութենէ աստուածեան սուրբ Խաչիդ, և 'ի նախախնամօղ ողորմութենէ անյաղթ թագաւորացդ, արածէին անմեհեր փութով զհաւատացեալ հօտն՝ յիւրաքանչիւրումն ժամանակի անդադարապէս սրտիւ և աներկեւան հաւատով: Օր և ես ինքն զնոյն հայցեմ՝ բարեխօս ունելով զկենսատու Խաչդ փրկական, մի զրկեր զիս և որ ընդ իս են՝ յերկրպագութենէ աստուածընկալ Նշանիդ, և հանդիպման աստուածակարգ թագաւորացդ: Եւ անձուկ յոյժ ունիմ 'ի բազում ամաց գալ առ ձեզ, թէպէտ և արգելայ մինչև ցայժմ: Այլ և զկայանս հանգստեան կենաց խաղաղականաց ընձեռել ինձ՝ ըստ օգտակարն սերտ և պանծալի հզօր թագաւորութեանդ, զի թերևս յիսմայէլականաց աստի արտաքս զերծեալ, և 'ի հովանի թեւոց ձերոց ամրացեալ և առկայացեալ՝ արածեսցուք որ 'ի մեզ հօտս է Աստուծոյ. և առհասարակ մշտնջենաւոր աղօթս մատուցուք առ Աստուած վասն խաղաղութեան և ապահովութեան և բարեհաստատութեան ինքնակալ և տիեզերաքարող թագաւորացդ. և օգնականութեամբ ձերով մեծաւ և փառօք և

(1) Այլ օրի. և ապա հաւանեցեալք:

չերկնօք պատրաստեսցուք զՀայաստանեայս, ժողովուրդ կազմեալ նախ Տեառն և ապա ձեզ՝ կամօքն Աստուծոյ ։ Արդ զի յայտնի է այս ինչ առաջի փառաց աթոռոյ ձերոց, զի եթէ նուազ հոգւով հօտից բնակիցեմ ընդ հովանեաւ զօրափառ տէրդ ՚Իշանիդ, և ընդ խնամակալութեամբ ինքնակալ թագաւորացդ, որչափ եւս առաւել հօտս Աստուծոյ և ժառանգութիւն Քրիստոսի ընկեր շաւղաց իմոց հետևելին, և հորդաման ընդ խաչին արօտի այդմ տիեզերական ոչխարացդ բանականաց երանել (1), և առհասարակ հետազօտել ընդ Հռովմայեցւոց իշխանութեամբ որպէս Խաղխա (2) և ամենայն Ասիա ։ Իսկ որք ոչ գտցեն, և արտաքս ՚ի գաւթէ հօտէ Տեառն ելանիցեն, այնպիսիքն կրեսցեն զպատուհասն ՚ի մէնջ (3) ո՛րք և իցէ, և ես անպարտ և արտաքոյ մեղադրութեան մնացից ։

«Ես արդ՝ երկնաբերձ և լուսաշաւիղ ճառագայթաւէտ տէրք ՚Իշանդ, որ արեգակնապէս ընդ երկնայնոցն ՚ի մէջ տիեզերական և փառաւոր քաղաքիդ այդր բնակեալ է, զբնակութիւն պալատան ձերոյ

(1) Մի օրին. ընդ ելանել ։
(2) Ոմանք Խաղխա ։
(3) Մի օրին. ՚ի ձէնջ ։

փրկեսցէ յամենայն կորստենէ (1) ապականա-
ցու հնարից չարի. զի ոչ մրրիկ ինչ ծովա-
նման վերասցի 'ի ձեռն ծփական ալեաց սաստ
հինից, և ոչ ուժգին հողմն ինչ անօրէն ար-
ձակեսցի և ածիցէ ձմեռն ապականութեան.
և ոչ կոհակք լեռնանմանք և ստիպք զալե-
լեաց կարասցեն երկիւղիւ շարժմանց լու-
ծանել կամ դրժել զարքայդ քրիստոսանդ,
որ 'ի ծագաց մինչև 'ի ծագս տիեզերաց բար-
ձրացեալ և փառաւորեալ է անուանդ ձեր:
Այլ մեծապէս խնդասջիք և ուրախ եղիջիք
'ի գեղեցիկ հանդստեան ձերում լրութեամբ
խաղաղութեան. և ցնծասջիք 'ի փրկութեան
ձերում, մի եւս սասանել յողորմութենէ
Բարձրելոյն. և ժամանեսջիք յօրհնութիւն
քաղցրութեան նորա, որ պսակեսցէ զձեզ
հրաշալի փայլուն պսակաւ 'ի քարէ պատուա-
կանէ. և բարձրասցի արդարութիւն ձեր 'ի
զօրութեանն Քրիստոսի. և մեք փառաւորա-
պէս օրհնեսցուք զանուն քո, ինքնակալ և բա-
րեյաղթ բարեպաշտ թագաւոր, օգոս-
տոս Կոստանդինոս կայսր Հռոմայեցւոց »:

(1) Ըն․ օրի. ամենայն կորստեան: Մի օրի. յամենայն կորստեան:

## ԳԼՈՒԽ ԾԵ.

Յաղագս գնալոյ Աշոտոյ արքային առ կայսրն, և նուաճութեան Յուսփայ յերեսաց արքային Գուրգենայ:

Բայց յետ ընթերցեալ եղև այս թուղթ առաջի կայսեր, և 'ի միտ էառ տակաւին՝ որ դեռևս շուրջ զմեօք էին զեղեալ հարաւային չար արկածք, և զդղրդումն և զկործանումն մեր, և դարձեալ զելս կենաց բարեպաշտ և երջանիկ արքային Սմբատայ, զոր մարտիրոսական հանդիսի վկայակցն համարէին լինել վերընկալու. ապա փութացակի առաքէ 'ի խնդիր ինձ, և թագաւորելոյն Աշոտոյ արքայորդւոյն՝ զոմն Թէոդորոս Վասիլկոս բազմահարկի պատուականութբ, և ընտանեբար սիրոյ հարազատութեամբ. ընդ ուշի եւս կալեալ զնէր կատարման հօր իւրոյ Նալի՝ որ ընդ հօր նորա Սմբատայ էր. և փութացուցեալ երթալ 'ի միասին տեսանել և անօրինել զհասարակաց օգուտս: Եւ վասն զի արքայորդին Աշոտ էր յամուրս տէրութեան իւրոյ դարեալ դադարեալ, իսկ ես 'ի Տարօն գաւառի զետեղէր. վասն այնորիկ նախ առ իս չուեաց եկն Վասիլկոս: Իսկ իմ՝ ապա զհրաւիրումն երթալոյ նմա

յանձն առեալ, առ արքայորդին Աշոտ յինէն յուղարկեցաւ. որոյ երթեալ և զկայսերական հրամանն առաջի ընծայեալ. յօժարական կամօք կազդուրեալ Աշոտոյ՝ չուէ գնայ վաղվաղակի զճանապարհայն. և բազում հիւրամեծարութիւնս և արքայական պատիւս յիջաւանս այնր պողոտայի գտեալ։ Երթայ ապա 'ի հանդիպումն մեծի կայսերն. և անդ առ 'ի Նմանէն մեծավայելուչ գահիպատիւ առեալ քան զամենայն գահերէցս՝ ընկալեալ զփառաց փարթամութիւն, ոչ իբրեւ զայլս ոմանս պատուաւորս, այլ իբրեւ զթագաւորազուն բողբոջ. գրեթէ ընդ իւրով իսկ կայր զնա հարթայարմար ցուցանէր, եւ թագաւորական հրահանգաց հանդիսիւ ճոխացուցանէր։ Այս միանգամայն իսկ և ուստր զնա մարտիրոսի և որդի սիրելի կայսր իւր անուանէր. և զարդարէր զնա ծիրանազգեաց փառօք, և երեւելի ոսկեհուռն հանդերձիւք, և ոսկետառն վառիւք. և կամարակապ ընդ մէջ ածէր, ոչ միանգամ կամ երկիցս, այլ բազում անգամ Նորա զայս արարեալ, և երիվարս սպավարս և ահիպարանոյս գեղեցիկ զինուք և զարդուք առաջի կացուցանէին. և այլք եւս բազում ընծայս և սպաս և բազում կազ-

մնացածս սոսկեղէն և արծաթեղէն նմա պատ-րաստէին։ Այլ և խորգն եւս նախարարաց գլխի տարեւոցն ոչ սակաւ պատիւ պերճու-թեան տային, և բազում հոգս և տա-տածեւուն ուծիկս նոցա յարդարեալ կազմէ-ին՝ մինչեւ ՚ի դարձ նորա այսրէն։

Իսկ իմ չուեալ գնացի ՚ի գաւառն Դեր-ջան, և ամսօրեայ աւուրս ինչ ՚ի նմա զե-տեղեալ, թէպէտ և ստէպ ստէպ հրաւի-րակն կոչէր սիրալիր կամօք երթալ ՚ի պալա-տն առ կայսր, սակայն ես ոչ կամեցայ, ըզ-մտաւ ածեալ թէ՝ գուցէ գայցէ օք, և ընդ-ակամբ հայեսցի զանդ երթալն իմ ՚ի քաղ-կեդոնիոսն յարակցել ինձ համարեալ. և ա-պա այսպէս ոչ կամեցայ գնալ ՚ի գայթակ-ղութիւն մտաց տկարաց։ Այս ըստ ըղձա-կերտ իմոյ կամաց չոգայ յայրն սուրբ, յո-րում և նոյն իսկ սուրբ կինն Սանի, և ա-պա զլխի երիցս երանեալ Լուսաւորչին մե-րոյ ՚ի նմա բնակեալ. ուր և տկար մարմնոյն զանմարմնոցն բերեալ իւրեան զկարս՝ յաղ-թեցին բանութեան կարեաց, և անդր քան զհրամանն զհանդէս առաքինութեան լցին որբասիրայ կրօնիւք կենաւականօք, և անհա-մեմատ երանութեանցն արժանացեալք փա-ռաց պարծանօք պսակեցան ՚ի Քրիստոսէ։

Տեսի և անդ փոքր ինչ փորուած այրի 'ի ծոր-
ծորս քարանձաւի միոյ դժուարամուտ դը-
րամբք, և անհամբոյր առ 'ի բնակել սակս
քարաժեռ խոշորութեանն. յորում և տէ-
րունեան սեղան 'ի նմա կանգնեալ մինչ
Քրիստոսի բնակելոցն 'ի նմա նուիրականաց
պատարագաց:

Զկնի այսր ահիւ սրտի չոգայ կացի ընդ
քարաժեռ վիմին, յորում և լուսաւորու-
թեանս մերոյ աւխթն՝ երկօրեայ 'ի նմա առ-
կացեալ սպասէր կատարման սրբոյն Մանեայ.
և անդ ամենազօր տէրութեանն Քրիստոսի
երկրպագեալ՝ չոգայ 'ի բարեհամ աղբերին,
յորմէ զովացեալ սուրբքն լինէին 'ի տապոյ
քրտնաջան երկոցն՝ և հոգևոր մշակու-
թեանցն. որ և երաստոյ վիմօք պարփակեալ
շուրջանակի, և դրամբք պատեալ (1). և յո-
րոյ տեղւոյ մատռուակեայն խուկ էր յարբե-
ցուցին իւր սուրբ և անբիծ ձեռն Գրիգորի:
Ի նմին տեղւոյ և ես թշուառականս ա-
փոյ(2) կամօք խմէք արժանի գտայ ճաշակել
ջուր յաղբերէ փրկութեան նորոգողին ըզ-
մեզ, զորոյ և զաւթուռն խուկ ընկալայ, երանի

(1) Երկու օրէ. պատուեալ. Այլ օրինակ մ 'ի լատինս դնէ՝ փակեալ:

(2) Այսպէս ունին լուր օրինակք. Մի օրէ. ափոյ:

թէ և զօրինակն ։ Ո՛ւր հող օրհնութեան և ՚ի փլուզեալ դարակէն, յորում պատուական գանձն հոգևոր ՚ի հնուց էր ծածկեալ․ յորոյ վերայ շինեալ էր եկեղեցի նախ քան զայս խմով հրամանաւ ՚ի մահարձանաց ինչ կրով ձուլածոյ ։ Տեսի անդ ՚ի ծործորս եւ յամուրս քարանձաւաց բնակեալ՝ սուս կուսակրօնս, խարազնազգեստս, գետնախշտիս, բոկագնացս, խոշորաճաշակս, մշտամռունչ յաղօթս և յաղերսալի պաղատանս, աշակերտք արդար վաստակոց, և ծնունդք առաքինութեան ։ Իսկ սոքա ոչ թերեւս միախուռն (1) ՚ի միասին բնակեալք, այլ ցան և ցիր առ առապարով լերինն կալեալ կայանս, որք եւ բազմաշխատ քրտամբք երկոց խուբաքանչխուրք զհարկաւոր պէտս մարմնոյ վճարէին ։

Իսկ իմ ապա այսպէս ՚ի Նոյանէն օրհնեալ՝ չոգայ ՚ի գիւղն Թորդան ՚ի տեղի ըզբօսանաց պարտիզկանն սրբոյն Գրիգորի, յորում գանձք իմաստութեան և անմահութեան ծածկեալ կան Ա՛ստուծոյ՝ կենդանի ոսկերք սրբոյն․ որք անցին ընդ կարգս աշխարհիս ամենայն ճշմարտութեամբ, և յանմանող լուսոյն փայլեցին իբրև զարեգակն,

(1) Երէք օրի․ միախառն․

և հրով հոգւոյն վառեալք ջահազարդեցան լամպարախալ անշէջ լուսով 'ի փառս Աստուածոյ ։ Եւ անդ երեկօթս արարեալ , եւ երկրպագութիւն տէրունեան հատուցեալ . հանի նշխար 'ի ծառոյ անտի հացւոյ՝ զոր սրբոյ Լուսաւորչին էր տնկեալ իւրովք ձեռօքն ։ Եւ ապա ընդ կրունկն անդրէն 'ի ընտանեկանն 'ի մենաստանն դարձեալ , եւ ամիս երբեւ մին ընդ նոսին աղօթակցեալ հրապուրեցայ 'ի շողամարար շողմոգեալ բանից մերոց Թագաւորացն , և դաւաճանեալ 'ի խոստմանց նոցա բարեաց որ ըստ Աստուծոյ՝ դարձայ յերկիրս Հայոց ։

Ոչինչ ապա ըստ խոստմանն հատուցումն ինչ 'ի նոցանէն առեալ , այլ նմանացեալ խորհրդովք և խաւարազգած մտօք խոտորեցան զկնի ապիրատութեան , և դղրդեալ սասանեցաւ ողորմելի աշխարհս մեր 'ի մերոց անտի ։ Եւ ես կրկին կարօտէի տարաբնակ լինել 'ի բնակութենէ անտի , և առ նոյն սուրբ այրն բնակել , թէ մահ տեղի տայ կատարել . այլ այս երբ Տէր կամեցի ։ Բայց մինչդեռ քարէն զաշնաշունչ 'ի Գլխին քաղաքի որջացեալ կայր , և համնկէր միշտ 'ի չար խորհրդս խածանել (1) չար թունօք

(1) Այլ օրէ . խածնել ։ Այլ օրէ . խածանել ։

իւրովք զԹագաւորն Պապիկ, կամ թէ հա-
մագունդ ինչ զամենայն նախարարսն ընդ
նմա, եւ արկանել ապաւապու յեղծումն
եւ յապստամբութիւն: Սա նա յաւուրս ի
Տէր, ոչ սակաւ ինչ ձայն ամբոխի աղխա-
տարաց չփոթի ի վերայ նորա ածեալ բըր-
դեալ(1) հեղոյր կուսակալաց եւ գործակա-
լաց նորա, եւ զօրաց եւ զօրապետաց. ըստ
այսմ մարզէ Հերայ եւ Զարեւանդայ, եւ
Նախճաւանայ. եւ դրեթէ ի բազում աւա-
րս ասպատակաւորաց նորա եւ զօրաց եւ զօ-
րապետաց ընդդէմ նորա զինեալ մարտի-
քաջութեամբ՝ արեան ճապաղիս հեղոյր:

Իսկ սորա զայն ամենայն օժանդութեան
տեսեալ չար առաջիկանին, որ իբրեւ զանարգ-
ոք եւ զարհամարհեալ միշտ առ ի նմանէն առ-
սոն հարեալ լինէր. խանդացեալ ընդ իւրն,
եւ զայրացեալ մռմռեալ յոյժ, անցեալ դի-
մեալ երթեալ դիպէր առ իւրն զանթիւ զօ-
րաց կարասանս: Գնայր գայր հասանէր ըդ-
կողմանս Սարդատանի եւ Տոսբ գաւառի.
մեծամեծս փքայր ընկէլ ջարդել ջախել հար-
կանել խորտակել բաղկել(2), եւ ի միջոյ ի-
բաց կորուսանել, ի սուր սուսերի մաշել

(1) Երկու օրէ. բարդեալ:
(2) Մէ օրէ. բաղկել:

միանգամայն իսկ զահն՝ եւ զդողն՝ և զզա-
ւակ։ Իսկ երբեւ զայն ամբոխ բազմութեան
տաճկաստան զօրայն տեսին տարմաբար ե-
կեալ հասեալ ՚ի վերայ, եւ զմտաւ ածեալ
զիւրայոց եւս ոմանց թուլասրտից ձեռս լը-
քեալ առ ՚ի պատերազմել, և եթէ ոչ ու-
ժեղ գան ՚ի հարթ հաւատարութիւն, այնու-
հետեւ առաջի ածեալ զոչ կարող կատարել,
և կալ ընդդէմ՝ նոցա պատերազմաւ. այլ
չուեալ գնացեալ առ գաղթն, և ես զնոսա
զգուշաբար իմն ամրապահեստ առնէին։ Եւ
ինքեանք առհասարակ զմի զինուորութիւն
զինուորեալ. և փութեալ ՚ի զէնս և ՚ի զարդս՝
ելանէին ՚ի ստորոտս ամուր լերանց և խորա-
ձորս և յամուրս քարանձաւաց. և այսր անդր
սրավարեալ սեթեւեթեալ պայեալ երթա-
յին զայն ընդ հետամուտելոց թշնամեացն
զկնի նոցա։ Իսկ ՚ի տարուբեր երթեւեկու-
թեանց նոցա կոհակաց ՚ի կոհակս առ ՚ի յար-
շաւատոր շրջագայութեանցն, որ ըստ Սողոմոնին՝
իբրեւ զուլս այծեմանց վազս առեալ ընթա-
նային ՚ի վերայ լերանց Բեթելայ, ոչ կարէ-
ին զկնի նոցա բերել գրոհք թշնամեացն, և
ոչ զկամս անձանց զինչպիսութեան իւրեանց
կատարել։ Եւ գրեթէ իբր յափշտակութե-
իմն յիմարեալք խելայնոր կարծեօք իբրեւ

ամիսս երկուս, ապա անցեալ թողեալ՝ ի բաց գնացեալ երթային զհարաւային կողմամբքն Ասորւոց գաւառին ի Ճեր և ի Սաղամաս. և անտի ի քաղաք Ատրպատականի ի տեսչութենէն Աստուծոյ:

Այլ սպարապետին Աշոտոյ անդուլ և անդադար և մշտնջենաւոր միաբանութիւն ծառայութեանն ոչ յիշեցան չար բռնադատին Յուսփայ, և ոչ փոխահատուցին զանսաղական սէրն նորա, զի մինչ ի խորհրդոց չարաց արքանեկեր. Այլ իբրեւ հանդերձեցաւ նա երանել զկողմամբք Վասպուրականի, ապա զմեծ և զբարեպաշտ տիկինն բռմայր սպարապետին և զերկուս եւս դստերս նորա ընդ կողմն Նախճաւանայ յուղարկէր ի Պարսս Ատրպատականի. ի դիպահոջ զնասա կացուցեալ ըստ պայմանի պատանդաց: Զկնի սուղ ինչ աւուրց ապա և զինքն իսկ զսպարապետն Աշոտ ի դուռն կոչէր ոսպով սաստիկ. որոյ և վաղվաղակի իսկ չուեալ գնացեալ առ ահի ընտանեկացն, պատուասխաբար զնա ընդունէր և սատաձեռն ոսկիս նմա կարգէր, և պարգեւս և պատիւս նմա յարդարէր: Այլ Թագաւորն Գագիկ և համագունք իւր և նախարարք իբրեւ տեսին զդրահեղեղ ուխտ չարին

չորացեալ ցամաքեալ և անցեալ գնացեալ, առ հասարակ փառաւոր անձին զնախախնամօղն Աստուած։ Եւ ապա գառնայքն յիւրաքանչիւր գաւառս, 'ի քաղաքս և 'ի գեւղաստանս և 'ի գիւղս և 'ի տունս, ոչինչ վնասեալ 'ի հինէ չար ասոխին, բայց 'ի սակաւուց ինչ՝ որք պարաւանդեալք 'ի թշնամւոյն ոչ կարացին ժամանել անկանել յաւրացեալ գաղթն։ Նաև մեծիմաստ և բարեխորհուրդ և արդարակորով իշխանն Ննեւացեաց Նառմ՝ ոչ սակաւ զօրութեամբ մատուցանէր թիկունս օգնականութեան թագաւորին Գագկայ. և ինքն ըստ իմաստայեղց խորագիտութեանն՝ մանաւանդ թէ աստուածային իսկ այցելականութեամբ (1) 'ի բաց տարեալ մղեալ վարատէր յաշխարհէն և 'ի տանէ հօր իւրոյ զբռոր ուխս չարութեչարալուկ չար հինիցն առանց բանակ պատերազմաց. և յամենայն 'ի հրացայտ չարութենէ հրաքորքաքն Յուսփայ ամիրապահետ լենէր 'ի հովանի թեւոցն Աստուծոյ։ Այլ և իշխանն Մոկաց Գրիգոր եղբարբ իւրով Գուրգենաւ քաղումս յարդարէր ընծայէր զաւէ հարկի ծառայութեան առաջի Գագկայ 'ի հաւանտանս անդ. և ինքն խաղաղիկ

(1) Մէ օր. այցելութեամբ։

և դժուարաժամս եւ ամուր աշխարհաւն խուռն փրծանէր ողջ և ամբողջ 'ի գերչացն նեղչաց ։

---

## ԳԼՈՒԽ ԾԶ.

Յաղագս դառնալոյ Աշոտոյ արքային 'ի հայրենիս իւր, և հնազանդելոյ Աշոտոյ սպարապետի, և պատերազմին նորա, և խաղաղելոյ Յովհաննու կաթողիկոսի զնոսա ։

Արդ՝ իբրեւ զայս ամենայն լուեալ արքայորդին Աշոտ մինչդեռ էր 'ի Հռովմայեցւոց տէրութեանն, ապա մեծաւ շնորհակալութեամբ և բարեխորհուրդ ծառայական խոստմամբք խնդրէ հրաժեշտ դառնալոյ անդրէն 'ի հայրենի տէրութիւնն 'ի կայսերէ, յայտ արարեալ նմա՝ թէ այց արար Տէր և յաջողեաց 'ի բարութիւնս աշխարհին Հայոց ։ Իսկ կայսր Կոստանդին ըստ ժամանակի լրութեան բարւոյն սիրալիր սրտիւ հաւանեալ խնդրոյն Աշոտոյ, ապա և յոգնապատիկ պատրաստէր նմա պարգեւս եւ պատիւս. և բազում կարասիս և երեւելի զարդս և զէնս, և նժոյգս ամեհէնս և ոսկեսանձս, եւ բազում եւս գանձիւք զնա

փարթամացուցեալ, և բազում զօրաւարս և զօրս Հռովմայեցիս 'ի ձեռս նորա գումարեալ՝ յաղթէ յիւրական աշխարհս ։ Արոյ չուեալ երթեալ անցեալ զբազում օթեւանս, և եկեալ հասեալ յաշխարհն իւր, զբազումս նուաճեալ 'ի հնազանդութիւն ինքեան կացուցանէր, և 'ի բազմաց նորընծայ իմն հիւրամեծարութեամբ ընկալեալ պատուէր ։ Իսկ վասն զի մեծ դաստակերտն Կողք դիւրագրաւ ընդդէմ նորա գտանէին չարութեամբ, ոչ երբէք հաւանական միտս 'ի հնազանդութիւն ածել տուեալ. վասն այնորիկ իսկ 'ի գերութիւն Յունականացն զնոսա մատնէր ։

Եւ ապա Աշոտի սպարապետին Հայոց 'ի սմին իսկ յայսմ ժամու եղեւ իսկ և իսկ դառնալ յոստիկանէն Յուսփայ, եկեալ հասեալ մնեալ 'ի մայրաքաղաքն Դուին ։ Եւ քանզի խորամանկ ոստիկանն խորհրդաբար 'ի մախ եղեալ սուր հակառակութեան 'ի մէջ նոցա արկանել, այսպիսաբար նենգական մտօք թագ կապեալ սպարապետին Հայոց, և առնէր ընդ մէջ ածեալ՝ առաքէ յաշխարհն իւր. որ գրեթէ գիրկ ընդ խառն 'ի դիմի միմեանց հարան, ինքն և համանուն իւր արքայորդին ։ Իսկ իբրեւ եկն և ետես զաշ-

խարհս առ հասարակ ողողեալ տառապանօք,
և զայս վաճառականուր լեալ, և զմնացեալսն
ցան և ցիր անկեալ և սփռեալ յօտարա-
գրս, և սիրելի գաստակերան իւր վանեալ
վարատեալ և գերեալ յարքայորդւոյն Աշո-
տոյ և ՚ի Հռովմայական զօրացն, և զայս
եւս զգերդաստանս նորա և զգեօղս յաւարի
առեալ. ապա այնուհետեւ երկաքանչիւր
նոքա իբրեւ զօտարածին թշնամիս ընդ մի-
մեանս ՚ի գրգռութիւն մարտից մատու-
ցեալ. ջանաջնար լինէին զմիմեանքս եղա-
նել ՚ի հակառակութիւնս և ՚ի կռիւս: Եւ
վասն զի ՚ի վերայ երկոցունց նոցա թագա-
ւորական անունս կառուցեալ եղեալ էր ՚ի
նախանձ չարակնութեան յաչաղման, ընդ մի-
մեանս բերեալ, վասն այնորիկ իսկ առաւել
ընդվզեալ զչարէին իւրաքանչիւրոք ՚ի նա-
ցանէ զիւրն խնդրելով կայուցանել: Յայ-
սմ վայրի եկն ապա մեծ իշխանն Սիւնեաց
Սմբատ ՚ի Վասպուրական կողմանէ անուն առ
արքայորդին Աշոտ, և բազում պատուանէր
և սերս հարազատութեամբ ընկալաւ զնա,
մեծապանծ պատուով շքեղացուցեալ: Էին
և մեծ հայկազունն Վասակ՝ եղբայր մեծ-
կաղրաւ իշխանին Գրիգորոյ, և զնա եւս ՚ի
նոյն սպասու սերձութեան վայելչական կար-

գօք մեծարէր ։ Նոյն ապա համանուանքն երկու-քեան, որք զԹագաւորական անուն ժառան-գեալք էին, տուեալ եւ սատակացուցանէ-ին 'ի մէջ իւրեանց զաղմուկ խռովութեան ։

Իսկ իմ ապա ըստ դիպաց ինչ 'ի ժամ դի-պօղ ժամանեալ եկեալ հասեալ 'ի հեռաս-տանէ հալածանացն, եւ տարուբերեալ եւ համոզեալ 'ի մէջ նոցա, զվայելուչ եղբայ-րական ցեղակցութիւն պատրաստել 'ի մէջ նոցա ջանասէր լինէր. ըստ որում ապա յունկնդրութի (1) ինձ եկեալ երկաքանչիւ-րքն, եւ հաւանական միտս ստացեալ՝ 'ի պայ-ման միաբանական եւ խաղաղաւէտ սիրոյ հաստատեցին նոքա ։

## ԳԼՈՒԽ ԾԷ.

Յաղագս յառնելոյ 'ի վերայ աթոռոյն Աշոտոյ Կա-ռակոյ, եւ Աշոտոյ եւ պարտելոյ 'ի սմանէ ։

Իսկ ապա Թագաւորն Աշոտ արքայոր-դին չուէր գնայր երթայր հասանէր 'ի կող-մանս Գուգարաց, մերձ յամրոցն մեծ՝ որ 'ի

(1) Յօրինակն օրէ. ունկնդրութիւն ։

լեզու Վրաց Ճանճուրդէ, այսինքն երեք նշան անուանի. վասն զի հօր նորա զաղգն զայնոսիկ շուրջ զամրոցաւն անփոփոխանացուցեալ էր իւր, և զեղբարս երկու՝ Վասակ և Աշոտ 'ի տոհմէ Գնթունեաց բերդապահս և վերակացուս նահանգին այնմիկ կացուցեալ: Իսկ սա զնոյն հնազանդութեան կարգ առ 'ի նոցանէ՛ն առ իւր պահանջէր գալ 'ի մտերմութի ծառայութեան: Եւ վասն զի նուազունս և սակաւս անդր գտանէր ռոճիկս զօրացն, վասն այնորիկ զզօրսն իւր 'ի մօտակայ գաւառն առաքէր երթալ հոգալ զտանել զապրուստ իւրեանց՝ մինչեւ անդրէն ընդ կրունկն ինքն դարձցի: Եւ ինքն առա վայելուչ եղբարբն Աբասաւ և երկերիւր յիսուն արամբք երթեալ առ կայացեալ դարէր դադարէր մերձ յամրոցն՝ որ կոչէր Սակուրէթ:

Իսկ Վասակ և Աշոտ իբրեւ տեսին զայն՝ թէ կարաւան սպային սպառապտու առ 'ի նմանէ պակասեալ է, և առ ումեքէ հուպ ընդ հուպ չիք նմա օգնականութիւն, այնուհետեւ սնքացեալ ասպարացեալ եւ կիտս ընկեցեալ, միանգամայն իսկ գումարեալ զզօրս իւրեանց առնէին ծածկաբար, ընդ ինքեան ունելով (1) և զփրկելին իւրեանց

(1) Այլ օր. կոչելով:

յամբուկ գործոյն զապայազօրն Տփխեաց և զծործորոյն Կովկասու, և իբրև արանց աւելի քան չորեք հազար արանց սուսերամերկաց վահանաւորաց նիզակաւորաց վաղակաւորաց. և ապա յեղակարծումն ժամու 'ի վերայ հասեալ ասպատակ սփռէին։ Իսկ զայնպիսի նոցա տեսեալ սաստիկ հէնս և գույթըս բազմութեան զօրաց զինքեամբք շուրջ պատեալ, ապա բազմապաղատ արտասուօք յօգնականութիւն զբարձր բազուկն Տեառն Աստուծոյ կարդային, որ կարողն է միով՝ ըզհազարսն (1) հալածել։ Աչու կինքեալ զինքեանս նշանաւ խաչին, ահագին իմն գոռգոմամբ ճակատս մարտից ընդդէմ յարդարէին. և արիաբար առնաբար առաջացէն 'ի վերայ չահատակելովք, առ 'ի քթթել ական վաղվաղակի հերձեալ ընդ մէջ զգօլիս ապարախան ռազմին բազմութեան ընդ կռռունկն դարձուցանէին. և երկերիւրօք միայն արամբք զչորեք հազար սպառազէնս նոցա ջնջեալ ջարդեալ վանեալ փարատէին։ Ոմանս 'ի սուր սուսերի և 'ի սլաքս նետից և 'ի տէգս նիզակաց հաշեալ մաշեալ սատակէին. իսկ զոմանս ձերբակալ արարեալ ըզՍառակինոսն սատակէին. և զոմանց զռունչս

(1) Մէ օրէ. զհազարաւորն։

և զականջս կարէին ։ Իսկ 'ի քրիստոնէայսն խնայեալ՝ կապուտ կողոպուտ արարեալ զնոսա թողուլին երթալ գնալ 'ի բաց . և գրեթէ ոչ ոք 'ի նոցանէ ձողոպրեալ գտանիւր , բայց միայն Վասակն սակաւ արամբք փախուստեայ անկեալ յամրոցն Տաճուլէ ։ Արդ՝ այս այսպէս իրագործեալ , քանզի որպէս նկանակն Գեդէոնի՝ դարձեալ հոլովեալ 'ի բանակն այլազգեաց , և լուղաքինջ զնոսա արարեալ , ինքն Աշոտ եղբարբն իւրով դառնայ գնայ խնդութեամբ և յաղթութեամբ բազմաւ և մեծ աւարաւ գերովմամբք Վրաց աշխարհին , առ յաւէտ սփրեցեալն իւրեանց իշխանն Գուրգէն ։

Բայց հեզահամբոյր իշխանն Սիւնեաց՝ ընդ կրունկն յարքայորդւոյն դարձեալ յԱրագած լեռնէ անտի , չուէ հանդիպի եղբարց իւրոց երեցունց , Սահակայ Սիւնեաց տեառն և Բաբկենի և Վասակայ . վասն զի նոքա դեռ ընդ դեռ եկեալ անցեալ էին յաշխարհ տէրութեան իւրեանց 'ի փախստենէ անտի հրամանի նորա Յուսփայ ։ Եւ ապա փոյթընթաց սիրով 'ի միասին միաբանհուրդք զմիտս կառավարեալք՝ ամրէին 'ի վերայ սեփհական իշխանութեանն իւրեանց , գուն 'ի վերայ գործեալ՝ շինել եւ

նորոգել զհայրենի ուխտութիւնն, զանկեալն և զկործանեալն ՚ի թշնամեաց։ Այլ և կանայք եւս իւրաքանչիւրոցն եղբարց զրաւեալքն ՚ի գերութեան, զերծեալք ՚ի ձեռաց գերչացն՝ յետ երկեամ մի ամաց (1) գային հանգչէին ՚ի գահս և ՚ի սեննեակս տերանց իւրեանց։ Բայց և հայկազունն եւս եղբարքն Սահակ և Վասակ՝ բնաբար կուսակալք գաւառացն որ շուրջ զեզերբ ծովակին Գեղամայ, յայսմ ՚ի սոյն աւուրս եկեալք ՚ի հեռաստանէ հալածանացն, տիրէին պայազատեալք զաշխարհս տէրութեան իւրեանց։

## ԳԼՈՒԽ ՃԲ.

Յաղագս պատերազմելոյ Աշոտոյ արքայի ընդ Աշոտոյ, և պարտելոյ ՚ի նմանէ։

Իսկ Թագաւորն Աշոտ, վասն որոյ այժըմ բանս ճառէր վասն նորա, լուեալ զմիւս Թագաւորէ հոմանուն իւր հօր եղբօր որդւոյ. եթէ ոչ եկաց մնաց ՚ի սահմանեալ ուխտին որ ՚ի մէջ նոցա, այլ ընդ իւրով ձեռամբ նուաճեալ կացոյց զաւանս և գա-

(1) Յօրինակին չէր ամաց.

գաւառն՝ որ շուրջ զՎաղարշապատ քաղա-
քաւ, սակս այնորիկ հետաքրքիր լեալ ՚ի
թշնամութիւն ընդ մեծանս, եւ ամբոխս
մարդկան եւ հոյլս հինից պատրաստեալ,
մինչեւ Աշոտ անկասկածաբար կեայր նըս-
տեալ զօղեալ ՚ի գիւղն որ Վաղաւերն ա-
նուանի, յեղակարծումն ժամու յառաւօտին
պահու յանկարծօրէն ՚ի վերայ ժամանեալ՝
ջոկըս ջոկջոկս ջարդեցուց ՚ի վերայ զօրու
նորա ածէր. և միաձի միահանդերձ զինքն
և զհասարակ գունդն վարատեալ փախըս-
տականութեամբ, առհասարակ յաւարի ա-
նոյր զամենայն կապուտ կողոպուտ նոցա, և
զզէնս և զզարդս և զձիս և զջորիս բազում
յոյժ. և ինքն դարձեալ չուեալ ՚ի Վաղար-
շապատ քաղաք առկայացեալ արձանանայր
՚ի նմա: Իսկ միւս եւս Աշոտ չոգաւ նստաւ
՚ի Դվին քաղաքի:

Իսկ եւ այս ժամանեալ անդ ՚ի մէջ նո-
ցա. ոչ սակաւ ինչ բանս յանդիմանութեան
և լուտացող ապառում խռովութիւն ՚ի վե-
րայ արքայորդւոյն ածէր արտօրաթոր տա-
չորմամբ՝ սակս այսպիսի մահահառ դրժողու-
թեանցն զոր արար: Այլ թէպէտ բազք բար-
ձեալ ջանահնար լինէր բառնալ ՚ի միջոյ նոցա
զչար սերմանացանի որոմն, զի մի փոյթ ՚ի նո-

ու խմորք ցաւոց. որ թէ և առ ժամայն տեղի
տուեալ բանին հաւանական ցուցանէին (1)
կամս 'ի հաշտութեան սակի. սակայն ոչ կա-
ցեալ մնացեալ 'ի բանին բարեգգեացս, այլ
վաղվաղակի 'ի չար մախանս դարձեալ հա-
կամիտէին. եւ այսպէս տակաւին ընդ մի-
մեանս դատէին կշտամբութեամբ չարի եւ
բորբոքեալ նախանձու: Եւ այս երկոքան-
չիւր նորա հետամուտ լեալ միմեանց, եւ
զմիմեամբք պարայածեալք, առհասարակ
դղրդեալ սասանեալ աւերեալ քանդեալ
կործանեալ լինէր սեփհական տէրութիւն
աշխարհին իւրեանց, և զմեծութիւն և ըզ-
փառս իւրեանց այգի օտարի տուեալ 'ի
փարթամութիւն այլոց՝ և յաղքատութիւն
ինքեանց տարածեցին զճանապարհս իւր-
եանց: Եւ այսպէս զերկեամ մի եղուգակօ-
րէն պկնի միմեանց դուլթս տային: Իսկ ես
աւաղ եղկելի անձին իմոյ կարդացի, զի բա-
ղում անգամ բնակեաց անձն իմ ընդ այ-
նոսիկ՝ որք ատէին զողջոյն. վասն զի ես էի
խաղաղարար, և յորժամ խօսէի՝ մարտնչէին
ընդ իս:

Իսկ Թագաւորն արքայորդին գնացեալ
առնու 'ի կնութիւն իւր զդուստր իշխա-

(1) Այ. ծնունդ օրէ. ունէին՝ անցուցանէին:

նին մեծի Սահակայ, որ Սեւադայն յորջոր-
ջէր. և անդ զպարսն պարեալ, և զկաքաւսն
յօրինեալ. առաջի նմա սափիկանին Յուսուփ
Թագ արքայական և զպարգս զգեստուց պա-
տուականս և պայծառս և փայլեքուչս, և ձիս
ախեանսն՝ ազատական զինուք եւ զար-
դուք. եւ հեծեալս օգնականութիւն նմա
գունդ խմբեալ: Իսկ նորա պահեալ
Թագին՝ որ առաքեցաւ յսափիկանէն, եւ
բազում կարասիս և գանձս նա սափիկանին
առաքեալ. առեալ եւս ապա ընդ իւր ըդ-
զօրս իշխանին Սահակայ աներոյ իւրոյ. զայ
չուէ հասանէ 'ի դուռն Պլինն քաղաքի, վասն
զի 'ի նմա իսկ ակայացեալ կայր միւս Թա-
գաւորն Համամուն նորուն, և զումարեալ
ապա ընդ միմեանս սիրեալ տարածանէին
'ի մարս: Իսկ ես 'ի խաղաղութիւն միջոց
խօսէի ընդ երկաքանչիւրսն, որպէս միան-
գամ՝ երկիցս և երիցս:

Նայց արքայորդին Աշոտ 'ի բազմութիւն
զօրացն ապստամբեալ. և 'ի քաջութիւն իւ-
րեանց նա յուսացեալ՝ ամբարտաւանս եւ
բարձրայօնս փքայր. ընդ որս ոչ Թերեւս հա-
ճեալ Տեառն: Եւ իբրեւ մարտն ընդ մի-
մեանս բաղխեալ՝ յառ զրդուութեան յաղ-
ժանն Գրիգորոյ աներոյ արքայորդւոյն, եւ

որդւոյ իշխանին Սեւադայի, ՚ի փախուստ տուաքի նոցա զառնային զօրք Աշոտոյ արքայորդւոյն, եւ զբաղուած ՚ի զօրացն որոյ ճարակ տային բուռն խմաստնոյն բանի՝ թէ Տէր ամբարտաւանից հակառակ կայ: Ապա գենայեալ չուեալ երկեալ արքայորդին առ մեծ իշխանն Վրաց Գուրգէն, եւ զօրս բազումս ՚ի նմանէ գումարեալ, դարձեալ գայր հասանէր ՚ի Վաղարշապատ քաղաք. եւ յայնմ նուագի արա ոչ տուաւ նոցա առ ՚ի յինէն թոյլ՝ մարտիւ ընդ միմեանս հարկանել. այլ բաղխեալ իմ՝ զգործարանս խնամից նոցա. խրատու բարւոյ զանձին մատուցանէին, զգաստութիւն սիրոյ ընդ միմեանս խնամատութեամբ բերեալ:

Զայսու ժամանակաւ ապա իշխանն Սահակ, որ անփոփոխականաբար սրբապաշտանէր ըդ-զաւառաւն առ Ծաղկերբն Գեղամայ, փախճանեալ փախի ՚ի կենացս, թողով իւր ուստր մի մանկիկ սրոյ փոխանորդ. եւ դնեն զնա ՚ի քնարանի առ գուրս ձեռակերտ եկեղեցւոյն իւրոյ ՚ի գիւղն Նորատուս.

## ԳԼՈՒԽ ԾԹ.

### Յաղագս պատերազմին Շապհոյ արքայորդւոյն ընդ Անդեկայ իշխանին և յաղթելոյն նմա.

Բայց թագաւորն Շապուհ արքայորդին չուեալ գնայ առ մեծ իշխանն Սահակ անուն իւր. եւ առա զինի իւր զնա համագունդ համդերձեալ իւրովքն զօրօք երթայ գնայ Մեծ գաւառ առ ի հնազանդել զերկրս ապստամբութիւն Անխէսի, զոր իւր իսկ կացուցեալ էր զնա իշխան եւ հրամանատար ձուապարոց ազգայն այնոցիկ Մեծ գաւառին: Ընդ այս մեծ բարեկարգն, որ այսպատեբն իսկ զմանն Գուգարաց մերձ ի գրուն Սյունեաց գայր հասանէր զօրու բազմաւ ի թիկունս օգնականութեան թագաւորին: Իսկ Անխէսի տեսեալ զբազմութիւն զօրացն թագաւորի հորդան առեալ ի վերայ նորա, այս եւ նա եւս գումարտակ մեծ առնէ յանդուգն եւ անձնուէր զօրաց, գրեթէ իբրեւ զյորձանս ինչ ուղխից ընդ առ ի վայր հեղեալ, որք եւ ընդդիմեալ փութային հանել մերժել զթագաւորն ի բնակութենէ իւրեանց: Իսկ նա պատգամ առ Անխէսն յղէր՝ զատուցեալ

հպարտութիւն բարուցն ջեռուցանել, և գալ ՚ի հնազանդութիւն, և կեալ ՚ի խաղաղութեան և ՚ի համեստութեան։ Բայց նա յաւէտ ևս խորին խաւարութեամբ պատախանձս պաշտպանացն դարձուցանէր։ Ապա խոհեմ և ուշիմ՝ թագաւորն հանդերձ իշխանաւն Աշհակաւ կուռ փառեալ զզօրս իւրեանց յաղէգն և ՚ի սուսեր և ՚ի տէգ նիզակաց. որս բնակիս հայակարս. ալքինս (1) և ահեկինս կողմէին, և շուրջ եկեալ իբրև բըհրամակ ինն փողփողակի հասանէն յախին ձոբոյն. յորում ամփոփեալ կայր Սոփէս համաղունդ իւրովք զօրօքն. և անդ ապա ահագին ինն զղրգմամբ չահատակեալ՝ ահապակուցանօղս ՚ի վերայ նոցա հեղուին։ Իսկ կայծակի ըստ սրնդութեան ստեալ զօրացն Սոփէսի. յանկարծակի յանէ ցէր այսր անդր յարձակմամբ փախստէին հեռանացին ուքանացին՝ միայն թողեալ զՍոփէսն։ Նա և ինքն փախփաղակի խուճապեալ եկեալ ՚ի ձոբակէն յարեւմուտս կոյս համձեալ փախստեալ գնայր անկանէր յաշխարհն Ախնեայ առ իշխանն Ախբաս, զի թերևս ՚ի տաղբերց նոցա հետի ապագս գտանել մարթասցէ իւրեանց տառապանաց։

(1) Ա՛նբաշն օրէ. ամենքին առաջինս ։

Եւ մինչդեռ Թագաւորն առկայացեալ ՅԱւտի գաւառի համզել նուաճել զխառապարանոց աւազակուտ մարդիկ աշխարհին, յանկարծակի դիմեալ չուեալ գնացեալ Սովսէսն ՚ի Սիսական կողմանցն, ՚ի մի դնէր երթալ առ մեծ քարեպիսկոպոսն Օտնարայ. և բարեաց խոստմամբ միաբան ընդ իւր զնա կացուցանել, եւ գրաւականս իւրոյ տէրութեանն լինել: Զայն անգս աղէտի ընդ հուպ զգացուցեալ Թագաւորին՝ փութափաղկի զհետ աճապարեալ կրթի, և ձի ՚ի ներքս տարեալ ՚ի սատիկ վառեալն և ՚ի կողմեալն Սովսէսի, և մօտ առ նա հասեալ, և զագուցեալ գլխանոյն երկաթի փակերը դիպեցուցեալ՝ շեշտ ընդ մէջ ձեղքէր զամուր գլխանոյն, և յերկիր զնա հարկանեալ. եւ ընդ կրունկն դարձեալ՝ առեալ ընդ իւր զՍովսէսն տանէր, և խարեալ զաչս նորա խաւարեցուցանէր կուրութեամբ. փան զի՝ որ կամաւ կուրութիւն յինքն կրէ, ոչ երբեք կարէ նա գալ յառողջութիւն:

Իսկ իբրեւ այս այսպէս ՚ի կամս անձին եղեւ իրագործեալ, ապա չուէ գնայ առ Թագաւորն ՚ի գաւառն Շիրակ, և սիրալիր սրտիւ առ ինքն կոչէ զեղբայր իւր զՎրամ՝ զոր իշխան իշխանաց էր կացուցեալ, և զի-

խանն Վլադ Պուրդէն մնացուն աներ, չեւ-
եւս գիտելով զոր առ 'ի նոցանէն էր նմա
նուէթեալ դաւաճանութիւն չարակնութե
նախանձու . եւ հանդիպեալ միմեանց 'ի
դեօղն Արմանի՝ մեծապատիւ գնաս առնէ-
լոտ օրինի Թագաւորայ՝ բազմապատգեւս
բարութեանքն : Եւ վասն զի ոչ լինէր յա-
ջողեալ նոցա յայնմ տեղի բառնալ նոցա ըղ-
ձուան կորստական ըստ երկնային այցելու-
թեանն , յուղարկի 'ի նոցանէն . և եկեալ
ակայանոց առանց խմբ կանխածանաց 'ի
քաղաքագլուխն Երադգաւորս : Իսկ նոցա 'ի
ձեռն պատրուակի սիրոյ զգուելին Թագա-
ւորին խորհեալ . և հնարս որոգայթից նիւ-
թեալ՝ յանկարծակի 'ի վերայ յարձակէին
բաղկել զնա անպատրաստ : Իսկ արա փոքր
ինչ յառաջ իբրեւ լեալ Թագաւորն , եւ
առնլով առեալ ընդ իւր զուստր Երասայ
եղբօր իւրոյ , և զգաղթն Երադգաւորից , և
հալխ 'ի խորդաւանական ոստրդութեանց
ձողադրեալ՝ չուէ զնայ Ալուսի դաւառ : Իսկ
նոցա եկեալ և ոչ գտեալ մարթեցուցանել
զոր կամէինն . ամօթ զանձամբ արկեալ եւ
դարձեալ կոյս մեղացական գաղթն յաւարի ա-
ռեալ դառնային : Եւ յայնմ հետէ արա
ատասիկ թշնամութիւն 'ի մէջ նոցա զեղեալ

ծայր յայսպիսի խորհեցեալ մահահոտ չա-
րութենէ ։

Բայց Վասակ՝ որ անփոխանակաբար պա-
յազատէր զտէրութիւնն Գեղարքունեաց ,
կարծիս իմն երկիւղի յարքայէ ՚ի մահ եղեալ՝
խնդրէր առ ՚ի նմանէ յետակար երդման , զի
անկասկած լիցի ՚ի մտանելն առ նա և յե-
լանելն ։ Զոր իմ իսկ ընկալեալ յարքայէ ըղ-
ձամանն , և տուեալ առ Վասակ , ապա չուէ
գնայ առ Թագաւորն . և յառաջնում նուա-
գին իբրև զհամամիտ գործակից և զեղբայր
սիրելի հաւատարմացուցեալ իւր՝ ընդունէր
զնա պատուով մեծաւ ։ Իսկ զկնի ապա հրա-
պուրեալ յանանց՝ որք առէին Թուղթս առ նա
գտեալ զմիւս Թագաւորին Աշոտոյ և Գուր-
գենայ աներոյ իւրոյ ՚ի ձեռն սուրհանդակի
միում՝ լի ամենայն խորամանկ խորհրդով ,
սակս այսորիկ կալեալ կապէ զնա երկաթի
կապանօք . և դնէ յամրոցի անդ որ Կայեա-
նըն կոչի ։ Իսկ ես Թէպէտ և սաստկագոյն
բան յանդիմանութեան ՚ի վերայ ածեալ
Թագաւորին՝ պաշարեցի զնա նշտամբու-
թեամբ մեծաւ վասն ստելոյ ուխտին երդ-
ման , և կապելոյ զՎասակն և իւրոյ ձեռամ-
բըն զտէրութիւն նորա նուաճելոյ , սակայն
նա ՚ի Վասակ զիմաստ տարեալ մղեալ հանէր ,

և փոքր ինչ յաւուրս ժամ եդեալ՝ յանձն առնոյր արձակել 'ի կապարանէն, և հաստատել զնա յաշխարհ տէրութեան իւրոյ. սակայն և ես սակս այնորիկ թողլ առ ժամայն առեալ, զի մի՛ թերևս ըստ մանկական բարուցն գաղտնական ինչ առասցի կամս, և զանկարգն դրժեալ գործեսցէ իր. որ և այսպէս սոյն այլում անդուստ զայսմիկ թա-ղի հոգալ երկնաւոր այցելութեանն յանձն արարեալ ։

ԳԼՈՒԽ Կ.

Յաղագս ընդվզելոյ Սահակայ իշխանին յՄ.ղաւոյ արքայէն, և ըմբռնելոյ 'ի նմանէ. և յաղագս գործոյ ինչ այլոյ իշխանաց ։

Օ այսու ժամանակաւ ոմն հազարացի Փարհիսի անուն իւր, սահիկան 'ի Հայս յամիրապետաէն անտի առաքեալ, և ընդ իւր բերեալ թագ դնէր 'ի գլուխ Թագաւորին Գագկայ, երեքկին զնա պսակեալ 'ի վերայ Հայաստանեայցս, և այլ ևս բարեփայելուչ զարդուք զնա շքեղացուցեալ ։ Նոյն և թագաւորն ևս ոչ սակաւ ինչ պատիւս և

պարգեւս աստուածայինս նմա շնորհէ . այնքա ամիրապետին եւս բարձում առաքէ փառա ոսկւոյ եւ պճնաթոյ, զինչ ՚ի սակս արքունի, եւ վայելն եւս ՚ի նպաստ օժտութեան ։ Բայց սոսկանն Յուսուփ յաւէտ իւր ընդ այնուհետ զչարեալ, ահարկէին կրճտէր զատամունս ՚ի վերայ թագաւորին Պարսկաց, բռնանայցեալ ընդ ապականութեամբք եւ մօտալուստ բանիւք ։ Բայց հպատակ իշխանն մեծ Սահակ, որ արդէն ցուցեալն էր փեսայութեամբ զթագաւորն Աշոտ, հրապուրեալ ՚ի բանս թոյլաց սմանց չարախորհաց, ընկլուզ զխնամութիւն իւր մեծ . եւ սպա սկսաւ չարիս իւր ՚ի վերայ թագաւորին նիւթել իբր յոսար թշնամւոյ ։

Նա երբեւ սանձահանիք ցասութեան ձմերայնոյն ՚ի բաց եդաւ, սպա երկաքանչիւր նոքա զօրաժողով լինէին ՚ի մարտ ընդ միմեանս պատրաստեալ. եւ այնուհետեւ հասեալք ՚ի մի վայր ՚ի գեօղն Ախալեանս(1), ձախառս ասպղէ մարտկաց ընդդէմ միմեանց պատրաստէին ։ Այլա մեծամեծք աւագանւոյն յանդիմանեալ զերկաքանչիւրսն՝ իբր գձրպարտս եւ անձնասէրս զնոսա լինել. եւ սկիզբըն զխորեանս ամենայն բաւական եւ քա-

(1) Եշխօ օրէ · Ախալանս ։

ջութեան ցուցանել. և այսպէս համբերեալ 'ի մէջ նոցա դաշինս հաստատեն խաղաղութեան. և ապա բազում ուխտ երդմանց գրով կնքեալ տան իւրեանց քրիստոսադիր կնքիւն և միջնորդութեամբ սրբոյ նշանի խաչին: Իսկ ապա թագաւորն ընդ կրօնիւքն դարձեալ՝ փաղփաղուկի չուէ գնայ ընդ դուռըն Դւինի քաղաքին, և անդ բազում արեան ձապաղիս 'ի նոցանէն հեղեալ, և առհասարակ յաւարի առեալ զնոսա՝ հնազանդեցուցանէր զամբարտաւան և զխիստ ապստամբութիւն նոցա ընդ լծով ծառայութեան իւրոյ:

Նա ուրեմն ապա մեծ իշխանն Աշխական տոհմին Սմբատ, երիս եւս եղբարքն համեղերձ, ցասմնական ինն սրտիւ դըժգմեալ ընդ Հագարացւոյս, որ յանժամ զգաւառն Գողթան բռնակալեալ պայազատէր, խնդրէին առ 'ի նմանէ առ յինքեանս դարձուցանել զսեփհական իւրեանց ամրոցն Երընջակ. և զառ ստորոտով նորա զգաւառն՝ զոր Յուսփայ ոստիկանին առեալ տուեալ էր 'ի ձեռս Գողթան բռնակալին, այլ նա իբրեւ յարքունուստ զայն նմա շնորհեալ համարէր. և ոչ առնոյր յանձն տալ: Իսկ ապա երկոքանչիւր կողմանք զօր գումարեալ

զունդ կազմեալ՝ իւր հրամանաւ էր իմն զը-
զգամամբ մարտ ընդ միմեանս հարկանէին ։
Նա եւ իբրեւ ջոկք առանձին կազմեցան , և առ-
պատակին զմիմեանըք ախոյեցան , և զունդն
Հագարացւոցն աղմկեալ յետ կոյս հարան
մերձ ՚ի պարիսպ, անդ առա զոր զարուօ-
նայքի իշխանին Սմբատայ որ ՚ի Թիկանց կու-
սէ կային Վասակայ եղբօր նորուն ՚ի ձախա-
կողմն Թեւոյն, յանկարծօրէն[1] խորհրդեամբ
չարի համագունդ ընդ Վասակայ ձի ՚ի ներ-
քըս տարեալ, և առ հասարակ ՚ի վերայ յա-
րուցեալ՝ գխաժաւալ յերկիր զքաջն և բը-
կորովին Վասակ արկանէին, և ինքեանք
Թիկունս առ ՚ի գնալ դարձուցեալ՝ չուէին
՚ի Նախջուան քաղաք ։ Իսկ զիակ գեղեցիկ
երիտասարդին բարձեալ եղբարցն ՚ի տեղւո-
ջէ ճակատուն , տարեալ եդին ընդ հարս
իւրեանց, արարեալ կոծ մեծ ՚ի վերայ նորա ։
Բայց Թագաւորն Աշոտ իբրեւ զկանխա-
կատարս զԴվին քաղաք պատրաստեաց, ա-
պա Թիկունս առ ՚ի գնալ ՚ի նոցանէ դար-
ձուցեալ՝ չուէ յաշխարհն Վրաց . և անդ
ընդ իւր զԹագաւորն Վրաց Ատրներսեհ
առեալ, երկաքանչիւր նոքա ՚ի մարտ ընդ
իշխանին Գուրգենայ մտեալ խնդրէին զիւ-

(1) Մի օր . յանկարծակի ։

րաքանչիւր վրէժս. զորս նենգապատիր չա-
րախնաբար գործեցին նմա՝ ահա ապիրատ
և աշխարհաւեր կործանումն։ Իսկ թէպէտ
միւս ևս Թագաւորն Աշոտ և եղբայր ա-
քայորդւոյն Աբասայ գլուխ իմն 'ի Գուրգէն
տուեալ հաւաքէին, սակայն ոչ կարացեալ
ըստ օրինի մարթից զդէմ նոցա ունել, 'ի
հալածս խարախիտս և յանտառախիտ խորա-
ձորս ամրացեալ լինէին։ Նոյն անձկութի
վայրայն ոչ թերևս ապաւսպուռ զասպա-
տակ հինէին 'ի նոցանէ կարողանայր արգե-
լուլ, այլ միշտ զբազմութիւն վահանակիր
զօրուն իբր աւարառուս իմն ընդդէմ նո-
ցա տուեալ, և 'ի յաղեղն և 'ի սուսեր փո-
ռեալ՝ բազում վիրաւորս 'ի նոցանէ տա-
պաստ արկանէին, մինչև խօսել(1) նոցա 'ի հը-
նազանդութիւն և 'ի խաղաղութիւն, և զա-
րըս 'ի ձեռանէ նոցա բերաւ աւերումն և
սասանումն աշխարհին՝ կրկին տուժիւք ըդ-
նոսա նորոգեալ։ Իսկ մինչդեռ այնպէս ըդ-
սահման խաղաղութեան մերձ էին ընդ մի-
մեանս հաստատել, խոկ և խոկ ժամանեալ
գուժկան Յլուսի գաւառէ առ Թագաւորն
Աշոտ հասանէր, ասելով նմա զելս իշխանին
Սահակայ անուն նորա, Յլուսի գաւառ-

(1) Երկու օրի. խօսին։

զուժգնապէս յաւարի առնուլն առհասա-
րակ, և զյափշտակութիւնն 'ի նոցանէ ամ-
րոցայն՝ որ 'ի Ձորափոր, տանել զգաղթ
յաշխարհն յամրոցս իւրոյ տէրութեանն, և
զիւր արձանանալ և կալ նստել զլեռնակող-
մամբ գաւառին :

Զայս լուեալ ամենահարուստ և բազ-
մահանճար Թագաւորն Վրաց Ատրներսեհ,
լքեալ թողու 'ի բաց որ առձեռն կայր
պատրաստ՝ զգործն Գուրգենայ քեռ որդւոյ
իւրոյ. իբր պարապոյ գոլ զայն հոգ՝ և յա-
լում տեղւոյ թողլի է. և վաղվաղակի պա-
րաստաբար խմն յուղարկէ առ 'ի չիւրմէ զԱ-
շոտ Թագաւոր Հայոց յամբոխ գործոյն իշ-
խանին Սահակայ : Այլ նորա զօրս յետս
զԹիկամբք իւր Թողեալ, և ընտրեալ արս
իբրև երեք հարիւր, միայն սաստիւ հապ-
ճեպով գան հասանեն 'ի Ձորափոր, և տե-
սանեն նախ զկայեանն կոչեցեալ բերդ յա-
փշտակեալ իշխանին Սահակայ, և որ 'ի նմա
կայր զխաղահոզ, Վասակ տէր Սիւնեաց՝ հա-
նեալ արձակեալ զնա 'ի տուն հօր իւրոյ. և
զայլ ևս ազատ կանայսն որ 'ի նմա բաս
սակի գերելոց՝ սա անց փարատեալ, և պա-
հակն զիւր ամրոյն կացուցեալ : Ապա և ընդ
միւս ամրոյն որ էր մերձ 'ի նա, և զայն ես

դրաւեալ տագնապաւ տարակուսից, և որ-րոյ ձարակ զերդապահակն առեալ, և խաղացուցեալ զգայթ բնակչաց երկրին առ-հասարակ աղխիւ իւրեանց յամուրս ամրու-թեան իւրոյ. և զարարայս նոցա որ մերձ էր ՚ի հունձս՝ տարաժամ զայն հնձեալ գե-րանդիւք. և հրաքարօք հրակիզեալ, զի մի կարիցեն կալ զետեղեալ ՚ի նմա սոք թա-գաւորին բնակութեամբ:

Արդ՝ իբրև զայնպիսին տեսանէր տաղտ-կալի առաւօտս, և զաղմուկ չփոթի զե-ղեալ զաշխարհաւ ամրութեան իւրոյ, այ-նուհետև ոչ զանգիտեալ ՚ի բազմութենէ զօրաց իշխանին, և ոչ զնուազունս իւր գունդ ՚ի մին եդեալ. չուէ գնայ ՚ի հան-դիպումն նոցա. վասն զի քանակեալ զետե-ղեալ կային ՚ի ծործորս լեռնակի միոյ ըստ արևմտեայ կուսէ ձորոյն Տաւրիշոյ (1) վա-րանեալ յափշտակել և ձգել (2) յորդայթս իւրեանց զթագաւորն: Եւ անդ ապա գը-տեալ բլրակ մի, որ ունէր զինքեամբ քա-րաժեռ շրջապատ, ՚ի նմա եղեալ բնակէր զօրն ողջոյն և զգիշերն ամենայն: Եւ սպա-դամ ապա զմի ոք եպիսկոպոսացն առ իշխա-

(1) Գրի և Տաւուշոյ կամ Տաւշոյ ըստ այլ և այլ օրինակաց:
(2) Երկու օրէ. յափշտակեալ և ձգեալ:

նըն Սահակ առաքէր ասելով. Ո՞րպիսի ինչ չար, կամ ո՞րպիսի ինչ վնաս առ ՚ի յինէն քեզ բերաւ արդեամբք, զի փոխանակ այնըր արժանի ՚ի քէն գտայ այսպիսւոյ իմն ծանըր աշխատի՝ զոր անսի գործեցեալ, և ոչ յեռակար երդմանն քո ածէր զքեզ ՚ի զղջումն. կամ ընդէ՞ր այժմ զախնդիր լինիս, հեղուլ զարիւն իմ առանց բանի պարտապանութեան: Բայց արդ՝ դարձ ՚ի բարկութենէ այդի, և դարձո ՚ի բարիս զ՚ի նանիր թագուցեալ որոգայթ ապականութեանդ. և միայն զերկու ամրոցս զոր յափշտակեալ է քո՝ այսրէն տուր ինձ, և զգաղթ աշխարհիս դարձո. և յայնմհետէ եղիցի միաբար խաղաղութիւն ՚ի մէջ մեր՝ որպէս հօր հարազատի և որդւոյ սիրելւոյ:

Իսկ իշխանն զայսպիսի լուեալ բան պատգամի, և ոչ պատասխանւոյ թերևս արժանի համարեալ, այլ եւս քան զեւս մռմռեալ առ եպիսկոպոսն ասէր. Դու նիստ աստ յիմում խորանի, և ես առ նա սրով իմով չուեալ գնացից՝ փաղփաղուկ զպատասխանին պատգամաց նմա հատուցից: Եւ զայս ասացեալ՝ գումարեաց բոլոր զզօրսն իւր առներ, աւելի քան զութ հազար արանց, և յառաջ կոյս մղեալ, և հանդէպ բլրակին

հորդան տուեալ՝ յորոյ վերայ կայր Թագաւորն, հրամայէր հետեւակամարտ գնդին վահանափակ լինել, որ տեսութիւն իմն բերէր յինքն որպէս զանպարտելի պարիսպ, և ՚ի Թիկանց կուսէ նոցա զհեծելազօր գունդըն պատրաստէր՝ սպառազինեալս և վառեալս ՚ի զէնս և ՚ի զարդս: Եւ առաջապահքն առաջի վահանափակ սպային սրաւար երիվարօք խաղացեալ՝ յայս կոյս յայն կոյս երթային և գային: Իսկ յեղանել արուեստին՝ փայլատակունք ՚ի մերկապատեան վաղակաւորացն բազմութենէ հատանէին, և ՚ի սաղաւարտացն և ՚ի Թիկնապահ և ՚ի լանջապահ պղնձի տախտակացն և ՚ի պահպանակացն բարձից և բաղկաց:

Իսկ զայնպիսի տեսեալ բազում զօրս կուռ վառեալս զինուորս զեղեալ Թագաւորն, ապա և նա զհարիւրսն իւր յետ կոյս Թողեալ, որ ընտրեալն էին յերկայն ուղւոյ ճանապարհաւն, միայն երկերիւրօքն իջանէր ՚ի բլրակէն ընդդէմ նոցա: Եւ անդ ապա տարածեալ զյետակար երդմամբն իշխանին առաջի երեսաց Աստուծոյ, այսպէս և յինքեան ասէր. Եթէ ես ինչ սխալեցի, կամ ստեցի այսմիկ երդման, հատոյ Տէր Աստուած զինատութեան իմոյ ՚ի գլուխ իմ. և եթէ իշխանն

տաւնդանեաց սմա. 'ի նա հաստուցեալ բդ-
մեաս իւր՝ փրկեա զիս 'ի տարապարտ մա-
հուանէս զոր նիւթեալ ածեալ են 'ի վերայ
իմ: Եւ ապա զյեակար քարտին 'ի գրատաս
Խաչին որբոց կապեալ, զոր աւխորն էր միշտ
առաջի իւր շրջեցուցանել, յանկարծակի զմի
զինուորութիւն երկերիւր նոքա զինու որեալ,
և 'ի ձայն բարձր աղաղակեալ ձի 'ի ներքս
տանէին: Նախ ինքն յասպարիզին շահատա-
կեալ, և յակամ թօլթափել իբրև հողմ ինչ
զնոսա փոլթարկեալ, և ոչ մի ոչ մնաց որ
'ի տեղի ձակատուն. և ոչ բնաւ լոկ երկուք
'ի միասին 'ի նոցանէ գտանէին, այլ ցան և
ցիր սփռեալ ընդ գլուխս կոհակայն և ընդ
հովիտս և ընդ խորաձորս և ընդ անտառա-
խիտ մայրիս, ոչ թերևս առ 'ի նոցանէն
վրիպեալ որ 'ի փոքուէ մինչև ցմեծն, բայց
միայն երկուք նոքա. իշխանն Սահակ և Գր-
իգոր որդի նորուն՝ զոր ձերբակալ արարեալ
տանէին: Եւ ապա զամրոցն առհասարակ
զԳարդմանայ թագաւորն ինքն գրաւեալ,
և զբովանդակ աշխարհն յիւր անուն նուա-
ճեալ հնազանդէր: Իսկ ապա 'ի նանիր պա-
կուցումն իմն երկիւղի մահու 'ի մտի ե-
դեալ թագաւորն, զի թէ թողից, ասէ,
զիշխանն և զորդի նորուն, զմահ իմ այս

գուշակէ . և եթէ 'ի դիպահող զայգայխն երևելի առս կայուցից, և զերծ յայլոց ձեռաց լինիցի գոցա՝ զոր օրինակ Վասակայն, և այնպէս անշուշտ մահ իմ առ դուրս կայ ։ Իսկ այնպէս անխորհուրդ երկիւղիւ զգածեալ՝ կուրացուցանէ զաչս երկոցունց նոցա ոչ առեալ 'ի միտ զայցելութիւնն Աստուծոյ, որ յայնմ՝ նուագին զնա ապրեցոյց, եթէ կարող եւս է նոյն Աստուած ոչ տալ թոյլ դարձեալ դաւաճանս կրել 'ի խափանեալ երկիւղէն։ Իսկ այսպէս գործեալ իր դաւանութեան անփոփոխ զտիրա ամենեցուն կացոյց . բայց (1) 'ի նմանէն արտահեալ ։

## ԳԼՈՒԽ ԿԱ.

Յաղագս ազատամբերլոյ Յուսեփայ, և ապէկանոնեան Իսքոսայ և գործոյ նորին ։

Բայց փոքր ինչ յառաջ քան զայս ատենին Յուսուփ ազատամբութեան բաղձան ընդվզեալ յիմաստելեան ամբարտաւան, և 'ի պարապութենէ սորայն անդուշեալ.

(1) Մէ շէ . բայց 'ի նմանէն ։

առաքէ այլս զոմն ՚ի նախարարաց իւրոց ամիրապետն անհուն իմն զօրօք հրաման նմա. որ թէպէտ զմի նուագ և զերկուս ընդդէմ զինեալ՝ հարուածս ՚ի վերայ զօրացն արքունի հասուցանէր, սակայն ոչ կարացեալ ընդդէմ ունել, ձեռբակալ զնա առնէին. խաղացուցեալ տարեալ կապանօք առ ամիրապետն: Եւ այսպէս այց ելեալ շնորհացն Աստուծոյ՝ փրկեաց զթագաւորն Գագիկ ՚ի գազանական չարաչարաց սպառնալեաց նորա:

Բայց իբրեւ կալան զՅուսուփ, ըմբռնեալ լինէր յամիրապետէ անտի: Այս ոմն ՚ի ծառայիցն յաւէտ իմն ՚ի պատուականաց Նսրուք անուն, որ իշխան և հրամանատար էր ամենայն տան նորա, բռնազբօսաբար տիրէր տէրութեան աշխարհին Յուսփայ. և յետ սակաւ աւուրց սա և յամիրապետէն իսկ փոխանակ Յուսփայ ոստիկան հաստատեցաւ: Եւ սա նա եւս առաւել քան զՅուսուփ ըստ նմին սակի դնէր ուխտ միաբանական խաղաղութեան ընդ Աշոտի, և Շահնշահ զնա անուանէր:

Բայց ոստիկանն Նսրուք դեռեւս ոչ մոռացեալ ՚ի սրտէ զմախանս չար թունիցն զոր ՚ի թագաւորն Գագիկ հնարէր միշտ թափել, յետ ոչ բազում ինչ աւուրց հորդան

իւրոյ զօրուն տուեալ՝ առաքէ զկողմամբք Ճուաշ գաւառի։ Որ թէպէտ բնակիչք գաւառին խրաղգած յառաջագոյն չար հինին լինէին, սակայն ոչ կարացեալ ստատապու-գաղթել յամրոցն, նոքա իբրեւ զկայծակն 'ի վերայ հասեալ, և ասպատակս ընդ երեսս գաւառին սփռեալ, բազում աւարաւութեամբ կապուտ կողոպուտ առնէին. այլ եւ զոչ կարացեալսն անձապարել անկանել յամրոցս փայրայն՝ 'ի գերութիւն վարէին զներգեւեալ արսն և զկանայս և զմատաղ մանկտի։ Իսկ ապա զայն տեսեալ Թագաւորին Գագկայ, և ըստ հանճարագիտութեան իւրում 'ի մտի եդեալ զոչ կարողէն կալ ընդդէմ Յուսփայ մարտի պատերազմի, 'ի հնազանդութեան պայման ընդ նմա իւր փոխարերէ։ Եւ ապա զմին Գէորգ Ճաւնունի 'ի կրօնաւորական կարգէ՝ բազում ընծայիւք և պատարագօք առ ոստիկանն Յուսուֆ առաքէ, խնդրելով զհաշտութիւն առ 'ի նմանէ. որոյ առեալ և ընկալեալ՝ տայ յետ-կար երդման ոչ եւս յաւելուլ կալ 'ի նոյն յող-դողդ[1] միտս ընդ Թագաւորին։ Եւ դադարեալ այսպէս ասպատակ հինին, հարթայարմար հանգչէին աշխարհ տէրութեան Թա-

(1) Երկու օք. ոլորդ։

գաւառին Գադկայ 'ի կայս հանգստեան իւրեանց․ յապահովացեալք յարտաքնոց յայնմանէ հրոսակաց ։

## ԳԼՈՒԽ ԿԲ․

### Յաղագս ապստամբութեան Վասակայ և Նուաճելոյ ընդ ձեռամբ Աշոտոյ ։

Բայց յետ այնորիկ սուզեալ մերկացեալ երեւէր ապստամբութիւն քանանիտ (1) գնթունեայն Վասակայ, որում հաւատացեալ էր պահպանութիւն ամրոցին Շամշուլդէի, և 'ի դերեւ ելանէր նորայն խոկացեալ դաւաճանութիւն, և Թիկունս Աշոտոյ դարձուցանէր՝ որ Շահանշահն անուանէր․ և անձնատուր 'ի Գուրգէն իշխանն Վրաց լեալ, նմա զմեծ ամրոցն տալ խոստանայր, միայն թէ իւրում նահանգին տայցէ նմա այլ ևս ամրոցն կրուստ քան զնա (2) ։ Իսկ նա զհայցեալն 'ի Վասակայ վաղվաղակի կատարեալ, և յետակար երդման կնքեալ տայ

(1) Մի օր․ քանանամիտ ։

(2) Այսպէս ունին երեքին օրինակք․ մի օր․ կորուստ ։

տանել նմա. որոյ հաւատարիմ բան ՚ի յեր-
դմանն եղեալ, և եղեալ յամրոցէն չուէ գնայ
առ Իշխանն Գուրգէն: Եւ վասն զի նախ
քան զայս սպանեալ Աշոտ եղբայր Վասա-
կայ ՚ի ստամբակոյտ զօրացն իւր ՚ի յաշխարհի(1),
սակս այնորիկ ՚ի ձեռն ձեռնասուն կրտսե-
րացն իւրոց հաւատոյ զամրոցն ՚ի չուելն
իւրում:

Իսկ ՚ի հանդիպել սորա Իշխանին Գուրգե-
նայ, իսկ և իսկ առեալ զնա ընդ կրունկն
անդրէն դարձուցանէ, ածեալ ՚ի դուռն ամ-
րոցին՝ առ Ինքն տալ հայցէր: Իսկ պահնակ-
քըն ամրոցին ոչ կամեցան տալ նախ քան
զառնուլն առ Ինքեանս զԱտոմ. Եւ իբ-
րեւ մարտ ընդդէմ մարդկան ամրոցին իշ-
խանն յարդարէր, փաղփաղակի ապա պահ-
նակքն դդացուցին Շահանշահի, և նա ա-
ճապարեալ գայ յամէօկ գործոյն: Եւ իբ-
րեւ եկն ՚ի տեղին, ՚ի բաց քեցեալ եղեւ
Գուրգէն ՚ի դրանէ ամրոցին. բայց պահ-
նակքն և ոչ առ նա ևս կամեցան տալ
զամրոցն՝ մինչև առ Ինքեանս առեալ իցեն
զԱտոմ. իսկ նա սպանէ՛ պաշարման շուրջ
զամրոցաւն եղեալ՝ ՚ի ժամ դիպող առնուլ
սպասէր: Բայց Գուրգենի բազում երդ-

(1) Գուցէ ընթեռնլի է՝ իւրոյ աշխարհի:

մամբ զպահնակսն հաւանեցուցեալ, վասն զՎասակ տալ ցնոսա, հրաւիրեցաւ ապա զօր առաքել զի առ նոսա զամրոցն տայցեն [1]։ Իսկ իշխանին առաքեալ իբրեւ արս երեք հարիւր քաջակորովս աղեղնաւորս եւ մահանաւորս եւ սուսերաւորս, որք իբրեւ հասին՝ զվայրս մօից գաղտնի դրանն բացեալ նոցա՝ առհասարակ յամրոցն զեղան։ Իսկ մարդիկ ամրոցին խմացեալ զմահառիթ նենգաւոր շունչ պատրանաց նոցա՝ զոր հանդերձեալ էին կատարել, եւ ՚ի բաց զներքնաբերդըն լքեալ թողեալ, ՚ի վերնաբերդ անդր համագունդ հորդան տային՝ սաստիկ մարտ ընդ զօրուն Գուրգենայ եդեալ, զի թերեւս արտաքս զնոսա կարասցեն կորզել։ Իսկ Աշոտոյ ոչ գիտելով զգործ իրին, այսպէս նմա կարծեցեալ թուէր, իբր թէ ընդ միմեանս մարդիկ ամրոցին ընդհարեալ մարտնչին. եւ ապա ինքն իսկ արտաքուստ ՚ի ներքս մարտ ընդ վերնաբերդն դնէր։ Իսկ նոցա բաղաղանչութեամբ ձայն վերուստ ՚ի վայր զգայուցանէին արքայի զառարկուածոյն իրին, իբր թէ վասն նորա առ ՚ի նոցանէն այն բան պատերազմի ընդ ապային Գուրգենայ իրագործի։ Իսկ նա ձայն առ-

(1) Ցեր. գր. [illegible]՝ զի առ նոսա զամրոցն տայցեն։

նոսա արձակէր, զի թէ վասն իմ, ասէ, նշա-տէք յայդպիսի միջամուխս, ասէ՝ ընդէ՞ր ոչ ինձ բացցի դուռնդ, զի ես մտից և դիւրաւ վճարեցից զայդ հանդէս, և բազմապարգև զձեզ արարից ՚ի բոլոր բարութիւնս ։ Իսկ ապա բացաւ նմա դուռն ամրոցին, և մտեալ խել և խել առհասարակ զզօրն Գուրգենայ ձերբակալ առնէին. և յետ փոքր ինչ աւուրց առհասարակ զամենեսեան զնոսա անպիտանս առնէ յաչաց և յռնչաց և յականջաց։ Իսկ այնուհետև ապա հիւսիսական ազգ-քըն այնոքիկ ընդ ձեռամբ նորա նուաճեալ հնազանդէին ՚ի ծառայութիւն, և ըստ աջողակ այցելութեանն Աստուծոյ երթալով երթայր և զօրանայր ։

## ԳԼՈՒԽ ԿԳ.

Յաղագս ապստամբութեան Սմբատայ իշխանին, և պարտելոյ ՚ի նմանէ Աշոտոյ շահանշահի ։

Յետ այսց եղելոց և գործեցելոց իրաց դարձեալ անտի Շահանշահն կոչեցեալ՝ գայ հասանէ Ուտի գաւառ. և անդ ապա ըղ-

նուաճեալն առ ինքեամբ զաղխատրոյգն բանիւք համոզեալ. և եթէ ոք սիրէր զայտումին խորհրդոց ապիրատութեան՝ նշմարէր զայն. և որպէս սանձիւք ոմամբք բարեզգեաց բանիւք ՚ի բաց ձնշեալ զխեցբեկոգոյն բարս նոցա՝ ածէր ընդ ինքեամբ ՚ի հաստատուն խորհուրդս։ Իւ ապա զօր ՚ի նոցանէ դումարեալ չուէր գնայր երկթեալ հասանէր ՚ի կողմն Կոտոյս գաւառի. և խոյլ և խոյլ հրափարտակ յաւաշինթաց անտի առաքէր առ միւս եւս կոչեցեալն Աշոտ որ թագաւորեալն էր՝ որդի հօր եղբօր նորուն. զի նախնակամն իւրեանց բնականօքն շարժմամբ բարդակամնին առ ՚ի յօգտակար փայելուն ձեպեսցին գալ հանդիպել միմեանց սիրոյ և խաղաղութեան արդասեօք. և տիրական կեանք նոցա հաստատկաց մի անխնամեսցին, և աշխարհ նոցա մի եղիցի խոպանացեալ ապառաժուռ փշաբեր և մացառախիտ, և լինել ՚ի դադարս եղուղակաց։ Սոյպէս և առ իս եւս յետակար գրոյ տուեալ՝ զի մի դանդաղիցիմ երբէք երթալ դիւրել պատրաստել ՚ի մէջ նոցա գ.բաջալերելուչ խաղաղութեան պայման. և մի տայցեմ թոյլ զթագուցեալ հաղբան եւ զխաոթարութիւն խռովութեն յինքեանս շաղաշարել։

Իսկ Թագաւորն Աշոտ եւս հաւանական միտս առեալ, և սիրով սրտի զբանն ընկալեալ, և փաղփաղակի չու յուղի անկեալ երկրպագանչիւր մեք չոգաք ՚ի հանդիպումն անուանեցելումն Շահանշահի: Եւ անդ ապա խմով Թելադրութեամբ և բանի խրատու՝ որ դիմեալ ՚ի լսելիս բողացն հանգչէր, զպաշտումն մառախլապատ միգապատ տխշութեան մոլոց չարին յանձանց ՚ի բաց մերկացեալ, ամենայն իրօք յարակցէին յինքեանս զկատարեալ խաղաղութեանն դաշինն՝ առհաւատչեայ երդմամբ զնոյն հաստատեալ: Եւ իսկ և իսկ երկրպագանչիւր նորա եկեալ հասեալ ՚ի դուռն մայրաքաղաքին Դվնայ, և անդ զմոլորութիւն պաշտօնէիցն հեԹանոսաց յինքեանս դրուեալ՝ ընդ ձեռամբ նուաճէին, և բազում կոչունս և խնձոյս ցնծութեան զմիմեամբք զեղեալ, և ընդ կըրունկն դարձեալ Շահանն կոչեցեալ շահ՝ խաղայ գնայ անդէն ՚ի սիրեցեալն իւր Ուտի գաւառ:

Եւ մինչդեռ զճանապարհայն երթայր, ձայն գուժի աղմկի ընդառաջ եղեւ նմա ՚ի նմին իսկ յայնմ մարզէ. զի Ամրամն այն անուանեալ, որ ըստ ուժեղականութեան անձինն՝ Ձլիկ ՚ի բազմաց յորջորջէր, և զնա իսկ

կացուցեալ էր Շահնշահն հրամանատար 'ի վերայ գործոյ աշխարհին, իսկ նա չարիմացութեամբ 'ի մութ(1) թաւալեալ, և այլապէս զինքն կերպարանեալ 'ի բաց որոշէր 'ի հնազանդութենէ Շահանն կոչեցեալ շահ, և լքեալ խոտեալ անարգեալ զինքն անբութիւնն իւր, հաճէր հաւանէր մտանել ընդ լծով ծառայութեան անընկին Գուրգենայ, որ իշխան իշխանաց էր Գամրաց աշխարհին. նա և զայլս ևս զբոլոր նախարարութիւն այնմ նահանգի դաւյթ ինքեան առեալ 'ի նոյն յարդարէր յապստամբութիւն: Նա այս առ ձեռն պատրաստ զամբոյն Տաւրիշոյ առեալ, 'ի նմա ամրապահեստ առնէր զբնտանիս տան իւրոյ, զի ինքն և իւրքն պարապորդ գտեալ ժամանեսցեն ամբառնալ զինքեանս յամբոխ գործոյն, և զթագուցեալ հաղբան դիւրաւ փախչել:

Իսկ Աշոտ երթեալ չուեալ գնացեալ հասեալ յաշխարհն Ուտէացւոց, և տեսեալ զի առհասարակ յետս կոյս առ 'ի նմանէն մղեալ անցեալ զանցեալ և թիկունս դարձուցեալ էին. և ոչ ոք այնուհետև գտանէր օգնական, բաց 'ի սակաւուց ոմանց աննշանից: Այսպէս ահա բազմածանօթացեալ

(1) Ըստ ձեռագրին օրէ. ոռնչէին 'ի մութ թաւ թաւալեալ:

նմա աղէտք իւրն ։ Նա դէմ եդեալ տա-
րադէմ գնայ չուէ հասանէ առ Թագաւորն
Եգերացւոց, փառահս որդին առեալ ան-
երկբայ յուսով առեալ զնախնիս սիրոյն դա-
շինս, զի Թերեւս պտուղս ախորժելիս նմա
առ 'ի նմանէն հնձեսցի ։ Իսկ Թագաւորն
Եգերացւոց զհանդիպումն Աշոտոյ բազմա-
բաշխ ձեռաց ձրիւք և սիրալիր սրտիւք ըն-
կալեալ, ամենայնիւ յամենայնի յարակցէր
նմա 'ի բոլոր սրտէ և յանձնէ և զօրութենէ,
Եւ ապա զմեծն առեալ նմա յօգնականու-
թիւն, և զօր բազում գումարեալ՝ գրեթէ
իբրեւ օդապարիկ իւն երիվարօք և երկա-
թակուռ զրահիւք՝ և զարհուրեցուցիչ սա-
ղաւարտօք, և լանջապանակ երկաթագամ
տախտակօք կրծից, և վահանօք ամրօք,
և 'ի զէնս և 'ի զարդս և 'ի տէգս նի-
զակաց վառեցելովք · տայ զայն ամե-
նայն 'ի ձեռս նորա, զի նոքօք հանդերձ
վրէժս 'ի թշնամեացն առցէ ։ Իսկ նա վաղ-
վաղակի ասպայակոյտ գնդիւն տարմաբար իմն
եկեալ հասեալ, և իբրեւ զմի այր զօրաւոր
ընդ ինքեան խրախուսեալ, կարծէր կարել
կարկատել մօտ ընդ հուպ զկրան իւրն . եւ
զդէն զինուորութեան իւրեանց առ ձեռն
'ի թշնամիսն թափել ։ Նա Սմբատն այն՝ Ցը-

լինին յորջորջեալ, և ընդ նմա այլ ևս աշխատամբ արինայքն, զոր բազում յօգնականութիւն իւրեանց յամենայն ուստեք գումարտակ արարեալ, որջացեալ ամրացեալ կային 'ի մէջ անտառախիտ մայրացն առ ափն Կուր գետոյ:

Իսկ Աշոտոյ իբրև ոչ աջողեցաւ մարտ ընդդէմ թշնամեացն յարդարել դնել, ապա և ինքն իսկ հորդան իւրոյ զօրուն տուեալ՝ անխորհրդաբար արկանէր յանձուկ և 'ի նեղուց վայրս ամրոցի միոյ. զի ոչ ումեք լինէր հնար ելանել 'ի տեղւոջէ անտի առնել(1) սակս շուրջանակի մացառախիտ մորայեալ թաւալոցացն, բայց միայն 'ի միոյն յայն 'ի նեղ և յանձուկ վայրացն՝ յոր մտին: Եւ այսպէս կամաւ իբրև 'ի բանտ ըմբռնեալ, ոչ բաւէին կարել արտաքուստ 'ի ներս առնուլ ռոճիկս և ուտել, կամ ջուր 'ի զովացումն, կամ խոտ երիվարաց: և 'ի խորհրդոցն անհաստատութենէ նեղեալ տառապեալ տագնապեալ տարակուսեալ լինէին առհասարակ զօրքն ամենայն: Եւ այսպէս զմիտս իւրեանց թուլացուցեալ՝ բանս գաղտնիս յունկն թշնամեացն արկանէին, զի զԱշոտ կալեալ կապեալ տայցեն նոցա, և իւ-

(1) Այսպէս ամենայն օրինակք. Թերևս գրելի է անել:

բաքանչիւր նոքա առանց ամենայն վնասուց ելեալ չուեալ գնացեն յիւրաքանչիւր տեղիս ։ Այսմ իրազեկ Աշոտի լեալ, և աճխ-բաղձաւ ըմբռնեալ, առ ինքն լուելեայն ըզ-մերձաւորսն եւ զխորհրդածուսն իւր կապակցէր դաշանց երդմամբ, և իբրեւ օգա-պարիկ իմն սրավար երիվարս պատրաստեալ, յեղակարծումն ժամու ՚ի մէջ գիշերին հեծեալ հասեալ ընդ մէջ սպայակոյտ զօրուն՝ անցեալ գէմ՝ եղեալ յամրոցն որ կոչի Կաքաւաքար, և անտի ուր յաջողեցի երթալ։ Զայն տեսեալ Թշնամեացն, և զկիրճն մի-ախցն տեղւոյն այնմ պաշարմամբ կալեալ, առհասարակ զզօրսն կարգաւ կողոպուտ առնէին, մինչ զի ոչ մի ոք ՚ի նոցանէն կարէր ձողոպրել. բայց միայն մարդասիրեալ ՚ի նոսա, որպէս և քրիստոնէից իսկ կարգք պահանջեն, զի մի ոք մեռցի ՚ի նոցանէն և մի իսկ։ Եւ ապա յայնմ օրէ հետէ ոչ յաջողեցան հետեւանք արշաւանաց Աշոտի՝ որպէս յերեկն և յեռանդն։ Թուի ինձ եթէ զողջախոհութիւնն զայն՝ զոր նախն էր առացեալ, յանմաքուր յողջախոհութիւն փոխարկեալ, և զքաղցրութիւն պաշտամանն Աստուծոյ յանձնէ ՚ի բաց փարակեալ[1], և ըստ

(1) Մի օրի. ՚ի բաց փարկեալ. Նոր ընթ.՝ ՚ի բաց փարատեալ։

օրինի փարխեցուցին զանբարտաւան կամս
կամեցուցեալ իւր, վասն այնորիկ Թերեւս
դատապարտեալ անկանէր, ոչ ժամանեալ 'ի
կատարս փրկութեան իւրոյ ։

## ԳԼՈՒԽ ԿԴ.

Յաղագս բարեկարգութեան արքային Պագկլոյ. և որ-
յանկելոյ Յովսափայ ոսկինանէին և չարութեանց նորա ։

Բայց Թագաւորն Պագլիկ ատանօր
երբեւ զինքն իւր միւս զգաստացեալ (1) իւ-
քեան մաքուր խորհրդով, զանգոյն 'ի գոյ
անէր, և զմերձակայսն իւր կեանս օգուտ
բազմաց դաստիարակէր. վասն զի 'նկրտէր
միշտ 'ի սրտի իւրում 'ի չարութենէ անխաղելի
մնալ, եւ առ 'նմանութիւն ստացողին մերձ
գալ. եւ ըստ առաքելական բանին՝ եթէ
հնար իցէ լինել, ընդ ամենայն մարդկան ըղ-
խաղաղութիւն ունել ։ Նա յաւէս ապա սովո-
րակի խնամութեամբն հանձէր հաւանեցու-
ցանէր զբաղձաձեալ դրացիս իւր, և զմեր-
ձաւորս լուսակամ համամիտ համախոհու-

(1) Այլ օր. զգաստացուցեալ ։

Թեամբ 'ի սէր իւր և 'ի հնազանդութիւն
կապակցելով, և բարգաւաճանս հարուստ
առ Թշնամիսն ցուցանէր սիրելի եղբարն
իւրով Գուրգենաւ, և այլ ևս համազգօք
և առ իւրմէն համապատուելովքն. զոմանց
ձեռնածիր ընծայիւք զմիտս հաճեալ հաւա-
նեալ ըստ համբաւոյ խաղաղութեան. իսկ
այլոց խժականաց և անզգաստից առնեցողա-
ցին զբարին յեղանակս պատերազմաւ եւ-
մտանս ամբոխից 'ի դիմի հարեալ' 'ի հար-
կէ առին կացուցանէր: Նաեւ զահ երկիւ-
ղի ամիրապետին ոչ զանխլանայր. այլ ըստ
սկսման հարկիցն սակի հաճէր հաւանեցու-
ցանէր պարտավճար լեալ բռնաւորին. և
առ մշտի վտանգին ունեալ զհնարաւորու-
թիւնն, զի զապրուստ անձին եւ զբազմաց
օգուտ գտանել մարթացէ: Նու ամն հա-
րուստ մի զայս արարեալ, սուրբ հիմունք
եկեղեցւոյ անվրդով մնացեալ կանգնէին. և
շինութիւն և խաղաղութիւն և նորոգութի
և յապահովութիւն աշխարհի բնաբար բե-
րէր. և լիութիւն և պտղաբերութիւն 'ի
շնորհացն Աստուծոյ պարգեւէր, և իբրեւ
յանքոյթ իմն նաւահանգիստ' այսպէս զե-
տեղեալ բնակէին 'ի կայս հանգստեան իւ-
րեանց. և ըստ իմաստնոյն բանի' գովեցաւ

խմաստութիւն յելս ճանապարհաց. և առ դրունս հզօրաց յաճախեաց զբարբառ իւր:

Իսկ արդ յայնմ վայրի ոչ սակաւ ինչ խուժան չխոթից 'ի վերայ հեղձոյ Հաղաբացւոյն բանակայն՝ որ ամիրապետն անուանէր. վասն զի հասարակորդ թշնամիք նորա յայս եկեալք յեգիպտական նահանգէն՝ 'ի կողմանց Նուբացւոց. եւ յայնմ մարդէ Թուրքաստանի մարտամբիկս հեծելազօրք և որիկայք և ապաւարք 'ի միասին հորդան ուռեալ քինախնդիր լինէին. վէճս ջանային առնուլ 'ի բանադատէ անտի. յաղագս նեղութեանն որ առ 'ի նմանէ նոցայն բերիւր: Եւ արդ շուրջ զԹագաւորանիստ քաղաքաւըն Բաբելոնի, և գրեթէ 'ի բոլոր աշխարհս աղերսութեան նորա զեղեալք՝ բազում բախմունս պատերազմաց առաւելապէս յարգարէին, և հեղմամբ արեանց կատորելոյն ուղղանէին զառասարբեւն զամենայն. և ըղբազումս դերի առեալ տանէին, եւ պէն զապառս դաւառաց եւ աւանաց անապատ առնէին: Իսկ հրամանատարք և խորհրդածուք դրանն արքունի զայնպիսի հասեալ կալեալ աղէտս տեսեալ՝ զպատճառս ի՛ստուն արկածից զմիմեամբ արկանել ձեռնէին. եւ արդ կայս մի ընդ միւոյ կուսին մուրցայի

ընդհարեալ, ապա և ուժգին խռովչայն եւս 'ի հանդիսի անցեալ գրգռէին զաղմուկ. և այնուհետեւ այր իւրաքանչիւր զսուր յաղ-ջեր կապեալ՝ բազում ձապաղիս արեանց 'ի միմեանց(1) հեղուին. և յիրաւի թմբրութիւն չարեաց անպատմութեան նոցա՝ զոլկայր դառնութեան ըղելոյ ծմբէր 'ի հնձանս Սո-դոմայ։

Սա ապա սմա խորհրդածու դրանն ար-քունի՝ որում անունն Սմու իւրեանց ըն-ղուն ձանաչէր, 'ի մէջ անցեալ խորհուրդ ընդ ամբարշտին դնէր հնարիմաց փառա-բանութեամբ. զի զառաջինն Պարսից. Հայոց և Վրաց և Աղուանից զՅուսուփ, զոր ինք-նին խակ էր կալեալ եւ ածեալ ամիրապե-տին. հայցէր արձակել 'ի պաշարմանէ բան-տին և 'ի կապարանէն, և 'ի նոյն առաջին գահն նահապետութեան հաստատել. վասն զի այր հանճարեղ է, ասէ նա, և այր պա-տերազմող և հզօրակալ և ահարկու բազայն զնա և տեսողայն. և ասէ թէ՝ և անցեալ է ընդ կորզան կրթանի խրատու ձեռաց առ 'ի չմեղանչել և 'ի չեղել դարձեալ յապստամ-բութիւն. և նախ դադարեն յարձակմունք եւ հէնք թշնամեաց 'ի կուսակալութեան

(1) Սէ օր. զմիմեանք։

պետութեան իւրոյ։ Նաեւ այսպէս համոզեալ զամիրապետն եւ զհրամանն ընկալեալ, այնուհետեւ հանեալ արձակէ եւ առաքէ զնա գումարտակաւ զօրու յառաջին գահ կուսակալութեան իւրոյ։ Նաեւ այսպէս ձեռնընդէն Սմբատ զՅուսուփն իւր առնէր. եւ համակամ համախոհ եւ կամարար իւր եւ օժանդակ՝ ՚ի թշնամիս իւր թափել զթոյնս վրիժուց չարութեանն։ Իսկ նա իբրեւ զուառցիկ մէջս չփոթեալ, եւ փորձիչ (1) իմն օձով սրափարեալ, եւ յորդաշու լեալ ընդ միջադետս Ասորւոց, եւ ընդ այլ եւս բազում օթեւանս անցեալ զանցեալ գայ հասանէ վաղվաղակի յաշխարհն Կորդուաց։

Բայց թագաւորն Գագիկ փախեալ նախփաղ ուրեմն խուսդեալ լեալ Նորայն գաւառեան, եւ առ հասարակ աշխարհի տէրութեանն իւրոյ հրաժան առեալ ՚ի փախուստ՝ ընդ ինքեան առեալ տանէր զգաղթ կոյացին. եւ ամրացուցեալ զնոսա ՚ի ծործորս լերանցն Կոգովտի եւ Զաղկոտան, ՚ի մօի դընէր զմխիթարութիւնն՝ որ առ ՚ի նմանէ բերիւր. զի թէպէտ եւ ստացեալք յեղափոխութեամբք զչարիսինք (2) առէ, սակայն մա-

(1) Մէ օրէ. յաւելու՝ փորձիչ և փարէչ։
(2) Այնքայն օրինակ՝ ունէին՝ չարիսինք։

վուրդ Քրիստոսի ոչ անկցի Թերեւս 'ի ձեռս գերչացն, և ոչ տացին 'ի կերակուր գազանաբարոյ խանչելական երկաթոյն. և ոչ փարատեսցի կանոնումն քրիստոնէական օրինաց՝ յանկանոն կրօնիցն (1) Հագարու: Իսկ այսպէս զգաղթ կարաւանին 'ի Թիկանց կուսէ կացուցեալ Թագաւորն. և եղեալ նորուն Գուրգէն ազատագունդ բանակաւն և հեծելազօր գնդիւն 'ի զէնս և 'ի զարդս և 'ի տէգս նիզակաց վառեալք. մինչ յառաջապահք լինէին՝ իբր անքթիլթ ինն ակամբք և մեծաւ զգուշութեամբ: Այնպէս և մեծ իշխանն Ընձեւացեաց Սատ՝ հանճարիմաստ խոհականութեամբ վաղվաղփոյթ փաղահօգակ խորհրդով (2) զաշխարհս տէրութեան իւրոյ ամբառնայր 'ի գլուխ ամուր լերանց աշխարհին, ամրապահեալ ընդ նոսա առնելով 'ի խորաձորս և 'ի խորխորակ (3) վիհս փապոյ, և 'ի ծործորս բլրոց, առաջապահս եւս և նա գաղթին լինելով իւրայովքն զօրօք բազմի վառելովք:

Բայց տոհմին Յուսուփի փոքր ինչ աւուրս զետեղ առեալ 'ի սահմանս Կորդուաց,

(1) Մի օրի. կանոնիցն:

(2) Ամենայն օրի. ունէին՝ խոհականութեամբ:

(3) Երկու օրի. և 'ի խորխոր վիհս:

և չուեալ անտի գայ հասանէ բանակի յաշ-
խարհն Անձեւացեաց . ոչ թերեւս գրգռեալ
անդ զաղմուկ չարութեան , այլ իբրեւ օձի
գլխոյնս 'ի բաց եղեալ՝ դեսպանս առ իշ-
խանն Ատոմ առաքէ տալ նմա զսակ հար-
կացն արքունի . և ըստ սովորակի հրահան-
գացն տուեալ տայ (1) զօժառութիւն նորա , որ-
պէս զի ընկալեալ երթայցէ 'ի բաց գնասցէ՝
անվնասանգ և անխնաս զաշխարհն թողլով :
Իսկ նա ենթադրելով իմաստութեամբ ըղ-
մերձակայ զպարտութեանն բռնութիւն
առ 'ի յօգուտ բազմաց դնել , ոչ եւս խը-
նայէր 'ի գանձս կարասիս , և փաղփաղուն
հատուցանէր նմա ըստ ձեռին բաւականի
զինուս հարկին կրկին յաւելուածով . այլ և
ընծայս ձեռաձիրս առատապէս պարգեւէր .
և մնացելոց հարկաց ըստ ծանունս խնդ-
րողին՝ պատանդս յազգատոհմէ տուեալ լի-
նէր : Զոր առեալ ընկալեալ չուէ գնայ ընդ-
կողմն լերինն Ականեաց , 'ի գաւառն Աղ-
բակոյ . և տեսանէ անդ զաշխարհն ամենայն
առհասարակ թափուր և ունայն 'ի բնակչաց
մնացեալ : Այլ և տեղեկացեալ և ստուգա-
պէս իմացուածիւ , թէ ոչ կարէ ժամանել
հասանել չարիմացութեան խորհրդոյն՝ զոր

(1) Երեւ օրէ . տուեալ տալ :

յօդեալ եդեալ 'ի մտի իւրում վասն Թա-գաւորին Գագկայ, եւ այնուհետեւ ապա իբրեւ Հնդիկ իմն զսեւութիւն թխութե՛ն յանձնէն 'ի բաց մերկացեալ, յընտանի լու-սպիտակութիւն սրտի զկերպն փոխաբերէր, եւ դեսպանս առ Թագաւորն առաքէր մօ-տալուտ եւ գիրագրով հաշտութեան ։ Սակայն լաւ ընչաքաղցն լինելոյ եւ օգտածա-րաւ՝ 'ի բանտի անդ զբաղում ամաց զհարկս արքունականս, այլ եւ զօժտութիւնս եւս ըն-ծայից անձին առանձին հայցէր տալ նմա. յուշ եւս նմա արարեալ միանգամայն եւ զերախտիս Թագաւորութեանն, եւ ձեռ-ներէց [1] զնա առնել՝ առ 'ի տիրելոյ նմա բո-լոր Հայաստանեայցս ։ Իսկ Թագաւորն ծա-նուցեալ զպատումն խորհրդոյն Յուսփայ, եթէ ոչ գոյ նմա կար հակամէտ լինել 'ի վատթարն, եւ կամ ուղղել ինչ զնպատակ չարիմաց խորհրդեանն, սակայն քաջափայե-լուչ իմաստիւ անխղելի զմիտս իւր 'ի չա-րութենէն պահնակեալ պատրաստէր. եւ վա-րանակամօք ոմամբք ընտրելի առնէր զեր-կրորդն, տալ կրկին կամ երեքկին զսակ հար-կին՝ բեկարս արքունի. եւ ոչ հարկանել ընդ միմեանս ուրախս կատարածիւ 'ի պատճա-

(1) Մի օր. զձեռներէց ։

ուրս քննախնդրութեան վրիժուց. զի պը-
տուղ պատերազմաց մահ է, ասէ, և մահու-
հրաւիրանս յատակս դժոխոց հայի։ Եւ այ-
նուհետեւ անխնայ զիւրն ստացուածս ա-
ռաջի արկանէր, եւ առհասարակ յամենե-
ցունց 'ի մերձաւորաց և յազատաց և յը-
ռամկաց և յանռամկաց ժողովեալ արծաթ
և ոսկի և կարասիս բազումս, և ձիս և ջորիս՝
տայր տանել նմա առատաձեռն ձրիւք (1)։
Զոր առեալ ընկալեալ մեծաւ շնորհակա-
լութեամբ, փաղփաղակի չուէ յուղի անկեալ
գնայ զկողմամբք Հերայ եւ Զարեւանդ-
գաւառի 'ի նահանգս Ասորկաց։ Եւ փասն
զի ինքն 'ի մեծ քաղաքն դէմ եդեալ էր եր-
թալ Աս՝ որ 'ի Պարս անդ է, առաքէ զմի
Նրսր անուն ոստիկան 'ի Հայս, որ Սարուքն
'ի բազմաց յորջորջէր. և ինքն կայ մնայ անդէն,
մինչեւ ոստիկանս և պետս և գործակալս
յարդարեալ կացուցանէ 'ի կողմանս Աղուա-
նից և Ատրպատականի։

Ի սմին իսկ յայսմ ամի ազգքն ապստամբ-
քըն այնոքիկ, զորմէ կանխեցաք յառաջագոյն
և ասացաք, որ վրիժուց հատուցման գը-
տեալ, և կալեալ զկիրճս եղեգնացաց ա-
նապատին Հաւարու, զոր 'ի նոցանէ՝ տուն

(1) Երեւ օրի. առատաձեռնաձրիւք. Մի օրի. առատաձրիւք։

Եփրաճաւու տառաքանի [1], առհասարակ ՚ի տուր սուսերի վնասս մաչէին. որ աւելի ասեն լեալ քան զերեսուն հազար սգիս զկոտորելոցն: Եւ զկանայս ամիրայեային և զայլս եւս պատուաւորս, որ սնափառակ տքնութեամբ ուղեւորէին զանվարձ պողոտայն, վնասս գերի առեալ տանէին. և բաղում կապուստ կարասեաց և զգանձս ոսկւոյ և արծաթոյ յաւարի առեալ գնացին յիւրաքանչիւր յաշխարհս իւրեանց:

Իսկ փոքր ինչ յառաջ քան զպատմել սորա զայսոսիկ, մի ՚ի պատուաւոր ծառայիցն Յուսփայ Բոբուքն անուն, այն որ ըզկնի արկանելոյն ՚ի բանտ զՅուսուփն զուափկանութիւն քաղաքավարութեան նորա կալեալ ձոխացուցանէր, նա տատակեալ մեռանէր Արտաւիլ քաղաքի, ուր և ժամանակ իսկ լինէր Յուսուփն առնուլ [2] զընդարձակ Թանգարանն գանձուց և կարասեաց նորա ՚ի վնսթի ընչաքաղցութեանն իւրոյ:

(1) Մէ օր. տուգաքանի:

(2) Ըստ՚նոյն օր. ունէին առնէր, կամ առնել:

# ԳԼՈՒԽ ԿԵ.

## Յաղագս վտանգելոց Սիսակեանց իշխանաց. և տագնա-պի Յովհաննու Կաթողիկոսի:

Բայց Ներսէհ որում Բոբուքն փաղաքշաբար յորջորջէին. և ոստիկան 'ի Հայս 'ի Յուսփայ առաքեցաւ, իբրեւ չուէ երթայ հասանէ 'ի Նախջաւան քաղաք, զետեղեալ 'ի նմա աւուրս ինչ սակս 'ի նմա կնոջ նորա գոլոյն՝ տեղի տայ հաշտութեանն հեթանոսական սովորութեանց: Ապա վաղվաղակի ընդառաջ լինի նմա Բաբկէն կրտսեր եղբայր Սմբատայ սիսական իշխանին, անհաստատ իմն երեւմունս երազոց 'ի սրտի իւրում ստեղծանելով, զի թերեւս 'ի գնել նորա ուխտ ընդմահու՝ առցէ ընկալցի յինքն զհայրենի ժառանգութիւնն, զոր միապետեալն իւր եղբայր նորուն Սահակ, և զկինս զայս իւր վարկանէր: Իսկ Ներսէհ առժամայն բանայր նմա զդրունս գթոյ խորամանկ խորհրդով, և հակիրճ և համառօտ բանիւ խոստանայր տալ նմա զկիսակ ժառանգութեան իւրոյ: Վասն զի դէտ ակն կալեալ սպասէր և եղբօր նորուն Իսահակայ լսա սմին սակի գալ առ նա, զի զերկաքանչիւրսն առ նա դաւաճա-

նեաղս կապեալ է . և այնուհետև կոչեցաւ եւս և նա 'ի Ներսայ տէրն Սիւնեաց Սահակ ուրախալիր սրտի գթովք : Իսկ նորա յօժարեալ էր 'ի կոչումն իւրն արքունականս . փութաղակի գայ հասանէ առ Ներսն բազում օժտութեան ընծայիւք . և իբրև Թմրութեամբ իւրն անզգայացեալ՝ դնէ դաշինս ընդ դժոխոց , ոչ սկսեալ 'ի սրտի իւրում զիմաստութիւն , և ոչ 'ի մտի եդեալ զկատարեալ զխոստութիւն , և ոչ նայեցեալ 'ի վախճան խորհրդոյն :

Իսկ Ներսն խարդաւանեալ զկարգամանն֊կութի , և զերկրպագանչերս զնոսա չըթամբք՝ այլ ոչ սրտիւ իւրեանց յարակցեալ , հրաւիրէ երթալ նոքօք 'ի մայրաքաղաքն Դվին . զի յարահոսեցեալք , ասէ , 'ի նմա իւրաքանչիւր ումեք , զիւրաքանչիւրոցն զօգուտն հոգալ մարթասցուք : Նայեիս ապա դաւոյ դրժողութեամբ չու յուղի անկեալ գնայլին : Իբրև մօտ եղեն 'ի քաղաքագիւղն Բարնիջոյ , ընդ առաջ լինէին նմա գլխաւոր գահերէցք և հոյակապ նահապետք և ազգատոհմք 'ի քաղաքին Դվնայ : Իսկ նա իբրև ետես զառաձեռն պատրաստ եկեալ հասեալ յաջողութիւն իւր , 'ի բաց մերկանայր այնուհետև յանձնէ զգաղտնի պատրուակ չարին , ձե֊

ուրն զնոքօք արկեալ 'ի կապանս երկաթի շըղթայից առհասարակ զնոսա պաշարեալ, իբրեւ արս աւելի քան զքառասուն դնէր 'ի բանտի։ Եւ այն օր երեկօթս յորում էր՝ աբարեալ դարէր դադարէր։ Եւ իբրեւ լոյսն զգիշերին մերկանայր, այնուհետեւ յուղոս և 'ի ջորիս զկապեալսն բարձեալ՝ մինչ 'ի քաղաքն Դվին, ընդ իւր տանելով զՍահակ Սիւնեաց տէրն եղբարբն իւրով Բաբկենիւ։ Իսկ 'ի մտանել նորա 'ի քաղաք անդր և զիպահոյ զկապեալ հեթանոսն դնել, ապա զՍահակ և զԲաբկէն 'ի միասին ըմբռնեալ՝ և փարեալ 'ի տուունս և 'ի շղթայս երկաթի կապանաց դնէ 'ի բանտի. և այսպէս մահաշունչ (1) հարուածոյ խաբէութիւնն զանձինս նոցա մատնէր 'ի բանտս և 'ի կապանս և 'ի պատիժս մահու։

Զայսպիսի աղէտս պղտորութեան և ըղմուր դառնութեան լուեալ իմ՝ զոր արքին հաւատացեալ տեարք մեր, այլ եւ հեթանոսք եւս՝ զրահեղեղ ամպրոպաց չարութեան Հագարացւոյն, ոչ սակաւ ինչ փղձկեալ եղէ՛ ներղորտութեամբ եւ՝ որ լաւ բընութեան մարդկութեանս են համհաւորութիւնք։ Յետ որոյ և գոյժ եւս աղմկի 'ի հա-

(1) Եղէ օրէ. համաշունչ։

ւատարմաց ումանց հնչէր յականջս իմ. փա-
խչել խոյս տալ և 'ի բաց գնալ 'ի պատնէշ պաշարմանէն՝ որ սպառնացեալն էր մեզ: Իսկ որ ընդ իմն էին կղերք եկեղեցւոյ. ա-ռեալ զահ երկիւղի դեգերէին 'ի դուրս տան իմոյ, աղաչէին ինձ գնալ երթալ 'ի բաց, և տեղի տալ բարկութեան, յուշ արարեալ զտէրունական հրամանն՝ հալածել. քաղաքէ 'ի քաղաք, և մի կալ հակառակ չարին: Այլ ես աստանօր ոչ եթէ յառժամանակեայ 'ի մահուանէ ինչ պակուցեալ խուսափեցի, այլ 'ի մահ եդեալ զանձնարին մոլեգնութի հեթանոսական մոլորութեանն, զի մի թե-րեւս թագուցեալ հարքն դիւախոխտ պա-րանաց նոցա անկցի զմանկամբք եկեղեցւոյ. կամ թէ խառնուածն ինչ շփոթից ընդ անար-գութիւնս հեթանոսաց մեզ բերցի, որ ար-տաքոյ է բոլոր կրթական քաջողջութեան: Եւ այսպէս իբր յիմարեալք զիս 'ի միոյ՝ զարժանն հայցեմք 'ի շնորհացն Աստուծոյ ածել [1] մեզ 'ի ցուցակութիւն:

Եւ իբրեւ խաւար գիշերին 'ի բաց ե-ղեալ [2], և լոյս առաւօտին ծագեցաւ, յան-

(1) Երկու օրի. 'ի մեզ 'ի ցուցակութիւն: Մի օրի. 'ի մեզ դյուցակութիւն: Այլ օրինակ՝ զմեզ 'ի յաւակցութիւն:

(2) Մի օրի. 'ի բաց եդեալ:

կարծակի յական Թօխթամիշ դարձեալ խա-
ւար գիշերային զմեօք արկաւ․ ընդ որս և
առհասարակ սքանչացեալ մեր՝ տեսաք զի
խաւարեալ էր արեգակն առաւօտին պա-
հուն․ եւ ապա ըստ ընտրողութեան իբրև
խորհրդածեալ և ծանուցեալ՝ եթէ ոչ է ժա-
մանակ խաւարելոյ արեգականն, իմացաք հա-
ւատալ Նշան բացերեւակի մեզ (1) 'ի Տեառ-
նէ Աստուծոյ ցուցեալ․ և այնուհետեւ շա-
տապ տագնապի եղբայրութեանն հասարա-
կաց ստիպէր զիւրաքանչիւրսն 'ի բաց գնալ
'ի պատահելեաց փորձութենէ անտի։ Այս-
պիսի տարակուսօ ապա ոչ թերեւս հեղգա-
ցաք լուծանել, և ոչ կալել 'ի դարշապարս
մերոյ նոցա, այլ աճապարեցի գնալ 'ի բաց
անտի՝ բացորոշութեամբ նախ քան զհասա-
նել փոխնգին, առաջին տարացոյց ինձ հիմն
եղեալ՝ Եղիա մարգարէ, և Պետրոս գլուխն
առաքելոց։ Այսպէս ապա ելեալ 'ի վանաց
անտի Արեաց 'ի կացուրդից սրբոյն Խահա-
կայ, որ 'ի ծործորս լերինն Գեղայ՝ 'ի ձորակի
միոջ, դէպ ուղիղ գնացաք և ելաք 'ի վե-
րին վանս՝ ուր կայանքն անսանոցն էին․ և
անտի չուեալ գնացաք 'ի միանձնացելոցն
կուսակրօնից մենաստանն (2) որ 'ի Սեւան

(1) Երեւ օրի․ բայց երևակ 'ի մեզ։ (2) Մի օրի․ մենարանս։

կղզւոջ․ ունայնացեալ 'ի բոլոր ստացուածոց անոց և անասնոց, և միայն զփրկութիւն անձանց հոգացեալ. և 'ի նմա միանգամայն խոկ զհասարակաց եղբայրութեանն զեղուս ընդ մեզ եւս շարժեալ 'ի յօրհնութիւնն Աստուծոյ՝ աներկբայ յուսով կատարեցաք անդ աւուրս չորս ։ Այս ամենեցուն մեր միտք իբր 'ի մանկոյ ինչ վերելակել, և իւ-րաքանչիւրոք յիւր խորհուրդս սրտին նաւա-վարեալ վտանգաւորն՝ իբրեւ յշտեմարանէ իմեքէ զծածկեալսն յառաջ բերէաք բանիւ առ 'ի յայտնել զ'ի խորոջ կայսն . և էր այս-պիսի՝ զի դարձեալ ընդ կրունկն երթիցուք 'ի կողմանաւոր (1) վայրս ուրեք՝ մերձ 'ի հայ-րապետանոց եկեղեցին սուրբ ։ Իւ զոր ա-կամից կամօքն թողաք լքաք 'ի բաց զինչսն և զստացուածսն և զպաշար անասնոց, զայն կամաւորաբար տայցուք յընծայումն Հաղա-բացւոյն Նըարայ, թերեւս 'ի կամացն Աս-տուծոյ հաճեալ հաւանեսցին միտք նորա, և մի եւս պատառապրուռ անզաւակեսցի մայր Սիոն 'ի մանկանց առագաստի . և մեք 'ի սըր-բարան մեր դադարեալ՝ օրհնեսցուք զանուն Աստուծոյ մերոյ . եւ այսպէս ընտանեգոյն տեսողացն և լսողացն այս (2) խորհուրդ հա-

(1) Երեւ. օրէ. կողմնաւոր ։ (2) Երեւ. օրէ. զայս ։

մարեալ եղեւ ։ Այլ դարձեալ չու յուղի ան-կեալ չոգաք մինչեւ 'ի ձեռակերտ ամրոցին իմ Ախուրական, զոր ստացեալ էր իմ գանձիւ գնոյ, ուր և շինեալ և յարդարեալ իսկ և եկեղեցի հաստահեղյս կոփածոյ քարամբք պերճապաճոյճ տեսութեամբ (1) և նկարա-կերտ յօրինուածով, և վանս կուսակրօն մի-անձնացելոց զնա հաստատեալ ։

Իսկ 'ի հասանելն մերում անդ՝ իսկոյն իսկ հրովարտակ առ Ալոյն առաքեցի․ յուշ առ-նելով նմա զզարհուրեցուցանող խրադո-ծութիւն որ առ 'ի յիւրմէն ինձ յայլ սմա-նըս (2) ներգործեցաւ, բանտ և կապանք և չարչարանք անհնարինս մահու․ և եթէ՝ վասն այսպիսւոյ իրիք բռնմանց պահպանեալ 'ի բաց գնացի․ եւ արդ՝ եթէ արդէն իսկ տայցես ինձ յետակար երդման, աներկբայ մտօք զե-տեղեալ կացից մնացից 'ի դրունս եկեղեցւոյ տան իմոյ՝ օրհնել զԱստուած 'ի սրբութեան նորա․ և ըստ ձեռին բաւականի՝ միշտ ան-դանդաղեցից զընծայս բարօրութեան առա-քել արխտուր քեզ ։ Ընդ ընթեռնուլ նորա զգրեալսն առ 'ի յինէն՝ վաղվաղակի յետակար երդման գրէ ըստ իւրեանց Ղուրանին օրի-

(1) Երկ․ օր․ Նեղութեամբ։
(2) Գուցէ յայլ նուագս ։

նացն, որ ինչ միանգամ վստահելի են բանք գենին նոյա. և այնպէս ազատ զմիտ իմ առնէ 'ի բոլոր երկիւղէ կարծեաց, և 'ի մարտից արտաքնոց և յարհաւրաց ներքնոց՝ որ 'ի մարմնի են վտանգք, և որք արտաքոյ մարմնոյ: Այլ այնուհետեւ ապա կարծեցեալ եղեւ ինձ այնուիկ յետկարիւ եւ յօգտակարն ձեւել, և գարել գագարել 'ի գրուն մերոց որքարանոց 'ի կամս Աստուծոյ:

## ԳԼՈՒԽ ԿԶ.

Յաղագս առման Ինտրակեան ամրոցին, և հարուածոյն որ եղէն 'ի նմա:

Իսկ ոմն հնացեալ աւուրբք չարութե՟ և դառնաւոր անկանոն կրօնից Մահմետի, կատարեալ անիրաւութեամբ միշտ ջանայր եղծանել զքրիստոնէութիւն. եւ զօրացուցանել զհեթանոսական աղանդն, եւ այսպէս զայլանդակ մոլացն զփղձկումն եւ զդառն մաղձութիւն սրտին յունկն Նլարայն արկանէր: Ոչ պարտ է, ասէ, քեզ և ոչ արժան ուխտ խաղաղութե՟ ընդ քրիստոնէից վառ-

թարելոց դնել, մանաւանդ ընդ օրէնսդրին նոցա խոտորիչ աղանդոյն. որ մինչ վարդապետակ զհաւատոյն մերոյ դաւանս հայհոյել, եւ շաւնս եւ գայլս Արաբացիս զաշակերտեալն... անուանէ։ Արդ՝ ընդէ՞ր այդպէս ուխտիւ խաղաղութեան քո ընդ նմա առաւել եւս տոչորես, և յորդադոյնս եւս տարածես զաղանդ նոցա. իսկ եթէ ընծայաբեր գիտութեան (1) նորա ցանկացի անձն քո, տասնապատիկ առժեցի քեզ այն, միայն թէ լուիցես ինձ։ Այսուհետեւ առաքեա զօր բազում, զի նախ զվանս ամրոցին Այրին առցես քեզ. վասն զի 'ի նմա կան գանձք և կարասիք բազումք. և զորդք գեղեցկայարմարք եկեղեցեաց չարաղանդ կաթողիկոսին. եւ ապա զնոյն ինքն զմարտամբոխ ժողովս լեգէոն զօրուն խաղ և խաղ ընթացեալ փաթթացուցես 'ի խնդիր առաջնորդի մոլորութեանն քրիստոնէից, զի կալեալ կապեալ ածցեն քեզ, և ընդ նմին զինչս եւ զստացուածս յաւարի առեալ բերցեն քեզ. և թէ երբէք խառնաղանդ ամբոխս ընդդիմացի, բազմահեղ արեան հոտոյուածս (2) 'ի

(1) Երեք օրի. ընծայս բերու գիտութեան։ Մի օրի. ընծայս բերու. ընծայաբեր գիտութեան. իսկ Զգիտութեան Բեբեկա հնի է օգուտեան։

(2) Մի օրի. հոտոյածս.

վերայ նոցա հաստատեալն անխնայաբար ։ Ընդ-
այն զայս և որք ընդ նմայն համամտութեանն
էին խորհրդոյ՝ սպանին . և այսպէս իբր զգա-
զան չարի խածատել զնա զարթուցեալ . և
յանդգնել բանս հեթանոսութեան զնա
յորդորեալ , փաղփաղակի առաքէ զօր բա-
զում՝ հեծելովք և լեգէոն վառելովք ՚ի
վանս կուսակրօնիցն՝ որ յայրի անդ յարեւե-
լից հիւսիսոյ գեղաքաղաքին Պառնոյ ։ Որ
իբրև չոգան , յեղակարծումն ժամու երթեալ
մտեալ յայր անդր , ըմբռնեցին զմիանձունս
որ ՚ի նմա , և բազում գանից և չարչարանաց
զնոսա մատնեալ՝ պատայուածս թագուցեալս
՚ի նոցանէ պահանջէին . մինչեւ ոմանք ՚ի
չարչարելոյ անտի թէպէտ և ոչ առ ժամայն՝
սակայն յետոյ յաղնապատիկ տուժի անդ (1)
աւանդեցին զոգիս իւրեանց ՚ի Քրիստոս ,
և հանին երանելի յուսայն՝ որ կայ պահի սե-
բողոյն Աստուծոյ ։ Եւ այնուհետեւ զբնա-
բարեզարդութիւն եկեղեցւոյ Քրիստոսի ,
և զաւետարանական և զմարգարէական և
զառաքելական Կտակարանս սուրբս . այլ և
զամենայն սպասուածս և զպաշտօն անօթոց
բազումս , միանգամայն իսկ զյաղնապատիկ
պարս մեղուաց բազմաց յաւարի առեալ ,

(1) Եղիշէ օրէ. անունք ։

և զգեղեցիկ շինուածս չքնաղագեղս որ 'ի կուսաստանի անդ հրակիզեալ հրդեհեալ՝ չոգան գնացին 'ի բաց:

Իբրև յանդիման եղեն Յուսփայն. և իւր գործեցեալ պատմեցաւ նմա առ 'ի նոցանէ, վասն այնորիկ իսկ յիմարութիւն ցնորութե բարոյից յայլանդակ միտս զնա փոխաբերէր. ուստի փաղփաղուկի իսկ զմրցարան մահու և կենաց նպատակ անձին եդեալ՝ և մարտաւ բուռն բաղմութեան զօրաց հրաման տուեալ, զի գոնեա գաղտնիս իւն ծածկաբար 'ի վե-րայ ամրոցին Բիւրականու հասեալ՝ 'ի կա-պանս կալեալ տարցեն զնա. և որ ընդ նմա էին կղերիկոսք, և զայլ բնակիչս ամրոցին սրա-կոխ արարեալ սպանցեն և գերեցեն և ա-ւար հարցեն: Իսկ իմ զմտաւախալապատ մե-ղապարտ մոլորութիւն նոցա նախ փաղփաղ իսկ ծանուցեալ. և բուռ առաջնոյ նուագին խորհրդածեալ՝ խոյս 'ի չարէն ետու առ 'ի լսումն ակրունական հրամանին: Եւ եր-թեալ չուեալ ձողոպրեալ գնացաք յարքու-նական ապարանս Բագարանու առ Թագա-ւորեալն Աշոտ, որպէս զի մանկունք մօր Սի-ոնի մի հեղեղեալ ողողեսցին ապառաժու 'ի հարաւահողմ խաբէութենէ հեթանո-սաց: Բայց զկրան մերոյ սուրբ եպիսկոպան

Սահակ, այլ երկու քահանայիւք ամանք և արկուածօք և կուսակրօն միանձնացելովք անդրէն 'ի նմին տեղւոջ անեղեկացեալ(1) մինացեալ՝ յաղագս ցուակիր ներգեւման մարմնոյ եպիսկոպոսին և այլոց եւս ամանց, կամ՝ թէ շուլթափութիւն ժամուն ոչ ետ թոյլ ժամանել գլխի մեր, կամ՝ թէ ասեն խակ զայն՝ եթէ կոչումն ընծայութեանն Աստուծոյ և կանխագիտութիւն նորին յայն զնոսա մերձ բերէր 'ի մարտս հանդիսի յաղթութեան. և պսակացն երանութեան՝ որ իմ՝ բանս է, զոր և փոքր ինչ յետոյ բացոյուշաբար ասասցուք:

Բայց զօրն իսմայէլեան իբրեւ իմացեալ ծանեան՝ թէ գաղտնի նետից նոցա ձգումն ոչ եղեւ զանխուլ առաջի իմ, և թագուցեալ հաղէք նոցա ոչ ծածկեցան, և խոյս եւս տան իմ յայտնի եղեւ նոցա, այնուհետեւ զետղ առեալ դադարէին, թերեւս և զօր բազում գումարտակ արարեալ պատրաստեցին զինքեանս կալ կազմեցեն, և այնպէս փառեալք զթոյնս խժանման չարութեան 'ի հաւատացեալս Քրիստոսի թափեցեն:

(1) Այսպէս առհասարակ ամենայն օրինակք. Ներքոյ կամ անեղեկացեալ, և կամ զանեղի կացեալ:

Իսկ ընտանիք Նիւրականու ծանուցեալք զանբժշկելի միոյ հեթանոսացն, և զզրահե-ցեղ ուղխիցն զաստուածութիւնն որ գալոցն էր, եթէ ոչ գոյ ճար ճողոպրել փախստեամբ ասխս բազում կանանց և մատաղ մանկտւոյ, այլ ծերոց ևս անաւագից՝ որոց անկարելի էր և անյարմար, և տեղի փախստեան ևս կորուսեալ. այս ըստ գրեցելումն՝ խոյս տուեալ գնացին յշտեմարանս իւրաքանչիւր նորա, և փակեցին զդրունս առաջի իւրեանց, և խուսափեալք փախուցեալք թագուցան ընդ պատուարաւ պարսպի իւրեանց 'ի բքոյ ամբարշտութեանն, ապաստան եղեալք յոգ-նականութեան ամենազօրին Աստուծոյ:

Այն ումանք և յերեւելոցն յամրոց անդր զօ-րականք՝ ոյք իշխանաց աշխարհակալս էին զինուորեալք. քանզի իբրև լուան զչարա-շշուկ զչարախնաց զխորհուրդս խանձելակա-նացն, դիմեալ ուստէք ուստէք մտանէին յամրոց անդր թիկունս թիկունս տալ հա-ւատացելոցն, մինչ 'ի կէտ միջման հանդիպի մահու: Որպէս առհասարակ նորա ապա-ցեալ այր ցանկէր իւր. Մինչ ցայս վայր, աստ, զօրավարաց մերոց հանդիպեցաք հան-դիսանալ 'ի կեանս կենցաղօգուտս, իսկ այ-ժմ իբրև՝ զքաջուց զինուորս վշտակիցք

մեցուք Քրիստոսի և հաւատացեալ ժողովր-
դեան նորա ։ Նոյն այսպէս զմահ ընդ կեանս
խառնեալ՝ զբարուք պատերազմին զընթացս
ըղձանային լինել ։

Իսկ աստ զօրքն խմբէլեան բաւ օրինի
ըքոյ ինն շփոթեալ փոթորկեալ եկին հա-
սին 'ի դուռն ամրոցին անհնարին անօրէն
դղրդմամբ, և հեթանոսական անարգել մո-
լորութեամբ. և աստ ասպարախակ լեալ
շուրջանակի ըդէմ հեռեւակ զօրուն, և
թիկնապահ նոցա լեալ հեծելազօր վառելոյ
դնդին 'ի մէջ անցելոյ, այնուհետեւ շահա-
տակէին դաւանաբար 'ի վերայ յարձակեալք ։
Զայնպիսի մահառիթ ոճիրս իբրեւ տեսա-
նէին մարդիկ ամրոցին 'ի բռնութենէ ինն
հարկեալք լինէին, այր առ այր և մարդ առ
մարդ կոտորել ելանել 'ի գլուխ պարսպա-
պացն. և այն օր սակաւ ինչ ընդ կոյս հա-
րեալք ընդ միմեանս, մինչեւ գիշերն մեր-
ձեցաւ և տիւն մերժեցաւ ։ Իսկ 'ի միւսում
աւաւօտուն մինչդեռ էր աղջամուղջ. առ-
հասարակ մարդիկ ամրոցին 'ի դուռն քաւա-
րանին սրբոյ մերձ եկեալ հայցէին 'ի սրբոյ ե-
պիսկոպոսէն առ նոսա զմեղաքաւիչ մար-
մինն և զարիւն Տեառն ։ Իսկ նա հրեշտակա-
կան շրթանցն շարժմամբ և նուաղելի բարբա-

ռով առաւել քան զմեր բանս վարդապե-
տէր նոցա՝ որոց աշակերտեալն էր զճշմար-
տութիւնն, և միանգամայն իսկ զվիճակա-
ւոր կղերիկոսան հանդերձ զինուորաւն գն-
դիւ, և այլ ևս աշխարհակոյտ մարդկան
յարդարէր 'ի խորհրդածութեան պաշտօնն՝
ամբառնալ զմիտս իւր առանց ամենայն վնա-
սուց․ և խնդրել զհաստատութիւն հաւա-
տոյն՝ որ 'ի Քրիստոս, զի մի՛ դրդուեսցին
սիրտք ձեր 'ի միամտութենէն որ 'ի Քրիս-
տոս՝ յաղագս պատերազմիդ որ նեղէ զմեզ,
և մի՛ կացուցանիցէք զոտս ձեր յանցաւորս
կառուցմամբ իբրև յաւիտենականի ։ Եւ
ապա Տէր ինքնին իսկ յայց ելեալ ձեզ իւ-
րով մարմնովն և արեամբ զոր ընդունելոց էք՝
զմեղաց զկարծին դատապարտեսցէ վասն
մարմնոյ իւրոյ՝ որ է եկեղեցի, որ էք դուք ։
Եւ տացէ ձեզ զգաստութիւն յաղթել աշ-
խարհակալն խաւարի այսու չարութեան՝
որ շուրջ զմեօք կան մածեալ, զի մի՛ յակա-
նեսցեն (1) զզգեստն լուսոյ, որ Քրիստո-
սիւ զգեստաւորեցայք 'ի մկրտութենէ նա-
խահօրն․ և մի՛ յափշտակեսցեն յանձանց մե-
րոց զքրիստոսադրոշմ զկնիք աւազանին սրբ-

(1) Երկու օրի․ ականեսցեն ։ Մի օրի․ արկանեսցեն զզգեստն լուսոյ․ որով ։

քոյ։ Եւ այսպէս զմիտս նոցա իբրեւ հրով վառեալ, զամենեցուն զերգս շարժէր յօրհնութիւնս ամենեցունցն Աստուծոյ, ընդակազմ գնաս առնելով 'ի մշտնջենաւոր աղօթսն։ Եւ ապա մատուցեալ զպարտիսըն զպատարագն զառ 'ի Քրիստոս, եւ զխորհուրդն փրկական մարդկան բաշխէր առհասարակ ծերոց եւ տղայոց, արանց եւ կանանց եւ ամենայն չափու հասակի խորհրդական աւանդութեամբ, ըստ սակի յետին թոշակի։

Իսկ բամբիւն (1) աղաղակի եւ մարդամբոխի խմբեալ զօրուն եւս քան զեւս սաստկանայր, եւ հնչմունք եւ կայթմունք եւ կաքաւք զինուց նոցա եւ վահանաց հնչեցուցանէին զերեսս երկրին ըստ գիւտոյ բնակչացն Նախճաւան գաւառի։ Ապա եւ մարդիկ ամբոխին բազմածեալ շրջապատեալ 'ի գլուխս պարսպացն, եւ ակնակառոյց առ Աստուած լեալ՝ որ օգնեսցէ նոցա 'ի պատերազմի նեղչացն, եւ մի դրդուեսցին 'ի դիւախօսս մոլորութեանն հեթանոսացն։ Եւ այնպէս ապա մարտ 'ի վերուստ 'ի վայր եդեալ, բազում արեան ճապաղիս 'ի թշնամեացն հեղուին, եւ զբազումս թաւալգլոր խաղացուցանէին։

(1) Այլ օր. բըբիւն։

Իսկ եպիսկոպոսն սուրբ հանդերձ այլ եւս կղերիկոսօք համապատօր կանխէր յաղօթս եւ խնդրուածս, զի արիւնըմպուշտ եւ անդառագեղ գազանայն մի եղիցի վարատել օձաել (1) զգաստութիւն հօտի Տեառն, որ եւ ընտրեաց իսկ իւր Տէր 'ի ժառանգութիւն. եւ ժողովուրդ սեփհական՝ մարմնին իւր եւ անդամ անուանելով. այլեւ խրախոյս եւս քաջալերութեան ամենայն իրօք մարդկան մատուցանէր, մի կայլել 'ի տուունս մեղաց որ ըստ մարմնոյ, եւ մի մնել 'ի վախից (2) յառժամանակեայ մահուանէս. այլ զհոգւոյն մաքրել զգաստութիւն. եւ հայել յերս գնացից իւրեանց, եւ չարչարակից Քրիստոսի լինել, եւ նմանող հաւատոյն որ առ Աստուած: Նաեւ տարկուսան եւս Թէոդորոս, որ վերակացու չինուածոյ եկեղեցւոյն էր, եւ մարզիչ մարդկանն, ոչ սակաւ ինչ թելադրութիւն նոյա ընծայէր սերտին. Հիւանդացեալքն, ասէ, 'ի մարդկանէ թէ եւ 'ի մահ, ասէ, աշխատիցին, սակայն առողջութեանն յուսով թեթեւանան: Արդ՝ մի ածապարեցէ այս վտանգ հիւանդութեան որ զմեօքս է՝ տարապարտ մեռուցա-

(1) Երէւ. օր. մի հեղցի վարատեալ օձաել կամ ձգտել.
(2) Մի. օր. ի վաղից:

նել զծեղ մարմնով, այլ հոգւով զօրանալ, և ծգնել ՚ի մարտն՝ որ ըստ օրինին Քրիստոսի է, զի ընկալջիք զբրաբիոնն յուսով կենացըն յաւիտենից ։ Արդ՝ այսպիսի խրատու բարւոյ առհասարակ նոքա զանձինս տուեալ, այնուհետև ոչ միով իւիք հեշտութիւն անձանց շնորհէին՝ որք ըստ մարմնոյն են ծահաւորութիւնք ․ այլ զբարւոք պատերազմն պատերազմէին ՚ի վերայ հօտին Քրիստոսի և զաւակաց իւրոց՝ հոգեհրաշ ծգնութբ վառեալ զինու զօրութեամբ հոգւոյն Տեառըն իւրեանց ։

Իսկ Թշնամիքն որ ՚ի խաւարի և ՚ի մութ մրրկաց հաստուցման զմիտս Թաթաւեալ էին, Թէպէտ և աւուրս եւթն ստէպ ստէպ զմարտ հինէին ՚ի վերայ հեզուլին, և ոչ կարէին առնանել ամրոցին ։ Ապա ոմն ՚ի լեզէն զօրացն ամրոցին ՚ի բաց եղեալ զկերպ կենածին յուսոյն, և զողորմութիւն և զհաւատս ուրացեալ, վաղվաղակի ասաց զամրոյն ՚ի ձեռս ժպիրհ և անօրէն Հագարացւոցն ։ Իսկ նոցա յաւէտ եւս խրախ լեալ, և խընծոյս մեծ իւրեանց մատուցեալ, վաղվաղակի գրոհ տային, և սանդղօք ոտամբք ՚ի վեր ելակեալ հեզուլին յամրոյն ։ Ապա զԹագուցեալ հաղբան յայտ ածեալ՝ գազանա-

բար ընդդէմ բախէին մարդկան զխորհուրդ-
ոյն չարութեան, և անընտանի չարախօսու-
վար (1) մտօք սկսանէին զամենեսեան անո-
ղորմ սրոյն տալ ճարակ․ և հեղումն տարա-
պարտ արեան նոցա բղխեալ յորդեալ ռու-
գանէր զառատորէն ամենայն, և դիակունք
անկելոց շեղջակուտեալք 'ի վերայ միմեանց
անկեալ դնէին ։

Իսկ եպիսկոպոսն սուրբ հանդերձ այլ
ևս ժառանգաւորօք եկեղեցւոյն ամենա-
գիշեր արթնութեամբ և բազմատարած ար-
տասուօք և պաղատանօք աղօթս առ Աս-
տուած մատուցանէին, ոչ 'ի բաց առնել
'ի նոցանէ զայցելութիւն իւր ։ Եւ այսպէս
վայելչացեալ է, գերազանցեալ է յամենայնի
'ի սրբոցն (2) նմանութիւն ։ Իսկ անօրէն դահ-
ճացն եկեալ գտեալ զնոսա յաղօթս 'ի քա-
ւարանումն սրբում․ ահա սպանուցանողս ըն-
նոքօք ջանային արկանել սուսերացն շողա-
մամբ, և փայլանացն թնդմամբ, եւ ատա-
մանց կրճտելով․ և երեսաց տարագոյն շա-
ռաչունութբ․ այլ նոքա ոչ ինչ զարհուրե-
ցան, և ոչ երկեան սիրտք իւրեանց յար-
հաւրանաց անտի մոլեգնելոցն, զի այցելու-
թիւն Տեառն էր շուրջ զնոքօք, եւ պահէր

(1) Երևի օր․ չարախօսաւոր ։ (2) Երևի օր․ զսրբոցն ։

զնոսա ։ Այս արտաքոյ զնոսա միանգամայն 'ի քաւարանէն հանեալ՝ մերկացուցին 'ի նոցանէ զզգեստսն՝ 'ի մահ զնոսա փարակեալ. և 'ի մատաղատալարս սուսերաց խաւարի զաշտակից խուրեանց խցեալ՝ գիժեցին 'ի վերայ նոցա ․ և 'նախ զեպիսկոպոսն սուրբ փողկաւորօքն կարկժակոտր առնէին, իբրև տատասկօք չեչաքի չերանեալ (1) գծառ․ եւ զկնի այսր հատեալ եւս սուսերաւ զգլուխ նորա ։ Իսկ զքահանայս սուրբս և զկուսակրօնս միանձունս և զաղմնաերգուսն իբրև զոչխար 'ի սպանդ վարեալ 'ի զենումն՝ նուիրական անուշահոտ պատարագաց Քրիստոսի փողոտէին, հատեալ եւս զկուքանչերայն նոցա զգլուխն ։ Եւ այսպէս առհասարակ սոքա իբրեւ զոպառադէնս զրահից զհաւատոս ճշմարտութեան զգեցեալ զխաչոյն զլուսոյ սպանումն զգեստաւորեալ արժանի գտան, և անթառամ պսակացն պայծառանան ։

Բայց սարկաւագն Թէոդորոս ոչ էր ընդ նոսա 'ի ժամ կատարման նոցա, զի նախ քան զայն 'ի Թշնամեացն նեղաձգութեանցն վերաւորեալ անկեալ դնէր ։ Իսկ չար գահիճքն խնդրէին և զնորայն եւս հատանել զգլուխն, այլ նա ոչինչ կրէր զխիշտսն, և ոչ եւս նե-

(1) Մէ օր․ չերա կլանեալ։ Այլ օր․ փ չեր կոտեալ։

զուարթութեամբ փղձկէր ընդ մանկական տիոյ, քան թէ ախորժ յօժարութեամբ ընդ պարանոցն կարկառէր ։ Նոյնպէս հատեալ զգլուխ Նորա, զմահ եդ կնիք հաւատարիմ ճշմարտութեան հաւատոյ իւրոյ, և վերադրեցաւ յորդիս Աստուծոյ։

Իսկ զայլ եւս մարդիկ ամբոխին խմբարտարեալ 'ի տեղի չարչարանաց, և ածեալ իբրև զչխարս 'ի սպանդ խմբելեան երկաթոյն՝ որ ոչ ևս առնու յագուրդ, տային կերակուր. և հատեալ զգլուխ բնաւից նոցա. զի առեալ տարցեն ոստիկանին, և պարծանս քաջութեան նոքօք իւրեանց ստացին. որք այսպէս և Նոքա առհասարակ 'ի ժամ կատարմանն ասէին. Տէր Աստուած ամենակալ ամենագութ ամենախնամ, գոհանամք զքէն՝ որ ետուր համբերութիւն ժուժկալութեան 'ի պատերազմիս. զի մեք զքեզ ոչ մոռացաք, և ոչ ստեցաք ուխտի քում, և ոչ դարձաք յետս սրտիւք մերովք. և արժանի արարեր զմեզ հասանել մասին վիճակի սրբոցն 'ի լոյս ։ Արդ՝ ընկալ զմիաբանութիւն մեր 'ի խաղաղութեան, և շահեա դու զորդիս սպանելոց քոց ։ Նոյնպէս բարերարութեամբք բարեաց 'ի բարերարէն արժանի գտան ։

Այն ոմանք և հեթանոսք 'ի բնակչաց տե-ղւոյն հողագործ մշակութեան պարապեալ, և հարկս մեզ հարկանէին ։ Եւ իբրև այս եղև, նոքա 'ի մի վայր ժողովեալ ձայնս առ թշնամիսն արձակէին յիւրեանց լեզուն, թէ մեք ձեզ նմանեալ 'ի ժողովրդենէ Մահմետի առաքեալ եմք. և այնպէս 'ի լսել դահճացն, ամենեւին 'ի բաց 'ի նոցանէն դերեցին ըզ-սուրս իւրեանց, զի ոչ և մի ոք 'ի նոցանէ վրիպէր ։ Եւ սոյն այս հեթանոսք խանդա-ղատանօք ողջքէին զմի մի հաւատացելոցն, երթալ խառնիլ 'ի նոսա, և ապրիլ յանհնա-րին մահուն երկիւղէ ։ Բայց նոքա բացէ 'ի բաց գնացեալ ասէին՝ մեր կեանքն Քրիստոս է, և մեռանելն շահ է ։ Եւ այսպէս մահա-շունչ սուր ծարաւին ոչ կարաց երկմտեցու-ցանել և ոչ զմի ոք 'ի նոցանէ 'ի սիրոյն Քը-րիստոսի. և այսպէս 'ի միում աւուր 'ի մի-ում ժամու առհասարակ ամենեքեան նոքա զենմունք կատարեալք ընծայեցան Քրիստո-սի 'ի հոտ անուշից ։

Սուրբ եպիսկոպոսն Սահակ, որ զանուն պատուոյ քաղցրութեան իւրոյ յաշխարհի թող-լով՝ արտախուրեցաւ քրիստոնեան պատկոմն, և սուրբ քահանայքն որ ընդ նմին հանդիսա-ցան ։ Սոյնպէս յամուսնացելոց, և եղբարք

ամուսնացելոյն Մովսէսի քահանայք՝ Դա-
ւիթ 'ի կրօնաւորական կարգէ և Սարգիս
յաշխարհական ։ Իսկ Սահակ որ 'ի տղայա-
կան հասակէ աչացու գոլով, և կատարեալ
գիտութեամբ և ամենայն առաքելական վա-
րուք էր պայծառացեալ. և սա իբրև զոչ-
խար 'ի զենումն ածեալ՝ անմատոյց և անմա-
հական լուսոյն լուսաւորեցաւ ։ Այնպէս և
երանելի այրն Նաւածոյ Սողոմոն, որ 'ի Սա-
գաստան աշխարհէ եկեալ բնակէր առ մեզ
խստամբեր վարուք, և առաքինահրաշ կար-
գօք քաղաքավարէր 'ի մարմնի իբրև անմար-
մին, և զնա 'ի նմին ժամու գլխատեալ, ա-
տուածապայծառ և անճառելի լուսերանգ
պսակաւն պսակեցաւ ։ Յետ ամենեցունց
սոցա և սարկաւագն Թէոդորոս՝ զորմէ կան-
խեցաք ասացաք, որ 'ի թիւ որբոցն վերա-
գրեցաւ համբերութեամբ բազմաւ, ընդ ա-
մենեսին սոքա ութ թուով ։ Իսկ այլ բազ-
մութիւն արանց որ յայնմ աւուր սպանան՝
'ի զինուորական կարգէ և յաշխարհական,
աւելի քան զերկերիւր հոգի, որոց անուանքն
նոցա գրեալ են 'ի դպրութիւն կենաց. եւ
գրեթէ ոչ ոք ապրեցաւ յարանց տեղւոյն
այնորիկ՝ բաց 'ի սակաւուց ումանց, որ նախ
քան զհնձումն սոյն եղեալ գնացեալ էին 'ի

գործ վաստակոց ձեռաց իւրեանց։ Իսկ յե-
կեղեցւոյ մանկանցն սարկաւագ մի Գէորգ-
անուն ազդեցաւ յանհնարին մահուն եր-
կիւղէն, զի փայլեցուցեալ այրն ճանաչիւր 'ի
ժառանգաւորս եկեղեցւոյն, և վասն այնո-
րիկ ոչ արկին զնա 'ի բոխ եռանդեան չա-
րութեանն, զի Թերևս ասցեն ինչ 'ի նմա-
նէ լսա բարուց օգնկի առ 'ի ծծել զարիւն
նորա։ Իսկ նա ոչ կացեալ համառակ չարին,
գոյժս չափ զկեանս իւր 'ի նոսա Թողեալ,
ինքն չուէ գալ առ մեզ։ Այլ աս իսկ զհետե-
ւանս բանի զրուցացս այսոցիկ մեզ բացա-
տրէ մի լսա միջէ։ Այս ամենայն եղեւ յԻր
Թուականութեանն Թորգոմեան, և ա՛հկի
ամսոյ՝ որ օր Ժ էր։

Իսկ չարալլուկ խմայլեանն զօր զկո-
պուտ կողոպուտ սպանելոյն և զսա և զա-
ւար և զպաճարանս անասնոց բազմաց 'ի մի
վայր ժողովեալ ջոկս առեալ, այլ և զոր-
զայս սպանելոյն և զկանայս գերի առեալ,
և զպատուական գլուխս կատարելոյն 'ի գը-
րաստի բարձեալ՝ խրախայս տային խաւարա-
յին դդչմանք (1) և լկտի երգօք և պարուք։
Այս այսպէս առհասարակ զամենայն ինչ զոր
և ըմբռնէինն՝ առեալ չուեալ գնացին։ Նոգ-

(1) Մէ օրէ. գղրղմանք։

էր ապա տեսանել զձայն աղաղակի, և ողբս անհանգուրժելի և արտասուաթոր կականումն և սաստիկ պաղատանք կանանց եղբարց բազմաց, և սարսափելի սասանումն հարուածելոյն ապշուցէր զմիտս ամենայն ըստեղւոյն, և 'ի դառն արտօսր զարթուցանէր: Իսկ նոցա ընդ բազում ցաւոց սրտից իւրեանց՝ ոչ այլ ինչ բերիւր 'ի մխիթարութիւն, քան թէ հարց և եղբարց, արանց և որդւոց նոցա տարապարտ սրբանցն հեղումն, որք 'ի Քրիստոսի ընծայեցան նուէրք. և այսպիսի յուսով զօրացեալք, և ձեռս 'ի վեր ամբարձեալք՝ խնդրեցին 'ի Տեառնէ ապրեցուցանել զնոսա յանօրէն գերչացն անարգել պղծութեանցն. ասելով այսպէս. Մ՛ի եկեսցէ 'ի վերայ մեր ոտք ամբարտաւանից, և ձեռք մեղաւորաց մի դողդողեսցեն զմեզ:

Ունէին ևս ընդ գերելոյն զօրն խառջելեան այս երկուս բեռնակիրս առաջի իւրեանց, մի 'ի զինուորական կարգէ, իսկ միւսն յաշխարհական. որոց անուանք երկաքանչիւրոց նոցա համանունաբար Կիւրակոս ճանաչիւր: Երբեւ յանդիման եղեն ամիրային պղծոյ, և առաջի մատուցին զգերեալն և զպատուական զլուխն ընտրելո-

ցին Աստուծոյ, և զկապուտ աւարին, յա-ւէտ իմն զուարթացեալ զուարճանայր. իսկ և իսկ հրամայէ զգերեալն ահաբեկ լուծանել թողուլ 'ի բաց՝ ուր և կամիցին երթալ, զի խնդրուածք սրբոց սպանելոցն յիշատակեցան առաջի Աստուծոյ. և այցե-լութիւն նորա փրկագործել ետ զնոսա 'ի գթութիւնս առաջի ամենայն գերչաց նոցա։ Իսկ սակաւք ինչ իբրև ոգիք տասն՝ որք թա-գուցան 'ի թշնամեացն անտի՝ տղայք հասա-կաւ, զոր սուղ ինչ յետոյ ստացայ ես զնո-սա 'ի գինս արծաթոյ, ողջանեալք այսպէս(1) յանկանոն կրծից նոցա։ Իսկ 'ի միւսում ա-ւուր անդ զերկուս արան համանուանս՝ զոր զկնի գերելոյն բեռնակիրս իւրեանց ածեալ էին, հրամայէ զնոսա առաջի դատաւորա-դատաւորացն կացուցանել, զի կամ պաշ-տեսցեն զանօրէն օրէնս նոցա, և կամ սրով վախճանեսցին։ Իսկ իբրև ածան և հարցան 'ի դատաւորաց անտի, նոքա զուարթագին աչօք ճառագայթեալք. և 'ի վեր եւս 'ի սրտի գոչելով ասէին. Ոչ օրէն է մեզ քրիստոնէ-ից ուրանալ զՔրիստոսի աստուածութիւ-նըն, և դառնալ յանաստուած աստուա-ծանօթութիւնն . . . և մեք վասն անուանն

(1) Յերկրորդ օր. ՆԷ. այսպէս ։ Մէ օր. այսպիսի ։

Քրիստոսի պատրաստ եմք 'ի մեռանիլ՝ և ոչ կեալ խղճիւ ։ Իսկ իբրև ծանեան զանհըրապոյր միտս նոցա, այնուհետև հանեալ զիւրաքանչիւր զնոսա 'ի Թէատրոն անդր. ձայնակ անողորմ որոց տայլն. և այսպէս 'ի բոլոր հրաբորբոքս կամաւոր փորձեալք մահու, և զտեալք և քննեալք՝ որպէս և քննի արծաթ, բարձրացան 'ի բարձունս բարձրութեան երկնից՝ ընդ հրեշտակս դասակցելով, առեալ զպսակն լուսոյ և կենաց յանձինս իւրեանց ։ Եղև կատարումն սրբոցս այսոցիկ յամսեանն ահկի՝ որ օր մէ էր ամսոյն։

Բայց զկնուորսն զայնոսիկ որք մատնեցին զամրոյն 'ի ձեռս հեթանոսաց. զնոսա ես առեալ ընդ ինքեան զկնի գերելոյն՝ տարան առ սուլթանն, զի զդարձ փոխարինի երախտեացն զոր յուցին՝ հատուցէ նոցա. այլ և զդահեկանացն ես տարեւորս բաշխեսցէ տացէ նոցա ։ Եւ իբրև յանդիման սուլթանին եղեն, և ակն ունէին՝ փոխարինին վարձուցն հատուցման, նա խոկոյն իսկ հրամայէ սրով սատակել զնոսա. և այնպէս ըստ արժանի իւրեանց կշկռձամահ լեալ՝ հատաւ յոյս կենաց նոցա. և առ նոսա լցաւ խմառնոյն սուետիկոսի բան հաւատարիմ. եթէ՝ Յոյք առ կենդանեօք՝ անյոյս մեռանին։

## ԳԼՈՒԽ ԿԷ.

### Յաղագս վրանգելոյ իշխանացն Ռուբինեանց և Սա-հակայ:

Ըստ այսր հրամանի հանեալ առ ՛Լևոր ՛ի Յունաց ոստիկանէն մեծէ՝ չուեալ գնայ զԱտրպատական աշխարհ. և զապստամբեալ Կաբաւօնացին կողմանցն այնոցիկ կամ ՛ի հնազանդութիւն նոցա համոզել, և կամ ճարտիւ պատերազմի սրակիւ առնել: Իսկ նա զմի ՛ի ծառայից իւրոց պատուաւորաց Օշին անուն ոստիկան ՛ի Կիլին քաղաքի հաստատէր, նմա յանձն արարեալ զՍիսական ռեալսն՝ զՍահակ և զՌուբէն, զի լինիցին ՛ի դիպահոզ ՛ի բանտի և ՛ի կապանս մինչև ՛ի դարձ իւր այսրէն. և ինքն չուեալ գնայ ըստ հրամանի ոստիկանին Յունաց:

Իսկ Օշին այն որ յետ ընդ կրունկն թողաւ. ժողով սալայակոյտ զօրու բազմի գումարեալ արարեալ՝ երանէ զկողմանքն Գեղամաշէն գաւառին Սադաղայ, քինախնդիր լինելով Շահան կոչեցելոյ շահոյ՝ վասն ոչ հնազանդելոյ նմա նոյա: Եւ վասն զի նա յանձնարանչելի ամրոցն ՛ի Սեւան կղզւոջ առկայանայր, և Օշին զոր խնդրէր՝ այնմ ոչ եհաս, այնուհետև խորհէր ձեռն զգաստա-

ուօքն արկանել, և զսակաւամանեաց մնա-
ցորդս մարդկան գերել և սուր հարկանել,
և ճարակ հրոյ տալ. վասն զի աւերեալ եւ
անմարդացեալ էր 'ի բնակչաց աշխարհն ա-
մենայն յաւարառութենէ թշնամեացն. սա-
կայն և այնպէս ոչ յաջողեցան նմա չարխնաց
խարդաւանութեան խորհուրդքն: Վասն զի
ոմն 'ի պատուաւորաց անտի Հասանն կոչե-
ցեալ շահայ' Պետրոս անուն, եղեալ շրջէր
զգաւառօքն սակաւամանեաց շինութիւն
աշխարհին ամփոփուցանել 'ի հինից թշնա-
մեաց: Իսկ Նըշըն 'ի դիմի նմա հարեալ յե-
ղակարծումն ժամու. իսկոյն առնոյր Պետր-
ոսին զահ երկիւղի, զի ոչ աւելի քան զքսան
այր ընդ նմա էին, և Նըշըն այն' իբր զհա-
զար այր. սակայն 'ի Տէր յուսացեալ' 'ի կրօ-
թութիւն յաղթութեան ընդդէմ նոցա
դեգերէր: Եւ ապա քաջայինդ քաջոյջու-
թեամբ արտի ընդդէմ նոցա ափաբար շա-
հատակեալ' ձի 'ի ներքս տանէր. և բազումս
'ի նոցանէ թուաղդըր խաղացուցանէր.
և թէպէտ և յիւրայն եւս արանց սակաւք
ոմանք արաժարեալք 'ի թշնամեացն անկա-
նէին, սակայն մոլորահոյլ խաբէութիւն
մնաց խանձէլակնայն ընդ կրունկն 'ի փա-
խուստ զնոսա առաջի նորա դարձուցանէր.

Իսկ նոցա անարգել մղեգնութեամբ զմա-ւախուղ սուսերաց խաւարի զանձամբ ար-կեալ, զոր միանգամայն գտանէին զճանա-պարհայն՝ որոյ ձորակ ուղին զգօն և զան-պար քահանայն և զերկրագործ մշակս և զխաշնարածսն և զճանապարհորդսն և զաղ-քատսն ևս ։ Եւ այսպէս զանպարտն պա-տուող մահու արարեալ. և հատեալ զգլ-լուխս նոցա՝ ընդ իւր ածեալ տանէր 'ի Դը-վին քաղաք, փախուստ պարծանաց՝ իբր թէ անձին քաջութեամբ և մարտիւ բազմա-զայն գործեալ էր նորա յաղթութիւն, որք էին թուով աւելի քան զ.քան տարապարտ հատեալ գլուխքն ։

Եւ ապա աւուրս հարուստ մի դարեալ դադարեալ, զօրու բազմի դարձեալ հորդան տայ կրկին քան զառաջինն. և ասպազէն առ-նազէն զնտա վարեալ՝ չուէ գնայ յեզր ծո-վակին հանդէպ ամրոցին Սեւան կղզւոյն, թերեւս անզգուշաբար 'ի վերայ հասեալ Շահանն կոչեցեալ շահայ, որոգայթս մա-հու կամ կապանաց նմա մարթասցէ հա-տուցանել ։ Իսկ նա իբրեւ ետես զայն ոյժ ընդդութեան առ դուրս եկեալ հասեալ, փաղփաղակի պատրաստ նաւս տասն մի, և ամբառնայ 'ի նաւս անդր եօթանասուն ա-

զատս և զծառայս իւր լցեալս աղեղամբք, այս քաջակորովս և հմուտս ՚ի ձգտումն նետաձգութեանց, որ դրեթէ ՚ի մազոյ ոչ վրիպէին : Նա եւ ինքն եւս ընդ նոսին ՚ի նաւն վերելակեալ՝ գնային ծովամարտիկ առ Թշնամին . և միջամուխք լեալ յաջողաձեռն նետաձգութիւնս, զոմանս միականիս ՚ի Թշնամեացն առնէին, և զայլս բազում կարէվէր վիրաւորեալ սատակէին . և այնպէս հատեալ շարժեալ ՚ի բաց զմարտ ռազմին բազմութեան Թշնամեացն՝ ՚ի փախուստ առաջի նորա դառնային :

Իսկ Նըշչըն այն ամօթ զանձամբ արկեալ՝ ջանայր վրէժս փոխանակ այնր պահանջել . և դէպ ուղիղ գնացեալ յամրոցն Բեղայոյ, Թերեւս անզգուշաբար ՚ի վերայ հասեալ՝ առնանել ինչ նմա մարթասցէ . սակայն և անտի եւս ձեռս ՚ի գլուխ ելանէր : Վասն զի Գէորգն այն՝ զօրմէ նախ պատմեցաք վասն մարտի քաջութեան նորա, ընդ դիպաց իմն յամրոցի անդր հանդիպեցաւ . և իբրեւ ետես զայն ամբոխ հասեալ մերձ ՚ի դուռն ամրոցին . ապա վառեալ ՚ի զէնս և ՚ի զարդս և ՚ի տէգ նիզակս, և այլ եւս արս սակաւս ընդ ինքեան առեալ՝ արտաքս առ ՚ի Թըշնամիսն յամրոցէն ելանէր . և ապա միամար-

ունեալ ընդ ապաշխարող զօրուն, նախ կար- թակաւոր զէլխիլար Ելշբայն առնէր նրա- նուն այսոյն, մինչ զի հազիւ յայլ ձի աշտա- նակեալ փախչէր: Եւ ապա այլոյն եւ մար- տակցայն աջակցեալ Պետրոսայ՝ տապաստ արկանէին զայլսն 'ի թշնամեացն, եւ 'ի փա- խուստ զնոսա դարձուցանէին. եւ առ նմա յարաւոյեալ լինէր զմակասատկութիւն մի- այն առ բաղումն՝ ասել թէ, Դաւիթ արուս- բագոյն քան զԳեթացին: Իսկ կարաւան թշնամեացն պատանակ ձաղանօք գնացեալ մտին 'ի Պոլիս քաղաք, եւ բազում սպառնա- լեօք ջանային վրէժս 'ի բնակաց ամրոցին պահանջել:

Իսկ ես՝ որ նախ չգայն 'ի թագաւորա- ղանց բաղդոջն Աշտոց, առ նմին կացեալ մնացի մինչեւ ամառնային յաշունն յեղա- նակեալ յեղանակէր, բազմաբար բարեաց մնաց բարութիւն եւ լրութիւն սիրոյ առ 'ի նմանէն ընկալեալ՝ առատաձեռնութեամբ 'ի բոլոր մասուն պիտառութեանց. եւ ա- պա առ 'ի նմանէն յուղարկեալ չոգայ առ թագաւորն Հայոց Գագիկ ընտ միշտն հր- րաւիրման կոչման նորա: Վասն զի հայրա- պետանոց տունն հանդերձ գեղօք եւ գեր- դաստանօք առհասարակ ընդ ձեռամբ նը-

ւանձեալ էր ՚Նշարայն, և մեք անդէնակ իմե փոյթակացեալ (1), և ոչ ոք էր այն՝ որ գուն ՚ի վերայ գործէր հոգւով չափ սակս Նորագման մայրաքաղաք եկեղեցւոյն, և հոգեւոր մշակութեամբ հանդիսանայր, առ ՚ի դարձուցանել զգերութիւն Նոր Սիոնի. զի յայժ պակասումն և չքաւոր լինէր ամենայն պատերազմող ձեռին: Իսկ իմ եկեալ առ Թագաւորն Դաւիթ, և նա ընդունէր ածէր և յանձնանձէր զմեզ ամենայն հոգեւոր սիրոյ հարազատութեամբ և հաստատուն հաւատով և աներկբայ յուսով. և աներկեւան սրտով պաշտպանեալ հանդերձ եղբարբն իւրով Գուրգենաւ՝ անկարօտ զհարկաւոր պէտս մարմնոյ լցուցանէր: Եւ ապա զանխբական խնամութիւնն քաղցրացուցեալ իւր աներկբայ մօք յուսացուցանէր զմեզ, զի հոգւով չափ ջան ՚ի մին եղեալ հոգասցի վասն դարձի մերոյ ՚ի բնակութիւնս մեր. մանաւանդ եթէ վասն խաղաղութեան ամենայն աշխարհի. և հաստատութեան սրբոց եկեղեցեաց, որպէս և քրիստոնէից իսկ կարգք պահանջեն ամբողջ զհաւատոյն սրբոց պահել զգօրութիւն. այլ այս եղև Տէր կամեցի:

(1) Մէ ոչ: փոյթակեալ լեալ:

Բայց աստանօր ոստիկանն Նսր եղեալ ՚ի Պարս ատրպատականէ, գայ չուէ ընդ կողմն Աղուանեաց սպայակոյտ մարտիկ զօրու հանդերձ ։ Եւ վասն զի իշխանն Աղուանեաց Սմբատ ՚ի սեփհական իւրում գաւառի անդ դարեալ դադարէր ՚ի Վայոց ձոր, ՚ի ճահ առնոյր ոստիկանն ըստ խորամանկ մտացն՝ կամ ծածկաբար ՚ի վերայ ընթանալ առ ՚ի ըմբռնել զիշխանն, և կամ մարտամբոխ վառելովք վանել զնա առ ՚ի գերել և յափշտակել ։ Բայց իբրև ետես զնա յաւէտ ըզգուշացեալ բազում հեծելազօր գնդիւ եւ ամրոցօք եւս վայրիցն բազմաձեալ, այնուհետեւ խաղաղութիւն ընդ նմա խօսէր. և բազում օգտութիւն յիշխանէս Սմբատայ ընկալեալ, և յանձն եւս առեալ արձակել թողուլ զեղբայրս նորա ՚ի կապարանէ բանտին, և ինքն չուէ գնայ ՚ի Դվին քաղաք. և խակ և խակ առեալ զտարապարտ սակն պարտուց դահեկանաց ՚ի կրտսերոյ եղբօրէ անուամբ Բաբկենի և արձակէ առաքէ զնա առ իշխանն Սմբատ ։ Իսկ զՍահակ եղբայր նորուն դեռ եւս ՚ի դիպահոջ թողեալ, մինչև առցէ ՚ի նմանէ եւս զդահեկանացն պարտապանութիւն խոստման և ապա արձակեսցէ. և տայր նըմա ՚ի ձեռս զսեփհական տէրութիւնն իւր ։

Բայց բնակիչք ամրոցին Վենդէոց իբրեւ
լուան զգալուստ ոստիկանին, և 'ի մուտ ե-
ղին գայժ մռմռումն զապստամբութեանն առ
'ի նմանէն նոցա, զահի հարեալք և ահիւ ըմ-
բռնեալք, և կարծիս 'ի մուտ եդեալ ան-
հաստատ խորհրդով՝ թէ գուցէ մատնիցի
ամրոցն 'ի ձեռս ոստիկանին, և այնպէս ան-
հնարին տանջանաց և մահու մատնեսցին,
և ապա այսպիսի անզգուշալի երկիւղի
զանձինս տուեալ՝ ամենեքին բնաւին իսկ
ունայնացեալ ելին 'ի բաց զամրոցն 'ի բնակ-
չաց անտի: Եւ ապա զօրականքն զինուորացն
եւս ելեալ գնացին 'ի կամս անձանց զինչպի-
տութեան իւրեանց: Իսկ ոստիկանն յետ
երկեամ մի աւուրց խմացեալ զթափուրանալ
ամրոցին 'ի բնակչաց անտի, յինքն գրաւէ
առնու և ընդ ձեռամբ նուաճէ առանց իմիք
աշխատութեան, և շուրջանակի զգեօղս և
զաւանս և զագարակս յիւր անուն պայա-
ղատէ:

Այսու հետեւ մի բացածանօթացի թե-
րեւս 'ի մէնջ՝ յարակցեալ 'ի մեզ հունձք չար
մշակացս, որ մառախլապատ միգապատ պա-
շարմամբ զմեզ հնձէ. զի թէ ըստ սահմա-
նելումն (1) 'ի մեզ Ստեղծողին 'ի վեր յերկինս

(1) Մէ օրէ. սահմանեցելումն.

զհայեցուածս մեր պատրաստեալ էաք, և առ նմանութիւն կերպարանի ստացողին ընթացեալ, ապաքէն կեցուցանող զօրութեամբ Տեառն փրկեալք լինէաք, և ոչ եւս մատնեալք 'ի ձեռս թշնամեաց մերոց. այլ եւ տապաստ եւս առնուք արկեալ զհակառակորդսն, և տկարութեամբ աղաւաղեալ ընկեցեալ յերկիր, եւ երանելի զմեզ 'ի վերայ երկրի բազմաց քարոզեալ։ Ո՜վ թէ ժողովրդեան իմոյ, ասէ, լուեալ էր ինձ, կամ Իսրայէլ զճանապարհս իմ գնացեալ էր. որպէս զոչինչ մի (1) խոնարհ արարեալ էր իմ զթըշնամիս նոցա, և 'ի վերայ նեղչաց նոցա արկեալ էր զձեռն իմ։ Այլ փառք զի բառ կարգի պաճարաց եւ անասնոց անմտից երկրապիշ եղեալք, եւ այսպէս 'ի մեզ ինքեան ցուցաք զօրինակ պատկերին նմանութեան Տեառն, փառս այնորիկ թշնամիք Տեառն առեցին մեզ. և յանտառադարձ խոզից եւ յանցաւորաց ճանապարհի կոխեցաք իբրեւ զկաւ գռեհաց, և 'ի գլուխս մեր կուտեցաք քարինս ձորոյն Նաքովրայ։

(1) Մի օրէ. որպէս ոչինչ մի։ Այլ օրէ. զոչ մի ինչ։

Բանք Երկնաւորին՝ սակս յիշատակի անուան իւրոյ։

Թագաւորք աստուածասէրք և բարե-պաշտօնք, իշխանք և պետք և հրամանա-տարք Հայոց, եղբարք մեր և առաքեալք եկեղեցւոյ, և փառք Քրիստոսի, աղերս ա-ռաջի մատուցանեմ ձեզ զպիտառութիւն զայս բանի (1), զի իբրեւ ցուցող հայելի 'ի միտս անբասիրս սովաւ զձեզ հրաւիրեալ, և զյանդուգն և զանկարգ ճամարտակելն արտաքած արարեալ, անպատուհաս ես մնա-ցից յահեղ մրրկէ ատի, և յահագին ալեաց փրփրեցելոց և գիզացելոց 'ի վերայ Նքանա-զեանս գրոհի։ Սարսափեալ զարհուրեալ դո-ղացաւ սիրտ իմ, զի միջօք աչաց խաղաց Տէր 'ի վերայ մեր սակս անօրէնութեանց մերոց։ Եւ վասն զի ցարդ ես յարակայեալ յուզումն անդնդապտոյտ ալեացն յորդու-թիւնք խորդութեանց, և ոչ հանդարտեաց, վասն այսորիկ ես բռնադատեցայ գալ յայս, և առնել տալ տաղնապեալ զպատմութիւ-նս։ Նախ 'ի կրից ատի փութացեալ, որ շուրջ պատեալ պաշարեաց զմեզ. և այս

(1) Մի օրէ. աղերս առաջի ձեր զպիտառութիւն զայս բանի մատու-ցանեմ։ Երկրորդ օրէ. աղերս առաջի ձեզ։

'ի հրամանէ Թագաւորաց 'ի վերայ հասելոյ, որ զեւս ձմեռեալ բախեաց զիմաստից գործարան, և հաւանեցոյց ոչ ինչ գոլ ինձ յայմիկ դանդաղելի: Սակայն ոչ գրաւորական անձայն տառիւք միայն որ 'ի վեր քան զիս է՝ ձգտումն իրի զմտաւ ինչ ածեալ, այլ բոլորաձայն հնչմամբ հագագափիւ ոձայնիւ դարուց 'ի դարս զայս ձեզ աւանդեալ ուղղախոհ իմացուածիւ, զի մի անհասութիւն ծերունեայն զրուցաց այլոց ոմանց վէպս ինչ խորհեալ(1) իղձիւ միայն՝(2) կարօտ ձեզ կացուսցէ. այլ զի զաչս արձակեալ յարատդրութիւն բանիս մաքրական միով անբաղդատաղէս 'ի մանաւոր տացելոց աւռի՝ տեսցի զկնի եկելոյն իւրաքանչիւրոյն անձնուրոյն զրուցաց ստուգագրութի̄ ըստ ընթերցուածեան հանդիսի բանիս: Եւ այս ցայս վայր հերիքասցի:

Այլ եւ այսուհետեւ 'ի մաղթանս առաջի ձեզ(3) ընթերցողացդ մատուցից. մի բերել ձեզ եւս վերստին յայս տեղի տանջանաց՝ յորս և այժմ առհասարակ թմբրեցաք 'ի

(1) Մի օրէ. և էր սոնի շրջաս խորհեալ. որ Հէրոդոտոս Բերոսու գնէ խորհեալ:

(2) Ամենայն օրէ ասնէին իղձի միայն:

(3) Երեւ օրէ. առաջի ձեր:

ծուխ մեղաւորաց . այլ ախորժաբար լուղ լինել աղերսալի խնկոց բանից , և բաղաձայնութեան խրատու , լինել ձեզ զուակ լաւագունի պատարագելոյն Սեթայ . և գրիլ յորդիս Աստուծոյ : Այլ ոչ խառն ընդ անիծեալ եղբայրասպանն Կայենի զարմից կապիլ ՚ի կնաս և ՚ի մեղմեխ և ՚ի վայրաքարշ զատերս մարդկան : Մ՛ի ՚ի չար ուղխից սանդարամետին զռահեղեղ սաստակմամբ դուն (1) զօղեսջիք , որպէս յայնժամ երկնասահան և երկրահոսան ջրահեղձոյց մարդիկ նոյեան դարուն . այլ աւետարանական ուռկանաարկելոյ ՚ի ծով զուսպ և ամփոփ վարուք ժողովեալ՝ կարթիցիք յարքունական կայանն . Մ՛ի անկանիք կրօնիւք ամբարձջիք ՚ի տանիս նանրութեան , և հրացայտ ցոլացումն ծծմբոյ դիւաշունչ հողմոց զձեզ պտուտկեալ տոչորիցէ կորստեան կիզմամբն . այլ եղեալք ՚ի Սոդոմայ այլեւ ՚ի Սեդովմայ . եւս յիմանալի բարձրութիւնն սքանչելապէս լերանցն յաւիտենից թեւակոխեսջիք , ուր պայծառապէսն իսկ բոլորքի ջահ սրբութեան ըղձուշայելոցն յարմնութեան : Մ՛ի խառնեսջիք յարքունական ՚ի կուռ պողոտայէն յաջ կամ յա հեակ թողացուցեալ զկամս

(1) Մէ զէ . դղն :

ձեր զկնի պատրանաց պատրողին. վասն զի յերկոցունց կողմանց դարմանակալ է սաստակաց բազմութիւն, և մահ է բաժին անկելոցն 'ի ձեռս նոցա: Ո՛վ մեղկեցէ ձեզ կարծեցեալ արեգակն տունջեանյին, և կամ լուսին գիշերոյ դիւամոլար խուլութեամբ, որ մերոյին բնութեանս կրիւք խաբեայն զմեզ և խաբէ. այլ զանց արարեալ զփաղաքշական խորհրդովք սխորժից յողդողդելոյն, զի ճշմարիտ արեգակն արդարութեան ծագեացի 'ի սիրտս ձեր սիրուն աստուածայնով: Ո՛վ քրէլքուր[1] վարուց չարութեամբ 'նաւաբեկեալք՝ ապաշաւեսջիք զուղիղ և զճշմարիտ զձեր վարս, և կոխանս գահեհաց եղիջիք իբրև զաղն անհամեալ, այլ ողջ ամբողջ և անխախտ ամրասջիք 'ի պարսաւագխանէն դըրժողէ, խնդութեամբ ժամանել 'ի նաւահանգիստ կենաց: Ո՛ի զպարծանս հարցն առաքինութեանց ձեզ բաւական վարկեալ, և 'ի նոյն ապաստանեալ, պղերգութեամբ անձանց 'ի վիհս խորափիտս ընկղմեսջիք. զի թէ հօր հմտաբար անզեկութեամբ զեկավարեալ իցէ, զի՞նչ օգուտ յայնմանէ որդւոյ բերիցի՝ եթէ 'ի նաւաբեկութեան կործիցի. վասն զի ոչ ինչ շահ զհօրն հմտութիւ-

(1) Յամենայն օրէ · քրէխուք ·

նոյն կարծեմ լինել որդւոյ նաւաբեկութեան։ Մ՛ի օտարացեալք եղիջիք ՚ի մօրէ, որ վերստին զձեզ ծնաւ նորոգաւոր բանիւն կենդանականաւ ՚ի յոյսն կենդանի։ Մ՛ի խաբիցիք յարգանդէ վրիպեալք, կամ թէ մերկացեալք յայնմանէ լուսաւոր և փրկական զգեստուն, որով վայելչապէս զգեստաւորեցաք յարգանդէ աւազանին։ Մ՛ի խօսիցիք ստութիւն՝ զառեալն իբրեւ զչառեալ նանրապէս համարեալ, և ժխտող լինել Որդւոյն սիրելւոյ աստուածական պատգամացն լեռնացելոց. այլ եռանդաւէր պտոի ջերմութեամբ հեռանալ յայնմանէ՝ որ ինչ մեղսակար և հակառակ է հոգւոյ, և ՚ի բաց զախտութիւն տարերցս հնոտւոյ մերկանալ մաքուր մտօք։ Նոյնպէս թերեւս և ՚ի սրովբէականացն և երբեակ դասուց խորին խորհուրդս թեւակոխեսջիք և դուք. և վեցթեւեան երագաշարժ գործեօք իմն զօրհնաբանականն բառ ալլերոյս բաժանեսջիք. ոմանք (1) խուձապելով զալիլ, ոչ ես արժանի բառ որուն վարկեալ (2), և ոչ (3) զաչս ՚ի յերկինս ամբառնալ. իսկ այլովք ոմանք վերբարձիլ ՚ի մշտնջենական փառաւորութիւ֊

(1) Աճնայ օր. ունէին՝ ոմանք։ (2) Մի օր. վարակեալ. (3) Երէ֊ օր. և որպէս զաչս։

նըս, ըստ պատահելոյն (1) պարագայութեանց 'ի պաշտօն աստուածային փառացն ։ Նպա հանդիսապէս արժանի գտջիք յետ սուղ ժամանակութեան կենացս, մտանել յարկ իմանալի սենեկական լերինն ։ Ոչ 'ի փոքր հրոյ 'ի փայլ բերեալ ըստ պայմանի խաւսից յաւուրքն ընտրութեան, այլ ամպաչու թեւօք սըրացեալք 'ի վերին Սիոն՝ 'ի հայցել զանսութիւն Տեառն, ոչ վիմով ծերպի զեղջեալ, եւ գլխոյն միայն տեսանել, այլ զկոփանդակ նկարագիր փառացն Հօր դէմ յանդիման նկատել ։ Նա զայժմու փոքր 'ի շատէ խելամտութեամբ զանց արարեալ՝ ծանօթք եղիջիք պատրաստական փայելչութեանն . եւ յայնժամ գիտասջիք՝ որպէս եւ նայն ծանեաւ զձեզ (2) ։ Որդ այսքան բան ձեզ (3) բաւականասցի . բայց անարժանս ես եւ հեզգ ապաշաւս Յովհաննէս նուաստ Կաթողիկոս Հայոց (4) աղաչանս առաջի մատուցանեմ ընթերցողացդ ձեզ եւ լսողաց բանի պատմու-

(1) Երեք օր. փառահելոյն ։

(2) Երեք օր. յայնժամ գիտասջիք եթէ որպէս նայն ծանեաւ զձեզ ։

(3) Մի օր. Ձեզ խրատս բաւականասցի ։

(4) Ամենայն ձեռագիր օրինակք յայս տեղին դնեն՝ կաթողիկոս Հայոց աղաչեմ ։ Իսկ որ ինչ զհետ գան աղաչանաց բանք եղեալ են ըստ ձեռն տպագրողին ։

թեանս , արժանի յիշատակի զիմս փրկա֊
նել անուն 'ի մաքրամատոյց նուիրական ա֊
ղօթս ձեր . զի երկաքանչիւրոցս ինձ և ձեզ
թերեւս և 'ի Տեառնէ տացի վարձս հա֊
տուցման յետնումն աւուր այցելութեան
նորա , որ է օրհնեալ միշտ և փառաւորեալ
յամենայն արարածոց յաւիտենից յաւի֊
տեանս . ամէն ։



# ՑԱՆԿ ԳԼԽՈՑ


ՅԱՌԱՋԱԲԱՆ ՊԱՏՄԱԳՐԻՆ . Ե

ԳԼՈՒԽ Ա. Յաղագս սերնդոյն Նոյի. 15

ԳԼՈՒԽ Բ. Յաղագս քաջութեանն Հայկայ ընդդէմ Բելայ, և սերնդոց նորա. 20

ԳԼՈՒԽ Գ. Յաղագս թագաւորելոյ Պարուրայ՝ և յաջորդաց նորա մինչև ի Վահէ. 26

ԳԼՈՒԽ Դ. Յաղագս թագաւորելոյ Վաղարշակայ Պարթևի՝ և բարեկարգութեանց, նորին և յաջորդացն մինչև յաւուրն Տիգրան Բ. 31

ԳԼՈՒԽ Ե. Յաղագս թագաւորելոյ Տիգրանայ երկրորդի և գործոց նորա, և Արտաւազդայ, և Արշամայ. 37

ԳԼՈՒԽ Զ. Յաղագս թագաւորելոյ Աբգարու և հաւատալոյ նորա ի Քրիստոս՝ և գործոց նորին, և լուսաւորութեան ազգին Հայոց. 42

ԳԼՈՒԽ Է. Յաղագս Սանատրկոյ ուրացութեանն և Հայոց. և նահատակութեանն Թադէի և Սանդխտոյ. և սրբոց Ոսկեանց և Սուքիասեանց. 46

ԳԼՈՒԽ Ը. Յաղագս պատման Խոսրովայ արքային յԱնակայ, և ծագման սրբոյն Գրիգորի, և վերստին լուսաւորութեան ազգին Հայոց. 49

ԳԼՈՒԽ Թ. Յաղագս ժողովոյն Նիկիոյ վասն Արիոսի, և առանձնանալոյ սրբոյն Գրիգորի. 52

ԳԼՈՒԽ Ժ. Յաղագս մահուան սրբոյն Արիստակէսի և Տրդատայ թագաւորին. 53

ԳԼՈՒԽ ԺԱ. Յաղագս թագաւորելոյ Խոսրովայ և Տիգրանայ, և հայրապետութեան որդւոյն Յուսկան. 56
ԳԼՈՒԽ ԺԲ. Յաղագս հայրապետութեան մեծին Ներսէսի և աղքատանոցաց նորին, և ժողովոյն Կոստանդնուպօլսի. 60
ԳԼՈՒԽ ԺԳ. Յաղագս թագաւորելոյ Պապայ և պատերազմի նորա ընդ Մեհրուժանայ ուրացելոյն, և մահուան մեծին Ներսէսի և կարգէ Հայրապետացն. 66
ԳԼՈՒԽ ԺԴ. Յաղագս հայրապետութեան մեծին Սահակայ, և տարածման գրոց թարգմանութեան յազգըս մեր, և բարձման թագաւորութեան մերոյ. 70
ԳԼՈՒԽ ԺԵ. Յաղագս նահատակութեան որդւոց Վարդանանց և Ղևոնդեանց քահանայից. 76
ԳԼՈՒԽ ԺԶ. Յաղագս գործոց Վահանայ Մամիկոնէի. և Կաթողիկոսացն. 79
ԳԼՈՒԽ ԺԷ. Յաղագս գործոց և քաջութեանց Սմբատայ, և ժողովոյն Դւնոյ. 90
ԳԼՈՒԽ ԺԸ. Յաղագս Եզրի կաթողիկոսի, և Յովհաննու Մայրագոմեցւոյ. 98
ԳԼՈՒԽ ԺԹ. Յաղագս ոստիկանաց աշխարհիս Հայոց յերեսաց Հագարացւոց, և գործոց Ներսէսի կաթողիկոսի. 103
ԳԼՈՒԽ Ի. Յաղագս կառավարութեան Գրիգորի և հարուածոց աշխարհիս Հայոց. 114

ԳԼՈՒԽ ԺԱ. Յաղագս փառաւորանաց և հարստածոց Հայոց յերեսաց Հագարացւոց: 121
ԳԼՈՒԽ ԺԲ. Յաղագս հայրապետութեան Յովհաննու իմաստասիրի, և գործոց նորա: 126
ԳԼՈՒԽ ԺԳ. Յաղագս հայրապետութեան Դաւթի և այլոց, և գործոց նոյին: 133
ԳԼՈՒԽ ԺԴ. Յաղագս յաջորդութեան աթոռոյ եկեղեցւոյն Բագուան գեղջ. և կալուածոց Հայրապետանոյն. 138
ԳԼՈՒԽ ԺԵ. Յաղագս հարուածոց կոտորածոց աշխարհիս Հայոց, և նահատակութեան բազմաց. 144
ԳԼՈՒԽ ԺԶ. Յաղագս այլոց անգթութեանց Բուղայի ոստիկանի, և նահատակութեան Սմբատայ սպարապետի. 159
ԳԼՈՒԽ ԺԷ. Յաղագս պայազատութեան Աշոտոյ. և դարձի նախարարացն Հայոց ի գերութենէ. 166
ԳԼՈՒԽ ԺԸ. Յաղագս խաղաղութեան երկրին Հայոց, և միաբանութեան նախարարացն. 171
ԳԼՈՒԽ ԺԹ. Յաղագս թագաւորելոյ Աշոտոյ իշխանաց իշխանին, եւ պսակման Գրիգորի Արծրունւոյ. 174
ԳԼՈՒԽ Լ. Յաղագս մահուան Աշոտոյ արքայի. և խռովութեան եղելոյ ի մէջ Աբասայ սպարապետի եւ Սմբատայ արքայորդւոյ, և վախճան Գէորգայ կաթողիկոսի. 179

ԳԼՈՒԽ ԼԱ. Յաղագս խռովութեան Աֆշնի ոս-տիկանին ընդ Սմբատայ արքային, և ապստամ-բութեան Դունի քաղաքի. 199

ԳԼՈՒԽ ԼԲ. Յաղագս առմանն Դունի քաղա-քի, և գրելոյ Աշոտոյ Կուրապաղատի առ քա-ղաքացիս գիր միաբանութեան. 204

ԳԼՈՒԽ ԼԳ. Յաղագս մարտնչելոյ Աֆշնի ընդ Սմբատայ արքայի, և հալածանաց հաւատացելոցն. 210

ԳԼՈՒԽ ԼԴ. Յաղագս ապստամբութեան Աշո-տոյ իշխանին, եւ պատերազմին Սմբատայ արքային ընդ Աֆշնայ. 215

ԳԼՈՒԽ ԼԵ. Յաղագս դիմելոյ Աֆշնի ի վերայ Սմբատայ, և գերելոյ զընտանիս նորա. 223

ԳԼՈՒԽ ԼԶ. Յաղագս հաւատարմութեան Աշո-տոյ Կուրապաղատի, և Յովհաննու պատմագրի. 228

ԳԼՈՒԽ ԼԷ. Յաղագս աղետութեան ընտա-նեայն արքայի, և պաշարելոյ Աֆշնի ի վերայ Սմբատայ, և սատակմանն նորա. 233

ԳԼՈՒԽ ԼԸ. Յաղագս Աշոտոյ և Հասանայ Ար-ծրունեաց խռովութեանն և մահուանն Աշոտոյ 239

ԳԼՈՒԽ ԼԹ. Յաղագս ոստիկանութեան Յու-սփայ եղբօր Աֆշնի, և մահուան Շապհոյ և Դաւթի՝ եղբարց արքային Սմբատայ. 243

ԳԼՈՒԽ Խ. Յաղագս դիմելոյ Յուսփայ ի վե-րայ Սմբատայ, և խաղաղելոյ և հաշտելոյ զմիմեանս. 246

ԳԼՈՒԽ ԽԱ. Յաղագս պատերազմին Կոստանդնի Եգերացւոց արքային՝ և ըմբռնման նորին, և ատելութեան Ատրներսեհի ընդ Սմբատայ. 252
ԳԼՈՒԽ ԽԲ. Յաղագս չարութեան Հասանայ և Ատրներսեհի ընդդէմ Սմբատայ արքայի՝ առ ի սպանանել զնա. 256
ԳԼՈՒԽ ԽԳ. Յաղագս հակառակ թագաւորելոյն Գագկայ Արծրունւոյ, որ եղեւ պատճառ խռովութեան մեծի. 263
ԳԼՈՒԽ ԽԴ. Յաղագս անձնատուր լինելոյ Յուսփայ՝ Աշոտի սպարապետի, և ազատութեան Յովհաննու կաթողիկոսի. 271
ԳԼՈՒԽ ԽԵ. Յաղագս քաջութեանն Աշոտոյ և Մուշեղայ արքայորդւոց. և նենգութեանն Սեւորդւոց, և ըմբռնման Մուշեղայ. 274
ԳԼՈՒԽ ԽԶ. Յաղագս կոտորելոյ Յուսփայ զանձնատուր եղեալսն, ընդ որս և զՄուշեղ. 281
ԳԼՈՒԽ ԽԷ. Յաղագս Սահակայ և Վասակայ գործոյն, և անգթութեանցն Յուսփայ. 286
ԳԼՈՒԽ ԽԸ. Յաղագս անօգնական մնալոյ Սմբատայ արքայի, և անձնատուր լինելոյ Յուսփայ, և փախստեանն Գագկայ. 291
ԳԼՈՒԽ ԽԹ. Յաղագս պաշարման ամրոցին Երնջակայ, և քաջարի նահատակութեան երջանիկ արքային Սմբատայ, և սքանչելեացն որ եղեն ի վերայ նորա. 297

ԳԼՈՒԽ Ծ. Յաղագս առման և հարուածոյն ամրոցին Երնջակայ, և քաջութեան և արիութեան Աշոտոյ որդւոյ Սմբատայ, և թագաւորելոյ նորին. 302
ԳԼՈՒԽ ԾԱ. Յաղագս քաջութեանց Գագկայ արքայի, և դառնացելոյ հարուածոց երկրի մերում, և նահատակութեան Թաղմայ. 307
ԳԼՈՒԽ ԾԲ. Յաղագս յառնելոյ օտար ազգաց ի վերայ երկրի մերում. և անմիաբանութեան նախարարաց մերոց ընդ իրեարս. 321
ԳԼՈՒԽ ԾԳ. Յաղագս դառնութեան ձմերոյ և սովոյ և հարուածոց թշնամեաց. և մարդակեր գազանաց. 325
ԳԼՈՒԽ ԾԴ. Յաղագս գրելոյ Նիկողայոսի պատրիարքին Կոստանդնուպօլսոյ նամակ առ Յովհաննէս կաթողիկոս, և նորա ևս գրելոյ առ Կոստանդին կայսր. 333
ԳԼՈՒԽ ԾԵ. Յաղագս գնալոյ Աշոտոյ արքայի առ կայսրն, և նուաճութեան Յուսփայ յերեսաց արքային Գագկայ. 355
ԳԼՈՒԽ ԾԶ. Յաղագս դառնալոյ Աշոտոյ արքայի ի հայրենիս իւր. և թագաւորելոյ Աշոտոյ սպարապետի, և պատերազմին ոցա. և խաղաղելոյ Յովհաննու կաթողիկոսի զնոսա. 365
ԳԼՈՒԽ ԾԷ. Յաղագս յառնելոյ ի վերայ արքային Աշոտոյ՝ Վասակայ և Աշոտոյ, և պարտելոյ ի նմանէ. 368

ԳԼՈՒԽ ԾԸ. Յաղագս պատերազմելոյ Աշոտոյ արքային ընդ Աշոտոյ, եւ պարտելոյ ի նմանէ. 372
ԳԼՈՒԽ ԾԹ. Յաղագս պատերազմելոյ Աշոտոյ արքայորդւոյն ընդ Մովսէսի իշխանին եւ յաղթելոյ նմա. 377
ԳԼՈՒԽ Կ. Յաղագս ընդվզելոյ Սահակայ իշխանին յԱշոտոյ արքայէն, եւ ըմբռնելոյ ի նմանէ. եւ յաղագս գործոց ինչ այլոց իշխանաց 382
ԳԼՈՒԽ ԿԱ. Յաղագս ապստամբելոյ Յովսեփայ, եւ ոստիկանութեան Սուբուքայ եւ գործոց նորին 392
ԳԼՈՒԽ ԿԲ. Յաղագս ապստամբութեան Վասակայ, եւ նուաճելոյ ընդ ձեռամբ Աշոտոյ. 395
ԳԼՈՒԽ ԿԳ. Յաղագս ապստամբութեան Ամրամայ իշխանի, եւ պարտելոյ ի նմանէ Աշոտոյ շահնշահի. 398
ԳԼՈՒԽ ԿԴ. Յաղագս բարեկարգութեանց արքային Գագկայ. եւ արձակելոյ Յովսեփայ ոստիկանին եւ չարութեանց նորա. 405
ԳԼՈՒԽ ԿԵ. Յաղագս վախճանելոյ Սիւնեանց իշխանաց. եւ փախնալոյ Յովհաննու կաթողիկոսի. 415
ԳԼՈՒԽ ԿԶ. Յաղագս առման Բիւրական ամրոցին, եւ հարուածոյն որ եղեն ի նմա. 422
ԳԼՈՒԽ ԿԷ. Յաղագս վախճանելոյ իշխանացն Բաբկենայ եւ Վասակայ. 442
Բանք ընծայողին՝ սակս յեղափոխի անուան իւրոյ. 451

ՀՀ Ազգային գրադարան
NL0255339